ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԵՐԵՎԱՆ
1989

3 1 JAN 2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝
ՍԻՄԱԿ
Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Չորրորդ վերամշակված հրատարակություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

АРМЯНСКИЙ ЯЗЫК

Книга для чтения

учебник для IV класса

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

ՀՍՍՀ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

11-28670գր



1. ՅԵՐԳ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Լայնարձակ է հայրենի յերկիրն իմ,
Զոր ու դաշտ, լեռներ անտառապատ,
Ցես նման մի այլ յերկիր տեսած չեմ,
Վորտեղ մարդ շնչեր այսպես ազատ։

Մոսկվայից մինչև հեռու վայրերը,
Հարավից մինչ հյուսիսի ծովերը,
Մարդն ազատ անցնում է, նա յե տերը
Իր հզոր անպարտ հայրենիքի։

Ամեն տեղ մեր կյանքն ազատ ու լի է,
Ինչպես Վոլգան լայն ու հորդառատ,
Ջահելի ճամփան միշտ հուսալի է,
Ալեվոր մարդկանց կյանքն է զվարթ։

Մեր հողերը չեն ու բարեբեր են,
Քաղաքներն անթիվ ու անհամար,
Մեր հպարտ ու վեհ խոսքն է «ընկերը»—
Ամենից նա թանգ է մեզ համար։

Այս խոսքից մեր սիրտը միշտ հրճվում է,
Բարեկամ ենք դառնում ամեն տեղ,
Ամենքին ծանոթ ու հարազատ է,
Ցեվ չկա մեզ մոտ վոչ դուշն, վոչ ցեղ։

Գարնան հովն է շնչում մեր դաշտերում.
Ամեն տեղ կյանքն ուրախ է դարձել.
Ցեվ վոչ վոք մեզնից լավ այս աշխարհում
Չի կարող ուրախ խնդալ, սիրել։

Իսկ յեթե վոսոխն ուզի ջարդել մեզ,
Մեր հոնքերը թանձր կկիտենք.
Անսահման սիրում ենք հայրենիքը,
Գուրգուրող մոր պես պահել գիտենք։

Լայնարձակ է հայրենի յերկիրն իմ,
Ձոր ու դաշտ, լեռներ անտառապատ,
Ցես նման մի այլ յերկիր տեսած չեմ,
Վորտեղ մարդ շնչեր այսպես ազատ։

2· ՎԱՆՈՒՇԸ

1

Մի յերեկո, յերբ դուրսը մութն եր ու անձրև, յերբ Վանուշը նստած դաս եր պատրաստում, թրջված հագուստներով ներս մտավ նրա հայրը, հրացանը դրեց սենյակի անկյունում և հոգնած ու տխուր ձայնով ասաց կնոջը.

— Դողս բռնել է, ա՛յ կնիկ։ Տեղ դցի...

Նրա ատամները զարկվում եյին իրար։

Վանուշի հայրիկը վաղուց դողերոցք ուներ. յերբ հիվանդանում եր, մայրիկը մոռով թեյ եր պատրաստում, խմեցնում, անկողին եր դցում ու խնամքով ծածկում. և հայրիկը լավանում եր մի կամ յերկու որից հետո։ Այս անգամ ել, յերբ մայրիկը տեղ ու թեյ պատրաստեց, հայրը կարգադրեց Վանուշին.

— Վազի՛, Վանուշ ջան, դրասենյակ, կոլտնտեսության նախագահին ասա՝ «հայրիկս հիվանդացել է», թող մեկին պահակ նշանակի պահեստի վրա։

Վանուշն անմիջապես մի ձեռնափայտ վերցրեց, տոպրակի ծայրը «պոպոզ» արավ՝ գլուխն անցկացրեց ու դուրս յեկավ։

Դուրսը մութն եր ու բարակ անձրև եր մաղում. անձրեվի պատճառով տների ճրագներն ավելի աղոտ եյին յերևում. փողոցներում անցորդներ չկային, չներն ել չեյին հաջում։

Կոլտնտեսության դրասենյակը շատ ել հեռու չեր։ Իրենց փողոցի կեսից թեքվելով, Վանուշը մտավ մի ուրիշ փողոց և շուտով հասավ դրասենյակ։

Բայց, զարմանալի բան, դրասենյակում լույս չկար։ Ինչպես յերևում է, փակ եր։

Ա՛յ քեզ բան։

Վանուշը մեկ մտածեց — վերադառնալ՝ հորը հայտնել, վոր դրասենյակը փակ է, նախագահը չկա, բայց իսկույն յենթադրեց, վոր նախագահը կարող է տանը լինել։



Ու Վանուշը գնաց դեպի նախագահի տունը։
Անձրևը շարունակում էր մաղել։
Ճանապարհին մի յերկու տեղ շները բակերից հաջեցին նրա վրա, բայց առաջ չեկան, մի ուրիշ տեղ մի գամփռ հաջելով դուրս յեկավ փողոց, բայց յերևի տեսնելով վոր անցնողը փոքր տղա յե, բանի տեղ չդրեց և չհարձակվեց, իսկ Վանուշն այնպես կարծեց, թե նա իր վայրից ու «պոստից» վախեցավ։
Յերբ նա վերջապես հասավ նախագահի տունը, փողոցից ձայն տվեց հեվալով.
— Ընկեր Նիկոլ, ընկեր Նիկոլ։
Նախ մի փոքրիկ չան հաջոց լսվեց, ապա մի ձայն.
— Եղ ո՞վ է։
— Ընկեր Նիկոլը տա՞նն է։
— Չե՛, տանը չի՛... դեռ չի յեկել...

Վանուշն էլ վոչինչ չասաց։ Քանի վոր նախագահը տանը չէր — էլ ի՞նչ ասեր. միայն նա կարող էր նոր պահակ նշանակել հոր փոխարեն։ Ուրեմն պետք էր վերադառնալ տուն։

2

Վանուշը վերադարձավ հորը հայտնելու, վոր նախագահը վոչ դրասենյակումն է, վոչ տանը։
Բայց յերբ վերադարձավ՝ հայրն արդեն քնած էր վերմակներով փաթաթված։ Նրա ներս մտնելուն պես մայրը ձեռն իր բերանին դրեց, վոր Վանուշը կամաց խոսի՝ քնած հորը չարթնացնի։
Ու Վանուշը, մի աչքը հոր կողմը, կիսաձայն հայտնեց, վոր նախագահը վո՛չ դրասենյակումն է, վո՛չ տանը։
— Վա՜յ, եղ լավ չեղավ,— ասաց մայրը,— պահեստին մի բան կարող է պատահել։
— Ի՞նչ կպատահի վոր,— չչուկով հարցրեց Վանուշը։
— Կարող են գողերը մտնել, ցորենը գողանալ և հետո հորդ կմեղադրեն, վոր մարդու բան չի ասել և պահեստն անտեր թողած՝ յեկել է տուն։ Համ էլ պահեստը հոմենակ մերը չի, պահեստը բոլորինն է, պահեստը կոլտնտեսությանն է։
Մոր խոսքերը մտահոգության մեջ գցեցին Վանուշին։
— Կուզե՞ս յես գնամ, մայրիկ, հրացանը վերցնեմ ու գնամ,— ասաց նա մի փոքր լռելուց հետո։
— Չե՛, չե՛, դու քնիր։ Հիմի ո՛վ է իմանում՝ պահակ կա՞, չկա՞։ Բոլորն էլ գիտեն, վոր պահեստի վրա միշտ պահակ է լինում։ Բան չեն անի, չե՛... քնիր...
Յեվ մայրը, Վանուշին հանգստացնելով, պառկեցրեց, քիչ հետո էլ, լամպը հանգցնելով՝ պառկեց ինքը։ Նա այնքան հոգնած էր բամբակի չանաքի աշխատանքից, վոր իսկույն քնեց։
Բայց Վանուշի քունը չտարավ. պառկած մտածում էր, թե ի՞նչ կլինի, յեթե հանկարծ թշնամիներն իսկապես մտնեն, պահեստի ցորենը գողանան։ Այն ժամանակ մեկ վոր հայրիկին կմեղադրեն... Մեկ էլ վոր պահեստի ցորենը կոլտնտեսությանն է պատկանում— մի մարդու չի,

բոլորինն է. կոլտնտեսության գույքի համար ամենքը պատասխանատու են — ուրեմն ինքն էլ է պատասխանատու...

Ցեվ Վանուշին պատկերացավ, թե ինչպես գողերը մտնում են պահեստ ու ցորենը պարկերով շալակում ու տանում են: Ցորենի հետ տանում են պահեստում եղած գետնախնձորը, ճակնդեղը և ուրիշ բաներ... Տանում են այնպես, որ պահեստում էլ բան չի մնում... Ու առավոտը մարդիկ տեսնում են պահեստը դատարկ, իսկ նախագահը դալիս հանդիմանում է հայրիկին, որ կոլտնտեսության գույքը լավ չի պահել:

Նույն բանը կանեն և ժողովում...

Վանուշը մտածում ու հետն էլ ականջ էր դնում հոր ու մոր շնչառությանը: Հայրիկն առաջվա պես շնչում էր խորն ու ծանր, իսկ մոր քնի ձայնը դեռ չէր լսում:

Ցերը, վերջապես, քնեց նաև մայրը, Վանուշը մի փոքր էլ սպասեց, ականջ դրեց անձրևին: Անձրևի ձայնն էլ չէր լսվում. յերևի կտրել էր:

Այդ բանն ուրախացրեց Վանուշին. նա զգուշությամբ վեր կացավ տեղից, կամացուկ հագնվեց մթան մեջ, ցորենի տոպրակն իր «պոպոդով» նորից գլուխն անցկացրեց, հոր հրացանը վերցրեց անկյունից և դուռն զգուշությամբ բանալով, դուրս յեկավ:

3

Անձրևը դադարել էր, յերկնքում տեղ-տեղ աստղերն աչքով եյին անում իրար, բայց մութն էր առաջվա պես և խաղաղ: Վո՛չ մարդ էր անցնում, վո՛չ շուն էր հաչում:

Վանուշը նայեց յերկնքին, ապա սկսեց արագ-արագ քայլել փողոցով դեպի վեր:

Նա գնում էր դեպի պահեստը, որը հեռու չէր իրենց տնից: Դա հին յեկեղեցին էր, որի գլխին դյուղացիները խաչի տեղ աստղ եյին դրել և կոլտնտեսության պահեստը դարձրել:

Վանուշը հազիվ մոտեցել էր պահեստին, մի հիսուն-վաթսուն քայլի վրա յերկու ստվեր նկատեց նրա դռան մոտ, վոչ թե մեծ դռան, որ մտնում էր փողոցից, այլ կողքի փոքր դռան մոտ:

Բայց դրանք մարդի՞կ եյին արդյոք, թե՞ ուրիշ բան... Վանուշը կանգ առավ՝ ավելի լավ տեսնելու:

Ցեվ նրա սիրտը ծուլ յեղավ հանկարծ. յերևացող ստվերները մարդիկ եյին. նրանք ինչ որ բան եյին անում. թե ի՞նչ — Վանուշը չէր կարող տեսնել...այնպե՛ս մութն էր:

Նորից նա մի քանի զգույշ քայլ արավ, մոտեցավ անկյունին ու պատի հետևը թաքնված, նայեց:

Մարդիկ ինչ-որ բան եյին անում տնքտնքալով ու մեկ-մեկ հետ նայում:

— Շո՛ւտ, անձրևը կտրե՛ց, հիմա կգա՛,— ասաց նրանցից մեկը:

Վանուշը գլխի ընկավ, թե ի՛նչ եյին անում. նա դողաց ամբողջ մարմնով ու գոռաց մեծի հաստ ձայնով՝ կրծքովը մեկ.

— Եղ ի՞նչ եք անում, ե՛յ...

Մարդիկ այս ու այն կողմ նայեցին ու փախան՝ նախ կուզե-կուզ, հետո արագ քայլերով:

— Դողե՛ր, դողե՛ր,— կանչեց Վանուշը, որքան ուժ ուներ:— Բռնեցե՛ք, բռնեցե՛ք...

Ցեվ այդ խոսքերը կրկնում էր չարունակ, հավատացած, որ հիմա իր ձայնի վրա տներից մարդիկ դուրս կգան՝ նրանց բռնելու:

Ցեվ, ճիշտ որ, չատ չանցած՝ մի մարդ դուրս յեկավ հարևան տանից՝ չապկի վրա ինչ-որ բան հագած, հետո մյուսը, յերրորդը, չորրորդը:

— Ի՞նչ դողեր, ո՞ւր են դողերը...

— Այ, քեռի, ա՛յ, ես կողմը գնացին,— ասաց Վանուշը չնչակտուր:—Պահեստի դուռն ուզում եյին կոտրել, գոռացի՝ փախան...

Մարդիկ մոտեցան պահեստի փոքրիկ դռանը, լուցկի վառեցին և այնտեղ դտան մի աքցան. տեսան կողպեքը կիսով չափ ջարդված:

— Բա ես պահակն ո՞ւր է,— ասաց մեկը:

— Պահակը յես եմ,— պատասխանեց Վանուշը, հրացանը ձեռին առաջ գալով:



— Դո՞ւ... դու ո՞վ ես...

— Ցես Ոհաննեսի տղա Վանուշն եմ. հայրս դողացրեց տուն յեկավ, յես յեկա նրա տեղը...

Մարդիկ ծիծաղեցին.

— Այ քեզ պահա՛կ...

— Անունդ ի՞նչ է:

— Վանուշ...

— Հա՛, դու Վանուշն ես... Ա՛յ քեզ Վանուշ...

Կոլտնտեսականներից մի քանիսը մնացին պահակ, իսկ մեկը Վանուշին տարավ տուն:

Ու մի քանի օր գյուղում բոլորը խոսում էին այն մասին, թե ինչպես Վանուշը հոր տեղը պահակ եր կանգնել ու գողերին փախցրել...

Ա՛յ, ինչ տղա յեր Վանուշը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դողերոցք— ջերմ, մալարիա.
2. Մոռ— անտառային հատապտուղ.
3. Գամփռ— մեծ շուն.

4. Մտահոգություն— անհանգստություն.
5. Ջանաք— բամբակ հավաքելը.
6. Ճակնդեղ— տակ, բաղուկ.
7. Սիրտը ծուլ յեղավ— սիրտը բաբախեց.
8. Ամցան— մեխ հանելու գործիք:

---

3. ՄԵՐ ՏԵՍՈՒՉԸ

1

Չեմ հիշում՝ յերրորդ, թե յերկրորդ տարվա ամառը հանկարծ մեր վարժապետ Շապուհը լեղապատառ ներս է ընկնում մեր բացոթյա ուսումնարանը և գոռում. «Ուղղվեցե՛ք, կարգի ընկե՛ք, փայտե նման տեղներդ չորացե՛ք. վա՛յը թափվեցեք: Ցերևանի ուսումնարանի տեսուչը յեկել է, հենց հիմի եստեղ կլինի, ձեզ հարցմունքներ կանի, վա՛յ նրան, ով վոր մի տառ սխալվել է, ճիպոտի տակին կմահացնեմ»:

Խեղճ Շապուհը տերևի պես դողում է, գույնը դեղին քրքումի յե փոխվել. աղամներն իրար են դիպչում:

Ահա, հևալով տուն ընկավ գզիրը և հայտնեց տեսչի գալուստը:

Մի քանի բոպեյից՝ տեսուչն իր հետևից գցած Աշտարակի բոլոր առաջավորներին, մտավ յեկեղեցու բակը և մոտեցավ մեզ:

Մենք ուսուցչի պատվերի համաձայն՝ տեղներից կանգնեցինք և խոր գլուխ տվինք:

Տեսուչը բարևեց, հետո նստեց խալիֆա Շապուհի միակ հասարակ փայտե աթոռի վրա և մատով ինձ իր մոտ կանչեց ու հարցրեց.

— Ինչո՞ւ համար դու փոքրիկ ես ու քո հասակակիցներին թողած՝ մեծ աղաների մոտ ես նստել, յերևի մեծերը դասդ սովորեցնում են, հա՞:

— Մե՞ղք կլինի,— վոր ասես, յես եմ նրանց չդիտեցածը գլխի գցում, յես առաջին աշակերտն եմ,— հանդգնաբար պատասխանեցի յես:

— Վո՞նց թե դու յես առաջին աշակերտը,— զարմացած ու քնքշաբար առաջ քաշեց, յերկու ծնկների մեջ առավ ինձ ու հարցրեց տեսուչը.— Դու դեռ մի թիզ չկաս, ահագին մազ ու միրուքով տղամարդկանց առաջինն ես:

— Կուզես՝ խալիֆիս հարցրու:

— Հրաման քեզ, վոդորմած տե՛ր, դա մեր առաջին աշակերտն է,— հաստատեց Շապուհ խալիֆան:

— Ըհը՛, լա՛վ, ապրես, — գլուխս շոյեց տեսուչը և հարցրեց.

— Յեթե դու առաջին աշակերտն ես, ասա տեսնեմ՝ հաց ու պանիր կարդացե՞լ ես:

— Հաց ու պանիր ամեն որ ուտում եմ, դու մեծ-մեծ բաներ ասա:

— Վոր եղպես է, գնա՛ գիրքդ բեր, տեսնեմ: Մի՞թե դու քերականություն ես սովորում,— խորազնին աչքերը չռեց տեսուչը և նայեց ուսուցչին:

— Այո՛, դրա փոքրությանը մի նայեք, քերականության առաջին մասը վերջացրել է և ամենքիցը լավ է սովորում,— պնդեց վարժապետը:

Տեսչի հրամանով յեկան և իմ յերկու դասընկերները, վորոնք թեև ինձանից հասակավոր, բայց համեմատաբար շատերից փոքր եյին:

Տեսուչը քառորդ ժամի չափ մեզ հարցմունքներ արավ, կարդալ, թարգմանել տվեց, մեր գրաբար կարդ-գրությունները տեսավ և հրամայեց տեղերս նստել: Մի ժամի չափ բոլորին մի առ մի քննեց, ամենքիցս էլ գոհ յեղավ, վարժապետի ձեռքն էլ բռնեց, շնորհակալություն արեց:

2

Խեղճ ուսուցչի գլխին հարամ յեղավ շնորհակալությունը:

Ի՞նչ չարաճճին եյի. մեղավորը յես եմ:

Մանկական պարզությամբ հայտնած խոստովանությունս ծեծի մասին տեղի տվեց տեսչին յերկար հարց ու փորձ անելու ուսուցչից՝ ծեծի վերաբերմամբ: Շապուհը չթաղցրեց, պարծանքով հայտնեց, վոր պատժելով՝ ինքը հասել է ցանկալի արդյունքի:

— Յերեխանե՛ր,— դառնում է տեսուչը դեպի մանուկները,— յեթե յես խնդրեմ վարժապետից, վոր այսուհետև ձեզ չծեծի, խոստանո՞ւմ եք, վոր միշտ դասերդ լավ պատրաստեք:

— Խոստանում ե՛նք,— դոչեցինք միաձայն:

— Դե՛հ, ուրեմն միամիտ կացե՛ք, այսուհետև ծեծը վերանում է ձեր միջից:

Կամեցավ ուսուցիչն ապացուցել ծեծի անհրաժեշտությունը, բայց զուր աշխատանք եր:

Տեսուչը մի ուրիշ նորություն էլ մոցրեց. նա զարմացավ, յերբ մեզանից լսեց, վոր զրկված ենք լողանալուց:

Նա ինքը նույն յերեկոյան մեզ տարավ գետը. «Ավազադյոլ» կոչված լճի մեջ լողացանք, ինքն էլ մեզ հետ լողացավ:

Հիանալի լողորդ եր տեսուչը, բայց մենք էլ նրանից պակաս չեյինք:

3

Յերեք որ անդադար դալիս եր տեսուչը մեզ այցելության, աչքով չտեսած ու ականջով չլսած նրբություններ եր մտցնում խալիֆայական մահակի ու ծեծի սովոր աշակերտներիս մեջ. նոր-նոր խաղեր եր սովորեցնում, ինքը խաղում եր մեզ հետ և ստիպում վարժապետին՝ հետևել իր որինակին:

Իսկ ծեծի ոգտակարության գաղափարով տարված ուսուցիչը քաշվել եր մի հեռու անկյուն և կուչ յեկել տարտ մարդու պես:

Հասկանալի յե. նա մտքով անիծում եր տեսչի յեկած ճանապարհը և անդադար սպասում եր նրա գնալուն-կորչելուն, վոր վրեժն առնի իր արդեն յերես առած աշակերտներից:

Զորրորդ որը յոթանասուն յերեխա, Շապուհ վարժապետը և գյուղի կեսը վոտքով ուղեկցում եյինք Յերևանի դպրոցի մեծապատիվ տեսչին:

Նա ինքը ցանկացավ, վոր իրան ճանապարհ դնենք յերգելով և զվարճանալով:

Նա ձի չհեծավ, շուրջն առած զպրոցականներիս՝ մեզ խրախուսելով, վոտքով եր գնում։

Գետի կամուրջովն անց կացանք, ձորը դուրս յելանք։

Ցերեկ նա մեզ չկանգնեցներ, մենք պատրաստ եյինք մեր սիրելի և թանգագին հյուրին ուղեկցել մինչև Ցերեվան։

Ամենքիս մեկ-մեկ համբուրելով՝ իր հրաժեշտը տվեց այս խոսքերով.

— Ցերեխանե՛ր, ձեր վարժապետն ինձ խոստացել է այսուհետև ծեծը բոլորովին վերացնել. ամառվա շոգերին՝ միայն առավոտյան և յերեկոյան հով ժամանակը պարապել, մյուս ժամանակներն ազատ եք։ Խոստացել է ամեն որ յերեկոյան դեմ ձեզ լողանալու տանել, որական յերկու ժամ խաղացնել։— Բայց յերեխանե՛ր, յեթե վորևե խնդիր ունենաք, իրավունք եմ տալիս դրավոր դիմելու։ Ցես Ցերևանի ուսումնարանի տեսուչն եմ, ձեր թուղթն ուղղակի ուսումնարան ուղարկեցեք. մի՛ քաշվեք, յես ինքս ել դյուղացի յեմ, Քանաքեռ դյուղիցն եմ, իմ անունը ե Խաչատուր Աբովյան։

— Շատ շնորհակալ ենք,— ձայն-ձայնի տվինք մանուկները։

Նա ձի նստեց և հեռացավ։

Բլրի հետևն եր անցել Աբովյանը, իսկ մենք մեր կեցցեները դեռ չեյինք դադարեցրել։

Գնաց մեր նոր գրականության լուսատու աստղը՝ հանրահռչակ Խաչատուր Աբովյանը և մեր սիրտը հետը տարավ։

Նա տարավ և մեր վարժապետի հոգու հանգիստը։ Այն որից Շապուհի վոգևորությունը մեռավ։

Հայտնի չե՝ վախենում եր, վոր կդրենք Աբովյանին, թե՞ իր խոստումն եր կամենում կատարել,— չիմացանք։

Ել այնուհետև ծեծը վերացրեց։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բացոթյա— չենքից դուրս յեղող տեղ.
2. Քրքում— դեղին բույս ե (չաքրան).
3. Խալիֆա—հին ժամանակ՝ ուսուցիչ, ուսում առած մարդ.
4. Խորազնին— խորը քննող, զննող.

5. Մի առ մի— մեկ-մեկ.
6. Հանրահռչակ— ամենքին հայտնի։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ազդեցություն եր թողել Շապուհ խալիֆայի վրա Խ. Աբովյանի այցելությունը։
2. Խալիֆայական դպրոցի վո՞ր թերություններն խսկույն նկատեց Աբովյանը։
3. Խ. Աբովյանն ի՞նչ նորություններ մտցրեց Շապուհ խալիֆայի դպրոցում։
4. Ի՞նչպես եր վարվում Խ. Աբովյանն աշակերտների հետ։
5. Աշակերտներն ի՞նչպես ճանաչարհ դրին Աբովյանին։

---

1. Նկարագրեցեք խալիֆա Շապուհի դպրոցը։
2. Գտամեցեք՝ «Աբովյանի և փոքրիկ աշակերտի խոսակցությունը»։

---

4. ԱՌՅՈՒԾԸ, ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՐՋԸ

Մի անգամ առյուծը հիվանդացավ և բոլոր կենդանիները յեկան նրան տեսության, բայց աղվեսն ուշացավ։

Արջն սկսեց բամբասել ու չարախոսել աղվեսի մասին։ Հենց այդ ժամանակ աղվեսը հասավ և դռան մոտ լսեց արջի չարախոսելն իր մասին։ Աղվեսը ներս ընկավ ու փռվեց առյուծի վոտքերի առջև։

Առյուծը չարացած ասաց.

— Վատ ժամանակ յեկար, գարշելի արարած, ո՞ւր եյիր մինչև այժմ։

Աղվեսը պատասխանեց.

— Ո՛վ հզոր առյուծ, լրուր ես բարկանում. քո գլխովը եմ յերդվում, վոր քո հիվանդության մասին լսելով՝ յես յեղա բազմաթիվ բժիշկների և բժշկապետների մոտ, այդ պատճառով ել ուշացա։ Բայց իմ չարչարանքների պատուղն այն յեղավ, վոր իմացա, թե վորն ե քո բժշկության դեղը։

Առյուծը մեղմացավ և ասաց.

— Ա՛, բարով ես յեկել, [illegible] կենդանի. իսկ ի՞նչ ե այդ դեղը։

ՀՍՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐԽԻՎ

— Շա՛տ պետքական ու հեշտ գեղ է,—պատասխանեց աղվեսը։—Բժշկապետներն ինձ ասացին, թե պետք է կենդանի արջի մորթին հանել և տաք-տաք դցել առյուծի վերա։ Մորթին հիվանդի մարմնից խկուլն կքաշի, կհանի ցավը։

Առյուծի հրամանով անմիջապես բռնեցին արջին և սկսեցին մորթին հանել։

Արջն ախ ու անում, վայ տալիս և զոռում ու վոռնում սարսափելի ձայնով։

Այն ժամանակ աղվեսն ասաց նրան.

— Տեղն է, դա դեռ քեզ քիչ է. այդպես պետք է վարվել քեզ հետ և նրանց հետ, ովքեր զուր չարախոսում են։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Չարախոսել— մեկի մասին վատ բան ասել.
2. Գարշելի— սոսկալի զզվելի.
3. Հզոր— զորեղ, ուժեղ։

---

5. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

(1840—1911)

Ղ. Աղայանը նշանավոր հայ գրող է. նա ծնվել է Թբիլիսիից վոչ հեռու՝ Բոլնիս-Խաչեն գյուղում, 1840 թվին, մի ջակ գյուղացու ընտանիքում։ Սկզբում նա սովորել է հարևան Շամշուլդա գյուղում։ 13 տարեկան հասակում նրան հաջողվում է մտնել Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը, վորը սակայն չի ավարտում։

Գյուղ վերադառնալով, նա պայքարում է գյուղի նախապաշարումների դեմ։ Բայց շուտով նա տանից հեռանում և վորոշ ժամանակից հետո կրկին գնում է Թբիլիսի։ Այնտեղ նա սովորում է գրաշարություն և տառեր ձուլելու արհեստը։ Նա շատ եր սիրում կարդալ ու ինքնակրթությամբ պարապել։

1862 թվին նա գնում է Ռուսաստան, թե՛ աշխատելու և թե՛ սովորելու։ Հինգ տարի, իբրև գրաշար, աշխատում է Մոսկվայի և Պետերբուրգի (այժմ Լենինգրադ) տպա-



գրաններում։ Այնտեղ ուսանող ընկերները ոգնում էին, վոր նա զբաղվի ինքնակրթությամբ։

1867 թվին, իբրև պատրաստված մարդ, վերադառնում է Անդրկովկաս։ Այնուհետև նա շատ յերկար տարիներ ուսուցչություն է անում Անդրկովկասի զանազան քաղաքներում (Ախալցխա, Լենինական՝ նախկին Ալեքսանդրոպոլ, Շուշի և այլ տեղերում)։

Աղայանը մեռավ 1911 թվին։

Նա սկսել եր գրել դեռ պատանի հասակից—Թբիլիսիում։ Նրա նշանավոր գրքերն են՝ «Արություն և Մանվել», «Յերկու քույր» և այլն։

Աղայանը հայտնի յե վոչ միայն վորպես գրող, այլ նաև իբրև մանկավարժ։ Նա շատ եր սիրում մանուկներին և նրանց համար բազմաթիվ պատմվածքներ, հեքիաթներ ուվոտանավորներ է գրել ինչպես՝ «Արեգնազան», «Տորք-Անդեղ», «Անահիտ», «Քիչ ել, քիչ ել», «Մի խամ տավարած», «Հովվի անկողինը», «Եշն ու սոխակը» և շատ ուրիշ բանաստեղծություններ, յերգեր և առակներ։

---

6. ԵՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Իշուկը մեկ սոխակ տեսավ.
— Մեկ ինձ նայիր,— նրան ասավ.—
Ասում են՝ դու լավ ես յերգում,
Բայց չգիտեմ ճի՞շտ են ասում.
Ցես ականջներ ունիմ լայն–լայն,
Լավ եմ լսում ամեն մի ձայն,
Այս լավ յեղավ, վոր քեզ գտա,
Դե՛, մեկ յերգի՛ր, մեկ բլբլա,
Տեսնեմ ուղիղ լա՞վ ես յերգում,
Թե՞ խզուր են այնքան գովում:
Անմեղ սոխակը նազ չարավ,
Սիրուն կտուցը բաց արավ,
Ուզեց ցույց տալ մեր իշուկին,
Վոր զուր չեն գովում սոխակին:
Ձայնը լարեց և սկսեց...
Սոխակի ձա՞յն... ինչե՞ր չասեց.
Մեկ խոսում եր ու մեկ յերգում,
Հաղար խաղով խաղացնում.
Մեկ դայլայլում, ղղլացնում,
Մեկ գեղգեղում, կլկլացնում,
Այնպես չվում, սրնգում եր,
Վոր սար ու ձոր գվգվում եր.
Լեռ քարերն ել դարձրին ուշ,
Այնքան քաղցր եր, այնքան անուշ:
Քամին կտրեց իր վազոցը,
Աղբյուրն իրա քչքչոցը.
Վո՛չ մի տերև չեր սլսլում,
Վո՛չ մի թռչուն չեր ծլվլում.
Տավարներն ել չարածեցին,
Այլ նստեցին ականջ դրին.
Տավարածն ել շունչը քաշած՝
Սոխակին եր լսում ապշած:

Վերջապես սոխակը լռեց,
Իշի վճռին ականջ դրեց:
Ե՛հ,— ասաց,— վատ չե՛ս յերգում,
Լավ ես ծվում ու ծվծվում.
Բայց յես շատ եմ ափսոսում քեզ,
Վոր չես յերգում աքլորի պես.
Յեթե մեր աքլորին տեսնես,
Նրա յերգին ականջ դնես,
Այնուհետև նրա նման
Դու ել կերգես շատ աննման:
Այս վճիռը վոր իմացավ,
Մեր սոխակը նոր աչք բացավ.
Նա նոր տեսավ, վոր իր դիմաց
Մի անճաշակ եշ է կանգնած.
Թևին խփեց, թռավ, գնաց,
Իշի աչքին ել չերևաց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Լարել— պատրաստել.
2. Դայլայլել
3. Դլդլացնել
4. Կլկլացնել
5. Գեղգեղել

} ձայնի զանազան յելևեջներով, անուշ ձայնով յերգել:

6. Սրնգել— սրնգի ձայն հանել:

1. Գրվածքի բառերով նկարագրեցե՛ք սոխակի յերգը.
2. Կարդացե՛ք այս առակը դերերով:

7. ՏՈՐՔ ԱՆԳԵՂ

(Հատված)

1

Մեկ անգամ գյուղում Տորքին զայրացրին,
«Անգեղ, գեչ Անգեղ» յեռքից գոչեցին.
Եվ չհամբերեց. պոկեց մի մեծ ծառ,
Ավլեց նրանով ամբողջ գյուղն խոպառ,
Ասում եմ՝ ավլեց, չկարծեք սրբեց,
Այլ տուն, գոմ գետնին հավասարեցրեց:
Փախան մարդիկը ճանճերի նման,
Եվ ո՞վ կկանգներ Տորքին հանդիման:
Այսպես, յերբ նրա բնությունն խմացան,
Եվ այնուհետև սրտին չդիպան,
Այլ մեծ հարգանքով պատվասիրեցին,
Պարերդ չինելով, գովաբանեցին.
Տղեք, աղջկեք՝ ձեռք-ձեռքի տված՝
Յե՛վ պարում եյին, և՛ գովում Տորքին:
Եվ այնուհետև նրա դեմքն ահեղ
Առաջվա նման չեր թվում տգեղ:
Անգութ չեր Տորքը և վոչ եվ անգետ,
Լավ վորմնադիր եր և ճարտարապետ.
Ահագին վեմեր նա բերավ տաշեց,
Իր քանդած գյուղը նորմեկանց չինեց:
Յեվ այնուհետև իր ուժն ահագին
Նա գործ եր դնում միշտ դեպի բարին:
Նրանից առաջ չատ քաղաք ու գյուղ
Թալանում եյին գողերն աներկյուղ.
Բայց յերբ լույս ընկավ Անգեղ Տորք հսկան,
Ավազակները ծակուծուկ մտան:
Նա չեր գործ ածում վոչ թուր և վոչ նետ,
Միայն իր տեսքով անում եր անհետ.
Բայց յերբ թշնամին յերես եր առնում,
Նա այն ժամանակ ուժին եր դիմում.
Վերցնում եր քարեր, քարեր ահագին
Յեվ կարկուտի պես թափում գլխներին:

2

Սև ծովի կողմից ոտար թշնամիք
Թալանում եյին և դերում մարդիկ.
Միշտ գալիս եյին անթիվ նավերով,
Այն եվ աշկարա, որը ցերեկով:
Կողոպտում եյին անհամար գյուղեր
Յեվ գերի տանում սիրուն աղջիկներ:
Մեկ անգամ յեկան, խնդրեցին Տորքին,
Վոր գնա ոգնի խեղճ ժողովրդին.
Գնաց մեր հսկան, բայց նավերն արդեն
Հեռացել եյին Սև ծովի ափեն:
Զայրացավ Տորքը, գոռաց, մռնչաց,
Իբրև մի առյուծ նետահար յեղած.
Բլրաչափ ժայռեր սարերից պոկեց,
Փախչող նավերի յետքից շպրտեց:
Դղրդաց ծովը, բարձրացան ալիք,
Նավերը դարձան շարժուն խաղալիք.
Ահա դարձյալ ժայռ, դարձյալ դղրդոց,
Շրջվում են նավերն իրև որորոց.
Ելի մեկ բլուր՝ մեծ քան առաջին՝
Ընկնում է ուղիղ նավերի գլխին:
Գնում են կրկին ժայռերը գունդ-գունդ,
Զարկվում նավերին և տանում անդունդ:
Վողջ կորան այսպես ավազակները,
Դեպի անհատակ ծովի խորքերը:
Նրանցից միայն մեկն աղատվեցավ,
Գլուխը պատռած իր յերկիրն հասավ.
Յեվ այնտեղ այնպես հրաչքներ պատմեց,
Վոր լսողներին սարսափեցրեց:
Ահա այս անգութ բարբարոսության
Վերջ տվավ խոպառ մեր զորեղ հսկան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խոպառ— բոլորովին.
2. Հանդիման— դիմացը.
3. Վեմ— մեծ, հաստատուն, կարծր քար.
4. Աշկարա— պարզ կերպով.
5. Նետահար— նետով խփած.
6. Բարբարոսություն— վայրենություն:

8. ԱՆԴՐԵՅՆ ՈՒ ՎԱՍԻԼՅՈԿԸ

1

Բարանկելիչի գործարանում յերկրորդ հերթը վերջացնում եր աշխատանքները: Գլխավոր մուտքի մոտ խրոնվել եյին հերթափոխ բանվորները: Պատուհանի հետևում կրակոց լավեց. հնոցապաններն իրար նայեցին.

— Ի՞նչ է այս...

Մի քանի վայրկյան բոլորը լռեցին. լսում եյին, ակամա սպասելով նոր կրակոցների: Անդրեյը բարձրացավ հնոցի վերևը: Այնտեղ յերեք նեղ պատուհաններ կան. մեկը բաց է— յերևում են գործարանի բակի դռները...

Մեքենայական բաժնից հնոցարան վազեց կրտսեր մեխանիկը. ձգեց չչակի կափարիչին ամրացրած թոկը, և խուլ վոռնոցն սթափեցրեց Անդրեյին. նա տարվեց մի մտքով-կա՛խ ընկավ պարանից, և չչակը շարունակում եր վոռնոցը...

— Դո՛ւրս յեկեք մյուս մուտքից: Խնդրում եմ ընկերաբար... Ցես չչալու յեմ, վորպեսզի ժողովուրդը վոտքի կանգնեցնեմ:

Հնոցապանները դեպի դուռն ուղղվեցին:

Անդրեյը պինդ փակեց դռները, նորից կախ ընկավ պարանից: Ոդը ցնցելով, նորից վոռնաց չչակը: Վոռնոցը քաղաքացիներին դուրս հանեց տներից. բանտարկյալները լարվածությամբ լսում եյին այդ վոռնոցը. գերմանացի զինվորները դես ու դեն եյին վազում...

Անդրեյի սիրտը յեռում եր հուզմունքից. նա մենակ փակված ներսում իր որհասական կռիվն եր տանում...

Իսկ չչակի վոռնոցը տարածվում եր քաղաքում:

2

Վասիլյոկը շատ անգամ Անդրեյի մոտ եր գնում նույնիսկ աշխատանքի ժամանակ, մի կերպ սողոսկելով և խուսափելով պահապաններին հանդիպելուց: Շատ անգամ հերթափոխի ամբողջ աշխատանքի ընթացքում յեղբոր հետ լինում եր ջեռուցարանում, աշխատելով վորևե կերպ ոգտակար լինել նրան: Հնոցապանները սիրում եյին այդ կայտառ յերեխային, վոր արագ ըմբռնում եր հնոցային գործի արվեստը:

Տղան հնոցապաններին ոգնում եր վագոններից ածուխը բեռնաթափելիս. դիտեր ջեռուցարանի բոլոր անցքերն ու յելքերը, և շուտով իր համար գտավ մի հարմար տեղ, վորտեղից մտնում եր այդ շենքը, աննկատելի մնալով հսկիչներից: Վասիլյոկն իր գաղտնիքը չեր հայտնում վոչ վոքի, նույնիսկ յեղբորը: Նրա համար հաճելի յեր անըսպասելի հայտնվել և հնոցապաններին հիացմունք պատճառել իր ճարպիկությամբ:

Սարսափը պատեց Վասիլյոկին, յերբ նա իմացավ, վոր Անդրեյը փակվել է ջեռուցարանում, և վոր սպիտակները նրան ուզում են սպանել: Ցերեխան սրտատրոփ հետևում եր, թե ինչպես լեգիոներները փորձում եյին մտնել ջեռուցարան, վորտեղ պատսպարվել եր Անդրեյը:

Ցերբ այդ փորձը վիժում եր, Վասիլյոկի ուրախությունն անսահման եր լինում: Նա վազվզում եր բանվորների մեջ և հարցնում ծանոթ հնոցապաններին, աղերսանքով ու արցունքներով լի աչքերը նրանց վրա հառած.

— Ասացե՛ք, քեռի՛, նրանք ի՞նչ պիտի անեն յեղբորս:

Հնոցապանները լռում եյին հոնքերը կիտելով: Մեկը բռնեց Վասիլյոկի ձեռքը և նրան մի կողմ տարավ:

— Ծլկի՛ր այստեղից, քանի կենդանի յես: Թե՞ ուզում ես, վոր ես տաք ժամին քո գլուխն ել պոկեն:

Վասիլյոկը խույս տվեց հնոցապանից: Արտասվելով, նորից վազեց դիտելու, թե ինչ են անում լեգոներները:

Գործարանի բակում մնացած բանվորները հետևում եյին այն ամենին, ինչ վոր կատարվում եր ջեռուցարանում: Մեկ մարդու հուսահատական խիզախությունը,— մարդու, վորի դեմ անզոր յեղան զինված լեգիոներները,— սրտեր եր նվաճում: Շչակի մռնչոցը չեր թողնում, վոր մի բոպե անգամ մոռացվի այդ: Հիմա Անդրեյի բախտը խորապես անհանդստացնում եր բոլորին:

Լեգիոներները գործի դրին ավիները: Հեծելակները նեղում եյին բանվորներին, ծեծում մտրակներով:

Զայրացած բանվորները ձիուց վայր բերին մի լեգիոների: Հեծելակները հաղիվ ազատեցին նրան:

Վասիլյոկը տեղ չեր գտնում իր համար: Լեգիոներներն արդեն նկատեցին փոքրիկին, վոր այս ու այն կողմ եր վազվզում:

— Ե՛յ, ի՞նչ գործ ունես այստեղ: Սպասի՛ր, չան լա-
կո՛տ: Ո՞ւր ես փախչում,— գոռաց մեկը յերեխայի վրա:

Վասիլյոկը անհետացավ բազմության մեջ, արմունկ-
ներով ու գլխով ճանապարհ բացեց և չքացավ: Նա վազեց
դեպի ածուխի բակը, դեպի գաղտնի ճանապարհը...

2

Հասնելով ածխահորը, Վասիլյոկը խավարում սկսեց
յերկար ժամանակ սողալ ածուխի վրայով: Նրա ծնկները
և գլուխը դիպչում եյին քարերին ու ցավում: Նա փընտ-
ռում եր ճանապարհը և չեր գտնում: Նոր բերված ածուխը
թափվեց նրա վրա: Այդ ժամանակ տղան սկսեց փորփրել
ածուխը և ծանր կտորները մի կողմ դարսել: Այդ կտոր-
ներից մեկը գլորվեց և ցավագին խփվեց նրա բոբիկ վոտ-
ներին: Վասիլյոկն ընկավ ու յերկար լալիս եր: Լացեց և
ապա կրկին անցավ աշխատանքի: Հարկավոր է ածուխը
տանել վորևե հեռու տեղ դցել, վորպեսզի չընկներ գլ-
խին: Ածխափոշին լցվում եր նրա քիթն ու աչքերը: Նա
փռշտում եր ու թքում: Բայց ինչքան փորում եր, չեր կա-
րողանում անցք բանալ: Վասիլյոկը մտածեց, վոր փորե-
լու տեղը սխալ է ընտրել: Նա վշտացավ ու սարսափեց:
Նորից սկսեց լալ:

— Անդրի՛, Անդրյո՛ւշկա... — կանչեց նա ամբողջ
ուժով:

Անդրեյը վեր թռավ, կարծես խայթված լիներ:

— Թյո՛ւ, գրողը տանի,— չչնջաց նա:

Նրան թվաց, թե Վասիլյոկը լալիս է մոտիկ տեղում:
Անդրեյը կանգնած եր ածխահորում, բռնել եր հրացանը
և աչքը չեր հեռացնում լուսամուտներից:

Զրհան մեքենան զանվում եր հենց նրա կողքին: Գո-
լորշին, վոր քիչ եր մնում խեղդեր նրան, դանդաղ յել-
նում եր լուսամուտից: Կաթսաների բաժնում տոթ եր ու
մռայլ:

Ցերբեմն Անդրեյին թվում եր, թե այդ բոլորը մի
ծանր յերազ է: Արդեն յերեք ժամ եր անցել, բայց նրան
վոչ վոք չեր ոգնում: Ցեվ այս ամենը, ինչ նա արել եր,
վոչ մի արդյունք չեր տալիս: Միևնույն է, նրան պետք է

բռնեյին ու գնդակահարեյին: Ցեվ նրան թվում եր, վոր
վոչ վոք չեր հետաքրքրվում իրենով...

— Անդրյո՛ւշա,— բոլորովին մոտիկ տեղից կանչեց
Վասիլյոկը:

Վերևից գլորվեց մի քար և ընկավ Անդրեյի ուսին,
ցավ պատճառելով նրան:

Այնուհետև ուրախալի մի ճիչ, — յես եմ՝ Վայսկան,
— հետ պահեց Անդրեյին կրակելուց:

Հենց ինքը՝ կենդանի Վասիլյոկն իջնում եր դեպի
Անդրեյը: Անդրեյը սարսափեց այն մտքից, թե քիչ եր
մնում գնդակահարեր յեղբորը:

— Անդրյուշկա, յես եմ... այնտեղ յեկել-հավաք-
վել են նրանք, չա՛տ են... Ամբողջ բակը լիքն է ձիավոր-
ներով... Ցեկել է և նրանց ամենագլխավորը... փախի՛ր
այստեղից: Հրե՛ս, մի անցք կա... Ամեն անգամ յես այդ
անցքով եյի գալիս: Միայն թե հիմա ածուխով լիքը լցրել
են, յես չեյի կարողանում անցնել,— յեղբոր ականջին
բղավում եր Վասիլյոկը, փարվելով նրան:

Անդրեյի սիրտն սկսեց ուժգին խփել:

— Վորտեղի՞ց մտար այստեղ:

— Ածուխի բակից:

— Այնտեղից անցնելու տեղ չկա:

— Իսկ յես մտա խողովակի միջով: Խողովակը լայն
է: Դու ել կարող ես մտնել: Գնանք, Անդրյուշկա, գնանք:
Պա՛, նրանցից շատ-շատ են յեկել: Քեռի Ոստապն ասում
է, թե նրանք քեզ կսպանեն...

Վասիլյոկն Անդրեյին քաշեց դեպի անցքը:

— Մտի՛ր, յես ել քո հետևից:

Վասիլյոկը մագլցեց դեպի վեր: Անդրեյը մի անգամ
ել դիտեց ջեռուցարանը, հանդչող հնոցները և հետևեց
յեղբորը: Վասիլյոկը վերեվում արդեն ոպասում եր նրան:
Անդրեյը զգուշությամբ քաշեց հրացանի պահպանակը և
տվեց յեղբորը: Այնուհետև խցկվեց անցքը և կառչելով
թափվող ածուխին, մեծ դժվարությամբ, ուսերը չան-
գրռտելով վեր բարձրացավ:

Վասիլյոկը չտապեցնում եր նրան: Անդրեյը բռնեց մի
ծանր քար և գլորեց ներքև: Տղան ոգնում եր նրան,—
քարածուխի կտորները ձեռներով ու վոտներով հրում
ներքև: Մի բոպեյից հետո անցքը ծածկված եր:

3

Վասիլյոկն Անդրեյին տանում էր իր ճանապարհնե-
րով: Անդրեյը սարսափած մտածում էր, թե ինչ կլինի,
յեթե ինքը չկարողանա մտնել ողափոխության խողովա-
կը: Նրա սրտից կարծես մի հսկա ծանրություն ընկավ,
յերբ Վասիլյոկից հետո ներս տարավ գլուխն ու ուսերը,
սկսեց դանդաղ առաջ շարժվել:

Ցերբ նրանք բարձրացան վերև, բարակ անձրև էր
մաղում: Ածուխի բակը գտնվում էր գործարանի հիմնա-
կան տերիտորիայից դուրս, վորից բաժանված էր քարե
բարձր պատով:

Այստեղով եյին անցնում մոտակա յերկաթուղային
գծերը:

Վասիլյոկը գնաց հետախուզության: Շուտով նա վե-
րադարձավ և հաղորդեց, թե ճանապարհին վոչ վոք չկա:

— Այնտեղ յերեք շարք կանգնած են դատարկ վա-
գոնները: Կարելի յե վագոնների տակից անցնել, և վոչ
վոք չի տեսնի: Իսկ հետևի դարպասի մոտ ել վոչ վոք
չկա: Դարպասը փակել են կողպեքով: Մենք կբարձրա-
նանք վագոնի վրա, այնտեղից ել դարպասի վրա ու կիջ-
նենք դաշտը,— փսփսում էր Անդրեյի ականջին Վասիլ-
յոկը:

Նրանք ածուխի լեռան վրայով ներքև իջան և կռա-
ցած վազեցին վագոնների արանքով:

Վասիլյոկի պլանը հիանալի յեր: Վերջին վագոնը
կանգնած էր հենց դարպասի մոտ: Նրանք անցան վան-
դակավոր յերկաթե դարպասի վրայից և սկսեցին փախչել
յերկաթգծով:

Վասիլյոկն առջևից սլանում էր ինչպես թռչուն, թե-
վերը պարզած և յերկու մետրանոց ցատկումներ կատա-
րելով: Նա շուտ-շուտ հետ էր նայում, տեսնելու, թե
արդյոք յեղբայրը հասնո՞ւմ է իր հետևից: Անդրեյը վա-
զում էր ամբողջ ուժով: Անձրևը խփում էր նրանց դեմ-
քերին: Ցածր, մռայլ ամպերը ծածկել եյին ամբողջ յեր-
կինքը:

Անդրեյը հրացանը դեռ չէր դցում: «Միևնույն է, յե-
թե բռնեն, կսպանեն: Գոնե վերջին անգամ կդլորեմ յեր-

կուսին»,— մտածում էր նա, դեռևս չհավատալով, վոր
կազատվի: Ցեվ միայն այն ժամանակ, յերբ նրանք բա-
վական հեռացել եյին գործարանից, և մոտակա յերկաթ-
գծերն արդեն թեքվում եյին դեպի կայարան, Անդրեյը
կանգ առավ և ուժասպառ յեղած, նստեց ուղեթմբին...

— Սպասի՛ր, Վասիլյո՛կ, ել չեմ կարող,—ձայն տվեց
նա և ձեռքը տարավ դեպի սիրտը:

— Փախչե՛նք, Անդրյո՛ւշկա, փախչենք, թե չե կհաս-
նեն,— յերկչոտ, շուրջը նայելով, անհամբերությամբ
ցատկոտում էր տղան: Բոլորովին թրջված լինելով, նա
կծկվում էր, դողում ցրտից ու յերկյուղից: Նրա ցեխոտ-
ված, բոբիկ վոտները փայտացել եյին: Կոճափայտի վրա
կանգնած, նա չարունակ վոտը վոտին էր շփում:

Նրան թվում էր, թե Անդրեյը խիստ յերկար է սպա-
սում:

— Հերիք է, Անդրյո՛ւշկա, փախչենք:

Անդրեյը վեր կացավ: Այնտեղից, ուր գործարանը
սուզվել էր թանձր մշուշում, գալիս էր չչակի ահավոր
վոռնոցը:

— Հնչում է դեռ,— հպարտությամբ չընկաց նա, հա-
ճությամբ ունկնդրելով իր գործակցի դղրդացող ձայ-
նին: Ցեվ արդեն չէր վազում, այլ գնում էր արագաքայլ:
Վասիլյոկը թեթև վազում էր նրա կողքից, ամեն րոպե
դիտում շուրջը:

Անդրեյը բարձր ուղեթմբից տեսավ ջրմուղի մոտ
գտնվող ծանոթ տնակը և միայն այժմ հավատաց, վոր
փրկված է:

— Վասիլյոկ, յեղբայրս, փոքրիկս... անպիտան
Վայսկա: Հիմա մենք թքել ենք նրանց վրա: Իսկ քո փո-
խարեն յես դեռ հաշիվ կտեսնեմ...:— Նա գրկեց յեղբորը,
սեղմեց իր կրծքին: Լավ էր, արցունքները թաղցնելու
կարիք չկար: Ո՞վ կտեսնի այդ արցունքները, յերբ անձ-
րևը թափվում է հեղեղի նման:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Սողոսկել— *սողալով մտնել·*
2· Ջեռուցարան— *տաքացնելու տեղ (խոշոր տներում, գործարաններում)·*
3· Հեծելակ— *ձիավոր զինվոր·*
4· Փորձը վիժել— *չհաջողվել·*
5· Լեգիոներ— *զինվոր (Լեհաստանում և այլն)·*
6· Հիացմունք— *մեծ ուրախություն·*
7· Խիզախություն— *քաջություն·*
8· Հնոցապան— *հնոց վառող·*
9· Մագլցել— *ձեռք ու վոտքով բռնելով բարձրանալ·*
10· Կառչել— *բռնել ու կպչել·*
11· Տերիտորիա— *հողի տարածություն·*
12· Կոնափայտ— *կարճ գերան (չպալ)։*

ՀԱՐՑԵՐ

1· *Ինչո՞ւ Անդրեյը չչում էր գործարանի շչակը·*
2· *Շչակի վոռնոցն ի՞նչպես էր ազդում լսողների վրա·*
3· *Վասիլյոկն ի՞նչպես էր գործարան մտնում, վո՞րտեղից·*
4· *Ինչո՞ւ այս անգամ նա ուզում էր ջեռուցարան մտնել·*
5· *Վասիլյոկն ի՞նչպես անցավ յեղբոր մոտ·*
6· *Ի՞նչպես նա գտավ յեղբորը՝ Անդրեյին·*
7· *Ի՞նչպես նա ողնեց յեղբորը՝ թագստոցից փախչելու·*
8· *Ի՞նչ ճանապարհներով նրանք տուն հասան·*

1· *Ի՞նչ կարող էր պատահել, յեթե Անդրեյը մնար ջեռուցարանում·*
2· *Ի՞նչ վտանգ կարող էր պատահել ճանապարհին՝ փախուստի ժամանակ և ինչպես յեղբայրները խուսափեցին վտանգներից։*

9· ԼՈՌՈՒ ՁՈՐԸ

Այս Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Հայացքով իրար նայում են հանդարտ։

Նրանց վոտքերում, դաղաղած դալի՝
Գալարվում է գիժ Դեվ-Բեդը մոլի,
Խելագար թռչում քարերի գլխով,
Փրփուր է թքում անդուսպ յերախով·
Թքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փնտռում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ·
— Վա՛չ-վի՛չչ, վա՛չ-վի՛չչ···

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Հանդիպակաց— *դիմացի, իրար դիմաց·*
2· Ցերախ— *դաղանի բերան («ռեխ»)։*

10· ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Սով էր, սով էր մկաստան,
Կատվի ձեռքից լդստան։
Գզիրն ընկավ դռնեդուռ,
Ել չթողեց տուն-կտուր,
Ջահել-ահել գեղովի՝
Ջոջերից ջոկ, տեղովի,
Կանչեց, բերեց ժողովի,
Թե ի՛նչ անեն, վոր կատվեն
Մի հնարքով ազատվեն։
Ցեկան գեղի ջոջերը,
Ցերկար բարակ պոչերը,
Մասնակցեցին եղ նիստին,
Մի մուկ խոսեց իր հերթին·
— Լսե՛ք, մկներ ցեղակից,

Զունեմ վորդի, կողակից,
Ցես մի անտեր ծերուկ եմ,
Բայց պատվավոր մի մուկ եմ.
Պակսեց ուժը իմ վոտի,
Պետք է մեռնեմ անոթի.
Սովն է չոքել դռանը...
Ա՛խ, են կատուն, մռռանը,
Ստից սատկում, տաղ անում,
Մուկ է տեսնում՝ վազ անում,
Բռնում գլխից կախ անում,
Թաթով տալիս, խաղ անում,
Ուտում, քեֆը չաղ անում:
Եսպես զուլում ու կրակ,
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:
Բայց թե աղնիվ մեր ցեղը
Կորչելու չե՛ զուր տեղը.
Ցավն էլ ունի իր դեղը:
Ա՛յ, բերել եմ ցես մի զանգ,
Ծաի, ծնկոց,
Մեջը գնդոց.
Կատվի վզից մենք կախ տանք,
Վոր ինչքա՛ն էլ որորա,
Վոր ինչքա՛ն էլ չորորա,
Ստից սատկի, տաղ անի,
Գալն իմանանք գազանի:
Ե՛, զանգը ո՞վ կախ անի.
— Ալո, դո՛ւ.
«Ալո՞ն տանի».
— Բալո, դո՛ւ.
«Բալո՞ն կախե».
— Զալո, դո՛ւ.
«Զալո՛ն կաղ է».
— Մատո, դո՛ւ.
«Մատոն կարճ է»:
— Փատո, դո՛ւ.
«Եղ էլ խի՞ղճ է».
— Համբո, դո՛ւ.
«Ցես տկար եմ».

— Զամբո, դո՛ւ:
«Ասենք տարա,
Բա վոր կատուն դա ինձ վրա՞»:
— Բատն, Խատն թող մեկից
Բռնեն կատվին քամակից:
— «Ի՞նչ է խոսում չոր գանգը,
Լավ է դո՛ւ տար եղ զանգը,
Ել ի՞նչ Բատ, ինչ Ֆատան»,
Ճատաց Բատն ճաճատան:
— Լռի՛, հանդուգն.
Կոտորվե՛ք դուք.
Վախկոտներիդ յես թաղեմ.
Ճառ ասեմ, թե՞ զանգ կախեմ,—
Գոչեց Ջոջը,
Քաշեց պոչը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գզիր— գյուղական ցրիչ և տանուտերի կատարածու (անցյալում).
2. Կողակից— ամուսին, կին.
3. Անոթի— սոված.
4. Զուլում— աղետ, թշվառություն:

---

11. ՄԱԴՐԻԴԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ

1

Ուշ յերեկո յեր: Փողոցները դատարկ եյին: Ցերբեմն միայն լսվում եր մայթերով քայլող ուշացած անցորդների վոտնաձայնը: Ամենուրեք մութն եր: Տեղ-տեղ վառվում եյին փողոցի լապտերները, վորոնց ապակիները կապույտ գույնով եյին ներկված:

Մադրիդը պարուրվում եր մթությամբ՝ ֆաշիստական ոդային ավազակների կործանարար աշխատանքը խանգարելու համար:

Այդ ժամին արագ քայլերով անցնում էին յերկու պատանի:

— Յեթե մերոնցից վորևե մեկն այս ուշ ժամին տեսնի մեզ վոդոցում, Պաբլո, մի լավ կպատժի,— ասաց Նրանցից մեկը, վորը հաղիվ 11–12 տարեկան լիներ:

— Մեզ վոչինչ էլ չեն անի: Զե՞ վոր յես ծառայության մեջ եմ գտնվում, Ռաֆայել,— ասաց պարծանքով Պաբլոն:

— Մի՞թե մեզ էլ են ընդունում միլիցիայում,— հարցրեց Ռաֆայելը:

— Այո: Թաղային կոմիտեյում մարդիկ էին փընտռում, վորոնք հանձն առնեն հետևելու, վորպեսզի թաղամասում վոչ մի պատուհան լուսավորված չլինի: Յես խնդրեցի ինձ ցուցակում դրել: Նրանք ասացին, վոր մեր տարիքի տղաներն էլ կարող են ոգտակար լինել Մադրիդի պաշտպանության գործում:

— Այս բոլորի պատճառը «5–րդ սյունաշարն է»,— բացատրեց Պաբլոն:—Նա թաղնվել է քաղաքում և համապատասխան բոպե յե փնտռում հանրապետականներին թիկունքից հարվածելու համար:

Ռաֆայելը հուզմունքից չնչակտուր յեղավ: Նա արդեն լսեր եր «5–րդ սյունաշարի» մասին: Դրանք ֆաշիստներ էին, վորոնք հանրապետականների թիկունքում գաղտագողի ոժանդակում էին խռովարարներին:

— Յես Անտոնիոյից եմ լսել, յեղբորիցս,— ընդհատեց Ռաֆայելի մտքերը Պաբլոն,— վոր ֆաշիստական ռադիոկայանը յերեկոները հրամաններ է տալիս Մադրիդում թաղնված ֆաշիստներին... Մի դուցե նրանք նստած են հենց այստեղ, մութ պատուհանի հետևում և ռադիո յեն լսում... Ա՛յ թե բռնենք նրանց...

Այս խոսքերից Ռաֆայելի սիրտն ուժգին բաբախեց: Անտոնիոն, ժողովրդական միլիցիայի հրամանատարը, Պաբլոյի մեծ յեղբայրն եր:

— Դու կարծում ես, դու... ՀՀուկով սկսեց Ռաֆայելը:

Բայց նա դեռ խոսքը չեր վերջացրել, յերբ Պաբլոն քաշելով նրա թևից՝ ՀՀնջաց.

— Թաղնվենք...

Մայթի վրա քայլերի ձայներ լսվեցին: Տղաները պատերին սեղմվելով հասան հայտարարությունների սյունին և թաղնվելով նրա հետևում, սկսեցին ականջ դնել:

2

Դիմացի անկյունից մի խումբ մարդիկ յերևացին: Պաբլոյի քիչ առաջ պատմածը բորբոքել եր Ռաֆայելի յերևակայությունը:

Իսկ յեթե սրանք «5–րդ սյունաշարից» են, ֆաշիստներ են...

Մարդիկ մոտենում էին: Նրանք կիսազինվորական հագուստով էին, փամփուշտների պայուսակներն ուսերից կախած: Նրանք չորս հոգի էին: Նրանց խոսակցություններից տղաների ականջին մի քանի կցկտուր խոսք հասավ. «...Միլիցիայի 5–րդ գունդը...»:

Մի բոպե անց, մարդիկ հեռացան Կարմիր թաղամասից:

— Գիշերային պահակախումբն է,— ասաց Ռաֆայելը և թեթևացած շունչ քաշեց,— իսկ յես արդեն կարծում էի...

Պաբլոն դուրս թռավ սյունի հետևից և ընկերոջ ձեռքից բռնելով ասաց.

— Գնանք նրանց հետևից:

Նրա ձայնի մեջ անհանգստություն կար, և Ռաֆայելն արկածներ եր նախագուշակում...

Մինչ այդ, մարդիկ արդեն հասել էին լայն պողոտան:

Նրանցից մեկը մի պահ կանգ առավ և նայեց: Պաբլոն ու Ռաֆայելը կպան ծառին: Յերկինքն անաստղ ու ամպոտ եր, և տղաները համոզված էին, վոր աննկատելի կմնան:

— Տե՛ս, նրանք ինչ վոր մեկին կանգնեցրին,—ՀՀնջաց Պաբլոն, իր սուր աչքերը մթության մեջ հառելով:

— Նրանք ստուգում են անցորդների փաստաթղթերը...

— Ժողովրդական միլիցիայի գիշերային պահակախումբն է,— համոզված կերպով ՀՀնջաց Ռաֆայելը,—



ահա նրանք անցորդին բաց թողին։ Յերևի ամեն ինչ կարգին է։

Յեվ իրոք, մի քանի վայրկյան անց, նրանց կողքով անցավ լավ հագնված մի անծանոթ մարդ։ Նկատելով տղաներին, նա խուզարկու հայացքով դիտեց նրանց ու չքացավ խավարում։

— Բայց չէ՞ վոր դա ժողովրդական միլիցիայի պահակախումբն է,— նորից վերադարձավ իր մտքին Ռաֆայելը։— ուրեմն էլ ինչո՞ւ յենք նրանց հետևում։

Պաբլոյի դեմքը տաղնապ էր արտահայտում։ Մի անհայտ ուժ նրան առաջ էր մղում։

Այդ րոպեյին առջևի մութ պողոտայում խսկական կռիվ տեղի ունեցավ։

— Ո՞վքեր եք դուք և ի՞նչ եք ուզում։ Յես սերժանտ Որդալն եմ, 5-րդ գնդից։

— Հենց քեզ էլ փնտռում եյինք,— հնչեց կոպիտ պատասխանը մթության մեջ։

Տուր ու դմբոց սկսվեց։ Տղաները լսեցին վոտնաձայներ, գոռոց և բացականչություններ։ Բայց հետո պահակախումբն ըստ յերևույթին հաղթանակ տարավ։ Ամբողջ խումբը շարժվեց հին ուղղությամբ։ Պաբլոն և Ռաֆայելը հանելուկային մարդկանցից հետ չմնալու համար ստիպված եյին վազել։

Մի քանի րոպե անց, մարդիկ կանգ առան պարտեզ ունեցող մի տան առջև։ Դարպասների մոտ կանգնած եր անուշադրության մատնված մի ավտոմեքենա։

Մարդիկ տուն մտան։ Պաբլոն դաղտագողի մոտեցավ այդու դռներին, փորձեց բաց անել։ «Փակ է»,— դժգոհությամբ չչնչաց նա։ Տղաներն արագ մագլցեցին ցանկապատով և մտան այդին։ Ներքնահարկի պատուհաններից մեկում աղոտ լույս եր փայլում։ Պաբլոն և Ռաֆայելը պառկեցին գետնին, մտադրվելով աննկատելի կերպով սողալ դեպի տունը, բայց հանկարծ դուռը բացվեց և լույսն ընկավ նրանց վրա։

Խավար ստվերներն ուղիղ նրանց վրա եյին շարժվում։ Ընկերներն արագ վեր թռան և սլացան դեպի ցախատունը, վոր գտնվում եր այդու ծայրում։ Խցկվելով մի անկյուն, նրանք կպան իրար և վախից ինչ վոր լաթերով ծածկվեցին։

— Նրանք այս կողմն են գալիս,— կամաց արտասանեց Ռաֆայելը։

Մի րոպե անց, մարդիկ մտան ցախատուն։ Լապտերների լույսի տակ ցախատունն անուշադրության մատնված զարաժ դուրս յեկավ։ Իրար սեղմված, տղաները վախեցած ականջ եյին դնում։

— Այդպես ուրեմն, դու սերժանտ Որդալն ես, 5-րդ գնդից, ախ դու չո՛ւն,— հեգնորեն դոռաց ինչ վոր մեկը։

— Ամբողջ շաբաթ է՝ մենք փնտռում ենք քեզ և քո մտերիմներին։

Սերժանտն ըստ յերևույթին ամեն ինչ հասկացել եր։

— Զգուշացե՛ք,— ասաց նա հանգիստ,— ժողովրդական ճակատը բոլորի համար վրեժ կլուծի։

— Ի՞նչ ասացիր դու,— ժողովրդական ճակա՞տ,— գարշելի՛։ Վաղը, կամ մյուս որը վերջ կտրվի ձեր ժողովրդական ճակատին

— Սրանք «5-րդ սյունաշարի» ֆաշիստներն են,— տնքաց Ռաֆայելը։

Նա նայում եր սերժանտ Որդալի և նրա յերկու ընկերների քարացած դեմքերին:

Ավազակները նրանց լուսավորում եյին դրպանի լապտերներով:

Անզգամներից մեկի ձեռքին դանակ փայլեց:

— Այժմ նռնակներով դու այլևս չեռ քանդի մեր տանկերը, կարմիր խոզ,— խռպոտ ձայնով ասաց նա և խփեց սերժանտ Որդալի կրծքին: Նույն վայրկյանին մյուսները դանակներով հարձակվեցին Որդալի անդեն ընկերների վրա:

— «5-րդ սյունաշարը» վրեժ ե լուծում,— վոռնաց չարագործը և մահացու հարված հասցրեց սերժանտին:— Ճակատում մեր զինվորների գնդակները ձեզ չհասան, սակայն չեք փախչի մեր սրերից:

Մարդասպանները մոլեգնությամբ հարձակվեցին ժողովրդական ճակատի մարտիկների արյունոտած դիակների վրա, նոր հարվածներ հասցնելով նրանց:

Ռաֆայելն ուղում եր ճչալ. Պաբլոն անշարժ, անկենդան հայացքով ձեռքով արագ փակեց ընկերոջ բերանը:

4

Սոսկալի տեսիլքից ցնցված, Պաբլոն և Ռաֆայելը չեյին հիշում, թե ինչպես եյին դուրս յեկել ահարկու տեղից: Ռաֆայելը պատռել եր իր շապիկը, յերևի ցանկապատից իջնելիս, իսկ Պաբլոն չեր նկատել անգամ, վոր կորցրել ե վոտնամանը:

Նրանք վազում եյին, ուշադրություն չդարձնելով հոգնածությանը, և նրանց բորբոքված դլխի միջով հազարավոր մտքեր եյին անցնում. «սերժանտ Որդալ»... «5-րդ սյունաշար»...

Շուտով նրանք հասան առաջին փողոցը. հոգատար մարդիկ շրջապատեցին նրանց:

— Պա՛բլո, Ռա՛ֆայել,— կանչում եյին նրանց,— ո՞ւր եյիք կորել:

Դրանք տնային կոմիտեյի ընկերներն եյին: Նրանց մեջ եր Պաբլոյի յեղբայրը, Անտոնիոն: Տղաները շնչակտուր եյին յեղել:

Քիչ առաջ տեսածի սարսափը թույլ չեր տալիս նրանց խոսել:

— «5-րդ սյունաշարը»... սպանեց սերժանտ Որդալին և ելի յերկու մարտիկների...— կցկտուր պատմեցին յերեխաները:

— Նստեցեք շոֆերի կողքին, ցո՛ւյց տվեք նրան ճանապարհը,— ասաց յեղբայրը Պաբլոյին և Ռաֆայելին:

Մեքենան սլացավ առաջ, ապա թեքվեց դեպի սպանության վայրը, վորտեղից դեռ չեյին հեռացել ֆաշիստները:

Հարվածն արագ ու անսպասելի յեր: Պարտեզ ունեցող տունն ողակեցին զինված մարտիկները:

— Հանձնվեցե՛ք, 5-րդ գունդը յեկավ ընկերների վրեժը լուծելու:

Ֆաշիստական ավազակները դիմադրեցին, բայց ստիպված յեղան անձնատուր լինել:

Ժողովրդական միլիցիայի պատանի ոգնականներն այսպես հայտնաբերեցին «5-րդ սյունաշար» կոչված ֆաշիստական դավադիրների խոշոր բունը:

Ցերեսուն ֆաշիստ ավազակներ հանձնված եյին հանրապետական Իսպանիայի ժողովրդի խիստ դատաստանին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Պարուրվել— ծածկվել, թաղվել.
2. Պողոտա— լայն ու հարթ փողոց.
3. Լաթ— շոր (ցնցոտի).
4. Նռնակ— փոքր ռումբ, վոր հաճախ նետում են ձեռքով.
5. Սերժանտ— սպայական ցածր աստիճան.
6. Մոլեգնություն— կատաղություն.
7. Դավադիր— խռովարարական գաղտնի աշխատանք տանող:

ՀԱՐՑԵՐ

1. Մադրիդի պաշտպանության գործում ինչո՞վ եյին ոգնում յերեխաները.
2. Հանրապետականների 5-րդ գնդի մարտիկներն ո՞ւմ հետ կռվի բռնվեցին.
3. Ֆաշիստական «5-րդ սյունաշարը» ո՞ւմ ոգնությամբ հայտնաբերվեց և վոչնչացվեց:

12· ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ՈՐՈՐԸ

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում
Եվ մայրական քաղցր որոր·
Ցես մեծ կռվի յերգ եմ հյուսում
Որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսո՞ւմ ես՝ այնտեղ՝ դրսում
Շաչ ու շառա՛չ, լաց ու կո՛ծ,—
Մեր արյունն է այնտեղ հոսում՝
Ներկած և՛ տուն, և՛ փողոց···

Այնտեղ զնդեր խառն ու ցրիվ,
Բանվոր զնդեր ահարկու,
Քաջ մղում են մի մեծ կռիվ—
Աշխատանքի և վոսկու···

Այնտեղ վոսկին՝ տեր-տիրական,
Վորպես դահիճ դրժնադեմ,
Սուր է պարզում մեր որական
Թույնով շաղախ հացի դեմ···

Այնտեղ հայրեր, այնտեղ վորդիք
Մի նոր կյանքի յեղերքում,
Վորպես մի-մի հերոս-մարտիկ
Մահն են գրկում ու յերգում···

Այնտեղ է և մեր աչքի լույս,
Մեր ոջախի վառ ճրագ՝
Հայրդ կռվում, սիրան ալեհույզ,
Սրտում և՛ թույն, և՛ կրակ:

Մի՛ լար, վորդի՛ս, վոր չես լսում
Եվ մայրական քաղցր որոր·
Ցես մեծ կռվի յերգ եմ հյուսում
Որոցքիդ մոտ ամեն որ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Դահիճ— մահապարտին սպանող (մահվան պատիժ կատարող), այստեղ՝ անգութ·
2· Դժնադեմ— չատ վատ, զզվելի, սոսկալի դեմքով·
3· Ալեհույզ— հուզված·
4· Որոցք— որորոց:

13· ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐԵՎԸ

1

Աշնանային ամպամած գիշեր եր:

Լոռու ձորերը շնչում են ահավոր տագնապով: Անտառի խշշոցի հետ մեկ-մեկ լսվում է սուր, անախորժ մի վայուն· դժվար է վորոշել՝ քաղցած գա՞յլն է այդ Ոռնում, թե մայրը կորցրած ձագը:

Շահալիի կամուրջը, վոր ձգված է մի ահավոր անդունդի վրա, վաղուց է, վոր կանոնավոր ճանապարհորդ չի տեսել: Գնացքն իր ծանրությամբ այլևս չի ճնշում նրա մեջքը: Մեկ-մեկ ուժեղ քամին անտառից չորացած ծառեր է պոկում ու շպրտում կամուրջին:

Խավարն ավելի ճնշող է դառնում:

Կամուրջի մեկ ծայրին հանկարծ լսվում է զրնգոց:

Բայց այդ պահին, նույնպես հանկարծակի՝ կամուրջի մյուս ծայրից ևս լսվում է զրնգոց և շտապում է միանալ առաջին զրնգոցին:

Միաժամանակ կամուրջի յերկու ծայրերից լսվում են մարդկային շնչառության ձայներ: Զրնգոցը կրկնվում է, շնչառությունը դառնում է արագ, հուզական:

Կամուրջի հյուսիսային ծայրից—մենշեվիկյան Վրաստանի սահմանն եր, հարավային ծայրից՝ դաշնակցական Հայաստանի:

Յերկու զինված պահակ, մեկը հյուսիսից, մյուսը հարավից, հայացքները հառել են գիշերային խավարի մեջ և ինչ-վոր բան են վորոճում իրենց մտքում:

Մենակ են, վաղուց է անցել պահակությունը փոխելու ժամը, բայց վոչ վոք չի մոտենում նրանց՝ փոխարինելու համար: Նրան անհանդստացած են և այդ անհանդիստ շարժումներից էր, վոր նրանց հրացանների ծայրերը դիպան կամուրջի յերկաթե կողերին, արձակեցին խորհրդավոր զրնգոց, և պահակների շնչառությունն արագացավ:

Հարավային կողմի—Հայաստանի պահակը, թիկնեղ մի յերիտասարդ, ուշադիր նայում էր դիմացը, կամուրջի հակառակ ծայրը:

Յերրորդ անգամն է, վոր յերիտասարդը պահակ է կանգնում, յերրորդ անգամ այսոր նա լսեց պետի խիստ ու հրամայողական կարգադրությունները՝ լինել զգաստ, ուշադիր, թույլ չտալ թշնամուն մոտենալու իրեն կամ փորձ անելու կամուրջն անցնել: Յեվ Կարապետը,— այսպես էր յերիտասարդի անունը,— ահա չորս ժամ է, վոր նայում է դիմացը, ունկնդրում, բայց մինչ այդ վոչինչ չի տեսել ու լսել:

2

Այս առավոտ նա բոլորովին պատահաբար կարդաց ձեռքն ընկած մի լրագիր և մինչ այժմ այդ կարդացածի տպավորության տակ էր...

Կարապետի աչքերն արցունքով լցվեցին. նա հիշեց իր ծնողներին, վորոնք նույնպես մեկ տարի առաջ զոհ եյին գնացել անհագուրդ սովին:

Նա մի պահ հետև նայեց, թվում էր, թե ահռելի տեսքով ինչ վոր բան էր կանգնած այնտեղ, վոր այնպես անողոքաբար տանջում էր ամենքին, տանջում, վայրենացնում: Թշնամի, թշնամի,— կրկնեց նա և մի քայլ առաջ գնաց: Նրան թվաց, թե դիմացի պահակն ել առաջ անցավ և այդ զգացումից նա հրացանը ձեռքն առավ... Պատրաստ վիճակում առաջ շարժվեց:

Կարապետի սրտում զարթնեց մի հին կարոտած զգացում, տեսնել, խոսել մեկի հետ, խոսել սրտանց, խոսել այն ամենի մասին, ինչ ինքն զգացել ու վերապրել է այս տարվա, մանավանդ այս ցերեկվա ու գիշերվա ընթացքում, այդ սարսափելի լուրը կարդալուց հետո: Յեվ թշնամին այլևս սարսափելի չեր նրան, և այդ պատճառով նա ավելի համարձակ առաջ շարժվեց:

Զարմանալի յե. նույն համարձակությամբ առաջ էր շարժվում նաև դիմացի պահակը. յոթ-ութ մետրի վրա պահակները կանգնեցին և մթության մեջ նայում եյին միմյանց:

Դժվար է վորոշել միմյանց դիմագծեր, ուզում են ձայն տալ մեկ-մեկու, բայց չգիտեն՝ ի՞նչ ասեն, ինչի՞ց սկսեն:

3

Լուսինը նորից դուրս է նայում ամպերի տակից, լուսավորում պահակների դեմքը: Յերկու պահակները հրացանները սեղմած՝ նայում են միմյանց, նայում են յերկար: Կարապետը նայում է թշնամի կոչվածի դեմքին և նրան թվում է, թե դիմացինի դեմքի վրա կարդում է ինչ վոր ծանոթ բան, թվում է, թե դիմացինը նույնպես ապրել է ինչ վոր խոր, խորհրդավոր բան... Ի՞նչ է զգացել և ի՞նչ է զգում դիմացինը: Ի՞նչ անել, չե՞ վոր ինքը թշնամու դիմացն է. բարձրացնել հրացանը, զարկե՞լ, գերի՞ վերցնել: Նույն բանը մտածում էր դիմացինը:

Յեվ ահա նորից ու նորից հրացանները սեղմվում են նրանց ձեռքերում, բարձրանում, և հանկարծ տեղի յե ունենում մի տարորինակ բան. յերկուսն ել հրացանները հետ են չպրտում թեվերին և միաժամանակ լսվում է.

— Դաթիկո՛:

— Կարապե՛տ:

Ու յերկու կողմից վազում, հասնում են միմյանց և ջերմորեն գրկախառնվելով մի քանի րոպե, ինչպես վաղուց բաժանված յեղբայրներ, համբուրում են միմյանց: Նույնիսկ մի քանի կաթիլ արցունք ցողում է նրանց առնական դեմքը:

— Դաթիկո՛:

— Այո՛, ի հարկե:

— Կարապե՛տ:

— Այո՛, ի հարկե:

Ցերկու սրտակից ընկերներ... Ցեվ հուզմունքից խեղդվող կոկորդի միջից հազիվ դուրս են գալիս մի քանի կցկտուր բառեր. այնտեղ Թբիլիսիում նրանք մի քանի տարի շարունակ միասին են աշխատել Աղելխանովի կոշիկի գործարանում: Համատեղ պայքար, գործադուլ, վոռտիկանական մտրակ, ընդհատակ: Ցեվ այս կցկտուր բառերով նրանք վերապրում են իրենց անցած կյանքը:

Ցեվ Դաթիկոն հանկարծ վաղեմի զվարթությամբ ձեռքը զարկում է Կարապետի մեջքին, շոշափում նրա հրացանը և բացականչում.

— Ցեվ այսպես, Կարապետ՝ մենք թշնամի՞:

Ու ծիծաղում է կուշտ և ծիծաղի արձագանգները տարածվում են խոր ու խավար անտառում:

— Թշնամի՛,— կրկնում է Կարապետը և ծիծաղով նորից ու նորից փարվում է Դաթիկոյին:

Լուսինը նորից թագնվում է ամպի տակ: Հոգ չէ, այժմ Կարապետն ու Դաթիկոն այդ չեն էլ զգում, ի՞նչ լուսին, յերբ արև՛, ջերմ ու կենսատու արև՛ է ծագել նրանց հոգում:

***

Մի քանի շաբաթից հետո պարտիզանական ջոկատը Կարապետի և Դաթիկոյի ղեկավարությամբ գնում էր միանալու Կարմիր բանակի զորամասերին:

Հոկտեմբերյան արևը հուրհրատում էր բոլոր պարտիզանների սրտերում:

— Ի՞նչ ջերմ, ի՞նչ կենարար է Հոկտեմբերի արևը, Դաթիկո՛,— կրկնում էր շարունակ Կարապետը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Անհագուրդ— անկուշտ.
2. Ունկնդրել— լսել, ականջ դնել.
3. Փարվել— փաթաթվել:

———

14. ՆԱՄԱԿԸ ՉՀԱՍԱՎ

1

Ձմեռվա խստաշունչ մի որ էր: Ցուրտը կտրում էր թրի նման: Ցերկինքը, սև ու թանձր վարագույրով իջել, պատել էր լեռներն ու դաշտերը:

Փողոցներում կույտ-կույտ դիզված ձյունների վրայից ագռավները շրջում էին վախկոտ նայվածքով:

Հաստ վերարկուներով, գլուխներն ու վոտները ծածկված, մարդիկ իրենց տաք սենյակներից դուրս գալով փողոց, վոտքով կամ կառքով հանդիստ անցնում էին: Այս սառեցնող, այս այրող ձմեռը նրանց համար, իհարկե, վոչ այլ ինչ էր, յեթե վոչ հաճելի մի զբոսանք:

Կուրբանը այս յեղանակին նստել էր Շեյթան բազարի ծայրին, նամակներ գրող իր համագյուղացի մոլլա Ֆարզ Ալու մոտ: Ցրտից ձեռքերն ու դեմքը կապտած, մի ձեռքով բռնել էր իր հին և պատառոտված վերարկուի բաց ոճիքը, մյուսով փորձում էր ձյունից մաքրել իր մաշված կոշիկները, վորոնք սառցի նման կպել էին վոտներին:

— Մոլլա՛, ինձ համար մի նամակ գրիր: Տես, թե մի տարվա մեջ վորքա՛ն ոգուտ եմ տալիս քեզ, դեռ մի տարի չկա իմ ծննդավայրից գալս, և ահա այս հինգերորդ նամակն է, վոր գրում ես ինձ համար:

Ֆարզ Ալի մոլլան իրար մոտեցրեց ցրտից կծկված իր ձեռները, հորանջելով հանեց մի թղթի կտոր և դրեց ծնկին:

— Հայրենակի՛ց, ի՞նչ պիտի գրվի:

Կուրբանը մի փոքր էլ մոտենալով մոլլային, գաղտնի մի բան ասելու ձևով՝ սկսեց փսփսալ.

— Մոլլա՛, նախ և առաջ յերեխաների մորը իմ կողքից բարև գրիր: Գրիր, վոր իմ փոխարեն համբուրի Անա հանըմիս ու Մամիշիս աչքերը, նրանց լավ ուշադրություն դարձնի: Հետո գրի՛ր, վոր յես էլ վողջ եմ ու առողջ: Արդեն ձեզ տասնհինգ մանեթ եմ ուղարկել, բայրամը մոտենալիս նորից կուղարկեմ: Ցերեխաները թող խեղճություն չքաշեն, յես էլ գարնան վերջին ամսին գալու յեմ:

Մոլլա Ֆարզ Ալին գրիչը թաթախեց թանաքամանի

մեջ և ուզում էր գրել, բայց թանաքը պնդացել էր. Մոլլան լեզվի ծայրովը մի քիչ թուք կաթեցրեց թանաքամանի մեջ և քիչ էլ խառնելուց հետո՝ սկսեց գրել:

Կուրբանը կուրծքը բաց, արխալուղի ուշապկի արանքից մինչև վոսկորները թափանցող այս աղեխարշ ցրտից սմքվել, մի կծիկ էր դառել:

Ապա նա ասաց.

— Մոլլա՛ հորեղբայր, յես աշխատում եմ են յամանմարդու հորերում: Այժմ արդեն նավթահորը 30 սաժենից ներքև է իջել, վորքան ադաչում ենք՝ ա՛յ ադա, մեր աշխատավարձը մի փոքր ավելացրու, վորովհետև ներքևում աշխատելը շատ է դժվար, մաղութի և դաղի հոտից մարդու շունչը կտրվում է,— անգութ անիրավը չի համաձայնվում:— «Պիտի փորեք առաջվա պայմաններով, յեթե վոչ՝ ձեր իրավունքը չեմ տա»— ասում է նա: Մոլլա՛, եստեղ շատ դժվար է փող աշխատելը, քո արհեստը շատ հեշտ է. որական հինգ-տասս նամակ, չորս-հինգ ադռթք գրես՝ բավական է: Ել ի՞նչ ես ուզում...

Մոլլան իր աբայի մեջ պինդ փաթաթվելուց հետո նամակը կարդաց Կուրբանին: Կուրբանը բերանը բաց՝ կարծես ուզում էր կուլ տալ մոլլի բերանից յելած ամեն մի խոսքը: Նամակը մինչև վերջը լսեց, ապա դեմքից ու աչքերից ուրախության կայծեր ցոլացնելով՝ ասաց.

— Մոլլա՛, Հուսեյինին ել բարև գրիր, ասա՛, վոր մինչև իմ դալը յերեխաներին ուշադրություն դարձնի և պատասխանի մեջ գրի, թե մեր կարմիր կովը մնո՞ւմ է արդյոք: Մեկ ել գրի՛, վոր դալուս Անա հանրմիս և Մամիչիս համար կարմիր վարդերով թաշկինակ եմ բերելու...

Մոլլա Ֆարզ Ալին գրելուց—վերջացնելուց հետո նամակը ծալեց, ծրարի մեջ դրեց, և դառնալով դեպի Կուրբանը՝ հարցրեց.

— Հայրենակի՛ց, ծրարի վրա ո՞ւմ անունը պիտի լինի:

Կուրբանը, ձեռքով ծոծրակը քորելով, պատասխանեց.

— Հա՛, մոլլա՛, գրի՛ր, վոր պետք է հասնի Կուրբանի յերեխաների մորը:

Մոլլան, ծրարի վրա ել գրելով, նամակը մեկնեց Կուրբանին: Կուրբանը նամակը վերցրեց և ուրախությունը դեմքին՝ մի լավ դիտեց և ուզում էր ծոցը դնի: Նամակը ձեռից ընկավ դետին: Շտապ վերցրեց, մաքրեց մի քիչ և կրկին ծոցը դրեց: Ապա բաց արեց քսակը և յերկու շահին մոլլի ափը կոխելով՝

— Ա՛ռ, հայրենակի՛ց, բայրամին ելի նամակ եմ գրել տալու: Ինձանից քեզ շատ ոգուտ է հասնելու,— ասաց ու հեռացավ մոլլի մոտից:

2

Ճանապարհին ձեռքով ամուր բռնած ծոցի նամակը, արագ քայլերով գնում էր Կուրբանը դեպի իր հայրենակից Ղուլամ Ալու տունը. ուզում էր թե՛ նամակը նրան հանձնել, թե՛ բերանացի մի քանի հանձնարարություններ անել:

Կուրբանը քայլելիս մտածում էր.— «Բախտավոր մարդ է Ղուլամը, բավականաչափ փող է հավաքել, պիտի գնա իր զավակներին հասնի... Ո՞հ, մի ամսից հետո այն տեղերը վորքա՞ն գեղեցիկ են լինելու... Դաշտերը, լեռներն ու հովիտները զմրուխտի գորգերով կծածկվեն, ծաղիկները կծաղկեն, ծառերը կկանաչեն, գարնան շնորհալի հյուրերը՝ ծիծեռնակը, ուրուրն ու արագիլը, յերամ-յերամ վերադառնալով՝ իրենց բները կշինեն, առավոտ-յերեկո իրենց քաղցր յերգ ու կանչերով կզվարթացնեն մարդկանց սրտերը... Ամեն կողմ կսկսվեն բոստանի և ցանքսի աշխատանքները... Ա՜խ, չքավորություն, վոր ինձ կարոտ ես թողնում այս գեղեցկություններից, իմ ընտանիքից-զավակներից...»:

Մեկ ել ձեռքը ծոցը տարավ և նամակն իր այրած կրծքին սեղմելով, շարունակեց ճանապարհը:

Քիչ անց, իր հայրենակից Ղուլամ Ալու տան առջևն էր հասել: Բայց դուռը փակ էր: Տխուր ու մտածկոտ վերադարձավ իր տեղը: Թափառաշրջիկի նման սկսեց շրջել մրջյունների պես յեռացող բանվորների մեջ: Յերբ նկատեց իր մյուս հայրենակցին, մոտենալով հարցրեց նրա քեֆը: Ղուլամ Ալին քաղաք էր գնացել: Կուրբանը խնդրեց

հայրենակցին, վոր Ղուլամը գալուն պես նրան իմաց անի. վոր երեն չտեսած՝ չդնա, վոր ինքը թե՛ ամանաթ և թե՛ բան ունի նրա միջոցով ուղարկելու:

Այս ասելուց հետո Կուրբանը վերադարձավ և իջավ հորն՝ աշխատելու:

3

Բանվորները հորի շուրջն հավաքված աշխատում են:

— Հե՛յ, աղա՛, մենք եղի են պոչն ենք, խակի առաջ չենք գնում, — ասում է Վերդին. — դիտե՞ս, վոր այժմ նավթահորի ամենադժվար մասումն ենք. հորը ածդահայի պես բերանը բացել է՝ զոհ է ուզում:

Իր ընկեր Սաֆարը, կտրելով նրա խոսքը, ձեռքը մեկնում է դեպի հեռուն, դեպի նավթահորերը, և ասում է.

— Նայի՛ր, այս բոլոր մասերում, վորտեղ վոր վոտքդ դնես, ամեն մի ափ հողին յեթե մի բրիչ զարկես՝ բանվորի վոսկորներ են դուրս գալու, բանվորի վողբ ես լսելու: Այն բարձր տների տաքուկ սենյակներում, հաղար ու մի նազանքի ու ճոխության մեջ ապրող...

Հաջի Կուլին, հանքատերը, կտրելով Սաֆարի խոսքը, վոտքը գետին է խփում ու գոռգոռում.— «Ձեր հոգին դո՛ւրս գա, փող աշխատելը հեշտ բա՞ն իմացաք. դուք ձեր անձն եք տալիս, մենք ել՝ մեր հատիկ-հատիկ վոսկիները»:

— Սաֆա՛ր, Սաֆա՛ր, Կուրբանը պարանը շարժում է...

Այս աղաղակի վրա Սաֆարը և Վերդին վազեցին հորի բերանի մոտ և յերբ գլուխները դեպի ցած ծռելով, լսեցին ներքևում պայթած դազի աղմուկը, սարսափով հետ քաշվեցին:

Ցեվ յերկուսը միասին ահաբեկված ձայնով գոռացին.

— Կուրբանն ել այսպես գնաց... Հե՛յ վախ, ափսո՛ս...

Հաջի Կուլին լսելով աղմուկը, վախվխելով մոտեցավ հորի բերանին և զգուշությամբ հորի մի կողքից թեքվելով՝ սկսեց հորի ներսը դիտել: Հանկարծ մի ուրախություն ճառագայթեց նրա դեմքի վրա: Նրա շրթունքներն արտահայտում եյին ներքին գոհունակություն ու հրճվանք, և չկարողանալով զսպել իր ուրախությունը՝ բարձրը ձայնով սկսեց գոռալ.

— Ե՛յ, հայվանները, ի՞նչ եք ապուշ-ապուշ նայում, չե՞ք տեսնում՝ աղբյուրի բերանը բացվել է. կամաց-կամաց նավթ է հոսում:

***

Կես ժամ չանցած՝ յերբ Սաֆարն ու Վերդին զննում եյին Կուրբանի հորի մոտ թողած զգեստները, տեսան՝ մի նամակ գետին ընկավ: Նամակի ծրարի վրա գրված եր. «Այս նամակը պետք է հասնի Կուրբանի յերեխաների մոտը...»:

Սաֆարն ու Վերդին մի քանի բոպե սառած և զառնագին հայացքներով դիտում եյին նամակը և մորմոքելով ասացին.

— Խե՛ղճ Կուրբան, նամակը չհասավ...

Այսպես եր Բաքվի բանվորների կյանքը Խորհրդային իշխանությունից առաջ, յերբ յերկրի տերերն եյին շահագործողները:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բայրամ— մահմեդականների զարնան կրոնական տոնը.
2. Արխալուղ— շորի մի տեսակ.
3. Սմբվել— կուչ յեկել.
4. Աղեխարշ— սաստիկ, լացացնող.
5. Զմրուխտ— կապույտ-կանաչ թանգագին քար.
6. Պրկվել— ճզվել.
7. Ամանաթ— մեկին վստահացած մի իր (ավանդ).
8. Նազանք— քնքշություն.
9. Իրավունք— աշխատավարձ (այստեղ):

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ցանկություն ուներ Կուրբանը, վորը չկատարվեց.
2. Ինչո՞ւ այս պատմվածքը վերնագրած է՝ «Նամակը չհասավ»:

15· ՀԻՆ ՅԵՐԵՎԱՆԸ

Քաղաքը, վոր մի մեծ գյուղի յե նման, անցել է իր առորյային:

Շուկայի ընդարձակ հրապարակը թնդում է տենդոտ: Մրգեղենի, կարմիր տաքտեղի, պամիդորի, պաղրիջանի, ձմերուկի ու սեխի բլուրների արանքում վխտում են հարյուրավոր գնորդներ:

Առնող-ծախող, անասուններ, ձայն ձայնի տված հրմշտում են, աղմկում: Այդ ժխորի միջից յերբեմն լրվում է վոտի տակ ընկած չան կլանչը, վորին հետևում է փախչող, հեռացող կաղկանձ: Ղանթար ծածկի տակ, տախտակե սեղանների վրա, իրար են սեղմվել պանիր ու յուղ, սիսեռ ու լորի, վոսպ ու բրինձ, կորկոտ ու ճավար, աճառ ու ոչտա, չորթան ու շոռ ծախող գյուղացիները:

Անհամար ճանճեր, իշամեղուներ, մեղուներ, մլակ ու մոծակ լիությունից արբեցած պտտվում են մրգեղենի քթոցների գլխին:

Վոստիկանները ցրված ամբողջ շուկայում «կարգ են պաշտպանում», կռվի ու տուրուդմբոցի սպասում, վոր իրենք էլ լիանան կաշառքով:

Տոթը քանի գնում սաստկանում է, տերև չի շարժվում:

Կեսորն անց՝ շուկայում յեռ ու զեռը պակասում է, աղմուկը նվազում, և ընդարձակ հրապարակն աստիճանաբար դատարկվում, իսկ յերեկոյան մոտ՝ այդ ընդարձակ տարածությունը քստմնելի պատկեր ներկայացնում: Ամեն կողմ ձմերուկի ու սեխի կեղևներ, ճխլված, ցեխի հետ արորված պամիդորի ու կաղամբի թերթեր, բանջարեղենի ավելցուկներ, փտած մրգեր, կեղտ, ապականություն...

16· ԲՈՒ

(Հեքիաթ)

1

Հնում բուն թռչունների իշխանն եր: Նրա գլուխը մեծ եր, տեսքը՝ սարսափելի: Թռչուններին ավելի վախեցնելու համար բուն ուռչում, փքվում եր, մեծ-մեծ աչքերը կրակի նման պսպղացնում, ամուր կտուցը բաց ու խուփ եր անում, ֆռռացնում:

Նրա ահից թռչունները դողում եյին, բայց ի՞նչ կարող եյին անել. չեյին համարձակվում բողոքել ու շարունակում եյին ծառայել մեծագլուխ իշխանին:

Թռչուններից յուրաքանչյուրն իր գործն ուներ:

Արտուտը մինչև արևածագը բարձրանում եր վերվեր, անցնում անտառի ու դաշտի վրայով և դանդահարելով արթնացնում եր թռչուններին, վոր բոլորն առանց ուշանալու սկսեյին ծառայել իշխանին:

Հոպոպը վարսավիրի պաշտոն եր վարում. ամեն որ առավոտները կարգի յեր բերում, գեղեցկացնում ինչպես բուի, այնպես և նրա ընտանիքի անդամների բմբուլները, բայց բուն դարձյալ անճոռնի յեր ու սարսափելի:

Սոխակը յերգում եր ու իր դայլայլով քաղցրացնում ուռած ու յերես առած իշխանի անհոգ կյանքը:

Պիրոլը դայակ եր. իշխան բուի զավակներին եր խնամում: Նախշուն որորոցը հմտությամբ կախ եր տալիս դալար ճյուղերից ու նաղանքով որորում իշխանի զավակներին:

Զարդն իր ընկերներով իշխանի ծաղրածուն եյին. իշխանին զվարճացնելու համար չարունակ կատակներ եյին անում, ծաղրում թռչուններին ու կենդանիներին:

Գող ու խարդախ ագռավը իշխան բուի պալատական քահանան եր:

— Բուին աստված է կարգել ձեզ իշխան,— քարոզում եր նա.— առանց իշխանի դուք իրար կուտեք: Աղոթեցե՛ք նրա համար և միշտ հավատարիմ յեղեք նրան:

Գարձենկոտ ու սուտասան կաչաղակը անվերջ կչկչում

եր, շատախոսում ու իշխան բուի դովասանքով ամենքի ականջները խլացնում:

Յախատրոպը լրտեսի պաշտոն եր կատարում: Դես ու դեն եր ընկնում, մտնում ծակ ու ծուկերը և տեսածի ու լսածի մասին զեկուցում եր իշխանին:

Աղավնին փոստատար եր. յերբ կարիք եր լինում վորևե տեղ նամակ կամ տեղեկություն ուղարկել, նրան թռցնում եյին խսկույն ու նա էլ պարզերես կատարում եր իր պարտականությունները:

Ցերկարասրունք կռունկը շարունակ շրջում եր յերկրե յերկիր ու տեղյակ եր պահում բոլորին հեռավոր աշխարհների անց ու դարձի մասին:

Նախշուն փայտփորն անտառների պահապան եր դարձել. կանգնում եր ծառին, վոտի յերկու մատն առաջ եր ուղղում, յերկուսը՝ հետ, պոչը հենում եր ընին ու պըտրտվում ծառի չորս կողմը: Ամուր կտուցով զարկում, ծակում եր ծառի կեղևը և վոչնչացնում միջատներին, վոր ծառին չվնասեյին, անտառը չփչանար:

Բարձրահասակ ու յերկարավիզ ձկնկուլը ձկնորսի պաշտոն եր կատարում: Ժամերով անշարժ կանգնում եր ջրում և վիզը ձգած՝ ձկներին եր հետևում: Զուկը յերևալուն պես՝ զարկում եր կտուցը, վորսում:

Ցինը, բազեն, ուրուրը վորսի եյին գնում հեռուները կամ հերթով պահապան եյին կանգնում իշխանի դռանը: Ցերբ խաբարբղան ցախատրոպը նրանց ականջին վորևե բան եր փսփսում, խսկույն հարձակվում եյին կասկածելի թըվացողի վրա ու պատառոտում: Ո՞վ կհամարձակվեր ծըպտուն հանել, բողոքել նրանց չարագործությունների դեմ...

Արծիվը զորքի գլխավոր հրամանատարն եր: Նա լայն կուրծք ուներ, մեծ ու կեռ կտուց, ամուր մագիլներ և ուժեղ թևեր: Հպարտ-հպարտ ճախրում եր յերկնքում ու այնտեղից իր սրատես աչքերով դիտում չորս կողմը:

Մյուս թռչուններն էլ այս կամ այն պաշտոնն եյին կատարում:

2

Ապրում եր հաստագլուխ, ուռած իշխան բուն, վոչ մի գործ չեր կատարում: Ապրում եր ուրիշների աշխատանքով՝ անհոգ ու անդարդ, և հպատակներին սարսափեցնելու համար ավելի ահալի տեսք եր տալիս իր մարմնին:

Մի անգամ պատահաբար ցախատրոպի ականջն ընկավ իշխան բուի զրույցն իր ամուսնու՝ մարիկ բուի հետ:

— Ի՞նչ հիմար են այս թռչունները. յեթե իմանան թե ինչ չնչին ուժի տեր եմ, մի որ էլ չեն թողնի...

Իր սեփական ականջով լսած այս զրույցը ցախատրոպն աշխարհով մեկ արավ: Մտածմունքի մեջ ընկան թռչունները և յերկար ու բարակ խորհրդակցելուց հետո վորոշեցին ապստամբել:

Մի անգամ, յերբ բուի պահակները վորսի եյին գնացել, թռչունները հավաքվեցին ու պալատի առաջ մեծ աղմուկ բարձրացրին: Վոմանք կողմնակից եյին ապստամբության, մյուսները վախենում եյին...

Զայրացած բուն դուրս յեկավ, աչքերը չռեց խռովարարների վրա, բերանը բաց ուխուի արեց, կակտացրեց... թռչունները վախեցան, սկսեցին դողդողալ, իսկ վախկոտ հոպոպն ուշաղնաց յեղավ: Բայց հանդես յեկան համարձակներն ու սկսեցին սպառնալ.

— Ա՛յ, դու եսպես ու ենպես, ո՞ւմ ես վախեցնում...

— Մի՛ վախենաք, յեղբայրներ, զարկե՛ք այդ ուռածին,— գոռգոռացին մյուսները: Շատերը սիրտ առան, հարձակվեցին բուի վրա, ու սկսվեց կատաղի կռիվը...

3

Այս բանը կատարվեց խիտ ու մութ անտառում: Արծիվը հեռու յեր գնացել ու բան չտեսավ: Ցինը, բազեն և ուրուրը լսեցին խռովության մասին ու չուզեցին վերադառնալ, գլուխները փորձանքի մեջ գցել: Պահակ կանգնածներն էլ կատաղի կռիվ եյին մղում ու կյանքի գնով պաշտպանում բուին, սակայն չդիմացան անհամար թըռչունների հարձակման:

Կռիվը շարունակվեց ամբողջ որը: Անտառի խոտը

արյունով ներկվեց, իսկ ողը լցվեց թռչունների բարբուլով...

Ցերը մթնեց, բուն իր գլխի ճարը տեսավ: Փախավ ու թաղնվեց ծառի փչակում: Շատ ծվծվացին թռչունները, շատ վորոնեցին, մինչև առավոտ հսկեցին, բայց վոչ մի տեղ չգտան բուին, վոչ կենդանի և վոչ էլ մեռած:

Դեռ մինչև հիմա էլ թռչունները վորոնում են բուին, բայց չեն հանդիպում: Բուն ցերեկները թաղնվում է ծառերի փչակներում կամ ավերակների մեջ ու միայն գիշերներն է դուրս գալիս վորսի: Գիշերներն էլ չի հանդիպում թռչուններին և դրա համար էլ բավականանում է դաշտային մկներով:

ԲՈՒԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Վարսավիր— սափրիչ·
2· Պերոլ
3· Յախտրոպ
4· Զարդ
} անտառային թռչուններ·
5· Մագիլներ— ճանկեր·
6· Մարիկ, մարի— մայր թռչուն:

17· ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(1869—1923)

Թումանյանը նախահեղափոխական շրջանի հայ ամենամեծ բանաստեղծն է: Նա ծնվել է Լոռու Դսեղ գյուղում 1869 թվին:

Թումանյանն սկզբում սովորել է իրենց գյուղում — մի տիրացուի մոտ, ապա Ստեփանավանում (նախկին Զալալոգլի), այն ժամանակվա հայտնի Տիգրան վարժապետի դպրոցում: Հենց այնտեղ սովորելիս էլ, նա փոքրիկ վոտանավորներ է գրում, վորով և հայտնի յե դառնում շատերին:

Այնուհետև նա սովորում է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում:



Մի քանի տարի զանազան հիմնարկներում աշխատում է, վորից հետո նվիրվում է գրական գործունեության:

Թումանյանը վոչ միայն գրող էր, այլև աչքի ընկնող հասարակական գործիչ: Խորհրդային իշխանության հաստատումը՝ Թումանյանն ընդունեց ուրախությամբ:

Նա գրել է, թե՛ մեծերի և թե՛ մանուկների համար: Նրա գրելու ձևը և լեզուն պարզ են, ժողովրդական, այդ պատճառով էլ ամենքին հասկանալի: Նրա գրվածքներից մի քանիսը գրված են այս դասագրքում («Մի կաթիլ մեղրը», «Սասունցի Դավիթը», «Գիքորը»): Նա ունի նաև ուրիշ շատ գեղեցիկ գրվածքներ· — «Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Մարոն» և այլն:

Թումանյանն ամենասիրված հեղինակներից մեկն է, և նրա գրվածքները տարածված են ամեն տեղ:

Թումանյանը մահացավ 1923 թվին Մոսկվայում և թաղված է Թբիլիսիում:

18· ԿՈԽԸ

Զմռան մի գիշեր կար մի հարսանիք·
Հրճվում էր անզուսպ ամբոխը գյուղի·
Գյուղն եյին իջել հովիվ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից հետո լայն հրապարակ
Բաց արին մեջտեղն արձակ գլխատան,
Զուռնաչին փչեց կոխի յեղանակ,
Ահել ու Ջահել իրարով անցան:
Հարա՛ յեն տալի— «Քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զոռով յերկուսին,
Մինը մեր Սարոն, իսկ մյուսն Անուշի
Անդրանիկ յեղբայր, զառնարած Մոսին:
Վողջ գյուղը կանգնեց պարսպի նման,
Զոկվեց, բաժանվեց յերկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տղերանց մեկի:
Գոռում են, գոչում յերկու բանակից·
— Սրտապինդ կացե՛ք, մի՛ վախեք, տղե՛րք:
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:
Ու տաքանում են տղերքը սաստիկ,
Փեչերը հավաք խրում են գոտին,
Գետին են զարկում ձեռները հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Ու իրար բռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի,
Ընկնում են գետին, յելնում միասին,
Դժվար է իրրև հաղթել մեկ մեկի:
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արավ Սարոն, ծնկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չեքեց վրեն:
Ամբոխը թափվեց հարա-հրոցով,
Վեր թռցրեց ջահել փահլևաններին,
Ցեվ՝ ուրախության աղմուկ-գոռոցով,
Հաղթողին փեսի թախտի մոտ բերին:



Ցնծության ձայնից, ծափերի զարկից
Շարժվում են, դողում պատեր ու ոճորք·
Ցեվ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Գլխատուն— հին ձևի, մեծ, հողածածկ տուն·
2· Ահել— հասակավոր, ծեր·
3· Փահլևան— ըմբիշ, կոխ բռնող·
4· Խոզապարկուկի— կեղծ, կատակով ընկնելը՝ կոխի ժամանակ·
5· Գետնել— գետին գցել·
6· Փեսի թախտ— հին հարսանիքներում, ժամանակավոր շինած բարձրություն՝ փեսայի և իր ընկերների համար:

19· ԳԻՔՈՐԸ

Գյուղացի Համբոյի տունը կռիվ եր ընկել:

Համբոն ուզում եր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա, վոր մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չեր համաձայնում:

— Ջեմ ուզում, իմ քորփա երեխին են անիրավ աշխարքը մի՛ գցիլ, չեմ ուզում,— լալիս եր կինը:

Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առավոտ եր· մի տխուր առավոտ: Տանեցիք ու հարևանները յեկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփա դրին:

Քույրը՝ Զանին, լաց եր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն եր տալի· «Գիքո՛լ, եդ ո՞ւր ես գնում, հե՛ Գիքո՛լ»:

Գիքորը չուտ-չուտ հետ եր նայում: Տեսնում եր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք, ու մայրը գոգնոցով սրբում է աչքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն եր ընկնում: Մին էլ հետ նայեց· գյուղը ծածկվել եր բլուրի հետևը:

Այնուհետև Գիքորը հետ եր ընկնում:

— Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,— վորդուն կանչելով գնում եր Համբոն, չալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի յերկու դասատ թութուն:

Իրիկնապահին, յերբ անց եյին կենում սարերը, մի անգամ էլ յերևաց գյուղը հեռո՛ւ մշուշում:

— Ա՛յ, ապի, մեր տունն են ա հա՛, — ցույց տվավ Գիքորը՝ մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չեր յերևում, ու անցան:

Առաջին իրիկունը գոնախ ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն եր:

Դեղին սամովարը թչչում եր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ չրըխկչրըխկացնելով բաժակները լվանում ու թեյ եր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հագին: Գիքորն ենտեղ մտքումը դրեց, վոր յերբ քաղաքում փոդ աշխատի, իրենց Զանիի համար մի ենտեսակ շոր ուղարկի:

Իրիկնահացից յետը տանտերն ու Համբոն թինկը տրված, չիբուխը քաշելով գրույց եյին անում: Խոսեցին Գիքորի մասին: Տանտերը գովեց Համբոյին, վոր չարչարվում եր վորդուն մարդ շինի: Հետո սկսեցին խոսել կռվի վրա, հացի թանգության վրա, բայց Գիքորը շատ եր հոգնած, քունը տարավ:

Մյուս որը քաղաք մտան: Գնացին ծերունի թավշյաչու մոտ: Առավոտը բազարն իջան:



— Բիձա, եդ երեխին ծառա՞ յես տալու,— խանութի ներսից հարցրեց մի վաճառական:

— Հրամանք ես,— ասաց Համբոն ու Գիքորին են կողմը հրեց:

— Բեր ինձ տուր, յես կբռնեմ,— առաջարկեց վաճառականը:

Նրան ասում էին բաղազ Արտեմ:

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվավ բաղազ Արտեմի տանը: Պայմանն են եր, վոր Գիքորը պետք է տուներ մաքրեր, ամանները լվանար, վոտնամանները սրբեր, դուքանը բաժին տաներ, ու ես տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի:

Մի տարուց յետը բաղազը նրան պետք է տաներ դուքան, չիներ դուքանի «աշկերտ», ու եսպես Գիքորը պետք է բարձրանար:

— Հինգ տարի դեռ փող չեմ տալ, — ասավ բաղազը պայման կապելիս:— Թե դրուստը կուզես, դեռ դու պետք է տաս, վոր քու վորդին բան է սովորելու: Ախար խակի բան չգիտի:

— Վորտեղից գիտենա, խազեյին ջան,— պատասխանեց Համբոն,— վոր գիտենար, էլ ո՞ւր կբերեյի, յես էլ բերել եմ, վոր բան սովորի...

—Կսովորի, ամեն բան կսովորի: Ենպես սովորի՛ վո՛ր... Ձեր կողմերից են Նիկոլն ինչ է, վոր իրեն համար դուքան ունի բաց արած, նա էլ ինձ մոտ է մարդ դառել: Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի քանի բան գողացավ...

— Ձե՛, խազեյին ջան, սա գողանալ չի: Վոր եդպես բան անի, կդամ, կռնիցը կբռնեմ ու Քուռը կդցեմ:

— Հա՛, վոր ձեռը հալալ է՝ մարդ կդառնա:

— Իմ դարդն էլ են ա, աղա ջան, վոր մարդ դառնա. լեզու սովորի, դրել-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, վոր աշխարքումն ինձ նման խեղճ ու դուրկ չմնա... Ինքն էլ աչքաբաց երեխա յա, մեր գեղական չկոլումն էլ դրաճանաչ ա ելել, դրի սևն ու սպի-

տակը ջոկում ա: Ամա աղաչանքս են ա, վոր լավ մտիկ անեք, դարիբ երեխա յա, քորփա յա...

Բաղաղը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց բարձը ձեռով հրամայելով. «Զայ բերեք, հաց բերեք սրանց համար...»:

Հեր ու վորդի նստած էին բաղազ Արտեմի խոհանոցում:

— Դե, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ի՛նչ տեսակ տղա յես դուրս գալի... Հենց պետք է անես, վոր... յես ի՞նչ գիտեմ, ո՛վ տեր աստված...— մռնչաց Համբոն ու չիբուխը լցրեց:

Այն ինչ Գիքորը չորս կողմն եր դիտում:

— Ապի, սրանք բուխարի չունե՞ն:

— Ձե, սրանցը փեչն ա, ա՛յ են ա փեչը...

— Կալ էլ չունե՞ն:

— Սրանք քաղաքցի յեն, գեղացի հո չեն, վոր կալ կալսեն:

— Բա վո՞րտեղից են հաց ուտում:

— Փողով առնում են, ուտում: Հացն էլ են փողով առնում, յեղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փետն էլ, ջուրն էլ...

— Վա՛յ...

— Բա՛, սրան Թիֆլիս կասեն: Դու հալա ղոչաղ կաց, դեռ շատ բան կիմանաս:

— Ապի, սրանք ժամ ունե՞ն...

— Ունեն, բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա յեն: Մտիկ արա հա՛,— ձեռնաքաշություն չանես: Կարելի յա քեզ փորձելու համար փող վեր կդցեն, մոտենաս վոչ: Թե վերցնես էլ,տար ասա.— «Խանում, ես ի՛նչ փող ա, եստեղ վեր ընկած եր. աղա՛, ես բանն եստեղ պտա», թե չե...

— Եստեղ էլ պրիստավ կա՞ վոր...

— Կա բա՞ս... վախտ ու անվախտ դես դեն չընկնես, ձեռդ ընկած փողը քոռ ու փուչ չանես, հազար ու մի պակասություն ունենք: Քեզ էլ լավ պահի, դիշերները բաց

չբլեռ, մրսես վոչ... Մի մին յեկողի հետ դեր դաբկի...— մերթ մերթ չիբուխը բերանից հանելով, վորդուն խրատում եր Համբոն: Այն ինչ Գիքորը ննջում եր:

— Հացի կտորտանք ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն եդ ա... Որեր են, կմթնեն, անց կկենան...

Շարունակում եր հերն իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված քնել եր արդեն:

Են յերկու որը նա ենքան բան եր տեսել, ես ու են կողմը նայել, վոր հոգնել եր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, դեզերի նման դարսած դույնզդույն չթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան գնացող կամ դարձող յերեխաների խմբերը, իրար հետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանաչի բարձած ավանակները, թարախները դլխներին կինտոները... ես ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակն իրար խառնված դրժվրժում եր նրա դլխում: Ցեվ նա հոգնել եր ու հորը թինկը տված քնել:

Ես ժամանակ բաղաղն ու իր կինը վիճում եյին ներսը: Կինը տրանջում եր, վոր ծառան խամ է, նոր սարիցն յեկած, վայրենի, իսկ մարդն ուրախ եր, վոր մի քանի տարով անվարձ ծառա յեր դտել:

— Կսովորի, հոեդպես չի մնալ,—ասում եր նա կնոջը:

— Կսովորի, վորդի· սիրտդ չուռ մի բերի,— խնդրում եր բաղաղի պառավ մայրը:

Բայց տիկին Նատոն չեր համոզվում: Նա, աբասալելով՝ անիծում եր իր բախտը:

Զանգը տվին:

Գիքորը վեր թռավ: Ասել եյին, թե յերբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում: Նա դուրս յեկավ, պատշգամբից նայեց, տեսավ մի պարոն ու մի քանի տիկին դռան առաջը կանգնած:

— Եդ ո՞վ եք, հե՛յ,— ձայն տվավ վերևից:

Ներքևից վերև նայեցին:

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը, ակնոցներն ուղղելով՝ հարցրեց:

— Աղջիկ պարոնը տա՞նն է:

— Ի՞նչ եք անում,— հարցրեց Գիքորը:

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ:

— Քեզ հարցնում են՝ տա՞նն է, թե չէ,— բարկացավ պարոնը:

— Բան ունե՞ք:

Ես աղմուկի վրա տիկինը դուրս յեկավ:

— Քըրքըվես դու, դնա դուռը բաց արա՛, չո՛ւտ,— ճչաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն: Բայց չուտով հյուրերն յերևացին և նա ժպտալով դիմավորեց·

— Ա՛, բարև, բարև... ես վո՞ր խաչիցն եր, ի՞նչպես է վոր մտաբերեցիք...

— Ես վորտեղի՞ց եք դտել,— վոտից գլուխը Գիքորին չափելով հարցրեց պարոնը, իսկ տիկինները չարունակ ծիծաղում եյին:

— Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք,— կատակի տվավ տիկինն ու հյուրերը խնդալով ներս մտան:

Գիքորին չտապով մի տեղ ուղարկեց ու նրանց հետևից խկուլն ներս մտավ և տիկին Նատոն:

Իրար առողջություն հարցնելուց հետո, հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս յեկավ ահագին պատմություն:

— Ո՛ֆ, սիրտս մաշել է, — դանգատվում եր տիկին Նատոն.— թե իմանաք ինչ եմ քաշում յես դրա ձեռքից: Ասում եմ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք ելի, ասում է մեղք է, գեղացի յերեխա յե, թող կենա, մի կտոր հաց է, ուտի, կսովորի... Ախր ել յե՞րբ... սիրտս մաշեց...

— Ո՛հ, ո՛հ, ո՛, եդ ծառաների բանն ել մի՛ ասի, — ես ու են կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը:

Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քաղաքի նորություններից: Հենց եդ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը:

— Աղջիկ պարոն, միրդը բերի:

— Հա, լավ, գնա՛,— հրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել:

— Աղջիկ պարոն, խաղեցինն ասում եր՝ բալը թագ ա, հարկավոր չի...

Ես խոսքերի վրա հյուրերից վոմանք փոթիկացին ու թաշկինակով բերաններին հուպ տվին, վոմանք էլ տանտիկնոջ խայտառակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ բալը շատ թանդ է, ես ժամանակին ով է բալն առնում: Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է միրգը, հո ուտելու համար չեն յեկել, ինչ են նեղություն քաշում...

Տանտիկինը մինչև ականջակոթերը կարմրած, աչխատում եր մի կերպ յեղածն ուղղի:

— Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել ես հիմարը:

— Ով սուտ ասի՝ դեռինը մանի,— յերդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ:

Հյուրերին ճամփու դնելուց յետը Նատոն բարկացած, բարձր բարձր խոսելով, վեր եր քաղում մրգի սեղանը: Նա հայհոյում եր Գիքորին, մեկ մեկ թվում եր, թե ինչեր է անում նա, անիծում եր իր բախտը, իր ամուսնուն:

— Քա՛, խամ է, վորդի, կսովորի, վորդի... ինչի՞ յես սիրտդ շուռ բերում... Ախ ասսոծ, ի՞նչի չես հոգիս առնում,— հառաչում եր պառավ դեդին:

— Յերանի մի իմանամ՝ մարդու սրտի ես նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում... Խամ է, դե գնացեք, դուք չինեցեք, յես հո ձեր դերին չեմ, — ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավին հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը մինչև ամուսինը տուն դարձ:

Ամուսնու վոտնաձայնը վոր լսեց, սկսեց արտասվել, ավելի բարձր խոսել ու ամաններն իրար դլխով տալ:

— Ասում եմ՝ դուրս արա կորչի. յես ծառայի բանն էլ կանեմ, թե՞ խնայում ես փող տաս, կարդին ծառա բռնես... Լավ է մարդ ծառայի տեղ էլ քարշ գա, քան թե ամեն որ եսենց սիրտը շուռ բերի... Իմ թշնամին հո չե՞ս...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց բաղաղը՝ ասն մեջտեղը կանգնելով:

— Ի՞նչ պետք է պատահի. ես եր մնացել, վոր խալխի մոտ էլ մարդ դետինը մտնի, ես էլ արիր. էլ ի՞նչ պատահի,—վրա թռավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:

— Վա՛,— բացականչեց բաղաղը:

— Ախ, ասսո՛ծ,— հառաչում եր բարի պառավը՝ դեռ ու դեն ընկնելով:

Բաղաղը Գիքորին ձեն տվեց:

Թմփթմփացնելով Գիքորը ներս մտավ:

— Մոտիկ արի,— կանչեց բաղաղը:

Գիքորը վախեց նրա դուլնից, մնաց տեղը կանգնած:

— Քեզ ասում եմ՝ մոտիկ արի...

Գիքորն ես անդամ չարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

— Տո՛, արջի՛ քոթոթ, յես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես դոնախներին ասում, թե բալը թանդ ե՞ր...

— Յես... յես... աղջիկ պարոնին...— ոռնում եր արդարանա Գիքորը, բայց խոսքը բերանում՝ ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին, գլուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ: Հենց ընկած տեղն սկսեց բաղաղը վոտքել՝ անդադար կրկնելով. «Բալը թանդ եր, հը՞... բալը թանդ եր, հը՞...»:

Պառավ դեդին դողդողալով մեջ ընկավ, աչխատում եր հետ քաշի կատաղած վորդուն, աղջիկ պարոնն էլ յեկավ, յերեխաներն էլ սկսեցին ճչալ, բաղաղը հետ կանգնեց հեւալով ու կրկնելով. «Բալը թանդ եր, հը՞», աչքերը միչտ չռած, անկյունում կծկված Գիքորի վրա, վոր գոռալով ու ցավագին մրմնջում եր.

— Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...

Իսկ այն որը, յերբ Գիքորը խանութի ճաշն ուչացրել եր, իրիկունը նա կուչ եր յեկել խոհանոցում: Դեռ ար-

տասուքը չեր ցամաքել նրա յերեսին, դեռ այրվում եյին խազեյինի ապտակների տեղերը, դեռ նոր եր լռել աղջիկ պարոնի ձենը — չվշվացնելով ներս մտավ Վասոն, բազալի աչկերտը: Գիքորին նկատելով՝ նա իսկույն կանգ առավ ու մասխարա դեմքին լրջություն տալով սպառնալի հարցրեց.

— Կլուբո՞ւմն ուշացար, տո արջի քոթոթ, թե՞ գուբերնատի՞ մոտ վռազ գործ ունեյիր...

Գիքորը գլուխը չեր բարձրացնում:

— Ասա մի տեսնեմ ե, տո՛...

Գիքորը լուռ եր:

— Չե՞ս իմանում, տո՛. վո՞ւռեղ եյիր ե, վոր ասոր ինձ քաղցած սպանեցիր. վոր մեռնեյի՝ հետո՞...

Եղպես խոսելով՝ կամաց կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը յերկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վասոն պատրաստվում եր մի ուրիշ ձևի հարված ել հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խազեյինի ձայնը: Գալիս եր:

— Աբա տես հիմի քեզ ի՞նչ ե անում,— սպառնաց Վասոն:

«Հիմի ինձ կսպանեն»,— անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Խազեյինն արդեն բավականին ծեծել եր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չտան, վոր իմանա, թե ինչ բան ե քաղցածությունը:

Վտանգն անցավ:

Գիքորը հանգստացավ, թեև լսում եր աղջիկ պարոնի ձայնը, վոր ճչում եր.— Ախր ընչի՞ յես պահում, դուրս արա կորչի ելի, դուրս արա կորչի՛...

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, գլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Լուսնյակ գիշեր, բոլորովին քուն չունեմ,
Ինձ տեսնողը կարծում ե թե տուն չունեմ,
վա՛յ, տուն չունե՛մ...»,

Ելը յերգը յերգելով Վասոն հաց եր ուտում: Գիքորը վերմակի տակից յերբեմն զգուշ ծիկրակում, թաքուն նայում եր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա են որը հաց չեր

դրել բերանը. ծեծվել ու լաց եր յեղել, այժմ ել քաղցած պառկեց, ու քունը չեր տանում:

— Հը՛, վո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում, հա՛, եղպե՞ս...— նկատեց չարաճճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին:— Դե, առ, տեղի տակին թաղուն կեր, խազեյինը չիմանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում եր ու մտածում: Մտածում եր իրենց տան վրա, են որերի վրա, յերբ ազատ խաղում եր հանդերում ու լիասիրտ հաց ուտում, մտածում եր են յերեկոների վրա, յերբ հերն ու մերը կռվում եյին իրեն քաղաք բերելու համար... մերը լաց եր լինում, չեր ուզում...

— Ա՛խ, նանի ջան, ի՞նչ լավ եր սիրտդ իմացել,— հառաչում եր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում՝ ականջը սրած, թե խազեյինը հո չի գալի:

Իսկ առավոտը կանգնած եր խանութի դռանը:

Խանութի դռանը կանգնած ձեն եր տալիս Գիքորը, մուչտարի յեր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

— Կանչի ե՛, տո՛, ի՛նչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերանումդ հո ջուր չկա:

— Ե՛ստի համեցե՛ք... Ե՛ստի համեցե՛ք...— կանչում եր Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում եյին:

Նրան սովորեցրել եյին, վոր մուչտարի քաչի դեպի իրենց խանութը: Յեվ նա հաճախ բռնում եր ես կամ են անցորդի փեչից, կոպիտ ու համառ սկսում եր քաչել դեպի խանութը ու բաց չեր թողնում, մինչև վոր մարդը դուրս եր գալիս համբերությունից: Գալիս եր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոթ որերին, խանութի դռանը յերկար կանգնելուց հոգնած, նա յերբեմն նստած քնում եր խանութի առաջին դարսած չթերի վրա:

Եդ ժամանակ չարաճճի ընկերները կամ հարևանները բռնոթի եյին բռնում նրա քթի տակը:

Նա փռշտալով վեր եր թռչում։

Շողից թմրած վաճառականները զվարճանում եյին։ Իսկ խաղեյինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն եր տալի.

— Ինում ե՞ս, տո, արջի քոթոթ, կանչի ե՛...

— Ե՛ստի համեցե՛ք, ե՛ստի համեցե՛ք,— ձեն եր տալի Գիքորը։

Մի որ ել, յերբ Գիքորը մուշտարի յեր կանչում, դիմացից յերկու գյուղացի դուրս յեկան։

Նա վազեց, փաթաթվեց գյուղացիներին։

— Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի վոչ, ես ի՛նչ բան եր,— զարմացած բացականչեց գյուղացիներից մինը ու դարձավ ընկերոջը։

— Բաղդ, դու կճանաչեյի՞ր...

— Ցեռ աչքերիցը կճանաչեյի,— պարծեցավ ընկերը։

Ճշմարիտ վոր Գիքորը շատ եր փոխվել, շատ եր մաշվել։ Ինքն ել եր փոխվել, շորերն ել։ Դժար եր ճանաչելը։

— Ա՛յ տղա, ես կարդին մարդ ա դառել... հալա սրա շորերին, սրա չնորհքին...— հիանում եյին գյուղացիները։

— Համբոյի հողը մեր գլխին. տես, նա իր տղին վո՛րտեղ հասցրեց, մեր տղերքը ենտեղ խոզ են արածացնում...

Այնինչ Գիքորը իրար հետևից հարցնում եր.

— Իմ մերը վո՞նց ա... մեր երեխեքը վո՞նց են... իմ հերն ընչի՞ չեկավ... մեր կովը ծնե՞լ ա, թե՛ չե... մեր դեղումն ո՞վ ա մեռել...

— Ամենն ել լավ են, շատ բարով կանեն,— պատասխանեցին գյուղացիք.— Են ա Սուքնանց Ղուկասը մեռավ, մին ել Գուճուրանց պառավը, մնացածը լավ են։

— Բա իմ հերն ընչի՞ չի գալի։

— Քու հերը լավ ուզում ա, ամա վո՞նց գա։ Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջաղեն վրեն...

— Բա քան չեն գարդե՞լ...

— Ինչ ունեն, վոր ինչ գարդեն, դու ձեր տան բանը գիտես վո՞չ։ Ես տարի ել հացը բարակ եր, խեղճ հերդ զոռով ծերը ծերին ա հասցնում։ Ներանցից ի՞նչ ես ուզում։ Թե ունիս, դու գարդի. հրեն խարջ են ուզում—ձեռին զոռշ չունի։

— Հո մեր տանիցն ոքմին չի՞ հիվանդացել։

— Ձի՛, են ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց գոմի փլեկովը ներքև ընկավ սատկեց։

— Ծաղիկը սատկե՞ց...

— Խեղճ մերդ ենքան լաց ելավ, աչքերն ուռան։

Ես ասելով՝ գյուղացիներից մինը մի նամակ հանեց, տվավ Գիքորին ու ասավ.

— Հիմի ի՞նչ ես ասում. մենք ել քեզ տեսնիլ չենք, գնալու յենք. թե մորդ կամ քվորդ համար բան ես գարգելու, տուր տանենք։

— Վո՞րտեղից բան գարդեմ, դեռ փող չեմ ստանում... ամա...

— Ամա ի՞նչ...

— Ուզում եմ յես ել գամ ձեզ հետ։ Համ մեր գեղին, համ մերոնց կարոտել եմ, համ ել...

— Վա՛յ, վա՛յ, մենք իմացանք, մարդ ես դառել, խելոքացել ես... եդ տեսակ բան կասե՞ն։ Ենտեղ քեզ համար աղավարի ապրում ես— շորերդ թաղա, վոտն ու ձեռդ խոտակ... Մենք ասում ենք՝ մեր երեխանցն ել տեղ անես, բերենք, դու եդ ի՞նչ ես ասում։ Են վոր ասել են «խոզի գլուխը դրին խալիչին, գլորվեց յետ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել։

Ենպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին։

Ներանց գնալուց յետը Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց արավ հոր նամակը։

«Իմ սիրելի վորդի Գիքոր Ջան։

Ի քաղաքն Թիֆլիզ։

«Մենք վողջ ու առողջ ենք, միայն քու առողջությունն ենք ուզում, ամեն։ Քեզ շատ կարոտով բարով են անում Ալին, Նանը, Զանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն։ Մեր սիրելի վորդի Գիքոր. ահա իմացած լինես, վոր տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Զանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա։ Գիքոր Ջան, մի քանի մանեթ փող ղար-

գի և մի գիր զարդի քու վորպիսությունիցը։ Ցեվ իմացած ըլես, վոր Ծաղիկը սատկեց, և Նանն ու Զանին տրկլոր են»։

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք եր անում Գիքորը· զարդ եր անում իրենց տան համար։ Սիրտը երում եյին նամակի տողերը։

— Նանն ու Զանին տկլոր են... Տեղներս նեղ ա...

— Կանչի յե՛, տո, ի՞նչ ես վերացել, ուշքդ հետները գնա՞ց...— ձեն տվին ներսից։

— Ե՛ստի համեցե՛ք, ե՛ստի համեցե՛ք,— կանչում եր Գիքորը խանութի դռանը կանգնած։

Զմեռը յեկավ։ Սառն աղմուկով ձյունախառն բուքը թռչում ե քաղաքի վրով։ Փողոցներում սուրում, սուլում, հոսան ե անում։ Վզդալով մտնում ե անկյունները, աղբատի ու տկլորի յե ման գալի, պանդուխտ ու անտեր յերեխա յե վորոնում։

Ահա գտավ Գիքորին։

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած, ձեն եր տալիս նա.

— Ե՛ստի համեցե՛ք, ե՛ստի համեցե՛ք...

— Հրեսս...— չարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման, զարկեց անցավ վոսկորները։ Գիքորը դողաց։

Առանց են ել նա շատ եր մաշված· եղքանն ել հերիք եր նրան։ Ու անկողին ընկավ։

Հիվանդ պառկած եր Գիքորը բաղաղ Արտեմի խոհանոցում։ Պառավ գեղին որը մի քանի անգամ ներս եր մտնում իրեն-իրեն խոսելով.

— Ի՞նչ կուզես, վորդի՛, Գիքոր։

— Ջո՛ւր...

Գեղին ջուր եր տալի։ Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում եր ու կրկին ուզում։

— Ես սիրտս հովացնում չի, դե՛ղի... յես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դե՛ղի... յես մեր տունն եմ զբնում... յես իմ նանին եմ ուզում...



Բաղաղ Արտեմը ցավի մեջ եր ընկել։ Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, վոր Համբոն գա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը։

Ենտեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած։ Տխուր տնքում եյին ու ոճորքին նայում անզոր հայացքներով։

Գիքորին ել պառկեցրին նրանց շարքում։

Ետեղ գտավ նրան հայրը։

— Եդ ի՞նչ ես ելել, Գի՛քոր ջան, մղկտալով վրա ընկավ Համբոն։

Գիքորը տաքության մեջ չիմացավ հոր գալը։

— Գի՛քոր ջան, բա եկել եմ ե՛, Գիքոր ջան... յես քու ապին եմ ե՛...

Հիվանդը վոչինչ չհասկացավ։ Նա զառանցում եր ու զառանցանքների մեջ կանչում եր. «Միկի՛չ, Զանի՛, Ապի՛, Նանի՛...»։

— Ետեղ եմ, Գիքո՛ր ջան, Նանը զարգել ա, վոր քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Զանին հրեն կտերը կանգնած, քեզ ճամփա յեն պահում։ Ի՞նչ ես ասում. դե խոսա յե, Գի՛քոր ջան...

— Ետի համեցե՛ք, ետի համեցե՛ք,— բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում եր տաքության մեջ։

Մի յերկու որից յետը Համբոն գնում եր իրենց գյուղը։

Նա թաղել եր Գիքորին ու գնում եր։ Կռան տակին տանում եր շորերը, վոր մերը լաց լինի վրեն։ Շորերի գրպաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց դտան։ Են եր յերևի, քրոջ՝ Զաննի համար եր հավաքել ու պահել...

— Գնում եր Համբոն ու մտածում։ Շատ ժամանակ չեր անցել, վոր եդ միևնույն ճամփով քաղաք յեկավ իր Գիքորի հետ։ Ահա այստեղ եր, վոր նա ասավ.

— Ա՛պի, վոտներս ցավում են...

Ցեվ ահա են ծառը, վորի տակ նստեցին հանգստանալու...

Ահա ենտեղ եր, վոր ասավ.

— Ա՛պի, ծարավ եմ...

Ահա են աղբյուրն ել, վոր ջուր խմեցին...

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա...

Մյուս որը, յերբ Համբոն անցնում եր լեռները՝ հեռվում յերևաց իրենց գյուղը։

Գյուղից դուրս կանգնած սպասում եյին Նանը, Զանին, Միկիչը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում եր.

— Ալի՛, ալի՛, հե՛ Գիքոլ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Քորփա— շատ յերիտասարդ, մատղաշ մանուկ.
2. Դաստա— կապոց, փունջ.
3. Ղարգել— ուղարկել.
4. Թավլա— գոմ։
5. Բազազ- կտորեղեն վաճառող.
6. Ջեռը հալալ— զողություն չանող.
7. Ղարիբ— ոտար.
8. Բուխարի— գյուղական կրակարան, ոջախ.
9. Ջեռնաճաշուքյուն— զողություն.
10. Թերմացք— մնացորդ.
11. Վեր քաղել— հավաքել.
12. Սիրտը շուռ բերել— նեղանալ, հուզվել.
13. Վոտքել— վոտքով խփել.

14. Ծիկրակել— զզուշ, ծածուկ նայել.
15. Ջափա— նեղություն, ջանք.
16. Փլեկ— քանդված, խարխուլ շենք.
17. Հոսան անել— քամու ուժեղ հոսանքից շարժվել.
18. Գուբերնատոր— նահանգապետ։

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ յեր «գյուղացի Համբոյի տունը կռիվ ընկել»։
2. Ինչո՞ւ մայրը դեմ եր Գիքորի քաղաք տանելուն։ Հայրն ի՞նչ սպասելիքներ ուներ Գիքորին քաղաք տանելով։
3. Ի՞նչ խրատներ եր տալիս հայրը Գիքորին՝ բազազ Արտեմի խոհանոցում։
4. Ի՞նչ տպավորություն թողեց Գիքորի վրա Թիֆլիսը (Թբիլիսին)։
5. Ինչի՞ց ե յերևում, վոր Գիքորը քաղաքացի բազազի տանը ծառայելու ձևը չդիտեր, և ի՞նչ հետևանք ունեցավ նրա միամտությունը։
6. Ի՞նչպես եյին վարվում Գիքորի հետ՝
   ա) խանութի աշկերտները,
   բ) բազազ Արտեմը,
   դ) բազազ Արտեմի կինը,
   գ) բազազ Արտեմի մայրը («դեդին»)։
7. Գիքորն ինչո՞ւ յեր ցանկանում իրենց գյուղացիների հետ գյուղ վերադառնալ։
8. Ինչո՞ւ հիվանդացավ Գիքորը։
9. Հ. Թումանյանը միմիայն Գիքորի՞ կյանքն ե նկարագրում այս գրվածքի մեջ։
10. Ո՞ւմ ե համակրում հեղինակը (բերել փաստեր գրվածքից)։

---

1. Գրվածքի բաժիններին վերնագրեր դրեք և պատմեցեք գրվածքի բովանդակությունը։
2. Մանրամասն պատմեցեք Գիքորի քաղաք գնալը (ճանապարհին, գյուղացու տանը, առաջին որը քաղաքում)։
3. Պատմեցեք «Գիքորի կյանքը գյուղում մինչև քաղաք գնալը»։
4. Գրեցեք շարադրություն «Գիքորի նամակը ծնողներին»։

---

20. ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐ

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան ու ծախում։
Որվան մի որ մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն հետևից
Ներս է մտնում մի զը՛ռ չորան.
— Բարի որ քեզ, այ խանութպան,
Մեղր չունե՞ս,
Մի քիչ տաս մեզ։
— Ունեմ, ունեմ, չորան ախպեր.
Ամանդ ո՞ւր է, ամանդ բեր.
Ինչ տեղից վոր ինքդ կուզես,
Ես սհաթին քաշեմ տամ քեզ։
Եսպես հանգիստ,
Եսպես սիրով,
Մեղրից անուշ
Լավ խոսքերով
Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած։
— Տը՛ղզ, են կողմից մի ճանճ գալի,
Ես կաթիլին վեր է գալի։
Ճանճի վրա, թաքուն-թաքուն,
Ես խանութի տիրոջ կատուն
Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...
Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը խկուլն և յեթ
Հա՛ֆ է անում,
Վեր է կենում,
Խեղճ փիսիկին
Դնում տակին,
Ձեռաց խեղդում
Ու չպրտում։
«Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն.
Ա՛յ սատկես դու, չան վորդու շուն»,
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը



Տուր՝ թե կտաս չան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին։
— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունս,
Իմ ապրուստը՛ս, տե՛ղս, տունը՛ս...
Տունդ քանդվի, ա՛յ խանութպան,
Անխիղճ, լիրբ, չար, ֆլան, ֆոտան,
Վո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը հիմի՛ դու տես...
Գոռում է մեր ածգահակը,
Մեծագլուխ իր մահակը
Հետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շեմքում փռում։
— Ըսպանեցի՛ն... հա՛յ, ոգնությո՛ւն։
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեն է տալի մեկը մյուսին.
— Հե՛յ, ոգնությո՛ւն... ըսպանեցի՛ն...
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վրից, գործի տեղից,

Ճիչով, լալով,
Հարայ տալով
Եվ հերն ու մեր,
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր տղերք,
Զոքանչ, աներ,
Քավոր, սանհեր
Քեռի, փեսա...
Ի՛նչ իմանաս եվ՝ ո՛վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.
— Տո, կոպիտ արջ, տո, վայրենի,
Ես տեսակ եվ բա՞ն կլինի.
Դու առուտուր յեկար անես,
Թե՞ իր չեմքում մարդ սպանես...
Մին ասում են—տասը զարկում,
Աղցան անում, մեջտեղ ձգում,
Իր չան կողքին յերկար ու մեկ:
— Դե՛, ձեր մեռելն յեկեք տարեք:
Ու եստեղից բոթը գնում,
Գնում մոտիկ գյուղն ե հասնում.
— Հե՛յ, ոգնեցե՛ք,
Մեռած հո չե՛ք,
Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շնաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
Են ճանճի պես
Ամբողջ գյուղով որդու կապում—
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում
Ամեն մինը առած մի բան.
Վորը ձեռին մի հրացան,
Վորը յեղան, ցաքատ կամ սուր,
Վորը թի, բահ, վորը չամփուր,
Վորը կացնով, վորը փետով,



Վորը ձիով, վորը վոտով,
Վորն անգտակ, վորը բոբիկ,
Դեպի դուշման գյուղը մոտիկ:
— Տո՛, եսպես եվ անիրավ գյո՛ւղ.
Վոչ խիղճ ունեն, վոչ ահ-յերկյուղ.
Մարդ գնում ե առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սրի:
Թո՛ւ ձեր դեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր աղաթին...
Գնա՛նք, զարկե՛նք...
Ջարդենք, կրակենք...
— Հա՛յ, հո՛ւյ, առա՛ջ, դե՛, ձեզ տեսնե՛մ...
Ու դուրս յեկան իրարու դեմ:
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կրակեցին.
Ինչքան ավել կոտորեցին,

Ենքան ավել կատաղեցին,
Ջարդեցին իրար,
Ջնջեցին իրար,
Կորան, դնացին
Գետնին հավասար։

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից
Եսքան մոտիկ, սահմանակից
Ես գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի։
Մի տերության թագավորը,
Ցերը լսում է ես բոլորը,
Արձակում է հրովարտակ
Ժողովրդին իր հպատակ։
— Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, աղնվական—
Ամեն չարքին
Ու աշխարհքին,
Վոր անորեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Ցերը մենք քնած եյինք սիրով,
Մեր սահմանը մտավ զոռով,
Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի զավակներին։
Արդ, սրահար ու հրակեզ
Մ!ր վորդիքը կանչում են մեզ,
Ցեվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,
Պատվեր տվինք մեր բանակին,
Թնդանոթով մեր ավերող
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ վոխի
Մտնի հողը մեր վոսոխի։

Մյուսը նույնպես իրեն հերթին
Դրեց զորքին, ժողովրդին.
— Մարդկանց առաջ և աստծու,

Բողոքում ենք մեր դրացու
Վարմունքի դեմ և՛ չար, և՛ նենգ,
Վոր՝ վոտքելով ամեն որենք,
Բորբոքում է կռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,
Քանդում սիրո դաշը կապած։
Արդ՝ ակամա մենք ըստիպված,
Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհքի,
Հանուն աստծու և իր փառքի—
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա
Ու մեր սուրը նորա վրա։

Ու ըսկսեց կռիվն ահեղ,
Շռինդ, վորոտ հստեղ, ենտեղ։
Կրակն ընկավ չեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,
Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձմեռ,
Վողջ տարիներ
Մչակն անբան,
Դաշտերն անցան...
Ու կռիվը չդադարած,
Սովը յեկավ համատարած։
Սովը յեկավ—սովի հետ ցավ,
Ծաղկած յերկիրն ամայացավ...
Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում եյին սարսափահար,
Թե վո՞ր տեղից արդյոք ծագեց
Ես ընդհանուր աղետը մեծ։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զրո— չատ խոշոր, անճոռնի.
2. Աղցան անել— մանրացնել, ջարդել.
3. Բոթ— վատ լուր.

4. Ադաթ— որենք դարձած հին սովորություն.
5. Ցռխատ— ձեռքի փոքր կացին.
6. Որդու կապել— զորքի պես միաբանվել, բանակ կազմել.
7. Հրովարտակ— թագավորի գրավոր հրաման.
8. Դաշն— համաձայնություն.
9. Վռնոխ— թշնամի.
10. Հրակեզ— կրակով վառված.
11. Ննջեց— խորամանկ, չարամիտ.
12. Վոտքել— վոտքի տակ տալ:

---

21. ՎԱՐԻ ՆԱԽՈՐՑԱԿԻՆ

Կոլտնտեսության նախագահը, լապտերը ձեռին, շրջում եր դոմից դոմ և հսկում, վոր լծկաններին լավ կըշտացնեն՝ առավոտյան հանդիսավոր վար սկսելու:

Լևոնն այնքան եր տարված իր աշխատանքով ու մըտքերով, այնքան եր ջերմացել իր վոգևորությամբ, վոր ցուրտը բոլորովին չեր զգում: Մութ փողոցով անցնելիս նրա վոտքի տակ ջարդվեց սառույցը: Նա կանգ առավ նման մի մարդու, վորը թիկունքից դաշույնի հարված ե ստանում: Այո, գետինը կրկին սառել եր, իսկ յերկինքը ծածկվել պղտոր կաթնագույն ամպերով: Կարող եր կրկին ձյուն գալ և վաղն ել խափանել գարնանացանը:

Նա տաղնապով նայեց յերկնքին ու ձեռքը պարզեց գատարկ տարածության մեջ: Նրան թվաց թե ձյան մի ատոր փաթիլ ընկավ ձեռքին:

Նա շարունակում եր իր ձեռքը պարզած պահել ոդում՝ հավաստիանալու համար՝ իրո՞ք ձյուն ե գալիս, թե այդ միայն նրա յերևակայությունն եր: Ցեվ նա չեր կարողանում վորոշել: Մեկ նրան թվում եր, թե նորից փաթիլ ընկավ ձեռքին, մեկ թվում եր, թե այդ ձյունի փաթիլ չեր, այլ քամին միայն կծեց ու անցավ:

Լապտերը մոտեցնում եր ձեռքին, ստուգում եր ու տեսնում, վոր ձեռքը չոր ե: Բայց ելի կասկածը չեր փարատվում: Մի բան կորցրած մարդու նման նա հանկարծ հետ դարձավ ու շտապեց դեպի իններորդ բրիգադի գոմը:

Տրակտորների գարաժի մոտով անցնելիս նրա դեմքին փչեց քամու մի տաք հոսանք: Նա կանգ առավ, նայեց յերկրնքին ու խոր շունչ քաշեց: Ամպերը ճեղքվել եյին իրարից և բաց արել կապույտի մի ընդարձակ շերտ: Պարզվել եր Սպիտակի գագաթը: Հեռվից լսվում եյին ուրախ բացականչություններ: «Ցես քու հոգուն մատաղ, քամի,— զրնգում եր Ասատուրի ձայնը դիշերային խավարի մեջ,— քշիր ե, աքսորիր եդ կուլակի ամպերին»: Ամպերն իրոք, հսկայական քուլաներով փախչում եյին դեպի հյուսիս: Տաք հարավային քամին աներևույթ հովվի նման ընկել եր նրանց հետևից ու հարվածում եր: Իսկ ամպերը նման եյին ուղտերի, գոմեշների, այծերի, արջերի, յեղջերուների և բազմապիսի չտեսնված այլանդակ կենդանիների:

— Կեցցե՛ հարվածային քամին,— բացականչեց Ասատուրը, տնկվելով նախագահի կողքին:

— Քեֆդ վո՞նց ե, Ասատուր,— ձեռքը նրա ուսին խփեց Լևոնը:

— Քեֆ եր մնացե՞լ, ընկեր նախագահ, թուքներս ցամաքեցրեց եդ անիծված սառնամանիքը:

Ամպերի նախիրը անհետացավ սարերի հետևը և վերևում բացվեց տաք աստղալից գարնանային դիշերը: Կոլտնտեսականները զանազան բրիգադներից դուրս թափվեցին և սկսեցին քնածներին ձայն տալ ու պատրաստվել: Գիշերը լցվեց վոգևորության զվարթ աղմուկներով: Լևոնի հոգին նորից պայծառացավ և նա սկսեց կատակներ անել իր շուրջը համախմբված կոլտնտեսականների հետ: Գյուղում, մթան մեջ սկսվեց մրջնային աշխուժություն, հարյուրավոր լապտերներ լուսատիկների պես սկսեցին խավարում շարժվել այս ու այն ուղղությամբ: Մի տեղ խոտ եյին բարձում, մի ուրիշ տեղ սերմացուն եյին դուրս բերում պահեստից: Ովքեր այդ բոլորը նախապես եյին կատարել, ծիծաղում եյին ուշացածների վրա և ուռենու ճյուղերով ու դրոշակներով զարդարում սայլերը:

Արևելքը շառագունեց:

Լույսը բացվում եր:

22· ՑԵՂՆԻԿՆԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Ցեղնիկները մրսում էին: Ցերկուսն էին. սեղմվել էին իրար մի ահագին յեղևնու տակ:

Ցուրտ ու մութ գիշեր եր ու ձյունը գալիս եր անդադար, գալիս ու իր թավ սավանը փռում խիտ անտառի ծառերին, գետնին ու յեղնիկների վրա:

Ցեղնիկները սեղմվում էին իրար, պառկել էին ու դունչ դնչի դրել:

Ի՜նչ սև գիշեր եր. ի՜նչ անախորժ ձայներ եր հանում սանձարձակ քամին, ծառերի մերկ գագաթները շփվում էին իրար և սրսրվում. յեղնիկների սիրտը մի անորոշ յերկյուղ եր մտել:

Լսվեց բուի ձայնը. յեղնիկները սրեցին ականջները. բուի ձայնը կրկնվեց և տարածվեց սառն ոդի մեջ:

Ի՜նչ վատ գիշեր եր... Քամին փչում եր ու ձյունը լցնում յեղնիկների ականջը և վոռնում:

Հեռվից քամու հետ հանկարծ լսվեց մի ուրիշ վոռնոց.— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Ցեղնիկների շունչը կտրվեց, նրանք վախից քարացան:

— Ո՛ւ, ո՛ւ,— լսվեց հակառակ կողմի սարերից՝ իրրև պատասխան առաջին վոռնոցին:

Ձյունի ծանրությունից կոտրվեց մի չոր ճյուղ ու ճրռճրռալով ընկավ գետին: Ցեղնիկները ցնցվեցին սարսափահար ու վոտքի թռան:

— Ո՛ւ, ո՛ւ,— կրկնում եր զարհուրելի վոռնոցը միշտ ավելի ու ավելի մոտիկ:

Ցերկյուղ իջավ յեղնիկների վրա. նայեցին դես ու դեն և հանկարծ յերկուսը միասին միանդամից առաջ նետվեցին ու սկսեցին փախչել: Թռչում էին նետի պես, ծառերի բների արանքով, ընկած կոճղերի վրայով, փախչում էին դեպի ցած, դեպի ձորը...

Իսկ վերևը, ծառերի մեջ, փայլեցին չարժուն կայծեր, առաջ մեկը, յերկուսը, բայց չուտով չատացան ու մոտեցան:

Ցեվ այնտեղ, ահագին յեղևնու տակ, ուր քիչ առաջ պառկել էին յեղնիկները, կանգ առավ քաղցած գայլերի խումբը:

Նրանք անհանգիստ փնտռել սկսեցին. առել էին յեղնիկների հոտը...

Մեկն այս ու այն կողմ վազեց, իսկ մյուսները վրա ընկան, սկսեցին հետևի և առջևի վոտներով փորել ձյունն ու հետ ածել: Վոչինչ չկար: Կանգ առան բոլորը միասին և ձայն ձայնի տվին. ո՛ւ, ո՛ւ...

Նրանցից մեկը լռեց ավելի չուտ, վեր բարձրացրեց իր սուր քիթը, սկսեց սառն ոդը ներս ծծել, կարծես իր քթին հարցնելիս լիներ, թե ո՞ւր են գնացել յեղնիկները: Բայց վոչինչ չհասկանալով, քիթը նորից կոխեց ձյունի մեջ, քիչ ել փորփրեց ու դուռավ յեղնիկների բռնած ճամփան:

Ընկերները հետևեցին նրան ու հոտոտելով գնացին յեղնիկների հետքով, մինչև նորից կանգ առան:

Կատաղի քամին ավլել եր ձյունը, տարել, դիզել եր ով գիտե՝ ուր. սրբել եր և յեղնիկների հետքն ու հոտը. փչում եր ու փչում ու վոռնում մերկ ծառերի տակ...

Վոռնում էին գայլերն իրար կողքի պըպըզած, դընչները վեր ցցած, քաղցած ու խաբված:

Ցեվ հեռվից, բարձր սարերի վրայից, գալիս եր նրանց պատասխանը.

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Սարսափելի գիշեր եր...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Թավ— խիտ.
2· Անախորժ— անդուրեկան.
3· Նետվել— նետի պես արագ անցնել:

1· Նկարագրեցեք գրքի բառերով ձմռան գիշերը.
2· Նկարագրեցեք գրքի բառերով յեղնիկների վախը:

---

23. Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

(1799—1837)

Ալեքսանդր Սերգեյեվիչ Պուշկինը — անցյալ դարի ռուսական հանճարեղ բանաստեղծն է: Նրա գրվածքներն որինակ եյին ծառայում այն ժամանակվա ամենալավ գրողների համար: Մեր ժամանակակից գրողներն ել սովորում են Պուշկինից:

Իր ժամանակաշրջանում նա ամենակրթված ու առաջավոր մարդկանց շարքին եր պատկանում:

Պուշկինն իր մի շարք գրվածքներում դուրս յեկավ ցարական իշխանության դեմ:

Այն համարձակ հայացքների համար, վոր արտահայտում եր նա իր վոտանավորներում, ցարը Պուշկինին աքսորեց մայրաքաղաքից: Պուշկինը մի քանի տարի ապրեց աքսորում:

Պուշկինը հետաքրքրվում եր հեքիաթներով, լսում եր իր դայակից և ուրիշներից, և գեղարվեստորեն մշակում եր այդ հեքիաթները: Նա այդպիսի մի շարք հեքիաթներ ունի, որինակ, «Վոսկե ձկնիկը», «Տերտերն ու իր Բալդի ծառան», «Քնած դշխուհին» և այլն:

Պուշկինն ապրեց ընդամենը 38 տարի: 1837 թվին մենամարտի ժամանակ նրան սպանեց մի սպա: Սա կազմակերպված սպանություն եր ցարի և նրա մարդկանց կողմից, վորոնց ատում եր մեծ բանաստեղծը:

1937 թվի փետրվարի տասին ԽՍՀՄ-ը հանդիսավոր կերպով տոնեց Պուշկինի մահվան հարյուրամյակը: Պուշկինի գրվածքները թարգմանված են ԽՍՀՄ-ի ժողովուրդների և ուրիշ շատ ժողովուրդների լեզուներով: Նրա գրվածքների մեծ մասը թարգմանված է հայերեն:

---

24. ԶՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեղով յերկինքն առնում
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ վոռնում է գերթ գազան.
Մին՝ վայրենի սուլում պեսպես,
Աղմկում է տանիքում,
Մին՝ ուշացած ճամփորդ, ասես՝
Լուսամուտն է նա թակում:

Մեր խրճիթը, աղքատ ու հին,
Ցե՛վ մթին է, և՛ տխուր.
— Ի՞նչ ես նստել պատի տակին,
Իմ պառավս, այդպես լուռ:
Հոգնե՞լ ես դու փոթորիկի
Վոռնոցներից խելագար,
Թե՞ նիրհում ես քո իլիկի
Բզզոցի տակ միալար:
Հողմը մեղով յերկինքն առնում
Գալարում է բուքը ձյան,
Մին՝ մանկան պես լաց է լինում,
Մին՝ վոռնում է գերթ գազան:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Զերբ— ինչպես.
2. Գալարել— պտտել:



25. ՆԺՈՒՅԳԸ

Ինչո՞ւ այդպես գլխակոր,
Խրխնջում ես, աչխույժ ձի.
Եվ չես կրծում սանձը քո,
Եվ չես շարժում բաշդ ձիդ։
Թե՞ քեզ վատ եմ խնամում,
Կամ վարսա՞կ եմ խնայում...
Թե՞ սիրուն չե՞ սարքը քո՝
Սանձափոկդ մետաքսե,
Կամ պայտերդ արծաթե,
Ասպանդակդ վոսկեզոծ։
Պատասխանեց ձին տրտում.
— Նրա համար եմ տխրում,
Վոր լսում եմ յես հեռվում,
Ուժեղ դոփյուն, փողի կանչ,
Նետի յերգեր և շառաչ.
Խրխնջում եմ անդադար,
Վոր այս դաշտում եվ յերկար
Ցես չեմ շրջի խնամված,
Փայլուն սարքով զարդարված։
Վոր թշնամին գաղգաղած
Կտիրանա իմ սարքին,
Ցեվ պայտերս արծաթած
Իմ վոտքերից կպոկի։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Բաշ— վզի վրայի յերկար մազերը.
2. Վարսակ— հացահատիկի մի տեսակը, խրթուկ.
3. Ասպանդակ— վոտքը դնելու տեղը— թամբից կախած։

---

26. ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԻՐ ԲԱԼԴԻ ԾԱՌԱՆ

1

Մի ժլատ տերտեր—
Հարուստ, տնատեր—
Վաղ գնաց չուկա,
Վոր գործը հոգա,
Հետ դառնա տուն դա։
Այդ տեր ժլատին
Պատահեց Բալդին,
Ասավ. «Որհնի՛ր, տեր,
Ի՞նչ կուզես, տերտե՛ր».
— Կուզեմ մի ծառա,
Շատ բան իմանա,
Ապրի չոր հացով։
Լինի խոհարար,
Ձիապահ, դուրգար.
Շատ եժան վարձով։
— «Ա՛ տեր, ինձ վարձիր,
Կուզես քար բարձիր.
Մի կլոր տարի
Ինձ տանդ պահի.
Ինչ կուզես կըտաս՝
Հենց թեկուզ սըպաս։
Ու տարվա վերջին
Քո տանը միջին

Թող միջամտով
Ցերեք հատ կըտոց
Տամ քո ճակատով,
Ահա իմ վարձը—
Վերջացա՞վ հարցը»։
Տերտերը խորհեց,
Ճակատը քորեց։
Կըտոցները իրա մեջ
Բան չհաշվեց, ասավ՝ հե՛չ։
Կըտոց էլ կա, կըտոց էլ
Ցեվ մոռացվեն գուցե էլ։
Համաձայնեց պայմանին
Ցեվ տուն բերեց ծառային։

2

Ինչպես ցույց տվեց փորձը,
Բալդին գիտեր իր գործը։

Սրի յեր մարդը,
Վարում եր արտը,
Պահում եր նա ձին,
Հասնում եր հնձին,
Նա քիչ եր քնում,
Շուտ եր վեր կենում։
Շուկա յեր գնում,
Տան պաշար առնում,
Տանը ջուր կրում,
Ոչխար վառում,
Վրան ճու խաշում,
Խաշում ու կպճում,
Ցերբեք չեր վիճում։
Հիացել եր իրիցկինը։
Վրան ցավում եր աղջիկը։
«Հայրիկ» կանչում տան փոքրիկը,
Վոր նստում եր Բալդու գիրկը։
Տերտե՛րը միայն
Չեր սիրում նրան։
Ցերբ հիշում եր Բալդու մատը,
Ծըքծըքում եր իր ճակատը։

3

Տարին անցնում է որեոր,
Իսկ տերտերը, մտամոլոր,
Վո՛չ ուտում է, վո՛չ էլ խմում,
Տարվա վերջին է սպասում։
Ահա մի որ
Խեղճ ու մորոր
Այս քահանան
Իրիցկնկան
Խոստոմանեց
Ամեն մի բան։
Իրիցկինը, —«լեռ Աստ, հեմ տա,
Ա՛ տեր, Բալդին ճակատիդ տա։
Ցեկ ո՞ր նրան տնտես տարձի,
Վոր նա իրա ուժը փորձի,

Այդ գործն անել չկարենա
Ու ամոթով դատարկ գնա»։
Ուրախացավ են տերտերը.
Իսկույն և եթ—հենց նույն որը
Ասավ. «Բալդի, սատանեքը
Դեռ չեն տվել տնորհնեքը,
Գնա—ուզիր ապառիկս,
Ցերեք տարվա առնելիքս»։

4

Բալդին մի հեղ
Ծառայի պես
Կեսը կամա,
Կեսն ակամա,
Ցելավ գնաց ծովի քովը
Թոկն վոլորեց, կախեց ծովը.
Նիստ փոթորիկ ծովում հանեց,
Ափը ափին տվեց խառնեց.
Մի քիչ հետո հանկարծ—ահա՛,
Ծովից յելավ մի սատանա.
— Ի՞նչ ես ուզում, Բալդի, մեզնից,
Թոկդ քաշիր, հանի՛ր ծովից.
— Չե, ձեր ծովը յես կը խառնեմ
Ու բոլորիդ դուրս կհանեմ,
Ձեր վրայի ապառիկը,
Իմ տերտերի առնելիքը
Արդեն յեղավ յերեք տարի,
Ի՞նչու համար դուք չեք բերի։
— Հերի՛ք խառնես ծովը, Բալդի,
Ձեռքիդ թոկը խնդրեմ վա՛յր դի.
Շուտով կտանք մենք քո հարկը,
Իսկույն կդա իմ թոռնիկը։
Գնաց պապը. յեկավ թոռը,
Ցեկավ, տվավ գլխին զոռը.
Մլավելով ինչպես կատուն։
— Բարև քեզի, ասավ Բալդուն.
Այս ի՞նչ կարգ է,

Այս ի՞նչ վարք է,
Այս ի՞նչ հարկ է,
Քո ուզածը
Այս ի՞նչ լուր է,
Մեզ չարերիս
Ինչ տխո՛ւր է,
Հեչ լսած կա՞ գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, ի՞նչ անենք, կուզես՝ կտանք—
Բայց մի պայման չմոռանանք.
Մինչև ժողվի պապս հարկը,
Բերի լցնի կաշե պարկը,
Արի վաղենք մենք միասին
Ծովի շուրջը. ճամբի կիսին
Ով վոր հոգնի ու յետ ընկնի,
Թող նա վոսկու պարկը տանի։
Մի հոհոաց եղտեղ Բալդին

Ծաղրի տալով չարի ճուտին.
«Դու ո՞վ ես վոր, ա՛յ անհեթեթ,
Բալդին վազի քեզպեսի հետ.
Քիչ սպասի թող լըզպորը,
Գնամ բերեմ իմ յեղբորը»:
Բալդին անտառ գնաց արագ,
Բռնեց յերկու հատ նապաստակ
Ցեվ գցելով նրանց պարկը,
Դարձավ յեկավ ծովի ափը.
Հանեց մեկին պարկի միջից
Ու բռնելով զույգ ականջից,
Ասավ չարին. «Վախկոտ ճուտի՛կ,
Խոսքիդ տե՞րն ես, արի մոտիկ.
Առաջ վազիր յեղբորս հետ.
Ի՞նչ ես նայում վրան խեթ-խեթ.
Դեհ, մե՛կ, յերկուս, յերեք՝ վազե՛ք.
Դուք իրար շատ լավ կսազեք»,
Ու վազեցին. նապաստակը
Փախավ անտառ, մտավ ծակը.
Իսկ սատանեն՝ տնկած դունչը՝
Շրջան տալով ծովի շուրջը
Քրտնաթաթախ և վազեվազ,
Շունչը կտրած և հազիվ հաղ,
Քարին տալով իր մի վոտը՝
Իրան գցեց Բալդու մոտը.
Ցեվ ինչ տեսավ են լըզպորը—
Բալդին չոյում է յեղբորը.
«Ապրի՛, ապրի՛ իմ մոր բալեն,
Խիստ հոգնել է շատ վազելեն»:
Սատանեն ել՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Ասավ.— Գնամ բերեմ հարկը,
Վոր լցրել է պապս պարկը:
Գնաց թոռը պատմեց պապին,
Թե հաղթվեց ծովի ափին:

Բալդին նորից
Թոկն վոլորեց,
Կախեց ծովից.
Խիստ փոթորկից
Ձայներ յեկան
Ծովի տակից:
Մի այլ հնարք գտավ պապը
Ցեվ ուղարկեց թոռին ափը:
Թոռը յեկավ, ասավ Բալդուն.
— Հերի՛ք խառնես մեր ծովը դու:
Այս ի՞նչ կարգ է,
Այս ի՞նչ վարք է,
Քու ուղածը
Այս ի՞նչ հարկ է.
Այս ի՞նչ լուր է,
Ի՞նչ տխո՛ւր է,
Իմացած կա՞ գոնե մեկը—
Հարկ վճարեն սատանեքը.
Ե՛, վոր կուզես, մենք ել կտանք,
Բայց մի պայման չմոռանանք:
Մեզնից հեռու-դեռնի վրա,
Վո՛րտեղ կուզես, նշան արա.
Ձեռքիս փայտը ո՛վ մեզանից
Դեն չպրտի են նշանից,
Թող նա տանի վոսկու պարկը—
Ցերեք տարվա ժողված հարկը:
Հը՛, լռվեցար,
Տե՛ս, վախեցար—
Թեզ ջարդի,
Վախկոտ Բալդի:—
«Հա՛, վախեցա, թեզ ջարդի
Հլա լեզվին ես լակոտի,
Հլա մտիկ պուճուր չանը:
Ա՛յ, ե՛ն ամպն է իմ նշանը:
Փայտդ ենտեղ յես կնետեմ—
Այնուհետև յես ձեզ գիտեմ»...

Սատանեն եր՝ փոքրիկ ճուտը,
Փորին տալով յերկար տուտը,
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը
Ցեվ յեղածը ծովի ափին
Նա կցկտուր պատմեց պապին։

6

Բալդին նորից
Թոկն վոլորեց,
Կախեց ծովից.
Խիստ փոթորկից
Զայներ յեկան
Խոր հատակից։
Դարձյալ յեկավ են լղպորը.
— Ա՛յ անիծվի ես մեր որը,
Բալդի, ունեմ յես մի նոր բան...
«Սուս, կաթնակեր, անպետք, անբան,
Հերթը իմն է, ասավ Բալդին
Են աներես չարի ճուտին.
Տեսնում ես դու՝ են մատակ ձին
Արածում է ջոկ, առանձին.
Ցեթե նրան բարձրացնես,
Զեռքերովդ կես վերստ տանես,
Զեզ կրաչիեմ եդ ձեր հարկը,
Դատարկ կերթամ մեր աշխարհքը»։
Սատանեն եր՝ եդ խոսքի հետ
Հասավ ձիուն, իսկույն և եթ
Առավ նրան իր ձեռներին
Զոռը տալով ջուխտ ծնկներին.
Բայց յերկու քայլ դեռ չբիսխած,
Փովեց գետին, սաստիկ դողաց.
« Ա՛յ անպիտան չար սատանա.
Վրաղ հոգոց ո՞վ կրկարդա,
Վե՛ր կաց, վե՛ր կաց, չարի ճուտիկ,
Աչքերդ բաց ու ինձ մտիկ,
Դու չտարար ձին ձեռներով,

Ցեռ կը տանեմ իմ վոտներով»,—
Ասավ Բալդին ու ձին հեծավ,
Վոտների մեջ նրան առավ,
Մի վերստ տեղը իսկույն անցավ,
Փոշին յելավ, դուման դառավ.
Այստեղ դարձյալ չարի ճուտը՝
Զիմանալով Բալդու սուտը
Լեղապատառ ընկավ ծովը,
Շունչը առավ պապի քովը,
Իր տեսածը ծովի ափին
Նա կցկտուր պատմեց պապին։

7

Բալդին նորից
Թոկն վոլորեց
Կախեց ծովից,
Խիստ փոթորկից
Զայներ յեկան
Խոր հատակից։
Հնարք չկար. սատանեքը
Հավաքեցին իրենց հարկը,

Շալկած բերին Բալդու մոտը
Մեղա գալով՝ ընկան վոտը.
— Ա՛ռ ուղածդ, գնա՛, ասին,
Միայն հանդիստ տուր մեր դասին։

8

Բալդին յեկավ տնքտնքալով,
Վոսկին մեջքին ղընղընղալով։
Վա՜յ իմ որին՝ տերտերն ասավ,
Թռավ տեղից, տեղ չդտավ,
Կնկա փեշի տակը մտավ.
Բալդին նրան փեշի տակից
Քաշեց հանեց՝ բռնած մերքից։
Ասավ. «Բերի յես քո դանձը։
Տարվա վերջն է, տո՛ւր իմ վարձը»։
Ցեվ տեր ժլատը
Բռնեց ճակատը
Բալդին մի հետ կըտտացրեց,
Նրան ոճորքը թռցրեց.
Մի անգամ էլ կըտտացրեց,
Լեզուն բերնում լռեցրեց.
Վերջն էլ վոր չկըտտացրե՛ց,
Խեղճ տերտերին խելքից ղրկեց։
«Ժլատ ծերո՛ւկ, ես քեզ մի դաս,
Եժանության էլ ման չըդա՛ս»։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Արի— քաջ.
2. Իրիցկին— տերտերի կին.
3. Տնորհնեմ— տուն որհնելու վարձը— տերտերին.
4. Ապառիկ— ստանալիք, (նիսիա).
5. Անհեթեթ— անճոռնի-անմիտ.
6. Տուտ— պոչ (ծայր).
7. Հոգոց կարդալ— մեռելի վրա աղոթք կարդալ.
8. Դաս— ցեղ (այստեղ)։

27. ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՈՒՄ

Ցերեկոյան թեյից հետո բանվորները խումբ-խումբ վերադառնում էին հանրակացարան, առանց չտապելու, դանդաղ քայլերով։ Ելեկտրական ուժեղ լամպերը աչք ծակող լույսով պսպղում էին, հրապուրելով բնակիչներին։

Ցեկողների մեծ մասը նստում եր մեծ սեղանի մոտ, հանում լրագիր կամ գիրք, կարդում։ Վոմանք պառկում էին թախտերի վրա, վոմանք էլ այս ու այն կողմը խըմբվում ու զրուցում։ Վորմնադիր բանվոր Մեսրոպը յերեսնիվար պառկել եր թախտին ու կարդում եր մի բրոշյուր։ Նա լիկկայանի աշակերտ եր ու կարդում եր դժվարությամբ, դանդաղ։

— Սո-ցիա-լիս-տական ուղ-ուղ-ուղ...—արա, ես ի՞նչ ա դրած, մի տես, ուղ ա, ուղեղով ա,— դիմում է նա իր մոտ նստած Պողոսին, վորը լրագիր եր կարդում։

Պողոսը յերեսը դարձնում է Մեսրոպի կողմն ու նայում դրքին, նրա ցույց տված տեղը։

— Սա ուղեղով ա՞. բա աչքեր չունե՞ս... ուղիներով...

— Ի՞նչ ա նշանակում ուղիներով։

— Նշանակում է ճամփաներով։

— Բա ինչի՞ չեն եդպես գրում։

— Գնա գրողին հարցրու,— պատասխանում է Պողոսն ու ընկղմվում իր լրագրի ընթերցանության մեջ։

Մեսրոպը չի բավարարվում այդ պատասխանով ու շարունակում է մաքառել իր ընթերցանության մեջ։

Քարտաշ Բարսեղը խորհրդածելով ծամում է հետը բերած հացի կտորը, չթողնելով վոչ մի փշրանք, ապա հանում է իր հին ձևի փայլուն տուփը, կոշտ մատներով վարթարթում է հաստ պապիրոսն ու ագահությամբ ծխում, կարծես անհետ կորցնելով ծուխն իր թոքերի մեջ։

Մոտենում է բրիգադավար Վոսկանը.

— Բարսե՛ղ, բա յի՞ըբ ենք մենք էլ պարզերես դուրս գալիս։

— Ի՞նչ ա, պակա՞ս են թվերը։

— Չե՛, ավելանում են, համա լավ չեն ավելանում։ Բա յե՞րբ ես հարվածային դառնում։

— Դե քարտաշը մի՛շտ ել հարվածային ա. մի՛շտ մուրճով հարված է տալիս...

— Դե հանաքը թող. որինակ տուր...

— Աչքիս վրա։ Դու վոր դրելով ես հաշվում, յես ել աչքով եմ հաշվում. մի չաբաթից հետո մեր անունը վեր կլինի, իմացա՞ր։

— Լավ։ Ուրեմն խոսք ես տալի՞ս։

— Ի՞նչ խոսք՝ դու գործին մտիկ արա...

Վոսկանը ժպտալով գլուխը շարժում է ու գնում մյուսների մոտ։

Բարսեղը ծխելը վերջացնում է, վչչելով մաքրում է ծխամորճը, գնում է ծոցի գրպանը։ Հետո, աչքերը կկոցելով նայում է ելեկտրական լամպին, կարծես ճգնելով ինչ վոր մտաբերել։ Նա ուզում եր մտաբերել ինչ վոր բան, վոր այսոր կարդացել եր լրագրում, ու պիտի հարցներ, բայց նրա աչքերը կամաց-կամաց սկսում են թմրել։ Նա հանում է չորերը, խնամքով ծալած դարսում տարուբերտի վրա ու պառկում է անկողնում։ Դուրեկան հանգըստությունը փոքր ինչ հետ եմղում քունը, նա մտաբերում է որվա դեպքերը. այսոր նրա մոտ յեկավ իր նախկին գործատեր Կոստանովը, վորը պատերազմից առաջ իր կապալառուն եր և վերջին անգամ կտրել եր իր աշխատավարձի կեսը։ Հիմի յեկել, խնդրում եր, վոր Բարսեղը վկայի, թե ինքն առաջ վոչ թե կապալառու չե յեղել, այլ արտելի վարիչ, իբր թե ինքն ել հետներն աշխատելիս է յեղել։

Դե, ասում է, միասին աղ ու հաց ենք կերել, ինձ ոգնիր... Հա՛, հա՛, գելին նորից կենդանացնե՞մ, վոր դա մեզ նորից ուտի։ Չե՛, պարոն աղա Գրիգոր, դու մի գնա, մի քիչ ել ման յեկ ես աշխարհում, ու մտածիր քո ենց ժամանակվա արարքների մասին, հետո կխոսենք. դեռ մի քիչ ել բարակի, վոր ես բաները հասկանաս։ Մի քիչ դժվար մարսելու չե քեզ համար, թե չե, վոր մի անգամ ել յեկար, եդ քու թղթի վրա կգրեմ. «խնդրեմ ծանոթանաք, սա առաջ դել եր, հիմի ել դել է. մինչև ատամները չթափվեն, մոտ չթողնեք գործերին»։

Մեսրոպը վեր է կենում աթոռից, նորից լույսն ընկնում է Բարսեղի աչքերին ու նրանք փակվում են։ Նա քնում է խորը քնով, վոչ մի անհանգստություն չզգալով դեռևս տիրող աղմուկից։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Վորմնադիր— պատ դնող.
2. Բրոշյուր— փոքրիկ գիրք.
3. Ընկղմվել— թաղվել.
4. Մաքառել— կռվել.
5. Վեր կլինի— հայտնի կդառնա։

ՀԱՐՑԵՐ

1. Ովքե՞ր եյին ապրում այստեղ նկարագրած հանրակացարանում։

2. Ինչո՞վ եյին զբաղվում բանվորները հանրակացարանում։

3. Ցարի ժամանակ ինչպե՞ս եյին շահագործել բանվոր Բարսեղին։

4. Ճի՞շտ եր մտածում բանվոր Բարսեղը կապալառու Կոստանովի մասին։

---

28. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կյանք ենք ավել մենք նրան
Աբյունով ու քրտինքով.
Ցեվ բաց դաշտերի վրա,
Ցեվ յերկաթե սալի քով.
Համառ կռիվ ենք մղել
Տարերքի դեմ ահավոր,
Ցեվ միշտ հաղթող ենք յեղել
Մեծ յեռանդով ու յերգով։

Տուֆ քարերից չինել ենք
Շենքեր՝ մարմինը նրա։
Ցերակների պես արյան
Մենք ջրանցքներ ենք չինել.

Հետո սիրտը հրաբորբ՝
Ելեկտրական մեծ կայան,
Վոր բաբախում է հիմա
Ամեն սրտում, ամեն տան։

Գործարանները հսկա,
Առողջ թոքերի նման
Դարձրել են ամեն որ
Շնչառությունը նրա.
Ցեվ նա դարձել է հզոր.
Ցեվ նա դարձել է խրոխտ,
Ցեվ աճել է մեզ հետ նա
Արևի տակ հրաբորբ։

Ամեն գարուն ու մայիս
Մեր ցորենի դաշտերից,
Թարմ կանաչից ու վարդից
Հազուստներ ենք հագցրել
Ցեվ փայփայել ենք նրան
Վոսկի հույսերի նման,
Ցեվ անունը դրել ենք
Խորհրդային Հայաստան։

Մեր գրկանքով ու կյանքով,
Արյունով ես աճել դու,
Մեր պայքարով ու կամքով,
Հույսերով ես աճել դու։
Խորհրդային Հայաստան,
Խորհրդային Հայաստան,
Այս վառ արևը վկա՝
Մեր հեվքով ես աճել դու.—

Վոր լինի մեծ այդարաց,
Կառուցում ու հաղթանակ,
Վոր սերունդների դիմաց
Մենք ամոթով չմնանք։
Վոր ամեն մի տաշած քար
Ժպտա նրանց, յերբ վոր դան,
Վոր դու լինես միշտ պայծառ,
Խորհրդային Հայաստան...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հրաբորբոք— կրակով վառված.
2. Ներվ— նյարդ.
3. Խրոխտ— մեծ, գեղեցիկ ու հպարտ.
4. Այգաբաց— արևածագ։

---

29. ՅԵՐԿՈՒ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ

Հսկա քաղաքի ծայրամասում, գետից բարձր սպիտակին եր տալիս մի մեծ գեղեցիկ տուն։ Ներքևը՝ գետի ափին, ծխում եր գործարանը։ Սպիտակ տան յերրորդ հարկում, արևով վողողված ահագին սենյակներում, իր ընտանիքի հետ ապրում եր գործարանատերը։ Կիսամութ ներքնահարկում ապրում եր նույն գործարանի ջուլհակն իր ջուլհակուհի կնոջ հետ։

Գործարանատիրոջ կինը մի աղջիկ ունեցավ։ Ջուլհակուհուն նույնպես մի փոքրիկ ծնվեց։

Հոյակապ ննջարանում կախված եր աստվածամոր պատկերը, վոսկե զարդերով։ Տիրուհին հավատում եր աստծուն։ Բայց գիտեր, վոր աստվածամայրը լավ նկարած է տախտակի վրա, սակայն նրանից վոչ մի ոգուտ չի գալ, յեթե մարդ փող չունի։ Ջուլհակուհու նկուղի վոստայններով լի անկյունում ել կախված եր սևացած դեմքով ու աչքերով մի տախտակ։ Ջուլհակուհին ջերմ հավատով աղոթում եր, կարծելով, վոր պատից իրեն է նայում ինքը՝ կենդանի աստվածամայրը։

Գործարանատիրոջ կինն իր յերեխայի համար ուներ գայակներ, տատիկներ, աղախիններ և մի յերիտասարդ ծծմայր, վոր աղքատության պատճառով իր յերեխային թողել եր գյուղում մեռնելու՝ սև հաց լցրած թթու ծծակի հույսով։ Ջուլհակուհու յերեխան ամբողջ որը ճաքում եր սոված, զոռում՝ թաց ու գարշահոտ բարուրների մեջ։ Վոչ վոք չկա, վոր խնամի—հայրն ու մայրը ամբողջ որը գործարանի դազդյահի մոտ են, և մի բոպե անգամ իր փոքրիկ յերեխայի կարոտը չի մարում մոր սրտում։

Գործարանատիրոջ կնոջ յերեխան փթթում եր ինչպես ծաղիկ։ Ու վոսկե շրջանակի միջից, տախտակի վրա նկարած աչքերը նայում եյին նրան։ Ջուլհակուհու աղջիկը—

դեղնած, պառավի դեմքով, ծուռ վոտքերով ֆեր, ինչպես մութ նկուղի դեղնած խոտ: Ու նայում եր նրան ճաքճքած տախտակից սևացած դեմքը:

Գործարանատիրոջ կնոջ յերեխան հիվանդացավ: Ամեն կողմից թռան, հասան ամենանշանավոր բժիշկները, պրոֆեսորները, նրանց շատ հազարներ վճարեցին և բժշկեցին աղջկանը: Նա ելի վարդագույն եր ու կենդանի և ծլվլում եր թռչնիկի նման: Ու նայում եր նրան վոսկե շրջանակով տախտակը:

Հիվանդացավ Ջուլհակուհու աղջիկը, սկսեցին սառչել նրա թաթիկները ու տոտիկները, սևացավ փոքրիկ դեմքը, չորացավ սևացած բերանը: Տանջված մայրը գլուխը խփում եր տախտակին, փետում եր մազերը, չոքում եր և սրտանց աղոթում, տանջանքով սեղմում եր կուրծքը վոսկրացած ձեռքերով և հավիշտակությամբ նայում եր սևացած տախտակին, տանջանքով, արցունքով, հուսով ու հուսահատությամբ լի աչքերով: «Սրբազան մայր, անարատ պաշտպան: Փրկի՛ր դու իմ աղջկան... Առողջացրու դու իմ աղջիկը... Թող առողջանա իմ աղջիկը... Դու վոտքի կանգնեցրու նրան... Ինչո՞ւ յես այսպես տանջվում նա: Դու, սուրբ մայր...»:

Սուլում է շչակը, Ջուլհակուհին արցունքները կուլ տալով թողնում է իր հիվանդ փոքրիկին, վազում է աշխատելու գործարանատիրոջ ընտանիքի համար: Ջուլհակն ել է գնում աշխատանքի, բայց վիշտն աչքերում:

Մեռավ փոքրիկն ու պառկած է ինչպես դեղնած տերև:

Իսկ անկյունում կախված եր սև տախտակը: Տերտերն շտապով թաղեց, աշխատելով վորքան կարելի յե շուտ ազատվել, արագախոսությամբ ասելով.

— Անքննելի յեն տիրոջ ճանապարհները... Նրա համար այնտեղ լավ կլինի... Այն աշխարհում...

— Գոնե այս աշխարհում, գոնե մի ժամ, միայն մի ժամ — ապրեր ինչպես պետք է,— խեղդվելով ասաց մայրը:

Տերտերն ադաղակեց.

— Մի՛ բարկացնի աստծուն: Աստված ամենքին մի խաչ է տալիս, և ամենքը պետք է տանեն այդ խաչը: Թե չե կրակե հնոցներում կվառվես դու:

Ամեն ու փթթեց գործարանատիրոջ աղջիկը, իսկ Ջուլհակուհու աղջիկը փտում եր գերեզմանում: Ու յերբեք չանցավ տանջված կնոջ վիշտը:

Առաջվա նման կախված եյին յերկու աստվածամայրերը: Մեկը վերևում — վոսկեզոծ շրջանակի մեջ, գեղեցիկ նկարած տախտակի վրա, մյուսը՝ ներքնահարկի կիսախավարում ճաքճքած, սևացած տախտակի վրա:

ՄԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ջուլհակ— *կտավ, հիթ գործող.*
2. Հոյակապ— *մեծ ու գեղեցիկ.*
3. Ծծակ— *ծծելու սրվակ.*
4. Բարուր— *յերեխային փաթաթելու շոր.*
5. Փրթել— *ծաղկել.*
6. Անարատ— *բոլորովին մաքուր.*
7. Դայակ— *յերեխային խնամող կին.*
8. Նկուղ— *գետնահարկ տուն.*
9. Խաչը տանել— *բեռը տանել, դժվարությունը քաշել:*

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ պայմաններում եյին մեծանում յերկու աղջիկները: Ինչո՞վ եր տարբերվում նրանց արտաքին տեսքը: Ինչի՞ հետ է համեմատում հեղինակը մեկ և մյուս աղջկանը:

2. Գրողն ինչպիսի՞ արտահայտություններով է նկարագրում բանվոր ընտանիքի և կապիտալիստի ընտանիքի կյանքի պայմանները (տունը, կահավորությունը և այլն):

3. Ջուլհակուհու աղջիկն ինչո՞ւ մեռավ: Ինչո՞ւ առողջացավ գործարանատիրոջ աղջիկը: Ի՞նչն ոգնեց գործարանատիրոջ կնոջը բժշկելու աղջկանը— կապիտա՞լը, թե՞ սրբանկարը:

4. Տերտերն ինչպե՞ս եր մխիթարում Ջուլհակուհուն:

5. Այս պատմվածքում նկարագրածը յե՞րբ կարող եր տեղի ունենալ:

---

30. ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉ ԼԵՆԻՆ

(Քրոջ պատմածից)

1886 թվին, երբ Վլադիմիր Իլյիչը 16 տարեկան եր, մեր յերջանիկ ընտանիքին առաջին ծանր հարվածը հասավ: Հունվարի 12-ին հանկարծակի մեռավ մեր հայրը՝ Իլյա Նիկոլայեվիչը: Մեր մեծ յեղբայրը՝ Ալեքսանդր Իլյիչն այդ ժամանակ Պետերբուրգումն եր: Այժմ Վոլոդյան եր տան մեծ տղան և չնայած դեռ պատանի յեր, նա շատ հոգատար և ուշադիր եր դեպի մեր մայրը:

1887 թվին, երբ Վոլոդյան գիմնազիայի վերջին դասարանումն եր, մեր ընտանիքին հասավ մի ուրիշ ծանր դժբախտություն: Ալեքսանդր 3-րդ թագավորի վրա կատարած մահափորձին մասնակցելու համար Պետերբուրգում բանտարկվեց մեր յեղբայր Ալեքսանդրը: Վլադիմիր Իլյիչն առաջինը լսեց այդ ծանր լուրը: Ահա թե ինչպես պատահեց այդ:

Ցերը յես և իմ յեղբայր Ալեքսանդրը բանտարկվեցինք, մեր բարեկամուհին այդ մասին նամակ եր գրել մեր ծանոթներից մեկին: Այդ ծանոթը հետևյալն է պատմում. «Հենց վոր նամակն ստացա, մարդ ուղարկեցի գիմնազիա, Վլոդյային կանչեցի և նամակն իրեն տվի՝ կարդալու: Հոնքերը կիտած, նա յերկար, լուռ ու կենտրոնացած նայում եր նամակին: Կարծես թե նա ել նախկին ուրախ, անհոգ տղան չեր, այլ հասակ առած մարդ: «Գործը լուրջ է, կարող է վատ վերջանալ Ալեքսանդրի համար»,— ասաց Վոլոդյան»:

Ավելի ուշ, յերբ մայրիկը մեկնում է Պետերբուրգ իր մեծ վորդու ազատման համար աշխատելու, Վոլոդյան ասել է նրան. «Նշանակում է՝ Սաշան այլ կերպ չեր կարող վարվել, նշանակում է՝ այդպես ել պետք է վարվեր նա» Վոլոդյան այդ դժբախտությունը տանում եր մեծ արիությամբ. շարունակում եր ուշադիր պարապել, բայց ավելի լուրջ ու լռակյաց եր դարձել. և միայն այն ժամանակ, յերբ փոքր քույրերի ու յեղբոր մոտ եր գալիս, աշխատում եր նրանց ուրախացնել՝ շատախոսում եր ու կատակում առաջվա նման:

Իսկապես Ալեքսանդր Իլյիչի գործը վատ վերջացավ: Նա ճանաչվեց մահափորձ կատարելու գլխավոր դեկավարներից մեկը, դատապարտվեց մահվան: Դատավճիռը գործադրվեց 1887 թվի մայիսի 8-ին:

Սիմբիրսկի գիմնազիայի վարչությանը նկատողություն արին, վոր լավ վկայական և վոսկե մեդալ եր ավել «սոսկալի հանցագործին»: Մտածում եյին, վոր վոսկե մեդալ չի կարելի տալ և նրա յեղբայր Վլադիմիր Իլյիչին: Բայց գիմնազիայի ուսման ութ տարվա ընթացքում նրա ցույց տված առաջադիմությունն այնքան եր աչքի ընկնում, ավարտական քննություններն այնքան վայելուն եր տվել, վոր չեր կարելի զրկել նրան, ինչպես նաև նրա քույր Ոլյային վոսկե մեդալից:

Նա ստացավ այդ մեդալը և մտավ Կազանի համալսարանի իրավաբանական բաժինը: Ուսանողական ցույցեր տեղի ունեցան նաև Կազանի համալսարանում: Վլադիմիր Իլյիչը նույնպես մասնակցեց առանց թույլտվության գումարված ուսանողական ժողովին և մյուսների թվում հեռացվեց համալսարանից և Կազանից աքսորվեց Կոկուշկինո գյուղը:

Սրանով վերջացան նրա աշակերտական տարիները: Բարձրագույն դպրոցների դռները փակվեցին նրա առջև: Նրա և մոր հարուցած միջնորդությունը՝ կրկին համա-

լսարան ընդունվելու մասին, մերժվեց գլխավորապես այն պատճառով, որ նա Ալեքսանդր Իլյիչի յեղբայրն եր:

Այսպիսով դպրոցական ուսումը Վլադիմիր Իլյիչի համար վերջացավ 17 տարեկան հասակում: Բայց նա այնքան դիտակից եր, որ առանց կողմնակի ոգնության վերջացրեց իր կրթությունը:

Վերջապես նրան իրավունք տրվեց իրավաբանական ֆակուլտետի ավարտական քննություն տալ: Քննություն տվեց իր շրջանավարտների հետ միևնույն տարում: Հիշում եմ, շատերը զարմանում եյին, որ նա վոչ մի տարի չկորցրեց: Համալսարանից ստացած վկայագիրը նրան տալիս եր մասնագիտություն, ուրեմն հնարավորություն եր տալիս հաց վաստակելու և ընտանիքին ոգնելու:

Վոլոդյան դավառում՝ նախ Կազանում, ապա Սամարայում ապրած տարիներում ավարտեց նաև իր հեղափոխական կրթությունը: Նա ուսումնասիրեց Մարքսի և Ենգելսի բոլոր գրվածքները: Նա հաստատ գնաց հեղափոխական ուղիով և իր ստեղծած Կոմունիստական կուսակցությունը գլխավորելով՝ առաջնորդեց Ռուսաստանի բանվոր դասակարգին դեպի հաղթանակ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մեդալ— պատվանշան, չքանշան.
2. Արիություն— քաջություն.
3. Իրավաբանական ֆակուլտետ— համալսարանի այն բաժինը, ուր որենքներն են սովորում:

---

31. ԼԵՆԻՆ ՈՒ ԼԻ-ՁԱՆԸ

1

Պեկինում մարդիկ կան բոլոր տեղերից:
Պեկինում այնքա՞ն փողոցներ:
Փողոցում Լի-Ձանը յերկա՞ր թափառեց,
Թափառեց կուլին գործաղուրկ:

Ու հետո—դաշտերում... վերահսկիչը չար
Ամեն որ ծեծում եր Լի-Ձանին,
Այն որից, ինչ Լի-Ձանը մշա՛կ դարձավ՝
Զթողին իր մեջքը դինջանա:

Դաշտերում, ուր բանում եր թեյը բուրավետ՝
Մի անդամ փչեց տաք մի քամի,
Ու թիկնեղ մի ճամփորդ կորցրե՛ց դաշտերում
Մի կտոր թերթ լրագրի:

Հոգնաբեկ ու ծեծված Լի-Ձանը վերցրեց
Ու կարդաց պատմությունը հուզիչ.
Մի յերկրում հիմա տեր, դեկավար եդարձել
Վոչ թե ժանտ մանդարի՛նը—կուլի՛ն:

Ու այնտեղ՝ տրորած այդ թերթի ճակատին,
Վոր ընկել եր դողդոջ ծունկերին,
Նկարված եր առաջնորդն ապա՛տ այն յերկրի,
Ու գրված եր անունը—Լե՛նին:

Ու թեյի դաշտերում կուլիները խղճուկ—
Այն որից՝ թե ցերե՛կ, թե գիշե՛ր—
Անհամար հեքիաթնե՛ր են հյուսում.
Թե Լենինը նրանց կըհիշե՛,

Թե պիտի տապալվի մանդարինը
Դաշտերից բրնձի ու թեյի.
Լենի՞նը դեպի ըմբո՛ստ Պեկինը
Կկանչի բոլո՞ր կուլիներին:

2

Վոնդվե՛ց Լի–Զանը։
Կրկին ընկավ Պեկին.
Նա զսպում եր մաղձն իր։
Փողոցներն անթիվ են։ Ամբոխը՝ մի հեղեղ։
Լի–Զանին կրծում է քաղցը։

Ու հանկարծ...
Լսեց Լի–Զանը
Ճի՛չը լրագրավաճառի։
Ճիչում հուզում եր հնչո՛ւմ.
Մեռավ ամենամե՛ծ բոլշևիկը.
Ռուսաստանում,
Լե՛նինը
Մեռա՛վ...

Մեռավ Լե՛նինը։ Նա՛, վոր թերթիկից
Ապստամբության նշան եր տվել։
Զեր լացել յերբեք Լի–Զանը մտրակից.
Իսկ այժմ—
Լի–Զանը դա՛ռը հեկեկաց։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ժանտ— դաժան, զզվելի.
2. Կուլի— չին բանվոր (սևագործ).
3. Հոգնաբեկ— հոգնածությունից ջարդված, տանջված.
4. Մանդարին— պետական աստիճանավոր Չինաստանում.
5. Մաղձ— բարկության թույն, դայրույթ։

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ եր Լի–Զանը։ Ինչպիսի՞ պայմաններում եր տպրում Լի–Զանը (պատասխանեցեք բանաստեղծության բառերով)։

2. Ի՞նչ եյին յերազում կուլիները։ Ինչո՞ւ նրանք «անհամար հեքիաթներ են հյուսում»։

3. Վո՞րն եր Լի–Զանի կյանքում ամենամեծ վիշտը։ Այդ ինչի՞ց է յերևում։

32. «ՅԵՍ ՊԵՏՔ Է ՏԵՍՆԵՄ ԼԵՆԻՆԻՆ»

(Հիշողություն)

1

Հիշում եմ Գորու ծխական դպրոցում սովորելու տարիները։

Իոսիֆ Զուղաշվիլին արտաքուստ նիհար, բայց ամրակազմ տղա յեր։ Կենսուրախ եր ու ընկերասեր.— Նա միշտ շրջապատված եր լինում ընկերներով։ Նա շատ եր սիրում իր հասակակիցների հետ դնդակ և «լախտի» խաղալ։ Այն ժամանակ դրանք աշակերտների սիրած խաղերն եյին։ Իոսիֆը գիտեր ամենալավ խաղացողներին ընտրել և նրա կողմը միշտ տանում եր խաղը։

Իոսիֆի հետ յես սովորել եմ 13 տարի։ Այնուհետև ահա արդեն 35 տարի յե ուսուցչություն եմ անում և այսքան յերկար տարիների ընթացքում այդպիսի չնորհալի ու ընդունակ աշակերտի չեմ հանդիպել։ Թեև այն ժամանակ դպրոցներում մեզ նկարչություն չեյին սովորեցնում, բայց Իոսիֆը հիանալի նկարում եր։ Հիշում եմ նրա նկարած Շոթա Ռուսթավելու և վրացական այլ գրողների նկարները։

Դպրոցում սովորելիս Ստալինը Գորու դրադարանում յեղած բոլոր գրքերը կարդաց — Իգնատի Նինոշվիլու, Իլիա Ճավճավաձեյի, Ակակի Ծերեթելու և ուրիշների յերկերը: Նա խորհուրդ եր տալիս նաև մեզ՝ իր ընկերներին կարդալ լավագույն գրվածքները ու հաճախ պատմում եր իր կարդացածի բովանդակությունը: Հիշում եմ, թե ինչպիսի ուժեղ տպավորություն գործեց նրա վրա Նինոշվիլու «Գոգիա Ուիշվիլի» պատմվածքը, վորի մեջ նկարագրված ե գյուղացիների ճնշված ու իրավազուրկ դրությունը: «Հարկավոր ե սովորել և սովորել, ասում եր Իոսիֆը,— վոր կարողանանք ոգնել գյուղացիներին»:

Իոսիֆ Զուղաշվիլին աչքի յեր ընկնում վորպես շատ համեստ, զգայուն և լավ ընկեր: Նա յերբեք զգալ չեր տալիս իր գերազանցությունը, թեև մեզնից շատ ավելի զարգացած եր: Նա չեր հպարտանում, վոր ավելի ընդունակ ե մեզնից. ընդհակառակը՝ ոգնում եր մեզ. ոգնում եր աշխարհագրական քարտեզներ նկարել, խնդիրներ լուծել, դասերս պատրաստել:

Իոսիֆը հաստատակամ և յեռանդոտ պատանի յեր: Ընկերական շրջանում այդ բոլորի հետ միասին նա յերկու շատ դրական գիծ ուներ — զգայուն եր և հոգատար:

Նրա հոգատարության մասին ե վկայում թեկուզ հենց հետևյալ փաստը:

Մի անգամ քննություններից առաջ հիվանդացա. դիմեցի դպրոցի դեկավար Բելյայեվին և խնդրեցի — քննություններից ազատել ինձ: Բելյայեվը մերժեց: Այդ մերժումը չափազանց հուզեց ինձ: Ցերը այդ բանը Սոսոն իմացավ, պնդեց, վոր մենք միասին նորից գնանք Բելյայեվի մոտ: Ցես աշխատում եյի նրան համոզել, վոր այդ քայլն անոգուտ ե, բայց նա ինձ համոզեց և մենք գնացինք: Սոսոն այնպիսի վճռականությամբ, համարձակությամբ և հաստատակամությամբ սկսեց համոզել դպրոցի դեկավարին, վոր նա զիջեց և ինձ ազատեց քննություններից:

Հետագայում, յերբ Ստալինը սովորում եր Թբիլիսիի սեմինարիայում, նա մասնակցում եր ընդհատակյա խմբակներին և շարունակ տարված եր ընթերցանությամբ:

Թբիլիսիում ել Ստալինը առաջվա նման կենսուրախ ու կարեկից ընկեր եր: Բայց այստեղ պարզ կերպով բեկում առաջացավ նրա մեջ: Դասերից դուրս նա իր ամբողջ ժամանակը նվիրում եր քաղաքական գրքեր կարդալուն, մարքսիզմի ուսումնասիրությանը, բանվորական շարժումն ուսումնասիրելուն:

Հիշողությանս մեջ հատկապես մի ուշագրավ փաստ ե մնացել: 1898 թվին եր: Մի անգամ, առավոտյան թեյից հետո, սեմինարիայից դուրս յեկա Գուշկինյան պուրակը: Այստեղ Ստալինը մի խումբ ընկերներով շրջապատված տաք-տաք վիճաբանում եր: Բոլորը հետաքրքրությամբ և գրավված լսում եյին նրան: Ցեվ այստեղ այդում, մենք առաջին անգամ լսեցինք «Լենին» անունը:

Զանգը տվին. շտապեցինք դեպի դասարանները: Ցես մոտեցա Իոսիֆին: Իոսիֆն ինձ հայտնեց, վոր ինքը կարդացել ե Լենինի հոդվածները ու այդ հոդվածները չափազանց դուր են յեկել իրեն:

— Ինչ գնով ել լինի, թեկուզ մեռնեմ ել, յես պետք ե տեսնեմ Լենինին,— ասաց ինձ նա այն ժամանակ:

1898 թվականին ասած այս խոսքերը ընկեր Ստալինին յես հիշեցրի 1926 թվականին, մեր հանդիպման ժամանակ, ու նա հիշեց այս դեպքը:

Ընկեր Ստալինը վոչ միայն տեսավ Լենինին, այլ և նրա ամենամոտիկ զինակիցը դարձավ և Լենինի հետ միասին դաստիարակեց բանվորներին ու գյուղացիներին. Լենինի հետ միասին ստեղծեց Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը և կազմակերպեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը:— Ստալինն ուրախ ու յերջանիկ կյանք ստեղծեց մեր յերկրի բոլոր աշխատավորների համար:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցերկ— դրական աշխատանք, գիրք.
2. Դրական— լավ, գովելի.
3. Սեմինարիա— անցյալում դպրոց, վորտեղ պատրաստում եյին հոգևորականներ կամ ուսուցիչներ.
4. Ընդհատակյա— հատակի տակ, գաղտնի.
5. Պուրակ— փոքրիկ այգի, զրոսավայր:

33· ԺԱՅՌԵՐԻ ՎՐԱ

Կովկասյան սեգ լեռներից դեն
Կա քարաժայռ բարձրաբերձ,
Այնտեղ արծիվն ելը բուն հյուսել
Մի ավերակ ժայռի մեջ։
Ցեվ ապրում է ամպերի տակ
Ձագուկների հետ փոքրիկ
Քանի՛ տարի նա չարունակ—
Բարձունքներում անառիկ։
Ցեվ հիշում է արծիվը ծեր՝
Ինչպես մի որ լուսավառ,
Ճարպիկ մանուկ մի թխահեր
Մագլցում ելը դեպի ժայռ։
Ինչպես կանգնած լուռ, մտախոհ
Խոր անդունդի յեզերքին,
Նայում ելը նա դեպի քաղաք,
Տարվելով իր մտքերին։
Մտածում ելը—«Ինչո՞ւ մարդիկ
Աղքատ են այս գյուղերում.
Ինչո՞ւ այսպես հովվի չվին
Վիշտ ու թախիծ է բերում։
Քամին՝ ամպն է ծովը տանում,
Լոկ արծիվն է—ամպից վեր.
Ուժեղ ես դու, ազատ քամի,
Ու դու, արծիվ անվեհեր։
Ցես ուզում եմ լինել ուժեղ
Քամուց, արծվից՝ համարձակ,
Վոր խինդ բերեմ յերկրին ու տամ
Աղքատներին ազատ կյանք։
Վորպեսզի բախտն ուրախ ժպտա
Ցերկրի վրա—բոլորին»։
Ահա ինչ ելը մտքը անում նա՝
Կանգնած ժայռի կատարին։
Ծերացել ելը արծիվն ահեղ,
Մեծացել ելը պատանին.



Պայքարի յեր մարդկանց կանչել,—
Ցեվ միացան պայքարին:
Այժմ քամուց ուժեղ եր նա,
Արծվից խիզախ առավել,
Աղքատներին հող, ազատ կյանք,
Խնդություն և ձեռք բերել:
Մոռացած ցավ, աղքատություն,
Մարդն ապրում է յերջանիկ,
Հովվի չվին նույն լեռներում
Ուրախ յերգում է քաղցրիկ:
Բոլոր մարդկանց լույս է սփռում
Անունը Մեծ ՍՏԱԼԻՆԻ.
Իսկ արծիվը հիշում է դեռ
Նրան՝ կանգնած ժեռ քարին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Սեգ— գեղեցիկ, վեհ ու հպարտ.
2. Բարձրաբերձ— շատ բարձր.
3. Թխահեր— սև մազերով.
4. Անվեհեր— անվախ.
5. Խինդ— ուրախություն:

---

34. ԳՈՎՔ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Արև ծաղեց մեր աշխարհին,
Մարդուն, հողին, հանդին, քարին,
Տեսանք կյանքի սերն ու բարին,—
Մեզ արև տվողիդ մատաղ:

Մեզ տվիր արևի շողը,
Ե՛լ չկա մեզ կողոպտողը,
Որհնվի քեզ ծնող հողը,—
Քեզ ծնող մայր հողին մատաղ:

Դու վոր կաս—մի անմար լույս ես,
Համ սեր, համ կյանք, համ ել հույզ ես,



Կռվող մարդուն խրախույս ես,—
Արևիդ ու շողիդ մատաղ:

Քո եղ գրած լույս որենքը
Շինեց մեր նոր կյանքի չենքը,
Մեր սրտերից բղխեց յերգը,—
Նոր որենք գրողիդ մատաղ:

Խոսքեր ունես վոսկուց անգին,
Շուռ տվեցիր աշխարհքը հին,
Հասցրիր մեզ ուրախ կյանքին,—
Մեզ նոր կյանք տվողիդ մատաղ:

Ծովը ծովի հետ միացավ,
Անապատը պարտեզ դարձավ,
Կյանքը ուրախ, անվիշտ, անցա՛վ,—
Ուրախ կյանք բերողիդ մատաղ:

Խորհուրդները մնան հաստատ,
Ստալինը մեր հարազատ,
Ընկերներով բյուր ու հազար,—
Ցերկիրը պահողիդ մատաղ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Անմար— չհանգչող.
2. Բյուր— տասը հազար, շա՛տ-շատ:

---

35. ԿԱՊՈՒՅՏ ԳՈՐԳԸ

(Տաջիկական հեքիաթ)

1

Հին ժամանակ մի ղշլաղում ապրում էր դեհկան Ռահիմը: Նա շատ աղքատ էր. վոչ հող ուներ, վոչ ջուր: Նրա ունեցածը — ծղոտե մի հին տնակ ու մի կապույտ գորգ էր: Ռահիմն աշխատում էր բայի մոտ, հողն էր փորում քեթմենով, ցորեն էր ցանում և սրա փոխարեն որակն յերեք լավաշ ու մի կճուճ ջուր էր ստանում: Ցեվ այսպես ապրում էր նա իր կնոջ ու աղջկա հետ: Աղքատ եյին, բայց հաշտ ու համերաշխ եյին ապրում: Ցերեկոները նստում եյին իրենց դռանը, հիանում եյին իրենց կապույտ գորգով: Ամբողջ ղշլաղում այդպիսի գորգ չէր կար: Գորգի վրա գործած եյին մանիշակագույն քաղաքներ, կանաչ այգիներ, փիրուզե յերկինք ու կապույտ աստղեր: Ռահիմն այս գորգն ստացել էր մորից, վորն ստացել էր նույնպես իր մորից, սա էլ—իր մորից: Ասում եյին, վոր այդ գորգը գործել է Ռահիմի տատի-տատի տատը և նրա վրա աշխատել է յերիտասարդ տարիքից մինչև մահը:

Մահվան ժամանակ նա ասել է.

— Լավ պահեցեք, զավակներս, այս գորգը: Ում տանը վոր լինի սա, նրան բախտավորություն ու խաղաղություն կբերի:

Ցեվ Ռահիմը սիրում, պահում ու աչքի լույսի պես պահպանում էր գորգը:

2

Բայց մի անգամ բայը, լսելով գորգի մասին, Ռահիմին կանչեց իր մոտ.

— Ինձ տուր այդ գորգը,— ասաց նա:

Ռահիմը մտածեց ու ասաց.

— Ինչպե՞ս կարող եմ իմ բախտը տալ քեզ: Ցեվ ինչի՞ դ է պետք: Դու ամեն ինչ ունես — հողն էլ է քոնը, ջուրն էլ, վոչխարներն էլ: Իսկ յես միայն մի գորգ ունեմ: Չէ՛, իմ գորգը քեզ չեմ տալ:

Բարկացավ բայը և վռնդեց Ռահիմին:

Այդ որվանից Ռահիմի վաստակած հացն ու ջուրն որեցոր սկսեց պակասել: Նրա տանը սով առաջացավ:

Այն ժամանակ Ռահիմի կինը վերցրեց քեթմենը և մարդու հետ միասին գնաց բայի դաշտն աշխատելու: Աշխատում եյին վաղ առավոտից մինչև գիշեր, բայց ստացած հացն ավելի ու ավելի յեր քչանում:

Ռահիմի փոքրիկ աղջիկն էլ քեթմենը վերցրեց ու դաշտ գնաց: Ցերեքով տանում եյին բայի ծանր աշխատանքները, բայց բայն ավելի յեր բարկանում և նրանց կերակրում էր շների կերի մնացորդներով:

Նրանց միակ ուրախությունը կապույտ գորգն էր:

3

Մի անգամ սոված Ռահիմը միտք էր անում: Մտածեց, մտածեց ու մյուս որը դաշտ գնաց.

— Լսի՛ր, դաշտ, ասաց նա:— Այդ յես եմ, Ռահիմը: Դու ինձ վաղուց է՝ ճանաչում ես: Ցես քեզ փորում եմ ամեն տարի: Խնդրում եմ, մի քիչ հող տուր ինձ:

Դաշտը հառաչեց ու ասաց.

— Ցես ուրախությամբ կոգնեյի քեզ, բայց իմ տերը, բայը, կլսի ու կբարկանա: Լավ է՝ շուտով հեռանաս այստեղից:

Բայց Ռահիմը չլսեց: Նա յերկու պարկ լցրեց հողով ու տուն տարավ: Հողը թափեց տան առաջ ու գնաց ցորենի մոտ:

— Լսիր, ցորեն,— ասաց նա,— մենք իրար վաղուց ենք ճանաչում: Ցես եմ, Ռահիմը, վոր քեզ ցանեցի դարնանը: Ինձ մի քիչ հատիկ տուր, յես ուզում եմ փոքրիկ արա ցանել:

Ցորենը վախեցած որորեց իր հասկերն ու կամացուկ ասաց.

— Սո՛ւս, սո՛ւս, թե չէ բայը կլսի: Լավ է՝ շուտով հեռանաս այստեղից:

Բայց Ռահիմը չլսեց նրան: Ցերկու փունջ հասկ պոկեց ու տուն գնաց:

Ցորենը ցանեց տան առջևն ու գիշերով առվի մոտ գնաց.

— Լսի՛ր, առու,— ասաց նա,— յես քեզ վաղուց եմ ճանաչում, դու ել—ինձ: Այդ յե՛ս եմ քո ջրերը բայի տունը տանում: Մի քիչ ջուր տուր ինձ—տանեմ, արտս ջրեմ:

Առուն բարձր ձայնով քչքչաց.

— Որենքով իմ ջուրը բայինե պատկանում: Շուտ հեռացի՛ր, թե չե իմ տերը կտեսնի քեզ:

Բայց Ռահիմը չլսեց. ջրով լցրեց յերկու կճուճ ու տուն տարավ: Նա ջրեց իր արտն ու բերքի յեր սպասում:

Յերկու լուսին դեռ չեր բոլորել, վոր Ռահիմի դռան առջևը խիտ ցորեն աճեց: Ռահիմը հավաքեց հատիկները, ծեծեց, և կինը լավաշներ թխեց: Նրանք կուշտ կերան թարմ հացը:

4

Այդ ժամանակ բայը վորոշեց շրջել իր կալվածները:

Յերբ դաշտ գնաց, մի փոս տեսավ այնտեղ: Բարկացավ ու դաշտով մեկ ձայն տվեց.

— Ո՞վ ե այս փոսից հող տարել:

Դաշտը վախեցավ ու ասաց.

— Յես... յես չեմ... Այդ Ռահիմն եր՝ յեկավ և ուժով խլեց մի քիչ հող:

Բայը շարունակեց իր ճանապարհը. տեսավ ցորենի արտից հասկեր են պակասում, իսկ առվի ջուրը քչացել ե:

Զայրացած բայը գնաց Ռահիմի տունը: Իսկ այնտեղ նոր եյին հաց թխել, ու թարմ լավաշի հոտը բուրում եր:

Դեռ վոտքը ներս չդրած, բայը գոռաց.

— Դու գողացել ես իմ հողը, ցորենն ու ջուրը: Այ, յես քեզ բանտ կնստեցնեմ: Դու իմ ցորենի հացն ես կերել: Յես քո դորդը կվերցնեմ: Յեվ յես քեզ հետ ըստ որենքի կվարվեմ:

Գատից ելնելով դորդն ու տարավ, իսկ ծառաները բռնեցին Ռահիմին ու բանտ նստեցրին:

5

Ռահիմն ինքն ել չեր իմանում — ինչքան ժամանակ մնաց բանտում: Աչքերն ել չեյին տեսնում, վոտքերը չեյին շարժվում:

Վերջապես բանտի դռները բացվեցին, և նա փողոց դուրս յեկավ: Հազիվհազ իր տունը հասավ ու կանգ առավ. աչքերին չեր հավատում. շուրջը թափված եյին միայն ծղոտի, աղյուսների կտորներ:

Ռահիմը հարևանների մոտ գնաց, հարևաններն ասացին, վոր նրա կինը վչտից մեռել ե, իսկ աղջիկը գնացել ե՝ հայտնի չե թե ուր, տունն ել ամայացել ե ու քանդվել:

Սիրտը լի զայրույթով Ռահիմը բայի մոտ գնաց և նրա տանը՝ պատին տեսավ իր դորդը: Բայի տանը յերդն եր թնդում, ուրախություն եր ու յերջանկություն:

Ել ավելի զայրացավ Ռահիմը և կանչեց վողջ դշխոյով մեկ.

— Զկա՛ յերկրի վրա արդարություն: Քանի դեռ յերկու մարդ են ապրում, մեկը տեր կլինի, մյուսը՝ ծառա կդառնա: Մեկը բախտավոր կլինի, մյուսն՝ անբախտ:

Յեվ Ռահիմը վորոշեց ընդմիշտ հեռանալ մարդկանցից, սարերում ապրել, վոր վոչ վոքի չհանդիպի:

Նա անցավ դաշտերն ու անապատները, բարձրացավ լեռները և մտավ մի քարայր, վորը բոլոր կողմերից ժայռերով եր շրջապատված: Այնտեղից յերևում եր միայն կապույտ յերկինքը:

Մնաց Ռահիմն այդ այրում: Վայրի այծերը գալիս եյին և կաթ տալիս նրան, մեղուները մեղր եյին բերում, և լեռնային արծիվն իր վորսն եր բաժանում նրա հետ:

Ռահիմը մոռացավ մարդկանց: Միայն մեկ անգամ, շատ տարիներ անց, յերբ նրա մազերն արդեն ճերմակել եյին ամբողջովին, հարցրեց արծվին.

— Ի՞նչ են անում յերկրի վրա. դեռ ապրո՞ւմ են մարդիկ այնտեղ:

— Ապրում են,—պատասխանեց արծիվը,—բայց պատերազմում են ու իրար կոտորում:

Յեվ ուրախացավ Ռահիմը. նա մտածեց, վոր ուրեմն շուտով վոչ մի մարդ չի մնա յերկրի յերեսին:

6

Նորից տարիներ անցան: Յեվ մի առավոտ Ռահիմն արթնացավ խուլ վորոտներից. քարայրի շուրջը՝ ժայռերը

զողացին, գդրդոցով փուլ յեկան և անդունդը թաղվեցին:

Ռահիմը տեսավ մարդկանց, վորոնք ժայռերն եյին պայթեցնում: Զայրույթով վեր ցատկեց, վոր փախչի մարդկանցից՝ լեռների խորքը: Հանկարծ իր հայացքն ուղղեց այն հովտին, վորն առաջ ծածկված եր ժայռերով: Ցեվ այնտեղ, ուր առաջ դեղնին եր տալիս անապատի մեռած ավազը, կապտագույն հովտում դաշտեր ու այգիներ եյին կանաչել, սպիտակ ու կապտագույն քաղաքներ եյին բարձրացել: Ճիշտ այնպես — ինչպես կապույտ գորգի վրա: Ցեվ Ռահիմն, ամեն ինչ մոռացավ, վայր վազեց, մոտիկից դիտելու իր գորգը:

Բայց յերբ ցած ինչավ լեռներից, մտածեց.

«Այս իմ աչքին և յերևացել. առավոտյան կապույտ մշուշում յերկիրն ինձ գորգ և թվացել»:

Բայց յերկիրն այնքան գուրեկան եր, այգիներն այնպես եյին բուրում, դաշտերն այնպես կանաչին եյին տալիս, վոր նա առաջ շարժվեց:

Շուտով նա ծարավեց և ուզեց ջուր խմել: Այդ ժամանակ նա տեսավ առուն: Իր ծանոթ առուն եր, սակայն ավելի խոր ու լայն:

— Ցես խմելեմ ուզում,—ասաց Ռահիմը:—Բայց մի՞թե աղքատը կարող և բայի առվից խմել: Ինձ նորից բանտ կնստեցնեն:

Առվի ափերը ծփացին և Ռահիմը լսեց.

— Խմի՛ր, բարի մարդ: Նոր որենքի համաձայն իմ ջուրը պատկանում և բոլոր դեհկաններին... խմի՛ր, ինչքան կուզես:

Ռահիմը զարմացավ, սակայն խմեց ու առաջ անցավ:

Շուրջը շնչնկում եր ու որորվում ցորենը: Ռահիմն զգաց, վոր քաղցած և:

— Ցես կուզեյի ցորեն վերցնել,— ասաց նա,— բայց արտի տերն անշուշտ ինձ բանտ կնստեցնի:

Ցեվ այստեղ արտը հանկարծ չչնչաց.

— Ա՛ռ հատիկները, բարի մարդ: Նոր որենքով՝ դա պատկանում և դեհկաններին:

Ռահիմը զարմացավ ու առաջ գնաց:

Նա տեսավ մի մեծ դաշտ և այնտեղ շատ մարդ եր

հավաքված: Հողը սև եր, պարարտ, իսկ մարդիկ աշխատում եյին, յերգում ու ծիծաղում:

Ռահիմը զարմացավ ու հարցրեց.

— Ինչո՞ւ յեն այսպես ուրախանում. մի՞թե այդպես հաճելի յե բայի հողը մշակելը:

Ցեվ հանկարծ դաշտը խոսեց.

— Ըստ նոր որենքի հողը — բոլոր դեհկաններինն և. իսկ բայը — վաղուց և, վոր չկա:

Ռահիմը չհավատաց ու հարցրեց մարդկանց.

— Ո՞վ և այս հողերի տերը:

Մարդիկ սկզբում չհասկացան, հետո պատասխանեցին.

— Մի՞թե դու չգիտես: Հողի տերը — մենք բոլորս ենք:

Ռահիմն ավելի զարմացավ և շարունակեց իր ճանապարհը:

7

Նա գյուղ հասավ և տեսավ գորգերով զարդարված նոր տներ, մեկը մյուսից մեծ, մեկը մյուսից գեղեցիկ: Մի մեծ տան մոտ յերեխաներ եյին հավաքվել: Բակի մեջտեղում փռված եր կապույտ գորգը, վորի վրա խաղում եյին ամենափոքրերը: Ռահիմը ճանաչեց իր՝ յերջանկության գորգը:

Յերեխաները դիտում եյին գորգի վրայի նկարները, քաղաքներն ու այգիները, խոսում եյին ու զվարճանում:

Ռահիմը կանգ առավ և յերկար ժամանակ դիտում եր յերեխաներին: Նա հիշեց իր կյանքը, իր փոքրիկ աղջկանը և իր ծանր աշխատանքը բայի մոտ: Հիշեց, և ինքն էլ չիմացավ, թե ինչպես լաց յեղավ:

— Ինչո՞ւ յես լալիս, ծերուկ,— հարցրին յերեխաները:

— Ցես ուրախությունից եմ լալիս,— պատասխանեց Ռահիմը:—Ինչ վոր մի բան և պատահել մեր հին յերկրին: Ամեն ինչ փոխվել և: Հողը, ջուրը, ցորենը դեհկաններին և պատկանում, իսկ յերեխաները խաղում են յերջանկության գորգի վրա:

Ցեվ նա հարցրեց.

— Ո՞վ է ձեզ մոտ, գյուղում, գլխավորը։

Ցերեխաները տարան նրան ուղղակի բայի տունը։

Ռահիմը ներս մտավ, բայց բայի փոխարեն տեսավ մի կնոջ, վորը նստած խոսում եր դեհկանների հետ։

Ռահիմն ուշադրությամբ նայեց կնոջը և ճանաչեց իր կորած աղջկանը։ Աղջիկն էլ ճանաչեց նրան, ուրախացավ ու ասաց.

— Նստիր, հայրի՛կ, ու իմ հյուրը դարձիր. յես հիմա կքննեմ այս դեհկանների վեճը։

Նա սկսեց խոսել ու քննել և շուտով հաշտեցրեց վիճող կողմերին։ Դեհկանները գոհ հեռացան։

Ծեր Ռահիմը լսում եր իր աղջկա իմաստուն խոսքերը, և այդ որը լաց յեղավ նորից։

Աղջիկը զարմացավ ու հարցրեց.

— Ինչո՞ւ յես լալիս, հայրի՛կ։

— Հպարտությունից,— պատասխանեց Ռահիմը։ Ո՞վ կարող եր մտածել, վոր կինը, չքավորի աղջիկը կարող է գլխավոր դառնալ։

— Նոր որենքով,— ասաց աղջիկը,— ում վոր դեհկանները հավատում են, նա կարող է գլխավոր դառնալ։

Ռահիմը վեր կացավ աշխուժով ու հարցրեց.

— Ի՞նչ որենք է այդ, և վորտեղի՞ց է այն։

Աղջիկը վոչինչ չասաց, բռնեց նրա ձեռքից ու տուն առաջնորդեց։

Նա փռեց գորգերը, բերեց գինով լի սափորները, սեղանին դրեց կաթսան՝ փլավով լի, խորտիկներ՝ տապակած վոչխարից, սեխ և խաղող, և հասած նռներ։ Կային նաև սպիտակ լավաշներ։ Ապա Ռահիմի աղջիկը տնե-տուն ման յեկավ ու հյուր կանչեց գյուղի բոլոր դեհկաններին։ Ցեկան ծերերն ու յերիտասարդները, տղամարդիկ ու կանայք, և աղջիկը նստեցրեց նրանց հոր շուրջը, գորգի վրա։ Նրանք ուտում, խմում եյին և վողջունում Ռահիմին։ Իսկ նրանցից մեկը, նշանավոր աչուղը, խփեց դութարի լարերին ու յերգեց։ Նա յերգեց ազատության համար մղվող կռիվների, դաժան պայքարի մասին, անմահ Լենինի մասին։

Ռահիմը լսում եր և հանկարծ նրա աչքերին պատկերացավ յերկիրը ծխի ու կրակի մեջ, իսկ իր աղջիկը, իր գյուղի դեհկանները և շատ ուրիշ դեհկաններ—կռվի դաշտում։ Նրանք կռվում եյին, մեռնում ու հաղթում եյին թշնամուն։ Իսկ թշնամիների շարքում Ռահիմը տեսավ հին բային։ Ապա ծուխը չքացավ, կրակը հանգավ, և յերկրի վրա սկսեցին աշխատել ազատագրված մարդիկ։ Ցեվ տեսավ Ռահիմն, ինչպես կանաչեցին դաշտերը, ծաղկեցին այգիները, բարձրացան կապտագույն քաղաքները։

— Ցեվ այսպես մարդկանց նոր որենք տվին,— վերջացրեց իր յերգն աչուղը։

Ցեվ Ռահիմն արտասվեց յերրորդ անգամ այդ որը։

— Ինչո՞ւ յես լալիս,— հարցրին նրան դեհկանները։

— Ցես լալիս եմ ամոթից, վոր այդ տարիներին յես ձեզ հետ չեմ յեղել,— պատասխանեց Ռահիմը։—Բայց ասացեք ինձ, խնդրում եմ, ո՞վ եր այն մեծերից մեծը, վոր մարդկանց նոր որենք տվեց յերկրի վրա։

— Դու իրավացի յես, հա՛յր,— ասաց Ռահիմի աղջիկը։— Մեծերից մեծը նոր որենք տվեց մարդկանց յերկրի վրա։

Ցեվ նրա անունն է — ՍՏԱԼԻՆ։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դեհկան— չքավոր գյուղացի, մշակ.
2. Բայ— հարուստ, կալվածատեր, հողատեր.
3. Քեթմեն— հողագործական գործիք (բրիչ).
4. Ղշլաղ— գյուղ.
5. Ցերկու լուսին դեռ չեր բոլորել— դեռ յերկու ամիս չեր անցել.
6. Դութար— լարային յերաժշտական գործիք.
7. Փիրուզ— կապույտ թանդապին քար.
8. Խորտիկ— համեղ կերակուր։

36· ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Հայրս, մայրս ինձ տվեցին
Լի աշխարհից միայն մի կյանք,
Իսկ դու, յերկիր արեվածին՝
Հաղար ու մի սեր ու բերկրանք:

Աչքս բացի, ազատ հողում,
Միշտ ծծեցի ողը քո ջինջ
Ցեվ աճեցի քո լույս գրկում
Ինչպես մեր այս մատաղ նոճին:

Ցես առանց քեզ կչորանամ,
Ինչպես ծառը առանց հողի,
Սակայն քեզ հետ կաղնու նման
Դիմադրում եմ ամեն հողմի:

Ցերը վոսոխը՝ քո աննրման
Հողը խուժի ինչպես սև գետ,
Ցես, կաթիլդ, կբարձրանամ
Ժողովրդիս ովկիանի հետ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Բերկրանք— ուրախություն.
2· Նոճի— ծառի մի տեսակը:

37· ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄՈՏ

Մի ժամանակ այս հին, յերկհարկանի տունը մի խուլ, հետամնաց հյուրանոց եր: Այժմ այս տունը գիշեր-ցերեկ ապրում է աղմկալի, լարված կյանքով: Այստեղ է գտնվում Թուրքեստանի ռազմաճակատի շտաբը:

Ցերկու հոգնած կարմիր-բանակայիններ կանգ առան շտաբի դռանը:

— Ֆիսունով, կարծես հասանք,—ասաց նրանցից մեկը, անքնությունից կարմրած աչքերը բռունցքով տրորելով:

— Հա, ա՛յ, ինչ տեսակ է շտաբը, — պատասխանեց մյուսը ցրված կերպով և հանկարծ կենդանացավ.— լսի՛ր, Գորլենկո, գուցե մեզ հաջողվի հրամանատարին էլ տեսնել:

— Ինչպես չե՛, նա էլ բան ու գործ չունի՛, վոր մեզ ընդունի...

Բայց և այնպես ամեն մեկն ինքն իրեն հույս եր տալիս, գոնե մի կերպ տեսնել առասպելական զորավարին ու հերոսին:

Ֆրունզե՛: Կարմիր բանակայինները նրա մասին միշտ սիրով ու քնքշությամբ եյին խոսում: Այդ անունն եր հընչում և հանգստի խարույկների շուրջը, և հեռավոր արշավանքներում և ռազմական գրոհների ժամանակ: Այդ անունը զվարթացնում և առա՛ջ եր տանում:

Շտաբը թնդում եր հեռախոսների զրնգոցներից, լարերների խթանների ծրնգոցներից և վորոտում մարդկանց ձայներից:

Վոչ վոք ուշադրություն չդարձրեց ճակատից այստեղ ծրար բերած յերկու կարմիր բանակայինների վրա:

Ֆիսունովն ու Գորլենկոն հոգնածությունից կանգնել չեյին կարողանում: Բայց շտաբի պարետն ասաց.

— Դիշերելու տեղ չունենք, ընկերներ, ինքներդ մի կերպ տեղավորվեցեք:

Կարմիր բանակայինները տարակուսած կանգնել եյին սանդուխքների վրա:

Աստիճաններով մի ինչ վոր զինվորական եր իջնում։ Նա ուշադիր նայեց Ֆիսունովին և Գորլենկոյին։

— Այստեղ ի՞նչ եք անում, ընկերներ։

— Ճակատից ենք յեկել... դործուղումով։

— Հա՛... զինվորականը կանգ առավ։ Նրա դեմքը պարզ եր, հասարակ ու սիրալիր։

— Հը, ի՞նչ լուր կա ճակատում։

— Ե, ի՞նչ պիտի լինի... ամսի մեկին սպիտակ ուստադերավորներին մի լավ ուտացրինք։

Զինվորականն ուրախ ժպտաց.

— Դե լա՛վ, լա՛վ։ Դուք հոգնած կլինեք, այժմ հանգըստացեք։

—Ի՞նչ հանգստանալ,—նեղացած ասաց Ֆիսունովը.— պարետը տեղ չի տալիս։

Զինվորականը մտածեց.

— Ապա՛, ընկերներ, յեկեք իմ հետևից։

Նրանք բարձրացան միջանցքը։ Զինվորականը հրեց դուռը։ Դա մի շատ փոքրիկ սենյակ եր, ուր միայն մի մահճակալ և միքանի դրքեր վրան դարսած՝ մի փոքրիկ սեղան կար։ Սեղանի վերևը քարտեզ եր կախած, իսկ անկյունում կախած եր չինելը, գլխարկը և մի սրբիչ։

— Ա՛յ, ընկերնե՛ր, տեղավորվեցեք այստեղ... ափսո՛ս, միայն մի մահճակալ է,— ասաց նա.

— Շնորհակալ ենք, «յոլա կգնանք»։

— Ա՛յ, շատ լավ կլինի... ա՛յ, հիանալի յե.— այդ մարդը ժպտաց, և գլխով անելով, դուրս գնաց։

— Հիանալի մարդ է,— ասաց Ֆիսունովը։

Կարմիր բանակայինները թեյ խմեցին ու պառկեցին։ Գորլենկոն արդեն քնել եր, յերբ զինվորականն զգուշ, մատների ծայրերի վրա ներս մտավ սենյակը։ Ֆիսունովը վեր բարձրացավ։

—Քնե՛ր, քնե՛ր, ընկեր,— մեղմությամբ ասաց նա։— Ցես գնում եմ... միայն հաղնվեմ։

— Բայց, ախար ի՞նչպես անենք պարետի հետ,— անհանգստացավ Ֆիսունովը,— դուրս կանի մեզ։

— Վո՛չ, վո՛չ, մի՛ անհանգստանաք...

Այդ մարդը ծոցատետրը հանեց, ինչ վոր մի բան գրեց ու թերթիկը տվեց Ֆիսունովին։ Զգուշ, վորպեսզի Գորլենկոյին չարթնացնի, նա դուրս յեկավ և կամաց ծածկեց դուռը։ Ֆիսունովն ուզում եր թերթիկը բարձի տակը կոխել և պատրաստվում եր քնել։ Հետո հորանջելով բաց արավ թերթիկն ու կարդաց.

«Ընկե՛ր պարետ. այս յերկու ընկերները, մինչև իրենց գնալը իմ սենյակում պիտի ապրեն։ Ֆրունզե»։

Ֆիսունովն անկողնից վեր թռավ։

—Վա՛նկա, Վա՛նկա, վե՛ր կաց, սա Ֆրունզեն է,— աղաղակեց նա՝ ինչքան ուժ ուներ։

— Ո՞ւր է Ֆրունզեն,— վեր թռավ Գորլենկոն, խկույն մոռանալով քնի մասին։

Նրանք սայթաքելով դուրս թռան միջանցքը, վազեցին պատուհանի մոտ։ Մի քանի ձիավորներ հեռանում եյին շտաբից։

Առջևից — թամբի վրա որորվելով, գնում եր նա — Ֆրունզեն։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Առասպելական— հեքիաթային.
2. Խքան— զինվորականի կոշկին հագցրած յերկաթ(չպոր).
3. Պարետ— չենքի կառավարիչ.
4. Տարակուսել— չիմանալ թե ինչ անել.
5. Ուսադիր— զինվորական նշան (ուսերին) ցարական բանակում։

38. ԴՅՈՒՅԱԶՆԱԿԱՆ

Փոթորկում եր լիճը Խասան, վորպես սիրտը քաջ զինվորի,
Մութ գիշերին սրի նման շողշողում եր ցոլքը ջրի,
Թնդում եյին ու վորոտում յերկինքը մուգ, լեռները սեղ,
Յեվ անտառը մշուշապատ և հովտի մեջ թուփ ու յեղեգ։
Թշնամին նենգ ոձի նման, գաղտագողի ու դավաղիր
Հայրենիքիս հողն եր մտել, այնտեղ փորել վորջերը իր,
Ու կռիվ եր Խասան լճի բարձունքներում քարաժանիք,
Կռվում եյին զորքերը մեր կանչելով «Փա՛ռք քեզ,
հայրենիք»։
Փողփողում եր զորքի առաջ դրոշը մեր մետաքսափայլ,
Ստալինի վառ սիրով եր զորքը փոխում ամեն մի քայլ,
Ստալինի անունն եր մեծ վորպես դրոշ նրանց սրտում,

Ցեվ ամեն մի գրոհի հետ նրա պայծառ գովքն էր թնդում.
Գրոհում էր զորքը խիզախ ու գրոհող զորքի առաջ
Սուրը ձեռքին արշավում էր քաջ Պոժարսկին — զինկոմը քաջ,
Արշավում էր նա սրընթաց ու խրախույս կարդում զորքին,
Ու հայրենի յերկրի սիրով փոթորկում էր նրա հոգին:
Կայծակնակուռ նրա սրից չէր ազատվում վոչ մի վոսոխ,
Զար թշնամին նրա առջև ծունկ էր չոքում արնավողող.
Զար թշնամին լոր էր կարծես, ինքը հաղթող, հպարտ բազե,
Վոր կանգնել էր յերկրին պաշտպան իր բանակով սպառազեն.
Իր բանակով սպառազեն արշավում էր նա քաջաբար,
Յերբ թշնամու արկը խոցեց կուրծքը նրա կենսապարար.
Հայրենական հողի վրա շատրվանեց արյունը տաք.
Ու տապալվեց նա շառաչով, ինչպես կաղնին հաղթահասակ:
— Ընկա, տղե՛ր,— զինկոմն ասաց,— ամուր կացեք ձեր դիրքերում,
Կռվի պահին յեղեք խիզախ, յեղեք դաժան ու աններում.
Հայրենիքի հողը միք տա, վոր թշնամին վոտնահարի
Ու ձեր պատվից բարձր պահեք հզոր փառքը մեր բանակի...
. . . . . .
Յոթը գիշեր յոթը անգամ մահիճ մտավ արևը հուր,
Յոթը անգամ կրկին զարթնեց, ներքև նայեց մահասարսուռ.
Յոթը գիշեր, յոթը ցերեկ շառաչեցին զենքերը մեր,
Ու զորքերը մեր բարձրացան Խասան լճի սարերն ի վեր:
Թշնամին իր կրծքի վրա զգաց ուժը մեր բանակի,
Խրոխտ ու զիլ ղողանջեցին շեփորները հաղթանակի,
Հայրենիքիս սահմանը սուրբ մնաց անխախտ ու աններեր
Ու Խասանի բարձունքներում կրկին շողաց դրոշը մեր:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դավադիր— դավ, չարիք նյութող, դավաճան.
2. Քարաժանիք— սուր քարե գագաթ կամ ծայր ունեցող.
3. Կայծակնակուռ— կայծակից կռած, շինած.
4. Սպառազեն— լրիվ զինված.

5. Արկ— զնդակ, ռումբ (այստեղ).
6. Կենսապարար— կյանքով լիքը.
7. Շատրվանել— ցայտել, վիժել.
8. Ղողանջել— ձայն տալ, հնչել (զանգի մասին):

---

39. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐ ՍԵՐԳՈՅԻ ՄԱՍԻՆ

(Հատված)

Ցակուտիայում, ուր Սերգոն անց էր կացնում իր աքսորը, 1917 թվին խիստ ձմեռ էր: Այնպես ցուրտ էր, վոր յակուտները պատուհաններին մեծ ատուշներ էին կպցրնում: Դրանք տաքություն էին պահպանում, թեև յուրթերը մթնեցնում էին...

Փետրվարի սկզբին Սերգոն մի ամբողջ շաբաթով գընաց Սինսկ գյուղը— Պոկրովսկոյե գյուղից յերկու հարյուր վերստ հեռու, ուր նա այդ ժամանակ աշխատում էր իբրև բուժակ: Անսպասելի կերպով այնտեղից կարճ հեռագիր եմ ստանում. «Շնորհավորում եմ»: Ցես վոչինչ չհասկացա:

Բանից դուրս ե գալիս— պայթել էր փետրվարյան հեղափոխությունը: Աքսորված բոլշևիկներն այդ մասին իմացել էին կենտրոնից ուղարկած պայմանական հեռագրից. «Մոր հետ տեսակցելը թույլատրված է»:

Սերգոն անասելի ուրախանում ե և խկուն սլանում է Սինսկից Պոկրովսկոյե: Զանգակներով զարդարված ծածկասայլը որական հարյուր վերստ էր անցնում: Ցերկրորդ որը Սերգոն հասավ Պոկրովսկոյե:

Սերգոն նախ մտավ գյուղի ծայրին գտնվող կրպակը: Այնտեղ միշտ հավաքվում էր ժողովուրդը: Սերգոն աղմկում էր, բարձրաձայն խոսում: Շուտով նա մոտեցավ մեր տանը և մուշտակը հագին ներս ընկավ սենյակը: Նրա դեմքը հուզված էր, ուրախ:

— Ուռա՛, ուռա՛. հեղափոխությո՛ւն... աղաղակում էր նա:

Սերգոյի հետևից սենյակ մտավ յակուտ-կառապանը:

— Պել՛սեր բիտ,—ասաց նա, շտապ թարթելով իր նեղ

աչքերը,— բուկատին երյան խալբիտ. երեսա գեն տլյուգա բիխա սոլու։

Դա նշանակում եր.

— Մեր բուժակը բոլորովին խելագարվել է կամ հարբած է. ամբողջ ճանապարհին նա աղաղակում եր ու յերգում։

Ցես յակուտի բառերը ծիծաղելով Թարգմանեցի Սերգոյին։

Սերգոն բարձրաձայն ծիծաղեց։

— Իսկապես վոր, յես խելագարի նման եյի։ Ցես ուզում եյի բոլորին համբուրել։ Ցես պատրաստ եյի ամեն մի հանդիպողի վզովն ընկնել։ Իսկապես յակուտը կարող եր մտածել, թե յես խելագարվել եմ։

Նույն յերեկոյան Սերգոն գնաց Ցակուտսկ։ Նա արդեն այնտեղ «Հասարակական ապահովության կոմիտեյի» և Ցակուտիայի գործկոմի անդամ եր ընտրվել։

Աքսորյալները չկարողացան Ցակուտսկից դուրս գալ գարնան շատ վատ ճանապարհների պատճառով։

Միայն 1917 թվի մայիսի 23-ին մյուս աքսորյալների հետ Սերգոն շոգենավով գնաց Իրկուտսկ։

Դրանից մի որ առաջ Ցակուտսկի թանգարանի ալբոմում Սերգոն գրեց.

«Մնա՛ս բարև, աքսորների յերկիր, հայրենի յերկիր։ Կեցցե՛ Ռուսական Մեծ Հեղափոխությունը։ Կեցցե՛ Համաշխարհային Հեղափոխությունը։ Կեցցե՛ Սոցիալիստական Հեղափոխությունը։

Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձե (Պերգո)»։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցուրբ— յակուտների տնակը.
2. Բուժակ— ֆելդշեր.
3. Աֆտոբել— աղատաղրկելով մեկին իր բնակավայրից հեռացնել, ուրիշ տեղ ուղարկել.
4. Վերստ— յերկարության հին չափ— մոտ 1 կմ.
5. Կրպակ— փոքրիկ խանութ։

---

40. ԽՈՒԱՆ ԹՈՐՆԱԴ

Դեռ թնդում է կռիվն ահեղ,
Կորդովայի ճակատում
Ֆաշիստների արյունահեղ
Գնդակներն են ճարճատում։
Ցեվ նրանց դեմ մինչ իրիկուն
Բանվորական մի ջոկատ
Կրակում է, կրակում է,
Կրակում է անընդհատ։
Ու կռվում է նրանց շարքում
Մի պատանի արևաչ,
Ահեղ ռումբեր են տրաքում,
Բայց անվախ է տղան քաջ...

Խուան Թորնադ է անունը
Այդ քաջարի պատանու.
Պատերազմի տաք սամումը
Նրան կռվի յե տանում։
Ցեվ կռվում է արիարար
Գնդակներով իր դիպուկ,

Մարտը բռնած ձորեր ու սար
Շառաչում է վորպես բուք։
Յեվ որն ամբողջ թափառեց նա
Սահմաններում թշնամու.
Յեվ արևն եր նրա վրա
Իր բորբ շողերը քամում.
Յեվ պատանին առաջ սողաց,
Դիրքերն եյին թշնամու,
Այնտեղ հողմն եր բերանը բաց՝
Փոշեխռիվ սլանում։
Խուան Թորնադը կդտնի
Գնդացիրը անպայման,
Բայց չչուկով, կարծես դաղտնի,
Լսվեց մթնում ինչ վոր ձայն։
Խոսում եյին յոթ զինվորներ,
Զոր քարերին նստոտած.
— Ա՛խ, փախչելու հնար լիներ,
Մեղմ հառաչեց մեկն հանկարծ։
—Համաձայն եմ յես ել դրան,—
Ասաց ուրիշ մի զինվոր։
— Կը տանեմ քեզ—հնչեց մի ձայն
Մթում խոր ու ահավոր։
Յեվ յոթ զինվորն ահաբեկված
Գույն ստացան քաթանի,
Ու կանգնել եր նրանց դիմաց
Խուան Թորնադ պատանին։
—Ո՞վ ես, տղա,— հնչեց մի ձայն,—
Ի՞նչ ես անում այստեղ դու։
— Զոկատից եմ բանվորական.
Ու մեկնեց նա մի հին թուղթ։
— Իսկ յեթե մենք քեզ անխնա
Նվիրենք մի հավերժ քուն...
— Լավ է այստեղ դրկել սև մահ,
Քան թե ապրել թիկունքում։
Յեվ հիացած այդ պատանու
Խիզախությամբ անվեհեր,
Յոթ զինվորներն այդ՝ թշնամու
Միանգամից յելան վեր։
— Տա՛ր մեզ, տղա՛, Զոկատը ձեր,

Քեզ հետ գալիս ենք արդեն։
Խուան Թորնադը անվեհեր
Կանգնեց նրանց դեմ ու դեմ։
— Կապեցեք դուք ձեր ղենքերը
Ու տվեք իմ չալակին,
Յերբ կհասնենք մեր դիրքերը,
Հետ կստանաք դուք կրկին։
Յեվ պատանին առած ուսին
Ղենքերի մի ծանր բեռ,
Զինվորների հետ միասին
Իջավ կամաց ձորն ի վար։

Ուշ եր արդեն, խորունկ գիշեր,
Լուսինն եր լուռ դեղերում.
Վողջ Զոկատին քուն եր իջել
Բանվորական դիրքերում։
Լոկ պահակն եր շրջում անքուն,
Գնում եր նա ու գալիս
Յեվ հսկում եր նա բարձունքում,
Լռության մեջ՝ ահալի։
Հանկարծ լսեց քայլերի ձայն,
Յեվ նայեց նա դես ու դեն,
Կարծես քայլերը մոտեցան,
Ու յերևում են արդեն։
— Ո՞վ է,— կանչեց նա ահալի։
Արձագանգեց մի այլ ձայն.
— Խուան Թորնադն է հետ գալիս...
Ու բոլորը մոտեցան։
— Իսկ ովքե՞ր են քեզ հետ յեկել,—
Ու նայեց նա կասկածոտ։
— Խոստացել են մեզ հետ լինել.
Ահա բերել եմ ձեզ մոտ։
Ու զնացին նրանք չտաք
Պահակի հետ միասին,
Պետը տեղից յելավ շտապ՝
Խորունկ զարմանք յերևին։
— Խուան Թորնադն է յեկել հետ,—
Ժպտուն նայեց նա պետին,—
Յոթ զինվոր է յեկել ինձ հետ՝

Միանալու ջոկատին։
Ցեվ պատանին պատմեց նրան
Ինչ վիշտ ուներ իր հոգում,
Խնդրեց նրան աղաչաձայն,
Վոր չլինի թիկունքում։
— Կեցցե՛ս, աղա՛ս իմ քաջարի,
Ասաց պետը հայրաբար—
Մնա այստեղ ու պայքարիր
Մեծերի հետ հավասար։
Ցեվ քանի վոր քեզ նման շատ
Պատանիներ կան այսքան,
Ազատությունը հարազատ
Կնվաճի Իսպանիան։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Սամում— անապատի տաք քամի.
2. Արիաբար— քաջի նման.
3. Փոշեխուիվ— փոշու հետ խառնված, փոշով ծածկված.
4. Հավերժ— մշտապես.
5. Դեգերել— թափառել, ման գալ.
6. Բոբր— վառ, թեժ։

---

41. ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ

1

Գարնանային լեռնային անձրևների ժամանակաշրջանն եր։

Ճանապարհների հեղեղատներում լճակներ եյին փայլում. հողն անձրևից կշտացել եր։

Ուղեկալի շենքից դուրս յեկան յերկու կարմիր բանակային։ Նրանց հետ եր փոկով կապված ջահել Տայդեր շունը, վորին պահել ու դաստիարակել եյին կարմիր բանակայինները։

Բելովը և Կրեպովն ուղղվեցին դեպի ժայռի սև քանդվածքը, վորի ստորոտից սկսվում եյին ցածրիկ, փշոտ թրփեր։ Տեղ հասնելով, նրանք դիտեցին չորս կողմը և պառկեցին, յերեսները տարբեր կողմեր դարձնելով։

Կամրջի վրայով, ընթացքը դանդաղեցնելով, անցավ ճեպընթաց գնացքը։

Կրեպովը նկատեց, վոր վոլորտում վերջին վագոնից մի սև գունդ ընկավ։

Կրեպովն այդ մասին հաղորդեց Բելովին։

— Հետևիր նրան,— շշուկով ասաց Բելովը։

— Շատ լավ։

Մարտիկները պառկած եյին լուռ, ուշադիր, կենտրոնացած։

Հանդիստ պառկած Տայդերն ականջները սրեց ու առաջ սողաց։ Անձրևի աղմուկի միջից Բելովը խճերի թափվելու չխկոց լսեց։ Վոտի հարվածով նա հասկացրեց Կրեպովին, վոր նրա դիտողության բաժնում ամեն ինչ կարգին չե։

Բելովը յերկու անգամ քաշեց առաջ գնալ ցանկացող Տայդերին. պետք եր սպասել մինչև թշնամին բարձրանա զառիթափի ծայրը, հետո արձակել շանը, անսպասելի կերպով հարձակվել ու զինաթափ անել թշնամուն։ Սակայն ջահել ու անփորձ Տայդերը ուժով առաջ նետվեց, բարակ փոկը կտրեց և վոռնալով հարձակվեց թփերի հետևից բըռած կերպարանքի վրա։ Համարյա թե պայքար չեղավ. մաուզերի հարվածից Տայդերը դեռին ընկավ։ Թողնելով վիրավորված Տայդերին, մարտիկները վորոշեցին հետապընդել հակառակորդին և կրակել միայն անհրաժեշտ դեպքում։

2

Պարզվեց, վոր Կրեպովի նկատած սև գունդը մի յերկարահասակ, լայնաթիկունք տղամարդ է։ Վագոնից թռչելը նրան միայն թեթև քերծվածքներ եր պատճառել։ Մարդը վոտի կանգնեց և սկսեց ճանապարհի հսկիչի դեր խաղալ։

Ցերը վերջին վագոնի կարմիր լույսերն անհայտացան վոլորտի հետևում, մարդը կոճկեց իր մորթե բաճկոնի բոլոր կոճակները, զենքը վերցրեց և արագ քայլեց արահետով։

Հասնելով հանդիպման համար նշանակված տեղը, նա չպատահեց իր յերեք ընկերներին։

Մարդը դես ու դեն նայեց, մոտեցավ մի լայն թփի ու մաուզերը պատրաստ պահած, պառկեց ընդամենը տաս քայլի վրա այն տեղից, վորտեղ մի ժամ առաջ, նայելով հեռացող գնացքին, պառկած եր Կրեպովը:

3

Ցերեկվա թույլ անձրևը գիշերը սաստկացավ և դալիս եր անդադար: Այդպիսի գիշերները մարտիկները անվանում են տագնապալից: Ցավ թեև յեղանակը տրամադրում ե քնել, բայց այդպիսի գիշերներին ուղեկալներում քնելը հազվադեպ ե:

Չեր քնել նաև Սերգեյ Սնեգովը: Նա և Գոլաձեն այսոր հերթապահ են:

Սնեգովը նամակ եր գրում:

«Ծառայում եմ լավ, գանգատ չունեմ առողջությունից,— գրում եր նա իր հայրենի կոլտնտեսությանը,— միայն թե այստեղի յեղանակը շատ անձրևային ե»:

Ցավ կարծես այս բառերն ընդգծելու համար քամին պատուհաններին բուռ-բուռ կաթիլներ եր խփում: Ահա՛ մեկ, յերկրորդ, յերրորդ կաթիլները թռան պատուհանի մեջ: Սնեգովը լսեց, վոր ինչ վոր մեկը լուսամուտի ապակին ճանկռտում ե: Ներս մտավ ուղեկալի հերթապահը, նրա ձայնը խլացած եր ու հուզումնալից:

— Ընկեր պետ, ժամանակը լրացավ: Գաղտնաջոկատը չվերադարձավ: Վերադարձել ե միայն Տայգերը կապը կտրված և գլուխը ճեղքված:

Տագնապի աղդանշանից մարտիկները վոտի կանգնեցին: Սնեգովն ու Գոլաձեն, քայլելով լցնում եյին հրացանները և սլանում եյին դեպի ձորը, վորտեղ գաղտնաջոկատն եր: Առջևից, կարծես ճանապարհը ցույց տալով, վազում եր Տայգերը: Աչքերը դժվար եյին մթությանը ընտելանում: Սուր քամին սառցնում եր դեմքերը: Թփերը կպչում եյին չորերին, խանգարում շարժումը:

Ձորակից մի քանի քայլի վրա Տայգերը կանգ առավ ու մի կողմ թռավ: Սնեգովը պառկեց գետնին (այդպես ավելի լավ են նշմարվում առարկաները գիշերով) և հաստատուն ձայնով հրամայեց.

— Ձեռքերդ վե՛ր:

Պատասխանի փոխարեն լսվեց չորս կրակոց դեպի Սնեգովի կողմը: Սնեգովը կրակոցին պատասխանեց կրակոցով:

Ելի յերկու անգամ իրար հետևից կրակելով, մորթե բաճկոն հագած մարդը վոտի կանգնեց և կռացած՝ դեպի ձորակը վազեց: Բայց Գոլաձեն և Տայգերը դեմ առ դեմ հանդիպեցին նրան: Նրանք գործեցին միաժամանակ. Տայգերն ատամները խրեց հակառակորդի աջ ձեռքի թաթը, իսկ Գոլաձեն ճարպիկ կերպով հարվածեց նրա ծնկանը և փռեց գետին:

Կրակոցի ձայնի վրա վազեց ուղեկալի պետը մի խումբ մարտիկների հետ: Սակայն ոգնություն հարկավոր չեր. Գոլաձեն, մաուզերը դեմ արած, տանում եր հանցագործին: Ուղեկալի մոտ, Բելովը մոտեցավ պետին զեկուցելու՝ յերեք զինված լրտեսներին բռնելու մասին:

Մորթե բաճկոն հագած մարդը ճանաչեց կեղտոտված, չորերը պատառոտված իր յերեք համախոհներին:

4

Մի քանի որից հետո Սնեգովն ու Տայգերը տաքանում եյին գարնանային արևի տակ: Տայգերը պառկած եր, վիրակապված գլուխն առջևի թաթերի վրա դրած, իսկ Սնեգովը մի անգամ ել կարդում եր դեռ ծնողներին չուղարկած նամակը: Նամակի վերջը նրան դուր չեկավ:

Գրածը ջնջելով, Սնեգովը գրիչը թաթախեց ու ավելացրեց.

«... Այստեղ յեղանակը տաք ե: Կոլտնտեսականները սկսել են ցանել:

Գանգատ չունեմ առողջությունից, կայտառ եմ և ուրախ:

Իսկ ծառայում եմ ազնիվ, ինչպես վայել ե Կարմիր բանակի մարտիկին»:

Նա իր առողջ, թուխ յերեսը դեմ արավ արեգակին, չոյեց Տայգերին ու ավելացրեց.

«Կարմիր բանակայինի վողջույններով, ձեր Սերգեյ»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հեղեղատ— հեղեղից առաջացած փոսեր, առուներ.
2. Ճեպընթաց— արագընթաց, արագ գնացող.

3· Զառիթափ— ուղիղ կտրված դեռնի թեքություն.
4· Մառուզեր— ատրճանակի մեծ տեսակը.
5· Վոլորտ— վոլորապտույտ ճանապարհ.
6· Արահետ— նեղ, բանուկ ճանապարհ.
7· Բանկոն— առանց թևերի վերնազգեստ.
8· Ուղեկալ— սահմանագծում վորոշ պահակակետ.
9· Համախոհ— միևնույն մտքերն ունեցող:

42· ԳԱՐՆԱՆ ՀԱՄԲՈՒՅՐ

Գարուն է, գարուն, մեր յերկրում նորից
Արևն է ժպտում մանկան պես դանդուր...
Ցերգն է մեր ուժգին հնչում բերկրալից.
Վողջո՛ւյն քեզ, գարնան առաջին համբույր:

Գարուն, դու վորքա՛ն ծաղիկ ես բերել,
Վորքա՛ն մարդիկ են քեզ յերգում սիրով,
Վորքա՛ն սրտեր են վարդի պես բացվել
Ու ճամբաղ լցրել խնդության ցողով:

Կյանքը մեր այսոր դարձել է գարուն,
Մարդիկ յերջանիկ ապրում են ազատ,
Նրանք են բերել գարունն այդ բեղուն,
Վոր պիտի մնա հավիտյան զվարթ:

Վողջո՛ւյն քեզ, վողջույն ծաղկազարդ գարուն,
Վոսկեղեն դու հուր իմ պայծառ յերկրի,
Կյանքն է մեր խնդուն, քեզ նման փթթում՝
Մարդկության արդար վաստակով բերրի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Բերկրալից— ուրախ.
2· Բեղուն— առատ:

43· ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՅԵՎ ՄԱՐԻԱ ԴԵՄՉԵՆԿՈՆ

1

... Ահա Մարիյկա Դեմչենկոն Կրեմլումն է...

Դեմչենկոն տեսավ, թե ինչպես դահլիճման ժողովրդական կոմիսարներն ու ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինն ուրախ եր և ձեռքով վողջունում եր կոլտնտեսուհիներին:

Ցերբ ծափահարությունները լռեցին, ընկեր Ստալինը նայեց Մարիյկային, նորից ժպտաց ու ասաց.

— Մարիա Սաֆրոնովնա՛, դե պատմիր:

Մարիյկան ուրախ-ուրախ մոտեցավ ամբիոնին ու պատմեց, թե ինչպես եր պայքարում ինքը սառնամանիքների դեմ, թրթուրի դեմ, յերաշտի դեմ, ինչպես ինքն ու իր ընկերուհիները զիշերները չեյին քնում, և ինչպես շաքարի ճակնդեղի մեծ բերք ստացան:

— Իսկ ինչքա՞ն շաքար կստանաս դու քո աշխատանքի համար, ընկեր Դեմչենկո,— հարցրեց Մարիյկային ընկեր Վորոշիլովը:

— Մոտ տասնեհինգ փութ կստանամ — ժպտալով պատասխանեց Մարիյկան:

— Ապա այդքան շաքարն ի՞նչ պիտի անես դու, — նորից հարց տվեց ժողկոմ Վորոշիլովը:

— Ա՛յ, ինձ մոտ հյուր կգաք, ընկեր Վորոշիլով, իմ շաքարով թեյ կխմեք,— պատասխանեց Մարիյկան:

Ու բոլոր կոլտնտեսուհիները, ժողովրդական կոմիսարները, և ընկեր Ստալինը բարձրաձայն ծիծաղեցին:

2

Դեմչենկոյից հետո, ուրիշ կոլտնտեսուհիներ խոսեցին: Հետո ընկեր Ստալինը վեր կացավ և ասաց.

— Ա՛յ, յես արդեն հիսունվեց տարեկան եմ, շատ բան եմ տեսել, շատ աշխատավոր տղամարդիկ ու կանայք եմ տեսել. բայց այսպիսի կանանց—յես չեմ հանդիպել: Սրանք բոլորովին նոր մարդիկ են:

Դահլիճում լռություն տիրեց: Մարիյկան և մյուս կոլտնտեսուհիներն ուշադիր լսում եյին Մեծ Ստալինին:

— Ինչպե՞ս նշանավոր դարձնենք այսորվա որը. — ա-

սում եր ընկեր Ստալինը։— Մենք այստեղ խորհրդակցեցինք, յես, ընկերներ Վորոշիլովը, Մոլոտովը, Կագանովիչը, Որջոնիկիձեն, Կալինինը, Միկոյանը, և յեկանք այս մտքին.— միջնորդություն հարուցել կառավարության առջև՝ աշխատանքի մեր հերոսներին պարգևատրել շքանշաններով.— ողակավարներին Լենինի շքանշանով, իսկ շարքային կոլտնտեսուհիներին՝ Աշխատանքի Կարմիր Դրոշի շքանշանով։

Ստալինը դարձավ դեպի Մարիյկան և ասաց.

— Պետք է, իհարկե, հատկապես նշել ընկեր Մարիա Դեմչենկոյին։

— Կեցցե՛ս,— ասաց ընկեր Վորոշիլովը և նույնպես ժպտաց Մարիյկային։

Իսկ ընկեր Մոլոտովը կատակով ավելացրեց.

— Գլխավոր հանցավորը։

Ստալինը մի քիչ լռեց ու շարունակեց.

— Ցես կարծում եմ, վոր Մարիա Դեմչենկոյին, իբրև այս ամբողջ գործի նախաձեռնողի, բացի նրանից, վոր Լենինի շքանշան կտան, պետք է նաև Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից շնորհակալություն հայտնել։

Իսկ Մարիյկան լռում եր և հուզվում յերջանկությունից։

3

Ցերը խորհրդակցությունը վերջացավ, Դեմչենկոն մոտեցավ ընկեր Ստալինին ու ասաց.

— Իոսիֆ Վիսսարիոնովիչ, ինձ նոր առաջադրություն տվե՛ք։

Ընկեր Ստալինը մի քիչ մտածեց ու հարցրեց.

— Ուզո՞ւմ ես սովորել։ Գյուղատնտես դառնալ։

Իսկ Մարիյկան հենց միայն այդ մասին եր մտածում։

— Դա արդեն այնպե՛ս եմ ուզում,— ասաց նա,— վոր ել ասե՛լ չեմ կարող։

Այն ժամանակ ընկեր Ստալինը դարձավ ժողովրդական կոմիսարներին ու ասաց.

— Իսկ դիտե՛ք, ընկերնե՛ր, Մարիա Դեմչենկոն սովորելու յե գնում։ Գյուղատնտեսուհի կլինի։

— Ցես ասում եյի, վոր նա գյուղատնտեսուհի կդառնա,— պատասխանեց ընկեր Վորոշիլովը։

Դեմչենկոն այստեղ նորից խոսեց սիրելի ու հարազատ Ստալինի հետ, մնաս բարև արավ նրան, իսկ ընկեր Ստալինը հաջողություն ցանկացավ նրան ուսման գործում և ամուր սեղմեց ձեռքը։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ամբիոն— բարձրություն, վորտեղից խոսում են.
2. Ցերաշտ— չոր յեղանակ.

---

44. ՍԵՐՎԻՆ

1

Մոտիկ անցյալում, մի մեծ քաղաքում,
Քարաշեն մի տան խոնավ նկուղում,
Ուր չեր թափանցում արևի վոսկին,
Ուր հյուր չեր գալիս գարունը իսկի,
Իր հիվանդ մոր հետ ապրում եր Սերվին,
Բորիկ վոտքերով, փոքրիկ քրդուհին։
Ուլունքի չարան՝ բարակ, թուխ վզին,—
Սաղաֆ կոճակներ բաճկոնի կրծքին։
Նա աչքեր ուներ՝ զույգ սև սալորիկ,
Գունատ այտերին յերկու խոր փոսիկ։
Ժամանակ չուներ, վոր խաղար բակում.
Պիտի աշխատեր Սերվին՝ անդադրում,
Պիտի ծառայեր փոքրիկ քրդուհին
Վերևի հարկում ապրող հարուստին.
Սենյակներ մաքրեր, աման լվանար,
Արևածագից մինչ գիշերը դար.
Կամ հագիվ գրկած աղբի մեծ կողով,
Ներքև իջեցներ քարե սանդուխքով։
Ու այս բոլորի փոխարեն սուղ վարձ՝
Մի քանի կտոր չորացած սև հաց,
Պղնձե փողի մի փոքրիկ գումար,
Վոր դեղեր գներ մայրիկի համար։

2

Ցեվ որեր անցան... Այն մեծ քաղաքում,
Ուր հիվանդ մոր հետ Սերվին եր ապրում,
Նոր կյանքի կարմիր դրոշ ծածանվեց,
Նոր մարդիկ յեկան, և արև ծագեց:
Գարունը յեկավ բույրով հասմիկի,
Կանգնեց Սերվիի սենյակի շեմքին:
Սերվին չեր վազում քարե սանդուխքով,
Վոր հաց վաստակեր փոքրիկ ձեռներով:
Քշեցին այն չար հարուստին վերից,
Ազատվեց Սերվին կողովի բեռից:
Մայրիկն ել առողջ, ել դեղ չեր խմում,
Աշխատում եր նա մեծ գործարանում:
Դաղդյահի առաջ աշխույժ ձեռներով
Կտոր եր հինում հմուտ շարժումով:
Դպրոց եր վազում Սերվին ամեն որ,
Վոտքերին մի զույգ կոշիկ ճակավոր,
Զնգզնգան ուլունք Սերվիի կրծքին
Գանգուր մազերին արևի վոսկին:
Կարմիր այտերին յերկու խոր փոսիկ,
Աչքերն ել փայլուն զույգ սև սալորիկ:
Ու ապրեց այդպես նա մեծ քաղաքում,
Ուր կյանքն եր ժպտում փոքրիկ քրդուհուն:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Նկուղ— գետնափոր ներքնահարկ.
2. Սուղ— քիչ.
3. Հիմել— թելը պատրաստել՝ գործվածքի համար.

45. ՏԱՍՆ ՈՐ ԱՆՏԱՌՈՒՄ ՑԵՎ ՃԱՀԻՃՆԵՐՈՒՄ

1

Ցերբ Վալյան ինձ տոմս դրեց, թե.

— «Թռի՛ր, ել մի՛ ուշացնիր մեզ», յես իսկույն պատրաստվեցի թռչելու: Վոր ճիշտն ասենք, յես իսկի չեյի ուզում թռչել: Ցեսս ուզում եյի մնալ մեքենայում, հավատում եյի, վոր Վալյան գերազանց կերպով կկատարի վայրեջքը: Բայց հրամանը — հրաման է:

Վորոշեցի թռչել առանց ծանրաբեռնվելու: Գրպանումս կար լուցկի, վորսորդական կողմնացույց, ատրճանակ և ծայրից կերած մի կտոր շոկոլադ: Մի կտոր ել վերցրի, պարաշյուտը հագա: Հետո՝ կաբինում բոլոր անոթներն ամրացրի, քարտեզները մի կողմում պահեցի, ամեն ինչ կարգի բերի: Հետո դռնակը բաց արի ու ցած գնացի:

Պարաշյուտը կախվեց մի յեղևնուց: Ցեսս ճոճվում եյի, գետնից հինգ մետր բարձր: Քամին ճոճեց ինձ և խփեց ծառին: Այն ժամանակ յես վոտքերով կպա ծառին, դանակով կտրեցի թելերը և սկսեցի ցած իջնել:

Լսում եմ — «Ռոդինա»-ն թռչում է. դառնում է նրա մոտորը, ողաչուից պահանջելով, վոր հենասարքն իջեցնի: Հետո միանգամից ամեն ինչ լռեց. մեռյալ լռություն տիրեց:

Յես վճռեցի. տեղիցս չեմ շարժվի, մինչև կրակոց չլսեմ: Բայց ահա, վորոշ ժամանակից հետո—կրակոց: Իսկույն վերցրի կողմնացույցը, վորոշեցի ուղղությունը: Դա ինձ համար որհասական բոպե յեր. արձագանգն ավելի ուժեղ եր յեղել, քան կրակոցը: Յերկրորդ կրակոցը նույնպես հարավ-արևելք ցույց տվեց: Յես բոլորովին հանգստացա:

Այդտեղ ել քնեցի: Առավոտը, հենց վոր լուսացավ, ճանապարհ ընկա հարավ-արևելյան ուղղությամբ: Գնացի: Գնալը շատ դժվար եր: Վոտնամաններս կպչում եյին ճյուղերին, մորթե անդրավարտիքս գրկում եր ազատ շարժվելու հնարավորությունից: Յերկու ժամ գնալուց հետո նորից կրակոց լսեցի, այժմ ուղիղ հարավում: Շարունակեցի ճանապարհս ամբողջ որը— ուղղություն բռնելով դեպի բարձր ճահճաթումբը: Դուրս յեկա գագաթը.— իմ առջև տարածվում եր խոտածածկ ճահիճը: Նրա վրա ինքնաթիռ չկար: Նորից քնեցի և հաջորդ որը ճահճաթումբը կտրեցի, անցա դեպի հարավ:

Դա մի անհավատալի դժվար ճանապարհ եր: Ստիպված եյի փոթորկի կոտրատած ծառերի միջով անցնել: Այստեղ տասնյակ տարիներով ծառերը թափվում են իրար վրա, անկարգ հյուսվում են իրար: Նրանց միջով անցնելը—մարդու համար իսկական դժոխային չարչարանք է: Հաղթահարելով այդ ընկած անտառը, յես նորից դուրս յեկա խոտածածկ ճահճի մոտ, բայց ելի ինքնաթիռը չտեսա: Այն ժամանակ յես վճռեցի ճահճի յերկարությամբ գնալ դեպի արևելք: Յես մի քանի անգամ կրակեցի, բայց իմ կրակոցներին վոչ վոք չպատասխանեց:

Այսպես քայլելով անցավ ելի մի քանի որ: Լուսաբացին դուրս յեկա մի մեծ խոտածածկ ճահճի մոտ: Անձրև եր մաղում: Այս անգամ յես գնում եյի մորթե շորերս հագած: Ճահճի վրա բարձր խոտ եր բուսել: Յես ուրախացա, մտածում եմ.— ինչ լավ ճահիճ է: Այդ բոպեյին զգում եմ, թե ինչպես արագ թաղվում եմ: Ճահիճը ծծում-քաշում է — սկզբում մինչև գոտիս, հետո մինչև կոկորդս:

Այդ վայրկյանին հիշեցի մի կինոնկար, ուր ցույց է տրված, թե մարդիկ ինչպես են դուրս գալիս ճահճից: Յես վերցրի ձեռնափայտս, գրեցի լայնությամբ և այդպես ա-

հագին ջանք գործ դնելով հետզհետե դուրս պրծա ճահճից: Այնուհետև ել չեյի վստահում ճահճի դավաճանական հյուրասիրությանը:

Համարյա ամբողջ որն անցկացրի միևնույն տեղում: Պետք է շորերս չորացնեյի: Բարեբախտաբար արև որ եր: Չորացնելը վերջացնելով, մի կիլոմետր գնացի: Հետո պառկեցի քնելու:

2

Հաջորդ որը ճանապարհս շարունակելով, ընկա ճահճաթմբի յերկրորդ շարքերի մեջ: Այնուհետև տեսա այն ճյունապատ սարը, վորի մոտ յես թռա ինքնաթիռից: Ինձ համար պարզվեց, վոր կրակոցի արձագանգը խաբել է ինձ: Առաջի որը իմ վերցրած ուղղությունը, բանից դուրս յեկավ, վոր ճիշտ չեր:

Այժմ յես ուղղություն ընդունեցի դեպի ճյունապատ լեռան գագաթը և վճռեցի, վոր ինչքան ել վոր հեռու լինի, յես կգնամ այնտեղ: Ինքնաթիռը նրա մոտերքում պետք է լինի:

Հեշտ չեր դեպի այդ նպատակը գնալ: Սարի գագաթը շարունակ ծածկվում եր ամպերով: Յես գնում եյի ըստ կողմնացույցի:

Ինչպե՞ս եյի սնվում: Յես մի ամբողջ և մի կիսատ կտոր շոկոլադ ունեյի և դաղձի չաքարահատեր: Այդ եր իմ ամբողջ կարողությունը: Բացի դրանից, յերբեմն ճահիճներում հատապտուղներ եյի գտնում: Այդ տեղերից չեյի հեռանում, մինչև վոր հատապտուղները բոլորն ուտում եյի: Հետո յես պարզեցի, վոր կեչու տերևը շատ փափուկ ու համեղ է: Տերևներ եյի ուտում: Ծանր որերից մեկում ստիպված եյի ճաշին բավականանալ թրթուրներով:

Նախավերջին որը բանս լավ գնաց.— սնձենու մի թուփ գտա: Խնամքով, ուշադրությամբ քաղեցի բոլոր հատապտուղները, հաշվելով, վոր դա մի քանի որվա պաշար կլինի: Յերբեմն սունկ եյի գտնում, խարույկի վրա յեփում եյի, ուտում: Պարզվեց, վոր հիանալի յեմիայն ջուրը: Նույնիսկ այստեղ՝ ճահճում մաքուր եր, պարզ և ինչպես յերևում եր՝ անվնաս: Համենայն դեպս յես վոչ մի անգամ չհիվանդացա:

Այն որը, յերբ յես վորոշեցի գնալ դեպի հյուսիս-արևմուտք, դեպի սպիտակաղաղաթ սարը, ամենասոված որն եր: Անտառի ծայրին յես յերկու սունկ դտա և վճռեցի խորովել: Վերցրի կեչու չոր կեղև, վոր կրակ անեմ: Բայց հենց վոր լուցկին մոտեցրի, խարույկը պայծառ բռնկեց, վառվեցին խոտերը, ծառերը: Իմ սունկերն ել վառվեցին: Կրակը շատ արագ տարածվեց: Յես ստիպված եյի փախչել նրանից, ինչքան ույժ ունեյի:

Դա հոկտեմբերի 2-ին եր: Այն բոպեին, վոր յես փախչում եյի այնպես անսպասելիորեն հրդեհ դարձած խարույկից, իմ վերևը հայտնվեց «II—5» ինքնաթիռը: Յես արագ հանեցի շորերս, մնացի սպիտակեղենով, սկսեցի շարժել շորերս: Ինքնաթիռը յերկու շրջան անելով, թռավ դեպի հարավ և չնկատեց ինձ:

Յես պետք է անցնեյի առաջին խումբ ճահճաթմբերի լեռնանցքը:

3

Յեվ ահա լսում եմ.— հյուսիս-արևմուտքում՝ ճյուռնապատ դաղաթի մոտ, ինքնաթիռներ են թռչում: Դա հաստատեց իմ յենթադրությունը՝ յես ճիշտ ուղղություն եյի վերցրել:

«Ռոդինա»-ն այնտե՛ղ եր:

Հոկտեմբերի 4-ին յես անցա յերկրորդ խոտածածկ ճահիճը: Ելի տեսա, թե ինչպես ոդանավերը թռչում, թռչելով հավաքվում են մի վորոշ տեղ, բոլորովին ցած:

Յերբ յես անցնում եյի տայգայով, տեսա, վոր ծառերի բները կրծած են: Լսեցի արջերի մռնչոցը: Մի արջ համարյա իմ կողքին կոտրտում եր ճյուղերը, բայց ինձ ձեռ չտվեց: Ուշ յերեկոյան յես բարձրացա ճահճաթմբի կատարը և պառկեցի քնելու: Հոկտեմբերի 5-ի լուսաբացին զանազան կողմերից յես հինգ կրակոց լսեցի: Նրանց միջև միջին ուղղությունը վերցրի: Ամբողջ որը յես իջնում եյի սարից: Կրակոցների սեպը շարունակ նեղանում եր և վերջապես կրակոցների ձայները համարյա ձուլվեցին:

Այստեղ յես արդեն բոլորովին վորոշակի տեսա ինքնաթիռը: Բոլորովին ցածր թռիչքով նա պտտվում եր

միևնույն տեղի վրա: Զափազանց ուրախալի որ եր այդ:

Որվա կեսին յես խիստ հոգնածություն զգացի: Ինձ մոտ մնացել եր մի քիչ հատապտուղ, չոկոլադի մի փոքր կտոր և դաղձի չաքարահատ: Յես վճռեցի ձեռք չտալ այս ամենին, պառկել՝ քնելու, ույժ հավաքել, իսկ առավոտյան ուտել և շարունակել ճանապարհս: Սակայն մտածեցի— թերևս գիշերը նրանց մոտ մեկն ու մեկը յեկած լինի, և նրանք դեպի դետակը կգնան: Վորոշեցի՝ չեմ քնի, այլ կշտապեմ մոտենալ ինքնաթիռին: Յեվ ահա շուտով տեսա «Ռոդինա»-յի սպիտակ մետաղե պոչը: Թուլությունս անհետացավ:

Յես խսկույն յերեք փամփուշտ արձակեցի: Սակայն ինձ վոչ վոք չպատասխանեց: Յերբ վայրեջքի տեղին մոտեցա, վերջին անգամ կրակեցի: Ինքնաթիռի շուրջը ձայներ լսեցի, սակայն ինձ չնկատեցին: Ավելի մոտեցա: Տեսնեմ՝ մի ամբողջ խումբ դեպի ինձ ե վազում: Առաջինը՝ բժիշկ Տելեսոնովը մոտեցավ, ապա՝ Պոլինան, ապա՝ մնացածները:

Բժիշկը շփեց իմ վոտքերը: Ապա ինձ կերակրեցին և պառկեցրին:

Մենք, յերեք ընկերուհիներ, յերեք ոդաչուներ, յերկա՛ր ժամանակ խոսում եյինք մեր թռիչքի, մեզ հետ պատահած արկածների, մեր ժողովրդի սիրո և մեր հոգատար հոր՝ Ստալինի մասին:

Յեվ այդ ժամանակ մեր մեջ նոր միտք ծագեց, ավելի նշանակալի, նոր թռիչքի միտք՝ հանուն մեր մայր հայրենիքի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հենասարք (չասսի)— ինքնաթիռի այն մասերը, վոր հենարավորություն են տալիս մեքենային շարժվել դետնի վրայով (անիվներ, դահուկներ և այլն).
2. Դժոխային— սարսափելի, ծանր, դժվար (այստեղ).
3. Տայգա— հյուսիսային խիտ անտառ.
4. Դաղձ, անանուխ— հոտավետ բույս:

---

46. ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ — ՄԵՆՔ ԿՀԱՂԹԵ՛ՆՔ

(Իբարրուրի Դոլորեսի նամակը՝ վորդուն)

ԹԱՆԳԱԳԻՆ ՌՈՒԲԵ՛Ն

... Դու չես էլ կարող պատկերացնել, իմ վորդյակ, թե ինչպիսի դաժան կռիվ է այժմ Իսպանիայում: Ֆաշիզմը ձգտում է՝ ինչ գնով էլ լինի՝ իր արյունոտ թաթերի մեջ ճզմել իսպանական ժողովրդի սիրտը: Սակայն իսպանական ժողովուրդը հոյակապ թափով վոտքի յելավ պաշտպանվելու և դերադասում է մեռնել, քան թե ֆաշիզմի սարուկը դառնալ:

Ցես շատ որեր եմ անցկացրել ճակատում ժողովրդական միլիցիայի և մեր դվարդիայի մարտիկների հետ: Նրանք բոլորն էլ պայքարում են արիաբար, հերոսների պես:

Ցես վստահ եմ, վոր չնայած բոլոր դժվարություններին — այնուամենայնիվ մենք կհաղթենք:

Ցեթե մենք ընկնենք այս պայքարում, դո՛ւ, իմ վորդյակ, ամրացիր: Հիշիր մեր իդեալի մասին, պատրաստ յեղիր պայքարելու՝ առանց թուլանալու, պատրաստ յեղիր զոհաբերության՝ մեր գործի համար:

Սովորիր աշխատել և հասկանալ քաղաքական խնդիրները: Դու ֆիզիկապես ևս պետք է ամուր լինես: Ուսումնասիրիր Մարքսի ուսմունքը, վորպեսզի հասկանաս վողջ անցուդարձը: Սիրալիր յեղիր դեպի քո ընկերները: Ցերբեք մի կասկածի, վոր կոմունիզմին պետք է նվիրել վողջ կյանքը:

Ցտեսություն, զավակս: Քեզ ջերմ համբուրում է մայրդ՝

ԴՈԼՈՐԵՍԸ

«ՀԻՇՈՒՄ ԵՄ ՔՈ ԽՈՍՔԵՐԸ, ՄԱՅՐԻԿ»

(Վորդու որագրից)

Ցես — իսպանացի յեմ, իսկ այժմ ապրում եմ Խորհրդային յերկրում: Իմ մայրը — Դոլորես Իբարրուրին — այժմ Իսպանիայումն է:

Նա — Բիսկայան հանքագործի աղջիկ է, իսկ հայրս լեռնագործ բանվոր: Մենք ապրում եյինք Իսպանիայի հյուսիսում, Բիլբաոյում, և մեծ կարիքի մեջ եյինք: Մեր տանն ամեն որ խուզարկություններ եյին լինում: Վոստիկանությունը մեզ հանգիստ չեր տալիս, վորովհետև հայրս ու մայրս հեղափոխականներ եյին: Խուզարկությունների ժամանակ մայրս իրեն հանգիստ ու արի յեր պահում:

Նա ասում եր վոստիկաններին.

— Ինչո՞ւ դուք միշտ մեզ՝ աղքատներիս մոտ եք գալիս և վոչ թե կապիտալիստների:

Հայրս շատ անգամ է բանտ նստել, հաշիվն էլ եմ մոռացել: Իսկ մայրս, հիշում եմ, չորս թե հինգ անգամ բանտարկվել է:

Ցես հպարտանում եմ իմ մայրիկով: Ինչքան էլ վոր զբաղված լինի նա, միշտ շատ սիրալի յե դեպի ինձ:

Ինձ համար դժվար եր դպրոցում սովորելը: Փող չունեյինք դասագրքերի համար, իսկ ուսուցիչներն այդ բանի համար հայհոյում և տուն եյին ուղարկում ինձ: Իսկ մայրիկս ասում եր ինձ.

«Ռուբեն, սովորիր՝ ինչ գնով էլ վոր լինի: Բանվորները պետք է տիրապետեն գիտությանը, վորպեսզի հաղթեն»:

Ցես մեկ ամիս անցկացրի «Արտեկ» պիոներական ճամբարում։ Կազդուրվեցի և նոր յեռանդով շարունակեցի սովորել։

Ցես լավ եմ հիշում քո խոսքերը, իմ թանգագին մայրիկ, վոր ասացիր հրաժեշտի ժամանակ, «Մնա՛ս բարով, Ռուբեն, մենք դեռ կտեսնվենք։ Լավ սովորիր և աշխատիր, և միշտ հավատարիմ յեղիր բանվոր դասակարգի գործին»։

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԻՍ

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դաժան— անգութ, խիստ, սոսկալի.
2. Հոյակապ— մեծ ու գեղեցիկ.
3. Գվարդիա— ժողովրդից կազմած զորք.
4. Իդեալ— բարձր նպատակ.
5. Բիսկանիա— Իսպանիայի մի մասը— Հյուսիսում։

---

47. ԾԱՂԻԿՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Մեծ գոլն ընկավ, ձնհալն ընկավ,
Հողը շնչեց, գեփյուռն յեկավ,
Արևն յելավ վառ ճառագած,
Հարցմունք արավ հողին հակված.
Արևը.— Սիրո՛ւն աղջիկ, ի՞նչ դրկեմ քեզ։
Աղջիկը.— Ցես ծաղիկներ կուզեմ պես-պես։
Արևը.— Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
Սառցի ներքև քնա՞ծ եք դեռ։
Դո՛ւրս յեկեք, դո՛ւրս.
Ցո՛ւտ դեպի լուս,
Նոր աշխուժով
Ու նոր ուժով
Կարկաչեցեք
Ու կանչեցեք
Հողում քնած սիրուններին՝
Ծաղիկներին ու ծիլերին։
Ջրերը.— Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ.
Ես ինչքա՛ն ուշ...

Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
Քանի՛ քնեք, վե՛ր կացեք, վե՛ր,
Ինկածաղիկ,
Ծնկածաղիկ
Արևքուրիկ.
Շար-շարուրիկ
Հասմիկ, հափրուկ,
Ամանկոտրուկ,
Հորոտ-մորոտ,
Աղավնարոտ,
Կոճղեղ, ճանդուկ,
Քուրդ, ճարճատուկ,
Հարսնածաղիկ,
Վոսկեծաղիկ,
Խաչխաչ, ծծուկ,
Վարդ, յերիցուկ,
Մուշկ-վաղմեռուկ,
Պուտ, վառվռուկ,
Շրվան, մրվան,
Շուշան, ռեհան,
Ալբեմ-չալբեմ,
Բուրեմ-մարեմ...
Քանի՞ քնեք հողի միջին,
Ցեկեք եստեղ, սարի լանջին.
Առվի ափին, հով ստվերում,
Ժայռի տակին, հովիտներում.
Կանաչ խոտով,
Անուշ հոտով,
Ծիծաղեցեք
Ու ծաղկեցեք։
Ծաղիկներ.— Բարև, բարև, կարմիր արև,
Ա՛խ, ի՛նչ լավ է դեպի վերև—
Աղա՛տ, լո՛ւյս, տա՛ք,
Կապո՛ւյտ, հստակ...
Արևը.— Սիրո՞ւմ եք ինձ...
Ծաղիկներ.— Ա՛խ, ենպես եմ սիրում, ենպե՛ս,
Ել առանց քեզ չեմ ապրիլ յես...
— Ցես քեզ հետ եմ ուր վոր գնաս.

— Ցես կտխրեմ՝ վոր հեռանաս...
Արևը.— Ապա յեթե ձեզ համբուրե՞մ...
Ծաղիկներ.—Ցես հաճույքից կը կարմրեմ...
— Ցես կբուրեմ...
— Ցես կմարեմ...
Արևը.— Ա՛յ անուշներ,
Ա՛յ քնքուշներ,
Ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ.
Բաժակներդ բացեք իմ դեմ,
Հազար գույնի, հազար ձևի,
Պայծառ, ծավի ու ծարավի.
Լցնեմ շողով,
Գոհար ցողով,
Ջերմ յեթերով,
Նուրբ թրթիռով,
Կյանքի հյութով,
Խունկի հոտով,
Ա՛յ անուշներ,
Ա՛յ քնքուշներ...
Աղջիկը.— Ես ի՞նչ անթիվ ծաղիկներ կան,
Վոսկի դեղին, կարմիր, դեղձան,
Մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
Ալ, նարնջի, մավի, կապույտ,
Բացվել, լցվել, ծաղկել են վառ,
Վո՞ղջ ինձ համար, վո՞ղջ ինձ համար:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Գոլ— տաքություն.
2. Ճառագել— ճառագայթները ամփոփել, շատ լույս տալ.
3. Ծավի— կապույտ, գեղեցիկ աչքերով.
4. Ցեթեր— ոդի վերևի նոսր շերտը.
5. Դեղձան— դեղնագույն.
6. Մավի— կապտագույն:

---

48. ՑԵ՛Կ, ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Ցե՛կ, գարնան անձրև, թափվիր հորդառատ
Ցրտացած յերկրի սառ կրծքի վերա.
Թող նորից յերկիրն շունչ քաշե ազատ.
Թող նրա կրծքին ջերմ կյանքը յեռա:

Ցերկար նա տանջվեց դառնաշունչ ձմռան
Ցուրտ կապանքներում քեզ սպասելով.
Նա շատ համբերեց... կենսատու գարնան
Քաղցր կարոտը ջերմ փայփայելով:

Թափվի՛ր, ա՛յ անձրև, ինչպես մարգարիտ,
Ինչպես յերկնառատ ցողը կենսաբեր,
Վառոդիր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատիր լեռներ ու ձորեր:

Թող հորդանալով աղբյուր ու գետակ
Սառցե շղթաներն անահ խորտակեն.
Դուրս գան ափերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաչեն:

---

49. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՏԸ

Սաֆրոնովկայի գյուղացիներն աղքատ եյին ապրում. Հողերը քիչ եյին. համարյա անասուններ չեյին պահում, վորովհետև կեր չունեյին: Բոլորը՝ մինչև վերջին հատիկը, մինչև գարմանի վերջին ծեղն ուտում և ուտեցնում եյին մինչև նոր բերքը: Մի կերպ տարեց-տարի քարշ եյին գալիս, բանում եյին աղայի համար, վողորմություն եյին խնդրում:

Կար ժամանակ, վոր Սաֆրոնովկան վատ չեր ապրում. այդ այն ժամանակ եր, յերբ գյուղացիների մի մասը գոնե խոտհարք ուներ: Բայց աղան այդ խոտհարքը խլեց: Ինչքան ել գյուղացիները վիճեցին, ինչքան ել դեսդեն ընկան, բան դուրս չեկավ: Աղան ապրում ու հարբս-

տանում էր։ Իսկ Սաֆրոնովկան տարեց-տարի աղքատանում էր, հա աղքատանում։

Ամեն տարի գարնանը, յերբ մարդագետինը ծածկվում էր խոտով, և տաք քամին դեպի Սաֆրոնովկա յեր տանում իր բուրավետ ալիքները, գյուղացիները դուրս եյին գալիս իրենց ծխոտած հյուղերից, մտածկոտ նայում եյին ծաղիկների խատուտիկ ծովին։ Նրանց ուունդներն ուռչում եյին — ագահաբար ներշնչելով խնձորածաղկի, առվույտի և դաշտային յերեքնուկի հոտը։

— Ա՛խ, ի՞նչ կլիներ մի փորձեյինք, խոտհարքն ելք մեր ձեռքը գցեյինք...

Ու ամեն անգամ նույն անջնջելի միտքը վառում էր գյուղացիներին։

Իսայ Շկվարնյովը վերադարձել էր զինվորական ծառայությունից։ Նա շատ էր սիրում իրենց գյուղը, ու ցավում էր, յերբ տեսնում էր գյուղի ցեխն ու աղքատությունը։

Նա գյուղացիներին համոզեց, վոր մի անգամ էլ բախտերը փորձեն։ Իսայը գնաց քաղաք։ Ցերկար ժամանակ այնտեղ այս ու այն կողմ ընկավ։ Սկզբում ամեն բան լավ էր գնում։ Գործը դատարան հասավ։ Իսկ դատարանում թուղթ պահանջեցին, վոր իրոք մի ժամանակ Սաֆրոնովկան է յեղել խոտհարքի տերը։ Այսպիսի թուղթ չկար։ Ցավ գործը կրկին աղայի ոգտին վերջացավ։

— Խոտհարքը ձերն է, խոսք չկա,— ասում եյին գյուղացիներին,— բայց միայն թե որենքով, առանց թղթի չի կարելի ձեզ տալ։

— Դե վոր խոտհարքը մերն է, առանց թուղթ էլ կըհնձենք,— վորոշեցին իրենք գյուղացիները։— Էլ չենք ուզում համբերել։ Ամբողջ համայնքով կգանք, կպառկենք գետնին ու կմեռնենք։

— Ի՞նչ կա վոր, — ասաց Իսայը, — յերբ համայնքը վորոշեց, յես էլ նրանց հետ։ Թե փորձանք կգա, բոլորիս միասին կգա, թե կմեռնենք, միասին կմեռնենք։

Ամռան պայծառ առավոտ էր։ Սաֆրոնովկայում այստեղ-այնտեղ իրար ձայն եյին տալիս ճմռան սովից ազատված սակավաթիվ աքաղաղները։ Վորոշված էր այդ որը խոտհարքը հնձել։

Նախաճաշից հետո գյուղացիներն իրար հետևից, գերանդիներն ուսերին, խմբովին շարժվեցին դեպի խոտհարքը։ Կանայք ու յերեխաները վազեցին նրանց հետևից։

Խոտհարքը դեռ ննջում էր։ գիշերվա ցողի վրա արևն այստեղ-այնտեղ խոտերի մեջ կապույտ ու կարմիր կայծեր էր վառում։ Առաջինն սկսեց Իվան պապը, նրա հետևից Իսայը, իսկ նրա հետևից յերկար շարքով—մյուսները։ Գերանդիների համաչափ զրնգոցի և ընկնող խոտի գողացող խշշոցի ձայնը բռնեց ամբողջ դաշտը։ Մինչև կեսոր հնձեցին։ Արեգակն այրում էր անասելի։ Հնձած խոտն արագ թառամում և առատությամբ քաղցր բուրմունք էր տարածում։ Իսկ այդ ժամանակ գյուղի ճանապարհին մութ ու անորոշ փոշու ամպ բարձրացավ։

— Տղե՛րք, յեկող կա,— աղաղակեց մի կին, վար ամենից առաջ էր նկատել։

— Թող գա՛,— ասաց Իսայը։

Մի կառք և յերկու ձիավոր ճանապարհից դեպի խոտհարք ծռվեցին։

— Վոստիկանապետն է,— ճչացին կանայք։

Կառքը մոտեցավ հնձվորներին։ Այնտեղից դուրս թռան վոստիկանապետն ու աղայի կալվածքի կառավարիչը։

— Եհե՛յ, լսեցե՛ք, բան եմ ասում, — ասաց վոստիկանապետը, մոտենալով գյուղացիներին։

Գյուղացիները լուռ, առանց կանգ առնելու շարունակում եյին հնձել։

— Այդ ի՞նչ եք անում, ուրիշի խոտհարքն եք հնձո՞ւմ։

— Այն կողմը կա՛ց, ձե՛րդ աղնվություն, — հանդիստ ասաց Տրուշկան և գերանդին պտտեց։ Վոստիկանապետը հազիվ կարողացավ հետ թռչել, և գերանդին սուլելով, նրա վոտների մոտ հյութալի խոտի մի լաս փռեց։

— Այն կողմը կա՛ց, ձերդ աղնվություն,— կրկնեց հաջորդ գյուղացին ու մի նոր լաս փռեց վոստիկանապետի վոտների մոտ։

Վոստիկանապետը բոլորովին չփոթվեց։

— Այս ի՞նչ։ Այդպես հա՛, խռովությո՞ւն։ Անասունե՛ր, դե՛ն գցեք գերանդիները։ Ձեզ եմ ասո՞ւմ՝ թե չե։

Բայց գյուղացիները շարունակում եյին հնձել։

Վոստիկանապետի սիրտն ահ ընկավ: Նա գլխարկը վերցրեց, թաշկինակով քրտինքը սրբեց: Աղմուկի վրա մոտ վազեցին կանայք:

— Լսեցե՛ք, տղերք,— սկսեց խոսել կառավարիչը,— լավ բան չեք անում: Ախր սա որը ցերեկով թալան է: Մի մտածեցեք, ի՞նչ կասեք, որինակի համար, յեթե ձեր բակը մտնեմ և ինչ վոր դուրս գա—վերցնեմ, տանեմ:

— Գնա տա՛ր,— ճչաց Դարիա հորաքույրը,— միևնույն է, այնտեղ վոչինչ չես գտնի:

— Յես գիտեմ, թե ո՛վ է ձեզ դրդում,— նորից աղաղակեց վոստիկանապետը,— այդ բոլորը Իսայ Շկվարնյովն է անում: Յես վաղուց եմ նրան աչքիս տակն առել:

— Այն կողմ կա՛ց, ձերդ ազնվությո՛ւն,— ահռելի ձայնով գոռաց Լուկան և քիչ մնաց վոստիկանապետի վոտներն ել հնձի:

— Դե լավ, սպասեցե՛ք դեռ, տեսեք յես ձեզ ի՞նչ կանեմ,— զայրացած ֆչչացրեց վոստիկանապետը և արագ գնաց դեպի կառքը:

— Վորտեղից յեկել ես, այնտեղ ել գնա՛, — աղաղակեց մեկը նրա հետևից:

Դրանից հետո յերեք որ ել հնձում եյին գյուղացիները: Նրանք համարյա չեյին հանգստանում, վոչ ուտում եյին, վոչ խմում: Գիշեր-ցերեկ դաշտումն եյին անցկացնում, մոռացել եյին իրենց մրոտ խրճիթները, ուր կյանքն այնքան դժվար եր ու դաժան: Նրանք կարծես հարբել եյին աշխատանքից, հյութալի խոտի առատ բուրմունքից, այդ բոլոր հարստությունից: Իսկ չորրորդ որը, կեսորին, դաշտում տարածվեց մի ահարեկ ճիչ,— «զինվորները գալիս են»: Կարծես խոտհարքը դող ընկավ: Կանայք խոտ չուռ տալը դադարեցրին. գյուղացիներն անհանդիստ նայում եյին ճանապարհին, վորտեղ շարժվում եր մութ պատը:

Ամբողջովին կարմրած, շոգից շնչասպառ, գյուղացիների առջև կանգնած եր նահանգապետը:

Նրանք ե՛լ չեյին հնձում, այլ լուռ կանգնել, մոայլ նայում եյին հսկայական քանակությամբ զինվորներին և ճիպոտներ բարձած սայլերին, վորոնց շուրջը դես-դեն եյին ընկնում վոստիկանները:

— Ծունկի՛,— գոռգոռաց գոռում եր նահանգապետը,— սրիկանե՛ր, խառնակիչնե՛ր: Ծունկի՛, ասում եմ:

Ամբոխը մի թեթև տատանվեց, բայց վոչ վոք տեղից չշարժվեց:

— Կշարդե՛մ, ավազակնե՛ր,— նորից աղաղակեց նահանգապետը:

Ամբոխը նորից շարժվեց: Առաջ յեկավ Իսայը:

— Թույլ տվեք մի խոսք ասել,— սկսեց նա հանդարտ և հաստատուն ձայնով, — մենք ավազակներ չենք, մենք մեր բարիքի համար ենք տանջվում: Խոտհարքը շատ հնուց մերը ն եր, աղան անիրավ կերպով տիրացավ: Դատեցե՛ք մեզ, բայց որենքով:

— Լռի՛ր,— աղաղակեց նահանգապետը: Այդ ժամանակ նրան մոտեցավ վոստիկանապետը և ականջին ինչ-վոր փսփսաց:

— Հա՛... ուրեմն այդ դո՞ւ յես Իսայ Շկվարնյովը: Այդ դո՞ւ յես դատ ուզում: Ա՛յ քեզ դատաստան,— գազազած գոռաց նահանգապետը, ձեռքը հետ տանելով և ինչքան ուժ ուներ, խփեց Շկվարնյովի յերեսին:

Կարմիր արյունը ներկեց Իսայի մորուքն ու կուրծքը: Նա կռացավ և արյան հետ թքեց յերկու ատամ:

— Ծեծե՛լ, բոլորին ծեծե՛լ,— աղաղակում եր նահանգապետը: Զինվորները շրջապատեցին գյուղացիներին:

Ծեծի տակ առաջինն Իսայը պառկեց: Սոսկալի, ուռած, կապտած դեմքով, առանց մի խոսք ասելու, նա մերկացավ և գետին ընկավ:

— Սրիկա՛,— ատամների արանքից ասաց նահանգապետը:— Հը՛, հիմա դա՞տ ես ուզում, անասո՛ւն: Ա՛յ, հիմա յես քեզ դա՛տ ցույց կտամ,— թան ծամելուց կդցեմ քեզ... սկսե՛լ,— աղաղակեց նա վոստիկաններին:

Ծեծողները յերկու վոստիկան եյին. ծեծում եյին հաճույքով, մի առանձին դաղանային բավականությամբ:

Իսայը չեր աղաղակում ու չեր հառաչում, միայն ամեն անգամ, յերբ դալար ճիպոտը կպչում եր նրա մարմնին, ցնցվում եր: Վերջը նա չեր ել ցնցվում:

— Նա հալից ընկավ, ձերդ ազնվություն, — ասաց Վոստիկանապետը հիմար ժպիտով:

— Դե՛ն չպրտեցեք դրան...— հրամայեց նահանգա-

պեռը։— Հետևյալին բեր... ա՛յ, են յերկարամազ ծերունուն...

Վոստիկանները բռնեցին Իվան պապին։ Գյուղացիները հառաչեցին։ Դեմենտիի դեմքը մուդ կապույտ դույն ստացավ, իսկ ներքևի շրթունքը դողաց։

— Բա պապին ինչո՞ւ համար,— բարձրաձայն ասաց նա։— Եղպես օրենք չկա, վոր ծերունիներին ծեծեն։ Մարդասպաննե՛ր։

Վերջին խոսքերը նրա կոկորդում մնացին։ Վոստիկանները նրա բերանը փակեցին և մի կողմ տարան։ Լռություն տիրեց։ Բարձրահասակ, գեղեցիկ, սպիտակ մորուքը կրծքին փռված՝ Իվան պապը կանգնած եր նահանգապետի առջև և նայում եր նրան իր պայծառ, հանդիստ աչքերով։

— Հիսուն հատ հուժկու հարվա՛ծ սրան,— աղաղակեց նահանգապետը։

Վոստիկաններն իրարով անցան, անկանոն կերպով պոկեցին նրա գոտին, ու նորից դաշտում տարածվեց հարվածների սուլոցը։ Իվան պապը չդիմացավ և հառաչում եր։

— Հը՞,— չարախնդությամբ ֆշշացնում եր նահանգապետը,— դուր չի գալի՞ս... դե՛, հապա շարունակեցեք։

Իվան պապն արդեն վոչ թե հառաչում, այլ աղաղակում եր, յերեխայի նման հեկեկում եր և՛ յեղունդներով հողը ճանկռտում։

Ծեծը շարունակվեց մինչև յերեկո, և շատ քիչ սաֆրոնովցիներ յեղան, վոր ծեծ չկերան։ Արդեն ուշ գիշեր եր, և նահանգապետը գնաց կալվածքում ճաշելու։

Գյուղացիներից յերեքին կիսամեռ գցեցին սայլը և պահակներով ուղղակի հիվանդանոց տարան, հնդին ձերբակալեցին ու աքսորեցին, իսկ մյուսներին ազատ թողին։

Զինվորները գնացին և դաշտը լռեց։

Դեղին վերջալույսը հանդչում եր յերկնքում։ Իսկ Սաֆրոնովկան թաղնվեց իր գորշ խցերում, խուլ հառաչեց, գանգատվելով իր թշվառ վիճակից։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հյուղ— գեռնափոր խրճիթ.
2. Դրդել— տրամադրել, գրգռել.

3. Թաճ ծամելուց գցել— չափազանց շատ ծեծել, ուժասպառ անել.
4. Հուժկու— ուժեղ, պինդ.
5. Զարախնդություն— չար և վատ բանի համար ուրախանալը.
6. Լաս— հնձած խոտի շարքը.
7. Խուց— նեղ, փոքրիկ սենյակ.
8. Գարշ— հողի դույն.
9. Ռունգ— քթածակեր։

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ այնքան աղքատ եյին ապրում Սաֆրոնովկայի գյուղացիները։
2. Ինչի՞ց և յերևում, վոր խոտհարքն աղայից հետ վերցնելու հարցով շահագրգռված եր ամբողջ գյուղը։
3. Ի՞նչ հետևանք ունեցավ խոտհարք հնձելը գյուղացիների համար։
4. Ինչպիսի՞ մարդ եր նահանգապետը։
5. Այդպիսի դատ վո՞ր իշխանության ժամանակ կարող եր տեղի ունենալ։

---

50. ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
Փախավ դեղը.
— Նե՛ղն եմ, նեղը,—
Ասավ կատվին.
— Ասյան բալա,
Քո հոր պատվին
Մի ճար արա.
Մի տես հլա,
Վորսորդ ու շուն,
Թաղի, թուլա
Միսս են կրծում,
Ինձ հալածում.
Ա՛յ կարվի
Նրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր,
Պահվեմ մոտը։

— Ա՛յ ցեղակից,— գոչեց կատուն,—
Գնա մտիր Մարոյենց տուն:
Նա չափազանց բարի կին է:
— Ցես էլ գիտեմ, վոր անգին է,
Բայց վոր նրա հորթն եմ կերե՛լ...
— Բկիդ կանդներ, լավ չես արել,—
Վոր եղպես է,
Ա՛յ, Դավթի մոտ:
Կուզե՞ս՝ կանչեմ...
— Ներանից էլ յես կամաչեմ.
Ես ամառը
Կերա Դավթի փոքրիկ գառը :
— Ո՞ւմ ասեմ էլ...
Հա՛, մեր Զաքին:
— Ես դարնանն էլ
Նրա մաքին...
— Ո՞վ մնաց էլ.
Հա՛, յերեցը:
— Ես աշնանն էլ՝
Նրա եծը...
— Ա՛յ, դու ուտես
Զոռի մեծը:
Քանի՞սն յեղավ.
Հինգը... վեցը...
Ի՞նչ յերեսով
Գյուղը մտար.
Տեղ չգտա՞ր:
Գյուղն հիմա՞ր է,
Վոր թշնամուն պատսպարե:
Ով ինչ բրթի,
Են կխրթի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Մաքի— մայր վոչխար.
2. Թազի— վորսորդական շուն (բարակ).
3. Յերեց— տերտեր.
4. Զոռ— ցավ, հիվանդություն.
5. Խրթել— աղահարար ուտել.

51. ՓՈԹՈՐԻԿՆ ԱՆՏԱՌՈՒՄ

1.

— Պատահե՞լ ես յերբևիցե փոթորկի,— հարցրեց ինձ ընկերս:

— Ինչո՞ւ չե, աշխարհում չե՞մ ապրում, — նկատեցի յես:

— Քաղաքի մեջ չեմ ասում, այլ անտառում կամ լեռան վրա:

— Վոչ,— պատասխանեցի:

— Եհ, լավ, հիմա կտեսնես և մի քիչ կծանոթանաս մեր քաշած որերին:

Կարծես բնությունը ընկերոջս վերջին խոսքին եր սպասում. ողը կամաց-կամաց սկսեց մրրկել, անձրևը սաստկացավ և մի կատաղի քամի շառաչեց հանկարծ անտառի մեջ այնպիսի սաստկությամբ, վոր հնորյա ծառերը արմատից սկսեցին տատանվել:

Ցես ցնցվեցի և սկսեցի յերերվել թամբի վրա:

— Պինդ սեղմիր վոտքերդ ձիու կողերին, յեթե վոչ վրայից կարող ես գլորվել, զգուշացրեց ինձ ընկերս և ողի մեջ ծածանվող իր յափնջին սկսեց ամփոփել և փեչերը սեղմել ծնկների տակ:

— Անհոգ կաց, պինդ եմ նստել,— ասացի նրան կեղծ հանգստությամբ, բայց ներքուստ դողում եյի:

Քամին շարունակում եր շառաչել նույն սաստկությամբ, ծառերի բարձր գագաթներն ուժգին ընդհարվելով միմյանց, ահեղ սոսափյուն եյին հանում, վորի արձագանքը զարնան հեղեղի նման մռնչում եր անտառի խորքերում: Յերկինքը նույնպես սկսեց փայլատակել և վորոտալ՝ սկզբում մեղմ և ապա այնպես սաստիկ, վոր կարծես յերկնակամարը պիտի փլչեր մեր գլխին: Մենք շարունակ փաթաթվում եյինք մեր վերարկուների մեջ և կծկվում ձիերի վրա, վորովհետև քամին այնքան սաստիկ եր, վոր քիչ եր մնում վայր գլորեր մեզ ձիերի հետ միասին. իսկ անձրևը դնալով հեղեղի յեր փոխվում: Մի քանի րոպե չանցած՝ անտառը վողողվեց ամբողջապես. նրա զառիվայրերից սկսեցին հոսել դետեր ու առուներ, ճանապարհի հետքը կորավ բոլորովին:



Ցեռ քայլ առ քայլ հետևում էին առաջնորդիս և ամեն քողե սպասում մի դժբախտության, վորովհետև չարունակ իջնում էինք ներքև, իսկ ձիերի սմբակները գետինը չէին բռնում, նրանք շուտ-շուտ սահում և գրեթե մեծ մասը փորի վրա էին սողում: Իսկ անտառը համարյա մթնել էր. միայն թուխ ամպերի մեջ շուտ-շուտ փայլատակող կայծակն էր, վոր ընդհանուր լույս էր սփռում: Այս դրության մեջ չարունակեցինք ճանապարհը գրեթե մի ժամ:

2

Ապա քամին քիչ-քիչ դադարեց, փայլատակն սկսեց շողալ մերթ ընդ մերթ և վորոտը լսվում էր յերկնքում ավելի խուլ: Այդ նշան էր, վոր փոթորիկն անցել է հեռու կողմեր: Բայց անձրևը տեղում էր նույն ուժով, նրա ձայնը լսվում էր անտառի մեջ ինչպես վարարած գետի խոխոջ կամ բարձրից հոսող ջրվեժի շառաչ: Շարունակելով ճանապարհը, շուտով հասանք մի հեղեղատի, վորից պիտի անցնեյինք՝ դիմացի կիրճը մտնելու համար: Բայց այդտեղից արդեն հոսում էր գետի չափ ջուր, վորի մեջ մտնելն հանդգնություն էր. ուստի խորհուրդ տվի առաջնորդիս, մի առ ժամանակ սպասել, մինչև վոր հեղեղը դադարի և ապա անցնենք:

— Ցեթե քո խորհրդին հետևեմ, այս գիշեր պիտի անտառում քնենք,— նկատեց ընկերս հեգնությամբ, — այս ջուրը գնալով պիտի մեծանա, ուստի վորքան շուտ անցնենք, այնքան մեր ոգուտն է: Այս ասելով նա մտրակեց ձին և աներկյուղ մտավ հեղեղատը:

Իմ աչխույժ ձին հետևեց նրա որինակին և մենք հաջողությամբ դուրս յեկանք ձորակի մյուս կողմը: Անցնելով այդ լանջի վրա և հետո մի ուրիշ բարձրավանդակ, այդտեղից ապա իջնում էինք մի կանաչազարդ հովիտ, վոր կիրճի բերանն էր համարվում:

Այստեղ արդեն անձրևը հետզհետե դադարեց և քամին սկսեց յերկնքի վրա կուտակված ամպերը ցրել: Տեղ-տեղ յերևաց և պայծառ կապուտակ յերկինքը: Արևի ճառագայթները ամպերի արանքից չեղակի թափանցելով՝ վոսկեզոծեցին լվացված լեռներն ու սարերը: Լեռների բարձրությունների վրա հրաշալի ծիածանն իր կամարը կապեց:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ցերբևիցե — *վորևե ժամանակ.*
2. Ցերերվել — *տատանվել.*
3. Հեգնությամբ — *ծաղրանքով.*
4. Շեղակի — *թեք.*
5. Մրրկել — *ուժեղ քամի բարձրանալ.*
6. Սոսափյուն — *տերևների հանած ձայնը.*
7. Մերթ ընդ մերթ — *յերբեմն-յերբեմն.*

ՀԱՐՑԵՐ

1. Քաղաքի՞, թե՞ գյուղի բնակիչներ էին ճամփորդները. Ինչպես իմացաք:

2· Փոթորկի ժամանակ·
ա) Ի՞նչպես եր փչում քամին,
բ) Ինչպե՞ս եր թափվում անձրևը,
գ) Ի՞նչ տեսք ուներ անտառը,
դ) Ի՞նչ վիճակի մեջ եյին ճամփորդները:
3· Փոթորկի ժամանակ ի՞նչ կղզար և ի՞նչ կմտածեր ճամփորդներից ամեն մեկը:

1· Նկարագրեցեք փոթորկի ատիճանաբար հանդարտվելը·
2· Նկարագրեցեք ձեր տեսած փոթորիկը:

52· ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

— Ապրե՞լ···
— Ապրել միայն կարմիր գարնան,
Ցերը ջրերն են իրար խառնվում—
Գետեր դառնում,
Ցերը կանաչն է հասակ առնում,
Փարթամանում,
Ապրել միայն կարմիր գարնան:

— Կռվե՞լ···
— Կռվել միայն կարմիր գարնան,
Ցերը վորոտն է ահեղ թնդում,
Ցերը կայծակն է յերկինք քանդում,
Կռիվների բոցում քաոս,—
Տարերքների խոլ ովկիանոս:

— Մեռնե՞լ···
— Մեռնել միայն կարմիր գարնան,
Ցերը հեղեղն է լեռներ խոցում,
Ցերը սելավն է ուղի բացում,
Ինչ կա անպետք՝ տանում իր հետ:
— Անցած կյանքի ել վոչ մի հետք···

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Փարթամանալ — աճել· մեծանալ, խոշորանալ·
2· Ահեղ — վախեցնող·
3· Քաոս — անկարգ, խառը դրություն·
4· Տարերք — բնության ահեղ յերևույթներ·
5· Խոլ— կատաղի, խելագար:

53· ՔԱՂՀԱՆԸ

Վաղ առավոտից կոլտնտեսականներն սկսել եյին քաղհանը ճակնդեղի ու ծխախոտի ցանքերում: Ընդարձակ դաշտում՝ սկսած կոլխոզի մեծ այգուց, սփռվել եյին մի քանի տասնյակ տղամարդիկ ու կանայք և մաքրում եյին մատաղ ծիլերը մոլախոտից: Որը պարզ եր ու վճիտ· պայծառ արևը լի ու լի բացել եր հորիզոնը· յերկնքի ջինջ կապույտը, ասես նորոգված ու թարմացած բնության հետ, գրավում եր աչքը, տանում հեռուներն ու իջեցնում կանաչազարդ սարերի վրա, մեղմ յեղերելով նրանց յերկնաձիգ գագաթները:

Պետրոսի մասն ընկել եր այգու մեջ, մի մեծ բացատում, վորի յերկու կողմից պտղատու ծառեր եյին: Գլխին մի թաշկինակ փաթաթած, կռացած մարդի վրա, նա խընամքով քաղում եր մոլախոտերը ու ձգում առվափոսը, վորտեղ նրանք թառամում եյին, ուշաթափ լինում արևի հուրքից:

Առավոտյան հովը հետզհետե տեղի յեր տալիս կեսորվա տապին: Տաքացած հողն ալիքում եր ներքևից իր տոթը, ծանրացնում շունչը, ու քրտինքը տալիս ճակատին· արևը խայթում եր կորացած մեջքը, յերբեմն միայն զիջելով սարից յեկած հովին, վորը թեթև անցնում եր իր ախորժալի շնչով ու դանդաղում դիմացի ծառերի վրա: Դարավոր ընկուզենին ծանրախոհ, խուլ աղմկում եր իր խոշոր տերևներով, կեռասենին բացվում, կարմրին եր տալիս իր նորահաս պտուղներով, իսկ սալորենիների մանրիկ տերևներն արագաշարժ պար եյին բռնում:

Պետրոսն սկսել եր աշխատանքն արտի ծայրից ու գընում եր դեպի ներքև: Մերթ ընդ մերթ, յերբ նրա մեջքը բողոքում եր յերկար ճկվելուց ու արևի տապից, նա կանգնում եր, ձգվում ու հանգիստ տալիս մկաններին: Այդ բոպեներին այգու ծառերի խիտ տերևները գայթակղիչ գրավչությամբ կանչում եյին···

Բայց ահա մոտենում է դաղարի ժամը· բոլորն ղղում են այդ բոպեները, կարծես մեկն անտես չչնջում է նրանց ականջին ու հանգստի հրավիրում: Վերջապես ճաշ բերողը յերևաց բացատի ծայրին: Մեկ-մեկու հետևից բոլորը թողին գործն ու խմբվեցին մեծ ընկուզենու տակ: Աշխատանքի

լռությունը խախտվեց· սրախոսելով, ծիծաղելով, խմբակը նստեց ճաշի։

Ճաշից հետո կոլտնտեսականները ցրվեցին այգում հանգստանալու։

Արտի ծայրից նշան տվին կարմիր դրոշակով։

Դաղարը վերջացավ ու նորից սկսվեց քաղհանը։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Ցեզերել— սահմանազծել·
2· Տապ— սաստիկ տաք, շոգ·
3· Ալիքել— ալիքանման շարժվել·
4· Ծանրախոռ— ծանր, լուրջ, մտածող·
5· Գայթակղիչ— դրավող, գայթակղեցնող (ճանապարհից դեպ.)։

54· ԳՈՒԹԱՆԻ ՑԵՐԳԸ

Հե՛յ··· վեր կաց, գեղջուկ, դո՛ւք, ընկեր յեղներ,
գնանք շուտով արտ,
Հուժկու յեռանդով սև կուրծքը ճեղքենք
մայր հողի պարարտ։
Շրջենք հետ-առաջ յերկար գծերով,
փորենք ակոսներ,
Սուրբ աշխատանքի վորպես ժրաջան,
անվախ հերոսներ···
Արևը ահա փայլում է վերից
գթառատ սիրով,
Անուշ գոլորշին շղարշի նման
ճոճում դաշտերով։
Բացված բներից գործի յե դիմում
անհամար մրջյուն·
Մայր հողն է ծնում, գետը տարածում
թովիչ կարկաչյուն։
Հե՛յ··· վե՛ր կաց, յեղնուկ, հերի՛ք մրափես,
վե՛ր կաց, սերմնացան·
Գնանք շուտով արտ, շա՛ղ տուր հատիկներ
այնտեղ ցիրուցան։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Հուժկու— ուժեղ, զորեղ·
2· Շղարշ— բարակ, թափանցիկ կտոր·
3· Թովիչ— դրավիչ։

55· ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ճակատամարտը վերջացավ։ Հեռվում դեռ լսվում եյին թնդանոթների դղրդյունը և հաղթանակող զորքի համազարկերի ու փողերի ձայնը։ Կռվի դաշտում կոտրտված սայլերի, թափթփված հրացանների և փշրված սրերի միջև ընկած եյին սպանվածների կույտեր, մարդկանց և ձիերի դիակներ· այդ կույտերի միջից տեղ-տեղ լսվում եյին վիրավորների խոր հառաչանքներ։

Մի չորացած առվի յեզերքին, խիտ յեղինջի մեջ, իրարից վոչ հեռու պառկած եյին յերկու զինվոր, յերկուսն էլ ծանր վիրավոր։

Նրանց համազգեստները տարբեր եյին։ Մի քանի ժամ առաջ նրանք դեռևս կատաղի թշնամիներ եյին, իրար դեմ կանգնած, պատրաստ սվիններով միմյանց խողխողելու, իսկ այժմ···

Այժմ լուռ նայում եյին իրար և այնպես ուզում եյին խոսեն, գոնե մի բան ասեն, բայց ափսո՛ս, վոր իրար լեզու չեյին հասկանում։ Հանկարծ ավելի յերիտասարդը՝ դժվարությամբ մի յերկու քայլ հազիվ սողեսող տալով, մոտեցավ իր թշնամուն և մեկնեց նրան իր զինու սրվակը· հետո աշխատեց թաշկինակով դադարեցնել նրա վերքից հոսող արյունը։ Բայց վոչինչ դուրս չեկավ· ինքն ավելի ևս թուլացավ ու պառկեց։

Յերբեմն մեկը, յերբեմն մյուսը ճիգ եյին թափում մի փոքր վեր բարձրանալու· ոգնություն եյին կանչում, բայց նրանց կանչերին պատասխան եր տալիս միմիայն փորը ճղված մի ձիու աղեկտուր խրխինջը։

Վերջապես յերիտասարդը հոգնած և թուլացած քուն մտավ։ Վրա հասավ պարզկա գիշերը· ցուրտ քամին դալիս, փչում եր հեռավոր լեռներից։ Կռվի դաշտում հառաչանքներն ավելի ու ավելի եյին նվազում· վիրավոր ձին էլ չեր խրխնջում։

Ավելի տարիքավոր վիրավորը կես գիշերին կրկին մի փորձ արավ նստելու, բայց իզո՞ւր. արդեն բոլորովին արնաքամ եր յեղել։ Մահվան սառնությունն սկսել եր պատել նրա մարմնի անդամները։

Աչքը դցեց իր հարևանի վրա։ Յերիտասարդ վիրավորը քնած եր և կուչ եր յեկել գիշերվա սոսկալի ցրտից։

— Պիտի սառչի,— անցավ հասակավորի մտքովը.— անպատճառ պիտի սառչի. խե՛ղճ, ինչքան ել յերիտասարդ է։

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտեցավ նրանց, յերիտասարդը զարթնեց, ուզեց բարձրանալ ու զարմացավ, վոր իր վրա մի վերարկու կար դցած։

Նայեց շուրջը, նայեց հարևանին։ Հարևանը մեռած եր և պառկած առանց վերարկուի. նրա վերարկուն եր իր վրա։

Ի՞նչ շարչարանք պիտի կրած լիներ հոդևարքի մեջ արնաքամ յեղած այդ մարդը, մինչև վոր կարողանար վերարկուն հանել և ծածկել մոտը պառկած վիրավորին։

Յերբ յերիտասարդին բարձրացնում եյին, վոր տանեն, նա խորին հուզմունքով ու յերախտագիտությամբ նայում եր «թշնամու» տանջված ու կարկամած յերեսին ու հայացքը հեռացնել չեր կարողանում նրա կիսախուփ, մարած աչքերից։

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խողխողել— *մորթել, սպանել (սրով).*
2. Համազարկ— *հրացաններից միասին կրակելը.*
3. Յեղինջ— *կծող, մղկտացնող բույս.*
4. Ճիգ թափել— *ուժ գործ դնել.*
5. Համազգեստ— *հատուկ ձևի զգեստ (տարազ).*
6. Կարկամել— *կուչ գալ, քաշվել, անշարժանալ։*

ՀԱՐՑԵՐ

1. *Իրո՞ք թշնամիներ եյին այս յերկու վիրավորները։*
2. *Ի՞նչն եր այդպիսիներին իրար թշնամի դարձրել։*

56. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

(1868—1936)

Մաքսիմ Գորկի — պրոլետարական գրող Ալեքսեյ Մաքսիմովիչ Պեշկովի գրական ծածկանունն է։

Իր կյանքի մասին Մ. Գորկին հետևյալն է պատմում. «Ութ տարեկան եյի, վոր ինձ կոշկի խանութի աշակերտ տվեցին, բայց յերկու ամսից հետո յես յեռացող կերակրով ձեռքերս այրեցի, և նորից հետ ուղարկեցին պապիս մոտ։ Առողջանալուց հետո ինձ մի գծագրի աշակերտ դարձրին, բայց մի տարի հետո, կյանքի չափազանց ծանրը պայմանների հետևանքով, յես փախա նրա մոտից և մի նավի խոհարարի մոտ աշակերտ մտա։

Հետագա կյանքս շատ զանազանակերպ է ու բարդ։ Խոհարարությունից նորից վերադարձա գծագրի մոտ, հետո սրբապատկերներ եյի վաճառում, այնուհետև յերկաթգծում աշխատեցի իբրև ծառա, խմորեղեն ու կարկանդակներ պատրաստող դարձա, պատահեց, վոր քաղաքների հետ ընկած անկյուններում ապրեցի»... Սակայն այս բոլոր պայմաններում, Գորկին շատ եր կարդում և մեծ հափշտակությամբ աշխատում եր իր գրվածքների

վրա։ Գորկին իր առաջին պատմվածքը տպեց այն ժամանակ, յերբ աշխատում եր Թբիլիսիի յերկաթուղու արհեստանոցում։

Գորկին բանվորների հետ եր, բողոքելով աշխատավորների ճնշման դեմ, մասնակցում եր հեղափոխական ընդհատակյա կազմակերպություններին։

Նա շատ է գրել։ Շատ բանի մասին է պատմել։ Ընկեր Լենինը շատ բարձր եր գնահատում մեծ գրողին։ Հաճախ նամակներ եր գրում նրան։

Ցարական կառավարությունը վախենում եր այն բանից, վոր Գորկին իր գրվածքներով բանվորներին բացատրում է իրենց ճնշման պատճառները և կոչ է անում նրանց՝ պայքարելու ճնշողների դեմ։

Ցարական կառավարությունը Գորկուն շատ անգամ է ձերբակալել։

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին որերից Գորկին ամբողջովին նվիրվեց իր սոցիալիստական հայրենիքին։ Մեծ ջանք դրեց Վլադիմիր Իլյիչը համոզելու նրան, վոր 1921 թ. Իտալիա մեկնի՝ իր քայքայված առողջությունը վերականգնելու։

Սակայն արտասահմանում գտնվելով Գորկին սերտ կերպով կապված եր Խորհրդային Միության հետ։ Նա անընդհատ ստանում եր թերթեր, ամսագրեր, հազարավոր նամակներ բանվորներից, կոլտնտեսականներից, ուսանողներից։

ԽՍՀՄ վերադառնալով՝ Գորկին նոր ուժերով սկսեց իր յեռուն աշխատանքը։ Նա հետաքրքրվում եր ամեն մի խնդրով։ Ղեկավարում եր խորհրդային գրականությունը, ողնում եր յերիտասարդ գրողներին։

Ալեքսեյ Մաքսիմովիչը հայրական սիրով սիրում եր մեր յերկրի մանուկներին, պիոներներին, վորոնք այցելում եյին նրան և հազարավոր նամակներ եյին գրում մեծ գրողին։ Նա ասում եր յերեխաներին. «... Դուք շարունակելու յեք ձեր հայրերի գործը մեր յերկրում և ամբողջ աշխարհում»։

Շատ ծանր եր Գորկու համար Լենինի մահը։

Ստալինի բարեկամությամբ ու մտերմությամբ նա նոր ուժ եր ստանում իր մեծ գործը շարունակելու։

Կուսակցության ու խորհրդային իշխանության թշնամիներն ամեն ջանք գործ եյին դնում բաժանելու Գորկուն կուսակցությունից ու ընկեր Ստալինից, թուլացնելու նրա հեղինակությունն աշխատավորության աչքերում։ Բայց այս փորձերն ել անհաջող անցան։ Այն ժամանակ դավաճանները ու ժողովրդի թշնամիները սպանեցին մեծ գրողին։ Գորկին մեռավ 1936 թ. հունիսի 18-ին։

Ծանր եր այս կորուստը մեր յերկրի, մեր կուսակցության, մեր աշխատավորության համար։ Կարմիր հրապարակում, սգո միտինգին ընկեր Մոլոտովն իր ճառում ասաց. «... Լենինից հետո Գորկու մահն — ամենածանր կորուստն է մեր յերկրի և մարդկության համար»։

Գորկին շատ գրվածքներ ունի, վորոնք թարգմանված են բազմաթիվ լեզուներով։ Հայերեն թարգմանված են նրա՝ «Մայրը», «Մանկություն», «Ծառայության մեջ» և այլ գրվածքներ, «Հատակում» պիեսը, հեքիաթներ, պատմվածքներ և այլն։

---

57. ԹՈՆԵԼԸ

Առավոտ է։ Լեռներից քնքշանքով հոսում է ծաղիկների բուրմունքը. հենց նոր է ծագել արևը, և ծառերի տերևների ու խոտերի ցողունների վրա դեռ շողշողում է ցողը։ Ճանապարհի դոբշ ժայռվենը ձգվում է հանգիստ լեռնանցքով. ճանապարհը ծածկված է խճով, բայց փափուկ է թվում թավշի պես...

Խճակույտի մոտ նստած եր ածուխի պես սև մի բանվոր։ Ձեռքերի բրոնզե դաստակները ծնկներին դրած, գլուխը վեր բարձրացրած, նայում եր չաղանակենու տակ կանգնած մի անցորդի և ասում.

— Ե՜հ, ամեն մի աշխատանք ծանր է, մինչև վոր կսիրես, իսկ հետո — վոգևորում է և թեթևանում։

Նա հանդարտ շարժեց գլուխը, նայեց արևին, ժպտաց, հանկարծ կենդանացավ, ձեռքերը թափահարեց, սև աչքերը փայլեցին։

— Մարդը գիտե աշխատել,— շարունակեց նա ակներև հպարտությամբ.— Ո՜, պարո՛ն, փոքրիկ մարդը, յերբ նա ուզում է աշխատել, անպարտելի ուժ է։ Ու հա-

վատացեք, վերջիվերջո այդ փոքրիկ մարդը կանի ամեն բան, ինչ վոր կամենա:

Հայրս սկզբում չեր հավատում այս բանին: «Կարել սարը և թափանցել յերկրից յերկիր,— ասում եր նա,— այդ՝ աստծուն ընդդեմ բան է, քանի վոր նա յերկիրը բաժանել է սարերի պարսպով»:

Ծերունի հայրս սխալվեց: Հետագայում նա համարյա թե նույնն եր ասում, ինչ վոր յես եմ ասում, հիմա, վորովհետև զգաց, վոր ինքն ավելի բարձր, ավելի ուժեղ է սարից: Բայց առաջներում յերբեք չեր պատահում, վոր նա տոներին ճաշի նստած, գինու չիշն առաջին, չներշընչեր ինձ և ուրիշներին.

«Աստծու վորդիք,— այդպես եր սիրում ասել, վորովհետև բարի և բարեպաշտ մարդ եր,— աստծո՛ւ վորդիք, չի՛ կարելի այդպես կռվել յերկրի հետ. նա վրիժառու կլինի իր վերքերի համար և կմնա անպարտելի: Ա՛յ, կտեսնեք. սարը մենք կծակենք մինչև սիրտն ու յերբ կըհարվածենք սրտին, նա կայրի՛ մեզ, կրա՛կ կթափի մեզ վրա, վորովհետև յերկրի սիրտը կրակից է, այդ ամենքը գիտեն: Յերկիրը մշակել այդ լավ է, այդ մեզ հնուց է հայտնի. իսկ մենք ի՞նչ ենք անում. մենք այլանդակում ենք նրա դեմքը: Տեսե՛ք—քանի խորն ենք մտնում լեռան մեջ, այնքան տաք է ոդը, այնքան դժվար ենք շնչում»:

Պատմողը կամացուկ ծիծաղեց, յերկու ձեռքերի մատներով վոլորելով բեղերը:

— Մենակ նա չեր այդպես մտածում. և ճիշտ վոր այդպես եր. քանի խորն եյինք մտնում, այնքան ոդը տաքանում եր ներքնուղու մեջ, այնքան շատ մարդիկ եյին հիվանդանում և ընկնում: Ու ավելի ուժեղ եյին հոսում աղբյուրների տաք ջրերը, քարերն ավելի եյին թափվում: Ու դիշերները բանվորական հանրակացարանում մեղնից շատերը զառանցում եյին, հառաչում և վեր թռչում անկողնից...

«Հիմա՞ել կասեք ճիշտ չեմ ասում,— ասում եր հայրս վախն աչքերին և հաղալով ավելի ու ավելի հաճախ, ավելի ու ավելի խուլ:— Հիմա՞ել կասեք՝ ճիշտ չեմ ասում: Ասում եյի՝ չե՞, յերկիրն անպարտելի յե»:

Ու վերջապես հայրս անկողին ընկավ, վոր ել վեր չկենա յերբեք: Նա պինդ կազմվածք ուներ. յերեք շաբաթից ավելի կռվում եր մահվան դեմ, կռվում եր համառորեն, առանց տրտնջալու, իր արժեքն իմացող մարդու պես:

«Իմ բանը վերջացած է, Պաուլո,— ասաց նա ինձ մի դիշեր:— Պահի՛ր քեզ և տուն դարձիր»:

Հետո ձեռքս առավ, քաշեց դեպի ինքը և ասաց.

«Գիտե՞ս ինչ կա, Պաուլո, վորդի՛ս, յես կարծում եմ, վոր այդ այդպես ել կլինի. մենք և նրանք, վոր գալիս են մյուս կողմից, կգտնենք իրար սարի մեջ, կհանդիպենք իրար. հավատո՞ւմ ես այս բանին»:

— Յես հավատո՛ւմ եմ, հայր:

«Լավ, վորդի՛ս: Այդպես ել պետք է. մի բան վոր անում ես, պետք է հավատաս, վոր լավ վերջանա: Յես քեզ խնդրում եմ, վորդիս, այդ բանը վոր պատահի, մարդիկ վոր հանդիպեն իրար, յեկ ինձ մոտ, դերեզմանիս վրա և ասա.— Հա՛յր, յեղա՛վ»:

Այդ լավ ասաց հայրս: Յես ել խոստացա: Նա մեռավ այս ասելուց հինգ որ հետո...

Մենք և նրանք, վոր գալիս եյին մյուս կողմից, հանդիպեցինք իրար լեռան մեջ հորս մահից յերեք ամիս հետո: Դամի խենթ որեր: Ո՛, յերբ մենք լսեցինք այնտեղ գետնի տակ, մթան մեջ, մյուսների աշխատանքի աղմուկը, գետնի տակ մեզ ընդառաջող մարդկանց աղմուկը,— յերեսկայո՞ւմ եք, թե ինչ պիտի զգայինք մենք: Ձե՞ վոր յերկիրը կարող եր իր ահագին ծանրության տակ ճխլել մեզ, փոքրիկ մարդկանցս, բոլորիս միանգամից:

Շատ որեր լսում եյինք այդ զարկերը, վորոնք խուլ թնդյուններ եյին հանում. որն որին նրանք վորոշակի եյին դառնում ու պարզ լսվում: Հաղթողների հրճվանքը տիրեց մեզ. մենք աշխատում եյինք առանց հոգնելու: Ու ամենքս այնքան սիրալիր ու բարի եյինք դարձել, ինչպես միայն յերեխաներն են լինում: Ա՛խ, վոր գիտենայիք՝ վորքան ուժեղ, վորքա՛ն անտանելի բան է լինում այն ցանկությունը, վորով ուզում ես հանդիպել մարդու՝ մթության մեջ, գետնի տակ, ուր խլուրդի պես փորփրում եյիր յերկար ամիսներ:

Պատմողը վոգևորվեց, մոտեցավ լսողին, կանգնեց ուղղակի նրա առջև և, նայելով խոսակցի աչքերին, շարունակեց հանդարտ ու ցնծագին:

— Իսկ յերբ, վերջապես, փլվեց քարի շերտը և բացված ծքի մեջ փայլեց կարմիր ճրագը և վորոտացին հաղթության աղաղակները, ուրախ կանչերը,— ո՛, այդ ամենալավ որն եր իմ կյանքի մեջ: Ցերբ միտս եմ բերում, զգում եմ, վոր զո՛ւր չեմ ապրել, վո՛չ: Ու յերբ գետնի տակից դուրս յեկանք արևի տակ, շատերս յերեսն ի վայր պառկեցինք գետնին, կրծքներս կպցրինք հողին ու համբուրում եյինք յերկիրը, լալիս: Ա՛յո, համբուրում եյինք պարտված լեռը, համբուրում եյինք յերկիրը, և այդ որը յերկիրն առանձնապես մոտ ու հասկանալի դարձավ ինձ, և յես սիրեցի նրան:

Իհարկե, գնացի հորս գերեզմանի մոտ, այո՛, գնացի: Իհարկե... թեև գիտեմ, վոր մեռելները չեն կարող լսել, բայց գնացի. պետք է հարգել նրանց ցանկությունը, ովքեր աշխատել են մեզ համար և մեզանից պակաս չեն տանջվել, այդպես չե՞:

Ա՛յո, այո՛, գնացի նրա գերեզմանի մոտ, վոտքովս ծեծեցի հողը և ասացի, ինչպես ուզում եր ինքը.

— Հա՛յր, յեղավ: Մարդիկ հաղթեցին: Ցեղա՛վ, հայր:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Թոնել— լեռների միջից փորվածք, անցք.
2. Բրոնզ— անագի և կապարի խառնուրդ.
3. Դաստակ— ձեռքի թաթը բազկի հետ միացնող մասը.
4. Ակներև— պարզ, հայտնի.
5. Խլուրդ— գետնամուկ:

---

58. ՄԱՑԻՍԻ ՄԵԿԻՆ

(Հատված «Մայրը» վեպից)

— Ընկերնե՛ր,— հնչեց Պավելի սուր և ամուր ձայնը: Զոր, տաք մշուշը այրեց նրա մոր աչքերը, և նա հանդարծ ամրացած՝ իր մարմնի մի շարժումով կանգնեց վորդու հետևը: Բոլորը շուռ յեկան դեպի Պավելը, շրջապատեցին նրան, ինչպես յերկաթի հատիկները՝ մագնիսի կտորին...

— Ընկերնե՛ր, մենք վորոշել ենք այսոր բացե-բաց հայտնել, թե ո՛վ ենք մենք: Մենք այսոր բարձրացնում ենք մեր դրոշը — իմացության, ազատության և ճշմարտության դրոշը:

Ցերկար ու կարմիր դրոշը յերևաց ոդում, թեքվեց, ճեղքեց ամբոխը, ծածկվեց նրա շարքերում, և մի բոպե անց, մարդկանց դեպի վեր բարձրացրած դեմքերից վերև կարմիր թռչունի պես տարածվեց բանվոր դասակարգի դրոշակի լայն քաթանը:

Պավելը բարձրացրեց ձեռքը,— ձողը ճոճեց, և տասնյակ ձեռքեր բռնեցին սպիտակ հարթ փայտը, և այդ ձեռքերի հետ եյին մոր ձեռքերը:

— Կեցցե՛ բանվոր ժողովուրդը,— կանչեց նա:

Հարյուրավոր ձայներ խուլ կանչով ձայնակցեցին նրան:

— Կեցցե՛ բանվոր դասակարգը, մեր կուսակցությունը, ընկերներ, մեր հոգևոր հայրենիքը:

Ամբոխը յեռում եր: Նրա միջով դեպի դրոշն եյին դիմում նրանք, ով հասկացել եր նրա նշանակությունը:

— Կեցցե՛ բոլոր յերկրների բանվոր ժողովուրդը,— գոռաց Պավելը: Ցեվ ուժով ու խնդությամբ հեղհեղեց աճելով, նրան պատասխանեց հազարաշուրթ արձագանքը հոգեցունց ձայնով...

Ամբոխը խտանում եր: Պավելը թափ տվեց դրոշը, նա ծածանվեց և շարժվեց առաջ, արևով վողողված, լայն ու կարմիր ժպիտով:

«Հրաժարվե՛նք, ընկերներ, հին կարգերից»...

Մայրը ջերմ ժպիտը շրթներին գնում եր և գլուխները մի՛ջով նայում եր վորդուն ու դրոշակին: Նրա շուրջը յերևում եյին ուրախ դեմքեր, գույնզգույն աչքեր,— բոլորի առջևից գնում եյին նրա վորդին և Անդրեյը:

Նա լսում եր նրանց ձայները,— Անդրեյի փափուկ ու խոնավ ձայնը ճուլվում եր վորդու թավ ու հաստ ձայնին:

«Դե յելի՛ր, բողոքիր, դո՛ւ, բանվոր ժողովուրդ»...

Փողոցի ծայրին, ծածկելով հրապարակի մուտքը, կանգնած եր միանման մարդկանց գորշ պատը: Ցուրաքանչյուրի ուսին սառնությունը փայլում եյին սվինների

չերտերը: Յետ այս վողջ պատից, սառն, անշարժ, սառնություն եր փչում բանվորների վրա...

Լռություն և... Դրոշը բարձրացավ, ճոճվեց և, մտածկոտ սուրալով մարդկանց գլուխներից վեր, սահունորեն շարժվեց դեպի զինվորների դորշ պատը...

Մայրը ձեռքերը դեպի կուրծքը տարավ, նայեց շուրջը և տեսավ, վոր փողոցը խիտ բռնած ամբոխն այժմ կանգնած է անվստահ, որորվում է ու նայում, թե ինչպես իրենից հեռանում են մարդիկ՝ դրոշակով: Նրանց հետևում եյին մի քանի տասնյակ մարդիկ և ամեն մի քայլը դեպի առաջ ստիպում եր մեկին կամ մյուսին՝ մի կողմ ցատկելու...

— «Կընկնի բռնությունը»— մարգարեանում եր յերդը:

— «Կկանգնի ժողովուրդը»—հաստատ և հուժկու արձագանգում եր ուժեղ ձայների խումբը:

Բայց յերդի ներդաշնակ հոսանքի մեջ թափանցեցին կամացուկ բառեր.

— Հրաման է տալիս...

— Ձեռքի վրա՛...— լսվեց սառը ձայնն առջևում:

Ողի մեջ բեկբեկուն ճոճվեցին սվինները, իջան ու ձգվեցին դեմ առ դեմ դրոշակները:

— Մա՛ըշ...

Մայրն, առանց թարթելու նայում եր:

Զինվորների դորշ ալիքը շարժվեց և, բռնելով փողոցի վողջ լայնքը, հավասար, սառն շարժվեց, առջևից տանելով արծաթի փայլով շողշողացող պողպատի ատամների նոսր սանրը:

— Ցրվե՛լ,— բարակ ձայնով կանչում եր փոքրիկ սպան, թափահարելով սպիտակ սուրը: Նա վոտքերը բարձրացնում եր, և չծալելով ծնկները, ներքաններով թակում եր գետինը: Աչքի եյին ընկնում նրա՝ փայլեցրած կոշիկները (սապոգները):

Ավելի մոտենում եյին իրար կարմիր դրոշակի մարդիկ և դորշ մարդկանց խիտ շղթան, պարզ յերևում եյին զինվորների դեմքերը...

Ցերդը հանդավ... Մարդիկ կանգ առան, սեղմ չրջապատելով Պավելին, բայց նա առաջ չեր անցնում: Միանգամից, հանկարծ լռություն տիրեց, կարծես անտեսանելիորեն իջավ վերևից և թափանցիկ ամպով դրկեց մարդկանց:

Դրոշակի տակ կանգնել եյին մոտ քսան հոգի, վոչ ավելի, բայց նրանք կանգնած եյին հաստատուն...

Պավելին մոտեցավ փոքրիկ սպան, ձեռքով բռնեց ձողը, ճչոցով կանչեց.

— Թո՛ղ:

— Ձեռքերդ հեռո՛ւ,— բարձրաձայն կանչեց Պավելը:

Կարմիր դրոշակը դողում եր ողում, թեքվելով աջ ու ձախ, և նորից կանգնեց ուղիղ,— սպան մի կողմ ցատկեց, դեմնին նստեց:

Մի քանի զինվորներ առաջ յեկան: Նրանցից մեկը թափահարեց հրացանի կոթը,— դրոշակը ցնցվեց, թեքվեց և անհայտացավ զինվորների դորշ խմբի մեջ...

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Իմացություն— խելք, մտածողություն.
2. Ներքան— վոտքի թաթի տակը.
3. Հոգեցունց— ցնցող, ուժեղ կերպով ազդող.
4. Թավ— թանձր, խիտ.
5. Մարգարեանալ— նախատեսել (այստեղ).
6. Բեկբեկուն— կտոր-կտոր յեղող:

---

59. ՆԻԿՈԼԱՅ ՊԵՏՐՈՎԻՉԸ

(Ցարական դպրոցի անցյալից)

1

Աշակերտներից վոչ վոք տեսչից այնպես չի վախենում, ինչպես Նիկոլայ Պետրովիչից: Ինչո՞ւ յե այդպես: Թերևս դրա պատճառն այն է, վոր նա բացի պատմությունից և աշխարհագրությունից, մեզ սովորեցնում է նաև զինավարժություն, և պահանջկոտ է ու խիստ. հետո, չի սիրում յերբ վորևե անուն կամ բառ աղավաղում են արտասանելիս: Բայց հետաքրքիր, շատ հետաքրքիր մարդ է Նիկոլայ Պետրովիչը: Նա հագնում է դեղին կոճակներով սև սյուրտուկ և նուլնպիսի ժիլետ, յերկար յե-



զունգները և պահում ճկույթների վրա. նրա դեմքն սպիտակ է, իսկ մազերը՝ չեկ, դիք կանգնած, վոր հիշեցնում է նոր ծլած գարի: Ինքը նույնպես չեկ է, ջահել ու բարձրահասակ: Նրա ժամացույցի շղթայից կախված է մի խոզ: Վորևե աշակերտի վրա բարկանալիս՝ նա մատով ցույց է տալիս այդ խոզը և ասում. «հոզ, հոզ... դու՝ հոզ»: Առհասարակ Նիկոլայ Պետրովիչը սիրում է անունները կպցնել աշակերտներին:

Նիկոլայ Պետրովիչի պատիժներն են՝ «կանգնի՛ր անկյունում», «այսոր կմնա՛ս առանց ճաշի», «գնա՛, ծնողիդ կանչի»: Ամենից սարսափելին այն է, յերբ ասում է «գնա՛ տեսչի մոտ և արածդ պատմիր»: Ցեվ աշակերտը գնում է ու մի առ մի պատմում իր արարքի կամ հանցագործության մանրամասնությունները:

Բայց Նիկոլայ Պետրովիչն ունի պատիժներ էլ, վոր տալիս է զինավարժության ժամանակ, միայն զինավարժության ժամանակ:

Գարնան արևափայլ որ է. մենք զինվորական յերկար շարք կազմած՝ կանգնած ենք դպրոցի առջև: Նիկոլայ Պետրովիչը գլուխը բաց, դեղին կոճակներով բաճկոնն արձակ, գնում-գալիս է մեր առջևից և կարգի հրավիրում ծուռ կանգնողներին, վորից հետո սկսում ենք քայլել ընդարձակ բակի յերկարությամբ:

Նիկոլայ Պետրովիչը մեր քայլերի հետ շարունակ կրկնում է՝ աջ ձեռքը տակտով շարժելով.

— Ձա՛խը: Ձա՛խը: Ձա՛խը...

Փողոցից բազմաթիվ յերեխաներ ցանկապատի ճաղերին ընկած կամ ճաղերի արանքով նայում են մեզ, մարդիկ նույնպես կանգ են առնում մեզ դիտելու, և մենք աշխատում ենք լավ քայլել, աչքի ընկնել թե Նիկոլայ Պետրովիչի առաջ, թե փողոցից դիտողների: Դրա համար շատ ճիգ են թափում մանավանդ Սամսոնն ու Ապոստոլը: Ցեվ ահա այն տեղում, ուր Նիկոլայ Պետրովիչը կանգնում է հանկարծ և բացականչում — «չուտ դա՛րձ»— շրջվող տղաները թափով դիպչում են անուշադիր Սամսոնին. Սամսոնն ընկնում է, իր հետ գցելով և մի ուրիշ աշակերտի: Այնքան անսպասելի ու զավեշտական է լինում այդ բոլորը, վոր յես չեմ կարողանում ծիծաղս զսպել ու քրքջում եմ:

— Ո՞վ է այդտեղ ծիծաղում,— առաջ է գալիս Նիկոլայ Պետրովիչը:— Արի՛ այստեղ:

Ցես, ծիծաղս հազիվ զսպելով, դուրս եմ գալիս շարքից և մոտենում նրան:

Նիկոլայ Պետրովիչը սաստիկ բարկացած է, բայց բարկությունը պահում, սանձահարում է. յես այդ զգում եմ նրա ձեռներից, վոր մազիլների պես սեղմում են ուսերս և յերեսս շրջում դեպի արևը:

— Նայի՛ր,— ցույց է տալիս նա արևը:

Ցես այդ պատիժն այսոր ստանում եմ առաջին անգամ:

Ցեվ վորքան տարորինակ պատիժ է այդ: Ցերեվա-

կայո՞ւմ եք, պետք է ուղիղ կանգնել ու բաց աչքերով նայել դարձան շլացուցիչ արևին:

Առաջին վայրկյանին բիբերս խոխոռում են և յես աչքերս փակում եմ:

Բայց Նիկոլայ Պետրովիչն խսկույն.

— Նայի՛ր, նայի՛ր...

Յես նորից աչքերս բաց եմ անում և անմիջապես ելի կկոցում.— այնպես կուրացուցիչ, այնպես շլացնող են ճառագայթները: Ու յես չեմ կարողանում դիմանալ այդ սուր-սուր նիզակներին, նրանց փայլին. աչքերս փակում եմ դարձյալ կամ նայում գետնին: Սակայն Նիկոլայ Պետրովիչը չի մոռանում ինձ, նա շուտ-շուտ հետ է դառնում ու կարգադրում.

— Ուղիղ, արևին:

Յես նայում եմ և անմիջապես ձեռս հովանի անում:

— Այդ չեղավ, չեղա՛վ,—կրկնում է Նիկոլայ Պետրովիչը:

Յես այլևս չեմ համբերում. ձեռս թափ եմ տալիս ու գնում դեպի դպրոց:

— Ո՞ւր, ո՞ւր,— կանչում է Նիկոլայ Պետրովիչը հետևիցս և, չգիտեմ, հասկանո՞ւմ է արդյոք, վոր տեսչի մոտ եմ գնում, անմիջապես կարգադրում է.— Շա՛րք կանգնիր, շա՛րք... Շո՛ւտ:

Յես, իհարկե, շարք եմ կանգնում և մասնակցում վարժությանը: Սա ավելի լավ է, քան գնալ գանգատվել տեսչին, վոր, ով գիտե, ինչպես կընդուներ իմ գանգատը: Բայց այն ելի հարց է — կհամարձակվելի՞ արդյոք գանգատվել: Ո՞վ է ուսուցչից գանգատվում տեսչին: Ի՞նչ համարձակություն եր այդ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Յերանություն— յերջանիկ դրություն.
2. Սյուրտուկ } տղամարդի զգեստներ.
3. Ժիլետ }
4. Զավեշտական— ծիծաղելի.
5. Մագիլ— ճանկ:



60. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԺՈՒՅԳԸ

1

Նախագահը բազմության հետ մտավ գրասենյակի բակը:

Կոլտնտեսության գրասենյակը կղմինդրե տանիքով մի շինություն եր, վոր յերևում եր գյուղի բոլոր անկյուններից:

Շենքը պատկանելիս է յեղել գյուղի հարուստ քահանային՝ Տեր Մարտիրոսին: Ընդարձակ պարսպապատ բակում կառուցված է նաև ախոռը, վորտեղ հիմա տեղավորված եյին կոլտնտեսության 25 ձիերը. 24-ը լծի, մեկը հեծնելու: Բակի մի անկյունում պարսպի տակ դարսված գերանների վրա նստոտած՝ զրույց եյին անում մի խումբ մարդիկ: Դրանց թվում եյին անասնապահական ֆերմայի վարիչ Մացակ Ավագյանը և ինեերորդ բրիգադի բրիգադավար Մաթոս Գրիգորյանը:

— Մոսի ամի,— դիմեց նախագահը ծերունի ախոռապանին,— Քուռակը թամբի՛:

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց Ավագյանը:

— Հանդ պիտի գնամ,— պատասխանեց Լևոնը:

Ախոռապանը դեռ կանգնած եր նույն տեղը:

— Ասացի քուռակը թամբի, Մոսի ամի,— կրկնեց Լևոնն իր կարգադրությունը:

— Քուռակը դժվար է հեծնվում,— պատասխանեց Մոսի ամին ու տեղից չշարժվեց:

— Ինչո՞ւ:

— Վտանգավոր ձի յե,— բացատրեց ծերունի ախոռապանն ու դժգոհությամբ յերերաց տեղից: Գերանների վրա նստոտածները վեր կացան՝ թամաշա անելու, թե կոլտնտեսության նոր նախագահն ինչպես պիտի նստի վտանգավոր ձին:

Ախոռապանը դուրս յեկավ ախոռից՝ հետևից դժվարությամբ քաշ տալով թամբած «Քուռակ»-ը:

Դա վոչ թե քուռակ եր, այլ մի վիթխարի կապույտ նժույգ՝ լավ խնամված, գիրացած, կատաղի:

Քուռակը պարզապես նրա հատուկ անունն եր: Ինչպես մի ածգահա տղամարդու անունը լինի—Թոռնիկ:

Սկզբում դժկամությամբ դուրս գալով ախոռից, իսկ հետո միանգամից դուրս ցատկելով՝ Քուռակը խուլ մի խրխինջ արձակեց և սկսեց առջևի վոտքով կատաղորեն գոփել գետինը: Թամաշավորները վախեցած հետ փախան: Իրոք, վոչ-վոք չեր համարձակվում մոտենալու կատաղի Քուռակին: Կայծեր եյին ցայտում նրա աչքերից: Ցուրաքանչյուր շարժումն սպառնալիք եր: Ուներ յերկար, բարակ վոտներ ու վայելուչ գավակ: Փարթամ պարանոցը գլխի մոտ բարակում եր և Քուռակին տալիս առյուծի կերպարանք: Ինչպես այդ նժույգը, նույնպես և ախոռապանը, իրրև ժառանգություն տերտերից եյին անցել կոլտնտեսությանը:

Կոլտնտեսականների բազմությունը լարված սպասում եր, թե կոլտնտեսության նոր նախագահը պիտի կարողանա՞ հեծնել Քուռակին, թե վոչ: Շատերը համոզված եյին, վոր մոտ գնալ անգամ չի համարձակվի:

2

Լևոնը դուրս յեկավ դրասենյակից և առանց ակընթարթ իսկ կորցնելու թռավ ձիու թամբը:

Հաջորդ վայրկյանին ձին արդեն զգաց, վոր հեծվորն անծանոթ է և կատաղի փռչտոցներով առաջ սլացավ: Բոլորն իսկույն նկատեցին, վոր ձին նախագահին թռցնում է նրա կամքին հակառակ ուղղությամբ: Լևոնը նույնպես զգաց այդ: Նա ամբողջ ուժով սանձը ձգեց:

Ձին կատաղի պտույտ գործեց և սլացավ դեպի մոտակա հեղեղատը:

— Ախր ասացի՝ վտանգավո՛ր է,— դժգոհ ծոր տվեց ծերունի ախոռապանն ու վազեց ձիու հետևից:

Լևոնը տեսավ, վոր դիմացն անդնդախոր հեղեղատն է և վոր այդ վոչ մի նշանակություն չունի ձիու համար. ուղղակի սլանում է դեպի հեղեղատը: Նա գերմարդկային ուժով սանձը ձգեց դեպի կողքը:

Ձին կայծակի արագությամբ հետ դարձավ և սկսեց թռչել դեպի կոլտնտեսության դրասենյակը:

Դրասենյակի առաջ ընդարձակ հրապարակի վրա կոլտնտեսության բասման եր դցված: Ձին մինչև ծնկները թաղվեց բասմայի մեջ, սակայն չդանդաղեցրեց իր ընթացքը: Գոմաղբի ծանր կույտեր թռցնելով չորս կողմը՝ նա առաջ սլացավ: Հեծվորը նորից ձգեց սանձը և ձին սկսեց պտտվել ինքն իր չուրջը՝ շրջանաձև ակոսներ ճեղքելով թանձր բասմայի մեջ:

— Քեզ վե՛ր դցի, վե՛ր դցի, ընկեր նախագահ,— ձայն տվեց Մացակ Ավագյանը,— զսպել չես կարող, դա վտանգավոր ձի յե:

— Քեզ վե՛ր դցի, քեզ վե՛ր դցի...— կրկնեցին մի քանի ձայներ:

Լևոնի մտքով մի բոպե անցավ ներքև թռչել: Սակայն պետք եր չարունակել պայքարն ըմբոստ ձիու դեմ: Նրան հաջողվեց ձիու ընթացքը մի անգամ ել հետ կասեցնել հեղեղատի ուղղությունից, զսպեց նրան տանիքը բարձրանալու մոլեգին ձգտումից և հանեց դեպի կայարան տանող խճուղին:

— Ախ դո՛ւ,— հեաց նա՝ ձիուց վոչ պակաս մոլեգնած և կրկնակի ուժով սանձը ձգած՝ ուժգին ասպանդակեց:

Ձին խճուղով առաջ սլացավ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Կդմինդր— կավից՝ աղյուսի չերտեր՝ կտուրները ծածկելու համար.
2. Գավակ— մեջքի հետևի մասը (ձիու).
3. Ծոր տալ— ձայնը յերկարեցնելով կանչել.
4. Կասեցնել— կանգնեցնել, արգելել:

1. Ինչպե՞ս կարողացավ Լևոնը զսպել նժույգին.
2. Ինչպիսի՞ ձի էր Քուռակը:

Նկարագրեցեք Քուռակին՝ ըստ գրվածքի:

---

61. ՃԱՄԲԱՐ ԳՆԱԼԸ

1

Այս ի՞նչ աղմուկ է, ի՞նչ իրարանցում:

Այս ո՞ւր են վազում յերեխաները՝ ճամպրուկներ առած. ծնողները հևալով հետևում են նրանց ու զգուշացնում, վոր կամաց գնան: Բայց նրանք, մեծերի խոսքերին անուշադիր, սլանում են առաջ՝ մեկը ճամպրուկը գլխին դրած, յերկրորդն ուսին, յերրորդը... ու բոլոր փողոցներով վազում են դեպի քաղաքի կենտրոնը. վազում են, ճչում անդուսպ ու կանչում իրար.

— Յեկե՛ք... շո՛ւտ... ուշացա՛նք...

— Չե՛ք ուշանա, չե՛ք ուշանա... Մի՛ վազեք...

Այս ի՞նչ իրարանցում է:

Այդ պիոներներն են... նրանք այսոր ճամբար են գընում: Այդ նրանք են աղմկում չվելու պատրաստվող թըռչունների նման:

Իսկ հավաքատեղում հապա... նույն աղմուկն ու իրարանցումն է և՛ հավաքատեղում՝ մեծ հրապարակի մոտ ուր խմբվել են նրանք իրենց իրերով: Վոմանք արկղների վրա նստած, վոմանք վերարկուները թևերին, կանգնած, սպասում են ավտոմոբիլների, ու կատակում են, քրքջում: Այնքան պայծառ է որը՝ ճանապարհ գնալու համար, և այնքան բարի յեն ծնողները, տան մեծերը, վոր ամեն ինչ թողած, յեկել են նրանց ճանապարհ դնելու:

— Յեկա՛վ, յեկա՛վ... ավտոն յեկա՛վ...

Իսկապես իրար հետևից որորվելով յեկան յերեք մեծ ավտոմոբիլ՝ կանաչ ճյուղերով զարդարված:

Մի յերկու րոպեյում բոլորը տեղավորվեցին:

Ճանապարհը յերկար եր, հետաքրքիր: Դեռ քաղաքի մեջ, ավտոմոբիլները շարժվելուն պես, պիոներները սկսեցին յերգել, իսկ յերբ դաշտ դուրս յեկան, ձայները ավելի բարձրացրին: Ճանապարհի մոտ պլպլում եյին առուներ, և ուռենիները որորվում եյին նրանց ափերին:

Յերբ ավտոմոբիլն անցնում եր մի նոր գյուղի միջով՝ բոլորը միասին «ուռա՛» եյին կանչում, գյուղի յերեխաները պատասխանում եյին «ուռայով»: Խոտ բերող սայլերը կանգ եյին առնում ճանապարհ տալու, յեզները քիչ եր մնում խրտնեն-փախչեն. յերեխաները ձեռները մեկնում եյին խոտ վերցնելու. ջոկատավարը չեր թողնում: Մի տեղ կանգ առան, և շոֆերների ոգնականները դույլերով ջուր բերին լցրին ավտոմոբիլի բերանը: Պիոներներից մի քանիսն իջան, վազեցին յերեսները լվանալու, և ավտոմոբիլները նորից սլացան առաջ: Ճանապարհը քանի գնում, դառիվեր եր դառնում և կանաչը չատանում եր: Տղաներն ասում եյին, թե ճանապարհի մեծ մասն անցել են և շուտով տեղ կհասնեն:

Յեվ, իսկապես, մի փոքր անց, մեծ ճանապարհը թողին ու ծռվեցին մի ուրիշ խճուղի, վոր տանում եր դեպի սարերն ու անտառները:

— Մոտենում ենք,— բացականչեցին տղաները և նորից սկսեցին յերգել:

Զանցավ իսկապես մի կես ժամ՝ ավտոմոբիլները փոշի փչելով, իրար հետևից մտան սպիտակ տներով մի փոքրիկ քաղաք և, մի քանի փողոց անցնելով, կանգ առան քաղաքի ծայրին, անտառի մոտ:

— Հասա՛նք... հասա՛նք...

Ու պիոներներն իջան ուրախացած:

Ճամպրուկներն ու պայուսակները բարձեցին այդտեղ կանգնած սայլերին և տղաներն ու աղջիկներն իրենք առաջ ընկան ու մտան անտառ:

Զառիվեր արահետը, վոր սկզբում գնում եր մենավոր կաղնիների մոտով ու բարձր կանաչների միջով, վորոնց կարծես դեռ մարդու վոտ չեր դիպել, շուտով մտավ անտառախիտ ծառերի արանքը, ուր որը կարծես մթնեց. թանձր սաղարթը չեր թողնում արևի ճառագայթներն իջ-

նեն ցած։ Ցերեխաներն լիծաշարուկ գնում էին արահետով։

3

Հանկարծ առաջից գնացող տղաները «ուռա՛» կանչեցին ու վազեցին։ Նրանց առջև բացվեց ճերմակ վրաններով ծածկված մի ընդարձակ բացատ. վրանները մի քանի կարգ շարված էին կանոնավոր, և նրանց արանքում տարածվում էր մեծ, կանաչ հրապարակ. հրապարակի մեջտեղը բարձրանում էր մի յերկար, շատ յերկար ձող՝ ծայրին մի կարմիր դրոշ, ահագին մի դրոշ, վոր շարունակ թռթռում էր քամուց։

Պիոներները մինչ այդ շարունակում էին յերդելով առաջ գնալ. շուտով, նրանց յերգը լսելով, վրաններից տղաներ ու աղջիկներ վազեցին— յեկան դիմավորելու. քիչ հետո յերևաց տրուսիկ և սպիտակ ու կապույտ շերտավոր մայկա հագած մի բարձրահասակ յերիտասարդ՝ գլխին ծղոտե մի ահագին, հովանոցի չափ գլխարկ, վորի հետևի յեզրը ծածկում էր ուսերը, իսկ առաջինը ծալել էր դեպի վեր. գլխարկի տակից յերևում էր ժպտուն աչքերով նրա կլոր դեմքը։ Նրա անունը Տիգրան էր։

— Բարև՛, յերեխաներ,— ասաց նա ուրախ ու մաքրիմ ձայնով։— Դե՛, յերեխաներ, գնացեք լվացվելու, հետո կճաշեք,—ասաց յերիտասարդը,—մենք ձեզ վազուց էինք սպասում. ուշացաք, բայց ձեր բաժինը պահել ենք։

— Բա մեր իրե՞ը,— հարցրեց մեկը։

— Իրերը վոչինչ. կբերեն կդնեն վրանները, ճաշից հետո կտեղավորեք։

Ճաշարանը տախտակով չինած ընդարձակ ծածկ էր՝ չորս կողմը բաց, յերկար սեղաններով ու նստարաններով։ Ճաշը մսով կերակուր էր. մատուցում էին յերկու գյուղացի կին, վորոնց ոգնում էին հերթապահ պիոներները։

Բոլորը հոգնած էին և քաղցած. ճաշեցին հանգիստ, առանց աղմուկի։

Ցերը ճաշը վերջացրին՝ ծղոտե գլխարկով յերիտասարդը նորից յերևաց ճաշարանի ծայրում։

— Ցերեխաներ,— ասաց նա առաջ գալով,— յեթե հոգնած եք, գնացեք ձեր իրերը տեղավորեցեք ու քնեցեք, իսկ յեթե կուզեք խարույկների մոտ գալ՝ կարող եք։

— Խարույկների մո՛տ, խարույկների մո՛տ,— կանչեցին բոլորն ու վազեցին ճաշարանից դեպի վրանները՝ իրերը տեղավորելու և իրենց համար տեղեր պատրաստելու։

4

Մինչև նրանք այդ աշխատանքը կվերջացնեին, սարերը ծածկվեցին մեգով, անտառը խոժոռեց, մութն ընկավ և խարույկներ վառեցին վրանների յերկու կողմը։ Բոցերը տեսնելով յերեխաներն «ուռա» կանչեցին ու վազեցին։ Մի քանի րոպեյից՝ խարույկների շուրջը բոլորել էին արդեն հին ու նոր պիոներները,— տղաների ու աղջիկների մի ահագին բազմություն և հրճվանքով նայում էին փայտերին, վորոնց բոցերը բարձրանում էին մի քանի մետր և կայծերի անձրև մաղում իրենց շուրջն ու պիոներների վրա։

Բոցերի հետ յերկարում ու կարճանում էին պիոներների ստվերները, և կրակի լույսի շրջագծից այն կողմն ավելի մութն էր յերևում։ Ցերեխաները մի քանի շարք նստոտել էին կրակի շուրջը շինված թմբերի վրա, վոտները կախել էին փոսերի մեջ. ու նրանց առաջ բռնկված վառվում էր խարույկը. և տաք էր, և հաճելի։ Ընկեր Տիգրանը, այժմ մայկայի վրա մի սև պիջակ հագած, բայց ցերեկվա ծղոտե մեծ գլխարկով, անցնում-դառնում էր խարույկի շուրջն ու խոսում, թե նորեկ պիոներները ճամբարում իրենց ինչպես պիտի պահեն։

Ընկեր Տիգրանի խոսքը դեռ չէր վերջացել, խարույկը դեռ վառվում էր բռնկված, յերբ հանկարծ հեռվից, մթան միջից լսվեց չեփորի ձայն. դա լագերի յերեկոյան չեփորն էր, վոր ազդարարում էր քնելու ժամը։

Բայց նախքան քնելը, բոլոր պիոներները խարույկների մոտից վազեցին աղմուկով ու շարվեցին իրենց վրանների առաջ։ Նորեկ պիոներները նույնպես շարք կանգնեցին իրենց ջոկատավարների գլխավորությամբ։

Տիրեց մի խոր լռություն. բոլորն սպասում էին ինչվոր բանի։ Ցեվ հանկարծ այդ լռության մեջ լսվեց մի ձայն։

— Առաջին ջոկատի ստուգումը վերջացած է: Նույն քանը նույն բառերով հայտարարեցին մյուս ջոկատավարները. ապա նորից լռություն տիրեց և այդ լռության ու սպասումի մեջ հնչեց մի խրոխտ ձայն.

— Պատվի՛... ա՛ռ...

Թե պիոներները, թե՛ ջոկատավարները՝ բոլորը միասին ու մի անդամից ձեռները բարձրացրին թրերի պես:

— Բանվոր դասակարգի պայքարին պատրաստ եք, պիոներնե՛ր...— Լենինի-Ստալինի գործի համար պատրաստ եք պայքարելու:

Բոլոր վրաններից ու շարքերից լսվեց վորոտաձին ու միահամուռ.

— Մի՛շտ պատրա՛ստ ե՛նք...

Մի քանի րոպեյից հետո, ճամբարում արդեն խորին անդորրը եր տիրում. խարույկներն եյին միայն վառվում թեթև ճարճատյունով և շրջիկ պահակների լապտերներն եյին առկայծում այս ու այն կողմ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Սաղարթ— տերև.
2. Իծաշարուկ— մի շարքով— իրար հետևից.
3. Ճարճատյուն— փայտի կոտրվելու կամ այրվելու ձայնը.
4. Արահետ— նեղ ճանապարհ (վոտավորի համար).
5. Ճամպրուկ— ճանապարհորդական արկղ, պայուսակ (չեմոդան).
6. Բացատ— անտառի միջի բաց տարածություն.
7. Մատուցել— բերել, բաժանել, տալ.
8. Խոժոռել— մռայլվել.
9. Առկայծել— փայլփլել:

---

62. ԱՄԱՌԸ

Ճաշվա շոգն անց եր կացել: Սար ու ձոր գլիններն ել յեղ բարձրացնում եյին, վոր փոքր շունչ առնեն: Արեգակը Մասսա քամակիցը, հանդարտ աչքը բաց՝ եր արել, մունջ-մունջ Ցերևանու բերդին մտիկ եր տալիս ու ենթադրում եր, վոր [illegible] մաս-կամաց մեռ [illegible]: Թանձր խամաը, սև դումանը յեկել բոլոր դաշտերի, ձորերի յերեսը բռնել, ողը ծանրացրել, կալել եր:

Ղուշը տեղիցը չեր ուզում ժաժ դա, հալը ընկցը գլուխը հանի: Զուր ջրողը առվի վրա յեր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը՝ հանդում, բաղմանչին իր ծառի տակին՝ շվաքում քուն մտել, դինջացել:

Մարդ, ինս, ջինս՝ գեղերում ել չեյին յերևում:

Հոտաղներն իրանց գութանի տավարը բաց եյին թողել, լուծը յեղ արել, ու գութանը մեկ կողմը, յեզները մյուս՝ ջրերի ղրաղին վեր եյին թափել, քաղցը քուն մտել: Նախիրը մեկ տեղում, վոչխարի սուրուն մյուս՝ շվաք տեղը նստել, փինչացնում եյին, արոճ անում: Զորանն ել գլուխը մեկ քարի վրա դրած՝ նղղել, աչքը կպցրել եր, վոր շոգը քաշվածին պես վեր կենա, սուրուն իրիկնահովին մի լավ, խոտավետ տեղ տանի արածացնի: Շների մեկը ես ցցի վրա, յա չորանի վոտի տակին՝ գլուխը դրել, նոթերը կիտել, մարաղ եր մտել, վոր թե գող, գել կամ գազան սիրտանի, մոտենա, բիրդանբիր վրա թռչի, թիքա-թիքա անի, իր տիրոջ վոչխարները պահի: Մեկ կանաչ խոտ, մեկ դալար թուփ կամ մեկ ծաղիկ, մեկ տեղ ելա չեր յերևում, վոր մարդ հոտն առնի, կամ յերեսին մտիկ տա, սիրտը բացվի ու իր ճամբի յերկարությունը մոռանա, կամ շոգի ձեռիցն երված, խորոված ջանին հովություն տա, ենպես եր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել, պապանձվել: Միմիայն խոտերի չոփերն ու քոլերի սուր-սուր ծերերն եյին ետեղ-ենտեղ՝ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորված կանգնել մնացել:

Ետպես մեռել, լռվել եր բնությունը ու մի չփլթու ելա մեկ տեղից չեր լսվում: Միմիայն հեռու տեղից մեկ բարակ քամի՝ բազի-բազի վախտ փչում, ծառերի տերևները սլլացնում, ժաժ եր դցում ու գոլ-գոլ մարդի յերեսին, բերնին՝ ձեռը նազուկ քսում, շուտով անց եր կենում ու փչերի, խոտերի, քարափների, ձորերի մեջ մտնում:

Ինչպես ծխի մեջ խրված՝ հեռու տեղից՝ դաշտի գեղերը, փոսերը մթնած, լռված՝ ինչպես սև ամպի կտորներ, կամ երված՝ խանձված տեղեր՝ ետեղից, ենտեղից սևին եյին տալիս ու խառնիխուռն յերևում:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ղրաղ— ափ, կողմ.
2. Սուրու— հոտ (վոչխարի).
3. Մարաղ մտնել— թաղնվել՝ սպասողական վիճակում.
4. Բիրդանբիր— հանկարծակի.
5. Շիլթու— շշուկ:

---

63. ՑՐՏԱՇՈՒՆՉ ՍԱՌՈՒՅՑ

Ցերբ հայրիկը ճանապարհ եր ընկնում, Իգայի գլուխը հազիվ եր հասնում քարտեզի վրա նկարված Սառույցյալ ովկիանոսին, իսկ Լյուդայի՝ ձեռքն էլ չեր հասնի... Այդ քարտեզը ցած եր կախված, հենց դռան մոտ: Գնալուց առաջ հայրիկը կանգնեց քարտեզի առաջ: Հայրիկը Լյուդային դրկեց: Նա Լյուդային տարավ քարտեզի մոտ և մատով ցույց տվեց ծովերն ու ովկիանոսները:

— Ահա այս ճանապարհով պետք է լողանք, — ասաց հայրիկը և համբուրեց Լյուդային:

Հետո նա ամուր գրկեց Իգային և ճամպրուկը վերցրեց: Լյուդան չուզեց հայրիկին թողնել: Քիթը կնճռոտեց և շրթունքներն ուռեցրեց:

— Նայեցե՛ք, յերեխանե՛ր, իմ բացակայության ժամանակ մայրիկին չվշտացնեք: Ցես այդ բոլորն իսկույն ռադիոյով կիմանամ: Իսկ յեթե լավ լինեք, յես ձեզ համար ընծաներ կբերեմ:

Լյուդան ուզեց լաց լինել:

— Հայրի՛կ,— ասաց նա,— չե՞ վոր այնտեղ սառույցներ են ու սառույցներ... Հայրի՛կ, գիտե՞ս, ինձ համար Հյուսիսային բևեռից մի փոքրիկ կտոր բեր, այ, սառույցի այսքան կտոր:

— Մենք բևեռում չենք լինի... Մենք նրա մոտից կանցնենք: Բայց բևեռային սառույց անպատճառ կբերեմ:

— Վորի վրա սպիտակ արջի վոտքի հետքը լինի,— ավելացրեց Իգան:

— Արջի հետք լինի,— ասաց Լյուդան:

Հայրիկը գնաց: Նա ճանապարհորդ եր. շրջել եր Հյուսիսային բոլոր ծովերն ու յերկրները, լողացել եր սառցահատներով, թռել եր սավառնակով, շատ ձմեռներ ապրել եր սառած կղզիների վրա, բայց այնտեղ յերբեք չեր ճանձրացել: Նա ծանոթ եր վողջ աշխարհին, վորովհետև հռչակավոր ռադիո-հեռադրիչ եր և ռադիոյով բոլոր յերկրների հետ խոսում եր:

Այս անգամ հայրիկը արշավանքի գնաց «Զելյուսկին» մեծ շոգենավով: Շոգենավը ղեկավարում եր հյուսիսային լավագույն նավապետ Վարոնինը: Իսկ ամբողջ արշավախմբի ղեկավարն եր հյուսիսային ծովային մեծ ճանապարհի պետ՝ պրոֆեսոր Շմիդտը:

Ցեվ ահա «Զելյուսկին» շոգենավը լողում եր հեռո՛ւ, հեռո՛ւ, ծովից ծով: Ցեվ լրագրերում, ամեն որ տպում ելին Իգայի և Լյուդայի հայրիկի հեռագրերը: Ամեն որ առավոտյան, դպրոց գնալիս, Իգան հարցնում եր մայրիկին. «Վորտե՞ղ է հայրիկը»:— «Սպիտակ ծովում», — պատասխանում եր մայրիկը և լրագիրը բարձրաձայն կարդում: Ցերբեմն էլ հայրիկը ռադիոյով Իգային և Լյուդային բարև ելր ուղարկում:

Մի անգամ առավոտյան մայրիկը լրագիրը վերցրեց. հանկարծ գեմքը լրջացավ ու գունատվեց:

— Հայրիկն ո՞ւր է,— հարցրեց Իգան: Ցեվ Իգան լսեց, թե ինչպես մի բան տը՛ղ ընկավ լրագրի վրա: Դա մայրիկի արտասուքի կաթիլն եր...

— Շոգենավը խորտակվել է,— ասաց մայրիկը,— սառույցները սեղմել են շոգենավը, «Զելյուսկինը» խորտակվել է:

— Իսկ հայրի՞կը,— հարցրեց Լյուդան:

— Մարդիկ բոլորն էլ բարձրացել են սառցի վրա: Միայն մեկն է խեղդվել:

— Բա ի՞նչ կանեն նրանք այնտեղ:

Իգան էլ նայեց քարտեզին, մայրիկն էլ, Լյուդան էլ: Բոլորն էլ նայեցին քարտեզին: Այնտեղ կապույտ գույնով նկարված եր բևեռային սառը ծովը:

Բայց ռադիո-հեռադրիչը, հայրիկը, չեր վհատում: Նա նստած եր ճամբարային փոքրիկ վրանում. կարծես թե վոչինչ չեր պատահել: Նա մատներով հուպ եր տալիս իր գոր-

ծիքի բանալին և ամբողջ աշխարհում տարածվում էր նրա տի-տի-տին:

Ցեվ ամենքը ԽՍՀՄ-ում՝ և փոքրիկ Լյուդան, և ինքը՝ ընկեր Ստալինը լսում էին, կարդում, ու սպասում, թե ինչ կհաղորդի ռադիո-հեռագրիչը սառցադաշտից:

«Ցերկրորդ որն է, վոր չելյուսկինցիներն ապրում են սառցի վրա: Գիշերը յերկինքը մաքրվեց ամպերից և մենք աստղերի միջոցով վորոշեցինք մեր տեղը քարտեզի վրա: Ցերը «Չելյուսկինն» սկսեց ընկղմվել, մենք կտրատեցինք պարանները: Պարաններով կապված էին տակառները, տախտակները, բեռները: Այդ բոլորը ջրի յերեսը դուրս յեկան: Մենք ջրից հանեցինք գերանները և հիսուն մարդու համար տուն ենք կառուցում, վորը յերկու փոքրիկ վառարան է ունենալու: Խոհանոց ենք կառուցում: Մինչև ափը հեռու չի: Զորս կողմը սառցի սարեր են: Բայց բոլորս էլ առողջ ենք ու քաջ»...

Ցեվ շուտով ինքը հայրիկը ռադիոյով լսեց և պրոֆեսոր Շմիդտին ու իր ընկերներին հաղորդեց, վոր վողջ Խորհրդային յերկիրը յելել է նրանց ոգնություն ցույց տալու: Ոգնության եյին գնում շոգենավեր և սառցահատեր: Թռչում էին սավառնակներ ու դիրիժաբլներ: Սլանում էին չնասահնակներ և աերոսահնակներ:

Այժմ ամեն առավոտ Իդան եր վերցնում լրագիրը: Առաջ նա վազում եր պատուհանի մոտ և նայում ջերմաչափին:

— Տասնվեց աստիճան սառնամանիք է, — գոչում եր նա:— Ցես այսոր սահելու կգնամ: Լավ սառույց է:

Իսկ այժմ նա նայում է լրագրին և տխուր ասում.

— Քառասո՛ւն աստիճան սառնամանիք է... Սառույցն ելի ճաքել է...

Մայրիկը նիհարեց, նա գիշերը չեր քնում, շարունակ անհանգստանում եր: Նա նայում եր քարտեզին և ա՛խ քաշում: Իդան էլ եր տխուր: Մինչև անգամ Լյուդան էլ սկսեց կամակորություն անել: Միայն հայրիկը, ուրախ ռադիոհեռագրիչը չեր վհատվում սառցի վրա: Նա ռադիոյով ուղարկում եր հանգստացնող ու զվարճալի հեռագրեր:

«Ինչպե՞ս է Իդայի դպրոցական հառաջադիմությունը: Լյուդան ամեն որ մաքրո՞ւմ է արդյոք առամները: Ցես այստեղ ամեն որ մաքրում եմ: Ցերեկ մի սպիտակ արջ սպանեցինք: Նրանից բարև ձեզ»:

Մայրիկը պատասխանեց.

«Արջի միսը ձեզ անուշ լինի: Իդան պարզաբանված հարվածային է: Սովորում է գերազանց»:

Հետո վրա հասավ առաջին ուրախալի որը: Ցերիտասարդ ոդաչու Լյապիդևսկին սավառնակով թռավ, յեկավ Շմիդտի սառցե ճամբարը: Չելյուսկինցիները վաղուց որ ու գիշեր աշխատում եյին: Նրանք սառցի վրա տեղ եյին մաքրում և հրապարակ պատրաստում: Նրանք անհամբերությամբ սավառնակի եյին սպասում:

Ոդաչուն իր սավառնակի մեջ նստեցրեց լաղերում դոնվող կանանց ու յերկու յերեխաների՝ Աչոչկային և փոքրիկ Կարինային: Վերջինս ծնվել եր նավում և դեռ դետնի վրա չեր յեղել: Ասենք գետինը նրան շատ էլ հարկավոր չեր: Միևնույն է, նա դեռ ման գալ չգիտեր: Սակայն խիզախ ոդաչու Լյապիդևսկին ուրիշների հետ նրան էլ ցամաք բերեց, վոր Կարինոչկան խորհրդային ամուր յերկրի վրա ման գալ սովորի:

Այդ որը յերեխաները բակում հորինեցին ու յերգեցին այս վոտանավորը:

Ե՛յ, դո՛ւ, սառույց ցրտաչունչ,
Ովկիանոսը մի գնա,
Ովկիանոսը մի գնա.
Սավառնակը այնտեղ էլ
Կարող է թռչել, հասնել:

Ցեվ հենց այդ որը բակում սկսվեց մի մեծ, նշանավոր խաղ — չելյուսկինցիներին ազատելը: Այդ խաղը հորինեցին Իդան և նրա ընկեր Պետիկը: Նա ոդաչուի տղա յեր: Նա բակի աչքի ընկնող տղան եր:

Սառցի ու ձյունի մի մեծ կույտի վրա, բակի մեջ, տաշեղներից ու փայտիկներից նրանք կառուցեցին Շմիդտի ճամբարը:

Սակայն բարկացկոտ գոնապահ Խարիտոնը յեկավ, ցախավելը թափահարեց և մրրկի նման վորոտաց.

— Ցես ձեզ... գոչեց նա։—Իսկույն ձյունակույտից ցած իջեք։ Սա ի՞նչ խաղ է։

Յերեխաները վիրավորված իջան ձյունակույտից։ Բայց այդ ժամանակ աչխատանքից վերադարձավ հարևան Ֆյոդոր Յեգորիչը։ Ֆյոդոր Յեգորիչին յերեխաները շատ եյին սիրում։ Նրան բևեռային գործերի մեծ վարպետ եյին համարում, վորովհետև ամառը սիրում եր ստվերի հովը, սառը կվաս եր խմում և յերեխաներին պաղպաղակով հյուրասիրում։ Ֆյոդոր Յեգորիչը յերեխաներին պաչտպանեց։

— Ինչո՞ւ յես սրանց խաղը խանգարում։ Չյո՞ւնն ես ափսոսում։

— Անկարգություն է,— գոչեց Խարիտոնը։

Ֆյոդոր Յեգորիչը մոտեցավ յերեխաներին և հանդարտ ձայնով ասաց.

— Վոչի՛նչ, յերեխաներ, Խարիտոնը փոթորկի նման է. արագ վրա կտա, կաղմկի, իսկ հետո կպաղկի... քնելու։ Իսկ յես ձեզ կհայտնեմ, թե յերբ կարելի յե խաղալ և յերբ՝ վո՛չ։ Իմ պատուհանից յերևում է, թե Խարիտոնը յերբ է գալիս։

Յեվ այդ որից սկսած՝ այսպես եյին անում...Ֆյոդոր Յեգորիչը դուրս եր գալիս սանդուխքի վրա կանգնում և ասում.

— Տեսանելիությունը վատ է, բուք է գալիս և ամեն ինչ ավլում, թոչել չի՛ կարելի։

Յեվ յերեխաներն արդեն իմանում եյին, վոր բարկացկոտ Խարիտոնը գալիս է, պետք է ծլկել։

Բայց հաճախ Ֆյոդոր Յեգորիչն՝ աչքով անելով ասում եր.

— Հորիզոնը մաքուր է. կարելի յե թոչել։

Յեվ այն ժամանակ յերեխաները խաղում եյին։

Ահա, վերջապես, խորհրդային ոդաչուները ճեղքեցին սառնամանիքն ու բուքը և ուրախ ռադիո-հեռագրիչն աչխարհով մեկ հաղորդեց, վոր Շմիդտի ճամբարի և ցամաքի միջև հաղորդակցություն է սկսվել։ Բալ ոդաչուները թողնում եյին ամուր յերկիրը և իջնում թափառող սառցի վրա։ Սառույցն ամեն րոպե պատրաստ եր չարդվելու, ճաքելու։ Սավառնակի գահուկների տակից սառույցը փախչում եր։ Սառցակույտերի վրայով պետք է ծանր գործիքը քաչեյին։ Յեվ ոդաչուները քաչում եյին ու կրկին ոդը բարձրացնում՝ չելյուսկինցիներին ամուր, չոր յերկիր փոխադրելով։

Վերջը սառցի վրա վեց հոգի մնացին։ Յեվ, ի՛հարկե, ուրախ ռադիո հեռագրիչն էլ մինչև վերջը մնաց։

Ուչ եր և մութ։ Ոդաչուները խոստացան հետևյալ առավոտ գալ և նրանց էլ տանել։ Ոդաչուները թռան, գնացին։ Ամայացած ճամբարում մնացին վեց մարդ և ութչուն։ Գիչերը վրա հասավ և հյուսիսային ծովի վրա ծագեց բևեռային աստղը։ Նա Մոսկվայի վրա էլ ծագեց և Մոսկվայի մարդիկ բևեռային աստղին նայելով, մտածում եյին սառցի վրա նստած վեց քաջերի մասին։

Իդան յերկար ժամանակ քնել չեր կարողանում. նա մտածում եր, թե ի՞նչ սարսափելի յե գիչերը սառցի վրա...

Իդան աչքերը բաց պառկել եր։ Նրան սկսեց թվալ, վոր սենյակում էլ են սառույցներ չարժվում։

Մյուս որն առավոտյան մայրիկը գնաց հայրիկի մասին տեղեկություն իմանալու։ Իդան դպրոցից վերադարձավ և Լյուդայի հետ գնաց բակը՝ սառցաբլրի վրա խաղալու։ Յեկավ Պետիկը, յեկան մյուս յերեխաները։ Բայց խաղալ չըկարողացան։ Փորձեցին սպիտակ արջեր վորսալ, բայց Պետիկի մայրը դուրս յեկավ ու ասաց, թե չի թողնի, վոր թավշե արջը գնեն կեղտոտ սառցի վրա։

Բայց հանկարծ պատուհանը բացվեց։ Մայրիկը գլուխը դուրս հանեց և ուրախ ու զիլ ձայնով գոչեց.

— Յերեխանե՛ր, կարող եք խաղը չարունակել։ Սառույցը գատարկ է։ Վերջին մարդիկ թռել են այնտեղից։ Յեվ ամենից վերջինները գի՞տեք ովքեր են յեղել։ Նավապետ Վարենին և մեր հայրիկը։ Ահա թե ի՛նչպիսի մարդիկ են ապրում մեր աչխարհում։ Ահա թե ի՛նչպիսի մարդ պետք է լինել, յերեխաներ։ Լսեցե՛ք հայրիկի վերջին հեռագիրը։

«Բոլորից հետո հեռանում ենք սառցի վրայից։

Շմիդտի ճամբարն այլևս դոյություն չունի: Վերջին խրույկը հանգավ դատարկ սառցի վրա, աշտարակի գլխին մնաց միայն կարմիր դրոշակը»:

Հուլիսին, ինչպես խոստացել եր, ուրախ ռադիոհեռադրիչը վերադարձավ Մոսկվա: Նա վերադարձավ չելյուսկինցիների և ոդաչուների՝ Խորհրդային Միության հերոսների հետ: Վողջ Մոսկվան դիմավորեց հերոսներին: Ռադիո-հեռադրիչն ապակե ամանով բևեռային սառույց եր բերել: Դա մի կտորն եր այն սառույցի, վորի վրա չելյուսկինցիները յերկու և կես ամիս ապրել եյին: Սառցի կտորի վրա յերևում եր մի մեծ ճանկ—սպանված սպիտակ արջի թաթի հետք: Այդ սառույցը նա բերել եր սավառնակով, շների սահնակով, շոգենավով, գնացքով: Ամեն տեղ նա ամանը սառցի մեջ եր դրել, վոր ընծան չհալվի: Ցեվ նա ամանն անվնաս հասցրեց Մոսկվա՝ հատուկ վագոն-սառցարանով:

Հայրիկը յերկաթուղու կայարանից ուրախ և բախտավոր յեկավ տուն: Իդան և Լյուդան կչկչում և թրուչկոտում եյին նրա շուրջը: Ցերկուսն ել շատ եյին ուզում իմանալ՝ բերե՞լ ե արդյոք հայրիկը խոստացած սառցի կտորը: Նրանք քաղաքավարությունից լռում եյին, բայց անհամբեր սպասում եյին:

— Կացե՛ք, ընկերներ,— ասաց նա,— ամանն ո՞ւր ե:

Ամանը հատակի վրա յեր, ճամպրուկի կողքին: Ռադիոհեռադրիչն ամանը մոռացել եր: Հուլիսի ջերմ արեգակը տաքացրել եր ամանը և նրա հատակին, կեղտոտ ջրի մեջ, լողում եր մի մեծ սև ճանկ:

— Ահա քեզ հյուսիսային բևեռի մի կտոր: Հալվել ե... — փնթփնթաց հայրիկը:— Ինչպե՞ս ե յեղել վոր յես..

— Վոչինչ,— քաղաքավարի ասաց Իդան,— այնուամենայնիվ ճանկը չի հալվել:

Լյուդան փքվեց և քիչ մնաց լաց լինի:

— Մի բոպե,— լսվեց հարևան Ֆյոդոր Ցեդորիչի ձայնը:— Տվե՛ք ամանը... Ցես իսկույն...

Նա վերցրեց ամանը և իր սենյակը վազեց: Ֆյոդոր Ցեդորիչն իսկույն վերադարձավ և սեղանի վրա դրեց քրտնած ամանը: Բոլորը զարմացան: Ամանում բևեռային սառցի մի կտոր կար, վորի վրա յերևում եր արջի ճանկ:

— Լսեցե՛ք—ասաց ռադիո-հեռադրիչը,— աշխարհում հրաշքներ չեն լինում, այդ ի՞նչ արիք:

—Հասարակ բան,—պատասխանեց Ֆյոդոր Ցեդորիչը:— Ցես ցուրտ գործերի վարպետ եմ: Ցես աշխատում եմ սառցարանում: Այնտեղ պատրաստում են արհեստական չոր սառույց: Այդպիսի սառույցը կարելի յե դրպանում պահել: Նա հալվում ե, բայց չի հոսում, այլ ուղղակի ոդ ե դառնում: Ցեթե մի կտոր սառույց դցենք ջրի մեջ, ջուրն իսկույն կսառչի:

Բոլորն ուրախացած ծափ տվին:

Հետո հայրիկը հանկարծ նայեց Իդային.

— Դե՛, Իդա, մի քարտեզի մոտ կանգնի՛ր, տեսնեմ,— ասաց նա:

Իդայի գլուխն այժմ հասնում եր Հյուսիսային բևեռին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Ճամպրուկ— ճանապարհորդական պայուսակ.
2. Կամակորություն— իր ասածի լինելը, համառություն.
3. Սերռսահնակ— դահուկների վրա հարմարեցրած սահնակ, վոր շարժվում ե սավառնակի մեքենաներով (վինտ, մոտոր).
4. Վիատել— հուսահատվել.
5. Մրրիկ— ուժեղ քամի, փոթորիկ.
6. Կվաս— հացից պատրաստած զովացնող խմիչք:

ՀԱՐՑԵՐ

1. «Չելյուսկինն» ինչո՞ւ մեկնեց Հյուսիսային ծովերը:
2. Ի՞նչ պատահեց «Չելյուսկինին» և յերը:
3. Ի՞նչ եր անում սառույցների վրա ռադիո-հեռադրիչը:
4. Հայրն ի՞նչպես կատարեց յերեխաներին տված իր խոստումը:
5. Մեր կառավարությունն ու կուսակցությունը ի՞նչ արին չելյուսկինցիներին փրկելու համար:
6. Չելյուսկինյան արշավի հերոսներից ո՞ւմ անունը գիտեք. ի՞նչ կոչում ստացան նրանք:

Վերնագիր դրեք այս պատմվածքի առանձին մասերին:

———

64. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ

1

Համբավը տարան Մսրա Մելիքին.
— Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կրկին
Հոր վանքը չինել, իշխան ե դառել,
Դու ոխտը տարվան խարջը չես առել։
Մելիք զայրացավ.
— Գնացե՛ք,— ասավ—
Բաղին, Կողբաղին,
Սյուղին, Զարխաղին.
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք.
Իմ ոխտը տարվան խարաջը բերեք։
Քառասուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառասուն կարճ կնիկ, վոր յերկանք աղան,
Քառասունն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Իմ տանն ու դռան զարավաշ դառնան։
Ու Կողբաղին առավ զորքեր.
— Գլխիս վրա,— ասավ,— իմ տեր.
Գնամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին վոսկի,
Տեղը ջնջեմ հայոց ազգի։
Ասավ, Մսրա աղջիկ ու կին
Պար բռնեցին ու յերգեցին.
— Մեր Կողբաղին գնաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով վոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կթան՝
Դարնան չինենք յեղ ու չորթան։
Զա՛ն Կողբաղին, քաջ Կողբաղին,
Սասմա Դավթին զարկեց գետին։
Ու Կողբաղին փքված, ուռած՝
— Շնորհակալ եմ, քույրե՛ր,— ասաց,—
Մինչև գալս դեռ համբերեք,
Ե՛ն ժամանակ պլտի պարեք...

Եսպես յերգով,
Զուռով-ղորքով
Գոռ Կողբաղին մտավ Սասուն,
Ոհան լսեց՝ կապվեց լեղուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն յելավ,
Խնդիրք արավ.
— Ինչ վոր կուզես՝ առ տա՛ր, աման,
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դատած դեղին վոսկին,
Միայն թե գթա մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,
Վերև՝ ասուած, ներքևը՝ դու...
Ասավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Ու Կողբաղին կանգնեց, ջոկեց,
Մարդն արավ, դուռը փակեց.—
Քառասուն կույս աղջիկ, սիրուն արմաղան,
Քառասուն կարճ կնիկ, վոր յերկանք աղան,
Քառասունն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Մսրա Մելիքին զարնավաշ դառնան։
Դեղ-դեղ կիտեց դեղին վոսկին.
Սև սուդ կալավ հայոց ազգին։

3

Ցած իջավ Դավիթ Մարութա սարից՝
Տեսավ Կողբաղին իրենց տան միջին
Զափում ե վոսկին թեղած առաջին,
Սյուղին, Զարխաղին պարկերն են բռնել,
Զենով Ոհանն ել շլինքը ծռել,
Կանգնել ե հեռու, ձեռները ծոցին։
Տեսավ, աչքերը արնով լցվեցին։
— Վե՛ր կաց, Կողբաղին, հեռո՛ւ կանգնիր դու,
Իմ հոր վոսկին ե—յե՛ս եմ չափելու։

Կողբադինն ասավ.— Ե՛յ, Զենով Ոհան,
Կտաս—տո՛ւր խարջը ես ոխտը տարվան.
Թե չե՝ կգնամ, միրուքս վկա,
Մսրա Մելիքին կպատմեմ, կգա,
Ձեր Սասմա յերկիր քար ու քանդ կանի,
Տեղը կվարի, բոստան կցանի:
— Կորե՛ք, անզգամ դուք Մսրա չներ,
Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծռեր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ չվաք,
Կուզեք մեր յերկիր գնեք խարջի տա՞կ...
Բարկացավ Դավիթ, չափը չպրտեց,
Տվավ Կողբադնի գլուխը ջարդեց,
Ձախի փչրանքը պատն անցավ, գնաց.
Մինչև որս ել դեռ գնում ե թռած:
Ու յելան՝ թափած վոսկին թողեցին,
Հայոց աշխարհքից փախան գնացին
Բադին, Կողբադին,
Սյուդին, Զարխադին:

4

Եսպես ջարդված, արյունլվա
Փախան, ընկան հողը Մսրա
Բադին, Կողբադին,

Սյուդին, Զարխադին:
Մսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տվին կորբներին.
— Ցեկա՛ն, յեկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կողբադին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառասուն-քառասուն,
Կարմիր կովեր բերավ կթան՝
Գարնան չինենք յեղ ու չորթան...
Հենց մոտեցան, նկատեցին,
Ծափ ու խնդում ընդհատեցին,
Քրքջացին
Ու կանչեցին.
— Ե՛յ, Կողբադին մեծաբերան,
Եդ վո՞ր տեղից լերան-լերան,
Լերան-լերան կգաս փախած,
Հաստ գլուխդ կիսից ճղած:
Են դո՞ւ չասիր՝ գնամ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով վոսկի հանեմ,
Հայոց յերկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գել դաղան,
Ցետ ես գալիս քանց չուն վաղան...
Ու Կողբադին խիստ բարկացավ.
— Սո՛ւտ կացեք դուք, լրբե՛ր,— ասավ,—
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չե՛ք տեսել Սասմա ծռեր:
Սասմա ծռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասմա յերկիր քար ու կապան,
Դժար սարեր, ձոր ու ծապան.
Նրանց խոտեր — ինչպես կեռ թուր,
Ձորք ջարդեցին յերեք հարյուր...
Ասավ ու ել չառավ դաղար,
Վռազ-վռազ, գլխապատառ
Վազեց իրեն թագավորին:
Խնդաց թագավորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կողբադին.
Արժե՝ կախեմ յես քո ճտին

Մեր արծվի մեծ նշանը—
Պարգև քո մեծ հաղթությանը.
Ո՞ւր են, հապա առաջս բեր
Սասմա վոսկին ու աղջիկները,
Ասավ Մելիք, ու Կողբադին
Գլուխ տավավ մինչև գետին.
— Ապրա՜ծ կենաս, մեծ Թագավոր,
Զորով փախա յես ձիավոր,
Վո՞նց բերեյի Սասմա վոսկին,
Մի խենթ ծնվեց հայոց ազգին,
Վոչ ահ գիտի, վոչ տեր ու մեծ,
Գլուխս եսպես տավավ, ջարդեց.
«Ձե՛մ տալ, ասավ, իմ հոր վոսկին,
Ձե՛մ տալ կանայքն իմ հայ ազգին,
Սասմա յերկիր ձեզ տեղ չկա...
Քո Թագավոր, ասավ, թո՛ղ գա,
Թող գա՝ ինձ հետ կռիվ անի,
Թե ղոչաղ ե՝ զորով տանի»:
Կատաղեց, փրփրեց Մսրա Թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեղ, անմորուք,
Հազար հազար մարդ բեղը նոր ծլած,
Հազար հազար մարդ նոր թախտից յելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ, վոր փողեր հնչեն,
Հազար հազար մարդ, վոր թմբուկ
զարկեն...
Կանչեցե՛ք, թող գա՛ն հաղնեն ղե՛նք, զրա՛հ,
Կռիվ տի գնամ յես Դավթի վրա,
Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

5

Եսպես անհամար զորքեր հավաքեց,
Ցեկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանր նստեց Մսրա Թագավոր:

Ենքան ահագին բազմությունն են որ
Բաթմանա ջրին յեկավ ու չոքեց,
Ով յեկավ, խմեց—դետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մնացին ծարավ:
Ձենով Ոհանին զարմանքը տարավ:
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ.
Ճերմակ վրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ են գիշեր ձմեռը յեկել,
Սպիտակ ձյունով պատել եր Սասուն:
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վա՛յ, փախե՛ք, յեկա՛վ... հա՛յ, հարա՛ջ
յեկավ:
— Ի՞նչը, հորեղբայր, ի՞նչը, ի՞նչն
յեկավ...
— Ցավն ու կրա՛կը Դավթի պինչն յեկավ:
Մսրա Թագավոր յելել ե, յեկել,
Ցեկել, մեր դաշտին բանակ ե զարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին...
Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարհքին...
Ցե՛կ, վոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գթա,
Մեզ սրի չտա...
—Դու կա՛ց, հորեղբայր, դու զարդ մի՛ անիր.
Գնա, քու ոգում դու հանգիստ քնիր.
Հիմի յես կերնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մսրա-Մելիքին պատասխան կտամ:

6

Հագավ Դավիթ զենքն ու զրահ,
Կապեց գոտին, թուր-կայծակին,
Ցելավ, հեծավ տյուծ հոր ձին,
Կանչեց, իր ձին ասպանդակեց:
Ձենով Ոհան լալով յերգեց.
— Ափսոս, հազա՛ր ափսոս հրեղեն մեր ձին,
Ա՛խ, հրեղեն մեր ձին.

Ափսո՜ս, հազա՜ր ափսոս մեր վոսկի գոտին,
Ա՜խ, մեր վոսկի գոտին.
Ափսոս, թանգ կապեն, վոր հագին տարավ,
Ա՜խ, վոր հագին տարավ...
Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ,
Ոհանը վախեց,
Իր յերդը փոխեց.
«Ափսո՜ս, նորելուկ Դավիթս կորավ,
Ա՜խ, Դավիթս կորավ»:
Ես վոր իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Իջավ, Ոհանի ձեռքը համբուրեց:
Զենով Ոհանն ել, ինչպես հայր ու մեծ,
Որհնեց, խրատեց նրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ դրավ ճանապարհ:

7

Դավիթն ել ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նման:
— Ով քնած եք՝ արթո՜ւն կացեք,
Ով արթուն եք՝ յելե՜ք, կեցե՜ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՜ք,
Զենք եք կապել՝ ձի թամքեցե՜ք,
Ձի յեք թամքել՝ յելե՜ք, հեծե՜ք.
Հեռո չասեք՝ թե մենք քնած—
Դավիթ գող-գող յեկավ, գնաց...

Ես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ զարկի,
Սարա գորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով թուր-կայծակին:

Զարդեց, փչրեց մինչև կեսոր,
Կեսոր արինն յելավ հեղեղ,
Քչեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ վողջ միատեղ:



Կար գորքի մեջ մի ալևոր,
Աչխարհք տեսած ու բանագետ.
— Տղե՛րք,— ասավ,— ճամփա տվեք,
Գնամ խոսեմ յես Դավթի հետ:

Գնաց, կանգնեց Դավթի առաջ,
Ես պես խոսեց են ծերունին.
Դալար կենա՛ կուռդ, ո՛վ քաջ,
Սուրդ կտրուկ միշտ քո ձեռին:

Մի ծերունուս խոսքին մտիկ,
Տե՛ս, քու խելքը ինչ է կտրում:
Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,
Հե՞ր ես սրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մոր վորդի,
Ամեն մինը մի տան ճրագ,
Վորը կինն է թողել ենտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կրակ,

Վորը մի տուն լիք մանուկներ,
Վորը ծնող աղքատ ու ծեր,

Վորը լացով, քողն յերեսին
Նորապսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-Թրով
Հավաքել է, Եստեղ բերել։
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,
Մենք քեզ վնաս ի՞նչ ենք արել։

Թագավորն է քու Թշնամին,
Կռիվ ունես—իր հետ արա,
Հե՞ր ես քաշում Թուր-կայծակին
Ես անճարակ խալխի վրա։

— Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալեորին,—
Բայց Թագավորն ո՞ւր է հիմի,
Վոր սև կապեմ նրա որին։

— Մեծ վրանում քնած է նա,
Են, վոր միջից ծուխը կելնի.
Են ծուխն էլ հո ծո՛ւխ չի վոր կա,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դեպի մեծ վրանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քշեց-գնաց ու զոռանը
Գոռաց կանգնած արարներին.

— Ո՞ւր է,— ասավ,— ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցեք զա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գրող չունի՝ գրողն եմ յես...

— Մելիքն,— ասին,— քուն է մտել.
Ոխտը որով պետք է քնի...
Ցերեք որն է դեռ անցկացել,
Զորս որ էլ կա, քունը առնի։

— Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լցրել ծովն արյունի,
Ինքը մտել վրանի մեջ՝
Ոխտը որով հանգիստ քնի՞...

Քնել-մնել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք չո՛ւտ, դուրս գա մեյդան,
Ենպես դրան յես քնացնեմ,
Վոր չզարթնի էլ հավիտյան։

Ցելան՝ մարդիկ ճարահատված
Շտմփուր դրին թեժ կրակին
Ու զարկեցին խոր մրափած
Մսրա-Մելքի բաց կրունկին։

— Ո՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Ես անիծված լվի ձեռից,—
Խոր մռնչաց հսկան հանդարտ
Ու շուռ յեկավ, քնեց նորից.

Ցելան, բերին մեծ գութանի
Խովը դրին թեժ կրակին,
Ու կաս-կարմիր, կեծկրծալի,
Շիկնած ավին մերկ թիկունքին։

— Ո՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից.—
Աչքը բացավ հսկան հանդարտ,
Ուզում էր յետ քնել նորից։

Տեսավ Դավթին։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մռնչալով,
Փչեց վրեն, վոր թոցնի
Են աժդահին մի փչելով։

Տեսավ, տեղից ժամ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Արնոտ աչքերն բսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին։



Նայեց թե չէ, զգաց, իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարո՛վ, Դավի՛թ, հոգնած ես դեռ.
Յե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կռիվ կանենք,
Յեթե կռիվ կուզես կրկին...

Իր վրանում բռնակալը
Քառնուն զաղ խոր հոր եր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վրեն փափուկ խալի փռել:

Ում վոր հաղթել չեր կարենում,
Շողոմելով կանչում եր նա,
Նստեցնում եր իր վրանում
Են կորստյան հորի վրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գնաց նստեց... ընկավ հորը:
— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— քահ-քահ խնդաց,
Մարա դաժան թագավորը:

— Դե՛, թող հիմի գնա՝ խավար
Հորում փտի, ենքան մնա:
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ դրավ հորի վրա:

8

Յելավ Ոհան գոմը մտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ յե՞րբ, ասավ,
Կհասցնես Դավթի կռվին:

«Մինչև լուսը կհասցնեմ».
Ու ձին տվավ փորը գետին.
— Մեջդ կոտրի՛, լուսն ի՞նչ անեմ.
Լաչին հասնեմ յես, թե՞ նաչին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա ել յերեսը փորը գետին:
— Ջան, կարմիր ձի, մինչ յե՞րբ դու ինձ
Կհասցնես Դավթի կռվին:

«Մի՛ ժամի մեջ,— կարմիրն ասավ,—
Կհասցնեմ Դավթի կռվին»:
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ
Ինչ տվել եմ քեզ՝ են գարին:

Հերթը յեկավ սևին հասավ.
Գետին չերեսը փորը սև ձին:
— Ե՛յ, ջան Սևուկ, մինչ յերբ,— ասավ,—
Կհասցնես Դավթի կռվին:

«Յեթե ամուր մեջքիս մնաս,
Վոտդ դնես ասպանդակին,
Մինչև մեկել վոտդ չուռ տաս,
Կհասցնեմ»,— ասավ սև ձին:

Սև ձին քաշեց Զենով Ոհան,
Զախը դրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վրան,
Կանգնեց Սասմա սարի գլխին:

Տեսավ՝ Դավթի նժույգն անտեր
Սարերն ընկած խրխնջալով,
Ներքև Մսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծփուն մի ծով:

Ոխտը գոմշի կաշի հագավ,
Վոր չպատռի իրեն զոռից,
Կանգնեց Ոհան ամպի նման
Գոռաց Սասմա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ,— Դավի՛թ, վո՞րտեղ ես դու,
Լո՛ւսը դուրս յեկ արեգակի:

Զենը գնաց դմդմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հա՛յ-հա՛յ,— ասավ,— հորեղբայրս ե,
Սասմա սարից ինձ ե գոռում:

Յելավ զարկեց ջաղացքարին՝
Քարը յեղավ հաղար կտոր,
Կտորները յերկինք թռան,
Ու գնում են մինչև եսոր:

Յելավ հորից, կանգնեց ահեղ:
Սարսափ կալավ դև Մելիքին:
— Դավիթ ախպեր, յեկ դեռ եստեղ
Սեղան նստենք, խոսենք կարգի՛ն...

— Ել չեմ նստիլ յես քու հացին,
Դու ամարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս յեկ մեյդան, կռիվ անենք:

— Կռիվ անենք,— ասավ Մելիք,—
Իմն ե միայն զարկն առաջին:
— Քոնն ե, զարկի՛ր,— կանչեց Դավիթ,
Գնաց, կեցավ դաշտի միջին:

Յելավ, կանգնեց Մսրա-Մելիք,
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քշեց, գնաց Դիարբեքիր
Ու ենտեղից յեկավ կրկին:

Յերեք հաղար լիտր ել քաշում
Հսկայական իր մկունդը.
Յեկավ, զարկեց. կորավ փոշում
Ու յերերաց յերկրի գունդը:

— Յերկիր քանդվեց կամ ժաժք յեղավ,—
Ասին մարդիկ շատ աշխարհքում:
— Ձի՛,— ասացին,— արնի ծարավ
Հսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ ես մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին:
— Կենդանի՛ յեմ,— ամպի տակից
Գոռաց Դավիթ Մսրա-Մելքին:

— Հա՛յ-հա՛յ, մոտի՛կ տեղից յեկա,
Տե՛ս, վո՞րտեղից հիմի կդամ:
Ու վեր կացավ, կանգնեց հսկան,
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ:

Յերկրորդ անգամ քշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:

Յեկավ, զարկեց. զարկի ձենից
Մոտիկ մարդիկ վողջ խլացան:
— Գնաց Դավիթ Սասմա տանից,—
Գուժեց գոռոզ Մսրա արքան;

— Կենդանի՛ յեմ,— կանչեց Դավիթ,—
Մին եվ արի՛,— հերթն ինձ հասավ,
— Հա՛յ, հա՛յ, մոտի՛կ տեղից յեկա։
Կանչեց Մելիք ու վեր կացավ։

Յերրորդ անգամ հեծավ իր ձին,
Գնաց մինչև հողը Մսրա,
Ու ենտեղից գուրզը ձեռին
Քշեց, յեկավ Դավթի վրա։

Յեկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանր զարկով հսկայական.
Փոշին յելավ Սասմա դաշտից,
Բռնեց յերեսն արեգական։

Յերեք գիշեր ու յերեք որ
Փոշին կանգնեց ամպի նման,
Յերեք գիշեր ու յերեք որ,
Բոթը տվին Դավթի մահվան։

Յերբ վոր անցավ յերեք որը,
Են ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ ինչպես սարը,
Գրգռուռ սարը մեղ-մշուշում։

— Մելիք,— ասավ,— ո՞ւմն է հերթը։
Սարսափ կալավ դոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ դոռոզ հոգին։

Գնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մտավ վիհն են խավար.
Վրան քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։

Մռնչալով յելավ տեղից
Են առյուծի առյուծ վորդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց թուր-կայծակին։

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավիթ, մազս ա՛ռ վոտիդ տակ,
Եղ մի զարկը ինձ բաշխիր դու։

Յերկրորդ անգամ թուրը քաշեց.
Ես անգամ եվ յեկավ քուրը.
— Դավի՛թ, յեթե կուզես,— կանչեց,—
Իմ սրտին զա՛րկ յերկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Յելավ Դավիթ յերրորդ անգամ.
— Ես մի զարկը ու յես,— ասավ,—
Եվ մարդ չդա՛, պետք է վոր տամ։

Ասավ, յելավ ու փոթորկեց,
Թռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ թուր-կայծակին։

Անցավ քառասուն դոմշի կաշին,
Անցավ քառասուն քարերը ցած,
Միջից կտրեց ժանտ հրեշին,
Ոխտը գազ եվ դենը գնաց։

— Կենդանի՛ յեմ, մին եվ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից։
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, թուր-կայծակից...

— Մելի՛ք,— ասավ,— թա՛փ տուր մի քեզ։
Ու թափ տվավ Մելիքն իրեն,
Միջից յեղավ ճիշտ յերկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դեն։

Ես վոր տեսավ Մսրա բանակ,
Ջուր կտրվեց ահ ու վախից։
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,
Ականջ արեք հլա դեռ ինձ։

Դուք ըռանչպար մարդիկ,— ասավ,
Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Ցեկել թափել ոտար դաշտեր.
Չե՞ վոր մենք ել ունենք տուն-տեղ,
Մենք ել ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի որ ու կյանքից,
Թե՞ զզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից:

Դարձե՛ք յեկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մսրա.
Բայց թե մին ել զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր,
Թե չաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ ինչպես եսոր.
Սասմա Դավիթ, Թուր-կայծակին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1· Համբավ— լուր.
2· Արմաղան— շատ գեղեցիկ.
3· Ղարավաշ— ծառայող, աղախին.
4· Գոռ— հպարտ.
5· Կապան— ամրություն, դժվար անցնելու տեղ.
6· Ասպանդակել— ասպանդակով (ուրզանդու) խփել.
7· Գուրզ— զենքի տեսակն է գլուխը գունդ և կոթով.
8· Բանագետ— խելոք.
9· Ասպարեզ— հրապարակ.
10· Ձերետ— չտվեց.
11· Տմարդի— մարդուն անվայել.

12· Մկունդ— զենքի տեսակն է— նիզակ.
13· Ժանտ— զզվելի, դաժան.
14· Գազ— յերկարության չափ է.
15· Շողոմել— շողոքորթել, կեղծավորել.
16· Նաշ— դիակ, դաղաղ.
17· Տեղ ու տարափ— փոթորիկ.
18· Գուժել— վատ լուր տալ.
19· Բոթ— վատ լուր.
20· Վիհ— խոր փոս, անդունդ:



ՑԱՆԿ

* 1. *Ցերդ հայրենիքի մասին*— Վ. Լեբեդեվ-Կումաչ 5
2. *Վանուշը*— Ստ. Զորյան 6
3. *Մեր տեսուչը*— Պ. Պռոշյան 13
4. *Առյուծը, աղվեսն ու արջը*— Վ. Այգեկցի 17
5. *Ղազարոս Աղայան* (կենսագրութ.) 18
* 6. *Եշն ու գոխակը*— Ղ. Աղայան 20
* 7. *Տոբք Անգեղ*—» 22
8. *Անդրեյն ու Վասիլյոկը*— Ն. Ոստրովսկուց 24
* 9. *Լոռու ձորը*— Հովհ. Թումանյան 31
*10. *Մկների ժողովը*— Աք. Խնկոյան 32
11. *Մադրիդի յերեխաները*— «Պիոն. Պրավդա»-ից 38
* 12. *Բանվորուհու որորը*— Ալ. Ծատուրյան 40
13. *Հոկտեմբերյան արևը*— Սիրաս 41
14. *Նամակը չհասավ*— Ա. Շայիֆ 45
15. *Հին Ցերևանը*— Մ. Մանվելյանից 50
16. *Բու*— Պ. Ճանիշվիլի 51
17. *Հովհաննես Թումանյան*— (կենսագրութ.) 54
* 18. *Կոխը*— Հովհ. Թումանյան 56
19. *Գիքորը*— Հովհ. Թումանյան 58
* 20. *Մի կաթիլ մեղը*— Հովհ. Թումանյան 74
21. *Վարի նախորյակին*— Ն. Զարյանից 80
22. *Ցեղնիկներն անտառում*— «Լուսաբեր»-ից 82
23. *Ա. Ս. Պուշկին*— (կենսագրութ.) 84
* 24. *Զմեռվա իրիկունը*— Ա. Պուշկին (թ. Հ. Թում.) 85
* 25. *Նժույգը*— Ա. Պուշկին (թ. Հռ. Պողոսյան) 86
* 26. *Տերտերն ու իր Բալդի ծառան*— Ա. Պուշկին (թարգմ.՝ Խնկո-Ապեր) 87
27. *Հանրակացարանում* (հատված)— Արազի 97

* 28. *Խորհրդային Հայաստան* (կրճ.)— Գ. Սարյան 99
29. *Ցերկու ասավածամայր*— Ա. Սերաֆիմովիչ (թարգմ՝ Սիմակ) 101
30. *Վ. Ի. Լենին*— Ա. Ուլյանովա 104
* 31. *Լենինն ու Լի-Զանը*— Խրախ (թ. Գ. Աբով) 107
32. *Ցեռ պետք է տեսնեմ Լենինին*— Պ. Քափանաձե 109
* 33. *Ժայռերի վրա*— Ս. Պոգորելովսկի (թարգմ.՝ Մ. Դուրգարյան) 112
* 34. *Գովք մեծ Ստալինին*— Մ. Կորյուն 114
35. *Կապույտ ղորդը* (տաջիկերենից թ. Մ. Դուրգ.) 116
* 36. *Հայրենիքիս հետ*— Ա. Լուսենց 124
37. *Հրամանատարի մոտ*— «Պիոներ Կանչ»-ից 124
* 38. *Դյուցազնական*— Աղավնի 127
39. *Հիշողություններ ընկ. Սերգոյի մասին*— Զ. Որջոնիկիձե (թ. Սիմակ) 129
* 40. *Խուան Թորնադ* (կրճ.)— Գ. Սարյան 131
41. *Զգոնություն*— Վ. Գորին (թ. Հ. Հ.) 134
* 42. *Գարնան համբույր*— Ս. Սարգսյան 138
43. *Ընկ. Ստալինը և Մ. Դեմչենկոն*— Ա. Բասով (թարգմ.՝ Սիմակ) 139
* 44. *Սերվին* (կրճատ)— Հռ. Պողոսյան 141
45. *Տասն որ անտառում և ճահիճներում*— Մ. Ռասկովա (թ. Սիմակ, Մ. Դուրգարյան) 143
46. *Այնուամենայնիվ մենք կհաղթենք*— Դ. Իրաբրուրի և Ռ. Ռուիս 148
* 47. *Ծաղիկների յերգը*— Հով. Թումանյան 150
* 48. *Ցեկ, գարնան անձրև*— Ալ. Ծատուրյան 153
49. *Գյուղացիների դատը*— Ի. Տուրգենև 153
* 50. *Գայլն ու կատուն*— Խնկո-Ապեր 159
51. *Փոթորիկն անտառում*— ըստ Մուրացանի 161
*52. *Կարմիր գարնան*— Հ. Հակոբյան 164
53. *Քաղհանը* (հատված)— Արազի 165
*54. *Գութանի յերգը*— Շ. Կուրղինյան 166
55. *Թշնամիները*— Վ. Գարշինից 167
56. *Մաքսիմ Գորկի* (կենսագրութ.) 169
57. *Թոնելը*— Մ. Գորկի 171
58. *Մայիսի մեկին*— Մ. Գորկուց (թ. Մ. Դուրգ.) 174

59· Նիկոլայ Պետրովիչը— Ստ· Զորյանից 177
60· Կոլտնտեսության նժույգը— Ն· Զարյանից 181
61· Ճամբար գնալը— Ստ· Զորյանից 184
62· Ամառը— Խ· Արովյանից 188
63· Յրտաչունչ սառույց— Լ· Կասսիլ 190
* 64· Սասունցի Դավթի կռիվը (կրճ·) Հ· Թումանյան 198

Ծանոթություն·— Աստղանիշ (*) նյութերը չավարտ են:

Պատ· խմբագիր՝ Մ· Սանթրոսյան
Տեխ· խմբագիր՝ Ի· Վարդանյան
Սրբագրիչ՝ Հ· Մանուկյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս· Շահբազյան

Գլավլիտի լիազոր՝ Վ· 2081· Հրատ· №4811
Պատվեր 174· Տիրաժ 55·000
Թուղթ 64×92· Տպագր· 14 մամ·
Մեկ մամ· 24880 նշան·
Հանձնված է արտադրության 15 հունվարի 1939 թ·
Ստորագրված է տպագրության համար 7 մայիսի 1939 թ·

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0987298

ԳԻՆԸ 1 Ռ. 70 Կ.
ԿԱԶՄԸ 60 Կ.

11
28670

Армянский язык
Книга для чтения
для IV класса
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.